

Մ.Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ
ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ
ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՏՔԸ

ԵՐԵՎԱՆ -1998

Տպագրվում է ՀՀԳԱԱ Հայոց ցեղասպանության
թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝
Պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր
Վ.Ա. Դիլոյան

Մ.Ա. Մուրադյան
Հայկական հարցը և ռուսական
հասարակական-քաղաքական ու պատմագիտական միտքը

Մենագրությունում ռուսական հասարակական-քաղաքական ու պատմագիտական մտքի տարբեր սերունդների ներկայացուցիչների հայեցողության լույսի ներքո քննախոսվում է հայոց նոր և նորագույն պատմության համար առանցքային նշանակություն ունեցող Հայկական հարցը իր բոլոր հիմնարար քաղաքական ծայրերով: Աշխատությունում հատուկ ընդգծվում է, որ նրանց գնահատականները առանձնապես Հայոց Ցեղասպանության վերաբերյալ ունեն ոչ միայն զուտ գիտական, այլև քաղաքական կարևորություն, միջազգային իրավունքի տեսանկյունից հրատապություն, դիվանագիտության առումով արդիականություն:

Մենագրությունը նախատեսված է պատմության և միջազգային հարաբերությունների ֆակուլտետների ուսանողության, ասպիրանտների, մագիստրատուրայում սովորողների, երիտասարդ դասախոսների, ուսուցիչների, մասնագետների, Հայկական հարցով ու հայ-ռուսական քաղաքական առնչության հիմնախնդիրներով հետաքրքրվողների և ընթերցասեր լայն հասարակայնության համար:

ԱՌԱՋԱԲԱՆ

Աշխարհի հնագույն և արդեն մարդկության արշալույսին բարձր քաղաքակրթության հասած հայ ժողովուրդը արյունով ու արցունքով լի իր հազարամյա տարեգրության ընթացքում բազում անգամ վերապրեց ողբերգական օրեր և ճակատագրական պահեր: Հիրավի, համաշխարհային պատմության մեջ, թերևս հազիվ թե լինի Արարտյան հիասքանչ երկրի նման մեկ այլ գողտրիկ անկյուն, որի սուրբ հողը՝ Մեծ ու Փոքր Հայքով, պատմական Հայաստանի արևմտյան և արևելյան հատվածներով հանդերձ ներկված, շաղախված, հեղեղված լիներ այդչափ զոհառատ արյամբ, վաչկատուն-խաշնարած անարգ բազում թշնամիների անհամար ավերիչ ասպատակություններից ու անհամադրելի բռնություններից: Այո, եղբրական էջեր հայ ժողովրդի պատմության մեջ անթիվ են և անչափ շատ, այնուհանդերձ ճակատագրական ողբերգական առունով ամենամեծ փորձությունը նրան սպասում էր հրաշագործ ու հրեշագործ XX դարում, երբ կատարվեց մարդկային երևակայությանն անհասանելի, նրա բանականությանը խորթ ու անըմբռնելի հանցագործություն, որը արդի դարաշրջանի քաղաքակիրթ աշխարհի քաղաքական լեքսիկոնում հայտնի են եղեռն, գենոցիդ, ցեղասպանություն, թերևս Արմենոցիդ անուններով: Ընդհանրապես 20-րդ հարյուրամյակը համաշխարհային պատմության մեջ կարծանագրվի, իսկ համամարդկային հիշողությունում կպահպանվի նաև որպես երկու արյունահեղ աշխարհամարտի, տարբեր՝ գերազանցապես փոքրաթիվ ու պետականությունից զուրկ ժողովուրդների դեմ մտահղացված և սառնասրտորեն իրագործված ցեղասպանությունների ժամանակաշրջան: Այսուհանդերձ, բիրտ ուժը և բռնության պաշտամունքը հանձին արդու-համիդների, թալեաթների, էնվերների, քեմալների, հիտլերների պատմության տատմայրը չէ, որի լավագույն վկայությունն է և ապացույցը հայոց պատմությունը ընդհանրապես ու Մեծ եղեռնը հատկապես: Անշուշտ, հայոց վիշտը անհուն մի ծով է, իսկ արդու-համիդների, երիտթուրքերի, քեմալականների արյունառուշտ ոճրագործու-

յունները, թեև ողբերգական դարձան արևմտահայության համար, այնուամենայնիվ հայոց դահիճների տխրահռչակ ծրագրերը վերջին հաշվով սին եղան հայ ժողովրդի հավերժ գոյատևումը, առանձնապես ազգային պետականության առկայությունը քաղաքական գորել հարված էր միջազգային հանցագործներին, նրանց այսօրվա ժառանգներին և վաղվա հետնորդներին, վառ ապացույց, որ անհնարին է պատմության ասպարեզից վերացնել այն ժողովուրդներին, որոնք գիտակցել են ու կարևորել ապրելու և գոյատևելու անհրաժեշտությունը: Ընդ որում, մեր ազգի դահիճների պարագլուխները ստացան արժանի պատիժ՝ հայ հերոսների անվրեպ, արդար կրակոցները խոցում էին միջազգային հանցագործներին, սրբագործված փամփուշտները մխրձվում էին հայության դեմ ազգային-կրոնական մոլուցքից կուրացած և ատելությամբ լցված պիղծ սրտերը, գետին տապալում նրանց, արդար վրեժխնդրության և հատուցման երանելի ու անկրկնելի պահեր պարգևում հայոց քաջերին, քանզի սեփական ժողովրդի դահիճները արյունաթաթախ թավալվում էին իրենց ոտքերի առջև, գտնվում հոգևարքի մեջ ու կնքում իրենց անփառունակ մահկանացուն: Սա է հայ ժողովրդի՝ հանձին նրա հերոս զավակների անխուսափելի պատասխանը թալեաթներին, էմվերներին, ջեմալներին, նրանց հայաջինջ քաղաքականության ջատագովներին, այն մորթապաշտ փաստաբաններին, պատմության կեղծարարներին (ընդ որում ոչ միայն թուրք)՝ առանձին քաղաքագետներին, որոնք առ այսօր էլ փորձում են «մեղմացուցիչ», «արդարացուցիչ» հանգամանքներ և պատճառներ գտնել ու «հիմնավորել» հայոց ցեղասպանությունը կամ անգամ պարզապես ժխտել Մեծ Եղեռնը: Այսպիսի մոտեցումը սանձարձակ ոտնձգություն է մարդկային խղճի, Վանի, Շատախի հերոսամարտերի, Մուսալեռցիների դյուցազնապատման դեմ, որի 40 օրը իր նշանակությամբ, տոկունությամբ, ազգային ոգու անպարտելիության իմաստով հավասարազոր է բազում տասնամյակների, հարյուրամյակների, հավերժության: Եվ միանգամայն օրինաչափ է, որ ավստրիացի նշանավոր գրող, ազգությամբ հրեա Ֆրանց Վերֆելը իր, հիրավի, ոսկյա գրչով, պատկերավոր լեզվով, գեղարվեստական բարձր ոճով և պատմական ճշմարտությամբ է ներկայացրել հայ ժողովրդի գոյապայքարը իր «Մուսա լեռան քառասուն օրը» պատմավեպում, որը, ի դեպ թարգմանված է եվրոպական բոլոր, ներառյալ և ռուսերեն լեզուներով: Հայերեն և ռուսերեն թարգմանության իր փայլուն առաջաբանում հայ ժողովրդի լավ բարեկամ, նրա պատմությանը քաջատեղյակ, ռուս մեծ բանաստեղծ Միխայիլ Դուդինը իրավամբ գրում էր, որ գիրքը ծոն էր հայ ժողովրդին, նրա խիզախ զավակներին, որոնց չսարսափեցրեց ոչ զգալիորեն գերազանցող թուրքական բանակը, ոչ հացի, վառուղի պակասը, քանզի նրանք լի էին

վճռականությամբ՝ կամ զոհվել պատվով կամ ապրել ազատ, հավերժական հայկական ոգով. «Ամբողջ Թուրքիայում կոտորում են հայերին, բայց կանգուն է Մուսա լեռը՝ հայոց արիության անմատչելի լեռը: ...Արնաքամ է լինում, բայց դիմանում է Մուսա լեռը... Խելագարության բոցերով բռնված ամբողջ երկրում՝ (Թուրքիայում - Մ.Ս) մեն մենակ՝ չի հանձնում իր մարդկային ոգու արիության բարձունքը»:

Մ.Դուդինը հատկապես հույս է հայտնում, որ մուսալեռցիներին նվիրված հուշարձանի վրա կփորագրվեն բոլոր մասնակիցների, ներառյալ նրանց հերոսությունը հավերժացնող Ֆրանց Վերֆելի անունները: Արդ, Մեծ Եղեռնի զոհերի պատվին կառուցված Ծիծեռնակաբերդի համալիրին կից բացվել է ու գործում է Հայոց Ցեղասպանության պատմական թանգարանը, որոնք իրենց անարգանքի դրոշմն են դնում արևմտահայության դահիճների ցեղասպանության կազմակերպիչների, նրանց հայաջինջ ծրագրերը իրագործողների սև ուժերի մուլեռանդ ճակատին, որպես հավերժ պարսավանք և խայտառակություն կատարված ոճրագործությունների համար: Հայոց պատմության մահասարսուռ էջերին նվիրված այս երկու վշտալից հուշարձանները Թուրքիայի պատմության ամոթանքի վկայությունն են, սանձարձակ ազգայնամոլության, գործած ոճրի անհերքելի ապացույցը, քանզի երիտթուրքերի ցեղասպան քաղաքականությամբ 1915-ին ոչնչացվեց արևմտահայության մի սովորական գանգված:

Հայոց Մեծ Եղեռնի պատմությունը ճշմարտացիորեն արտացոլող թանգարանի առկայությունը բնականաբար, մեծ արձագանք գտավ ժողովրդական լայն զանգվածներում, հասարակայնության բոլոր խավերում, հասարակական-քաղաքական կյանքում, սփյուռքում: Սակայն այս ամենին զուգահեռ և դրան միաժամանակ պետական քաղաքական գործիչներ հորջորջվելու հավակնություն ունեցող առանձին գորշ դեմքույկներ՝ այսպես կոչված երիտհայեր, փորձեցին «ուղղումներ» մտցնել, «սրբագրել», «խմբագրել» և «նոր լույսի» ներքո շարադրել, տխրահռչակ «նոր մտածողությամբ», «նորովի» ներկայացնել Մեծ Եղեռնի պատմությունը, այն մտայնությամբ, որպեսզի գալիք սերունդը բոլորովին այլ ձևով պատկերացնի XX դարի առաջին ցեղասպանությունը, այն դիտի սոսկ որպես սովորական մի դրվագ հայոց պատմության բոլոր ողբերգությունների մեջ:

Առաջին հայացքից զավեշտ և անհեթեթություն հիշեցնող այս դատողությունը, իհարկե, պատահական չէ, և ոչ էլ մոլորություն, այդպիսի գնահատականը կլիներ ոչ միայն մակերեսային, այլև ջուր կլցներ սույն՝ ըստ էության ապագգային մոտեցման հայադեմ ջրաղացին, քանզի մման հայեցակետը իրականում խարսխվում էր քաղաքական գործը հենքի վրա, ներարկվում ՀՀ նախկին իշխանությունների կողմից կենսագործվող հայ-թուրքական պետական-պաշ-

տոնական քաղաքականության ուղեծրի մեջ: Այսպիսի պատմաշեղահետախուզման ելակետային պարագայում օրինաչափ էր դառնում, թե ինչու աստիճանական հետևողականությամբ, իհարկե, սկզբում քողարկված, թերևս երկիմաստ, ապա զգույշ և վերջապես բացահայտ, անթաքույց լավեցին ծայներ ու կարծիքներ, ապա առանձին գրչակների կողմից մրոտվեցին թերթոններ, որոնց նպատակն էր ոչ միայն կասկածի տակ դնել հենց իսկ ցեղասպանության պատմափաստը, այլև կատարել անիրագործելին՝ «մոռացության» մատնել XX դարում նախադեպը չունեցած արյունոտ ոճրագործությունը: Եվ այս ամենի համար բազում գործոնների մեջ ելակետային է նաև «մարդասիրությունը» (միայն չգիտես ինչպիսի), ինչպես նաև հայ նոր և ապագա սերունդների միջից թուրք ժողովրդի հանդեպ ունեցած և հնարավոր ունենալիք «թշնամությունը» (ինչպիսի «սրտառուչ» վերաբերմունք գորշ գայլերի նախորդ ու ներկա սերունդների նկատմամբ) աստիճանաբար մարելու միտումը: Այս սին «հումանիստները» ուղղակի «մոռանում» են, կամ անտեղյակ են մի շատ պարզ, բայց անառարկելի, ժանրակշիռ պատմական ճշմարտության անցած երկար ու ձիգ ութ տասնամյակների ընթացքում չգտնվեց գեթ մի թուրք հումանիստ քաղաքական գործիչ կամ անգամ թուրքական մտածողության շրջանակներում անաչառ պատմաբան, որը նույն մարդասիրությունից դրդված և հայ-թուրքական հարաբերությունների պատմության մեջ նոր էջ բացելու նպատակով, զոհն է մեկ անգամ պարզապես հիշատակեր ցեղասպանությունը, երիտթուրքերի հանցագործությունը հայ ժողովրդի հանդեպ սպառիչ ձևով, միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի տեսանկյունից գնահատեր որպես մեծ եղեռն, ոճրագործություն ոչ միայն հայ ժողովրդի, այլև ընդհանրապես համայն մարդկության դեմ:

Չայոց Մեծ Եղեռնը փորձվեց նաև ներկայացնել որպես սոսկ երկկողմանի պարզունակ ընդհարում, այսինքն, հավասարության նշան դրվեց արյունոտ դահճի ու նրա անմեղ զոհի միջև, խոսել թուրքական մտացածին, թե իրական կորուստների մասին, հիմնահարցը դիտարկել այդ տեսանկյունից կնշանակի ոչ միայն կասկածի տակ դնել, այլև դատապարտել հայ ժողովրդի ինքնապաշտպանական հերոսամարտերը, իր կյանքը, գույքը, արժանապատվությունը, կոծրը, երեխաներին, ծնողներին պաշտպանելու իրավունքը, ապրելու, արարելու իր իրավունքը: Միթե՞ կգտնվի որևէ մի անաչառ պատմաբան, սկզբունքային քաղաքագետ, լուրջ իրավագետ համաշխարհային հանրության մեջ, որը մեղմ ասած կասկածի տակ առնի ֆաշիստական համակենտրոնացման ճամբարներում անխուսափելիորեն դանդաղ մահվան այն դատապարտվածներին, որոնք հանուն իրենց կյանքի պահպանման և ազատության դիմեին պայքարի ցանկացած

միջոցներին ու ձևերին միջազգային հանցագործների, առաջադեմ մարդկության հանդեպ ոտնձգություն կատարող ոճրագործների դեմ: Այդպիսի մոտեցումը լիովին կհակասեր միջազգային քաղաքական համակարգում հաստատված և կիրառված հանրաժանաչ բոլոր նորմերին ու սկզբունքներին: Այս առումով ճշմարիտ է Միխայիլ Դուդինի երիտթուրքերի ոճրագործությունը ոչ միայն դատապարտող, այլև միջազգային քաղաքական ու պատմագիտական հայեցակետը, որի համաձայն Հիտլերը և նրա մարդատյաց գաղափարախոսության կողմնակիցները հանձին Թալեթի, Էմվերի, Ջեմալի XX դարում ունեցել են իրենց արյունոռու նախորդները: Եվ միանգամայն օրինաչափ է ինչպես պատմության, այնպես էլ միջազգային քաղաքական տեսանկյունից, որ Ցեղասպանության սահմանումը տրվել է Նյուրնբերգի միջազգային զինվորական ատյանի խարտիայում: Նյուրնբերգյան դատավարության ժամանակ ֆաշիստական պարագլուխներին ներկայացված մեղադրանքներում նշվում էին նաև հանցագործությունները մարդկության դեմ, այդ թվում սպանություն, կոտորած, ցեղասպանություն ու այլ անմարդկային արարքներ քաղաքացիական ազգաբնակչության դեմ:

Հայոց Ցեղասպանության ընթացքում երիտթուրքերի ոճրագործությունները համադրելով ֆաշիստների հանցագործությունների հետ ուղղված հրեաների, սլավոնների, գնչուների և այլ ազգերի ու ազգագրական խմբերի դեմ եզրակացությունը աներկբայորեն միանշանակ է՝ երիտթուրքերը և ֆաշիստները երկվորյակներ են, ոճրագործություններն ընդհանուր են, քանզի երկու դեպքում էլ կատարվել է համամարդկային բնույթի հանցագործություն, ուստի նրանց կազմակերպիչների ու պարագլուխների պատժելիության համար չկա վաղեմության ժամկետ: Եվ օրինաչափ է թե պատմականի, թե տրամաբանականի տեսանկյունից ընդհանրությունը՝ առաջին աշխարհամարտի ամենաեռուն, թե՛ պահին ռուսաց արտագործնախարար Սազոնովի նախաձեռնությամբ 1915 թ. մայիսի 11-ի (24-ի) Անտանտի ռազմաքաղաքական խմբակցության պարագլուխների՝ Ռուսաստանի, Անգլիայի ու Ֆրանսիայի, արևմտահայության դեմ ոճրագործությունները պաշտոնապես դատապարտող հայտարարության և երկրորդ աշխարհամարտի տարիներին կազմավորված հակահիտլերյան կոալիցիայի առաջատար երեք մեծ տերությունների՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի ու Անգլիայի կողմից ընդունված ֆաշիստական հանցագործությունները դատապարտող հռչակագրերի միջև: Չէ որ Անտանտի տերությունները հատուկ հայտարարությունում կատարված ոճրագործության մեջ պատասխանատու են համարում թուրքական կառավարությանը: «Թուրքիայի պաշտոնական անձինք, չբացառելով նաև նախարարներին, կկրեն արժանի պատիժ իշխանության չարա-

շահման համար և այն ջարդի համար, որ նրանք ենթարկում են հայ բնակչությանը»¹: Սա միջազգային կարևորագույն քաղաքական նշանակության փաստաթուղթ է, քանզի մեծ տերությունները իրենց պաշտոնական հայտարարության մեջ Հայոց Ցեղասպանությունը առաջինը որակեցին որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն, որը և իրավունք էր տալիս նրանց հայտարարելու երիտթուրքերի պարագլուխներին պատժելու անխուսափելիության մասին: Իսկ հակահիտլերյան կոալիցիայի երեք մեծ տերությունները պաշտոնապես հռչակեցին, որ ֆաշիստական հանցագործները անխուսափելիորեն պատասխանատվության կենթարկվեն ու կհանձնվեն այն երկրների ժողովուրդներին, որտեղ կատարվել են ոճրագործությունները: Հատկանշական է, որ 1919 թ. հուլիսի 5-ին Կ.Պոլսի ռազմական դատարանը հեռակա կարգով մահապատժի դատապարտեց Թալեաթին, Էնվերին, Ջեմալին, Նազըմին: Քաղաքական իրադարձությունների կտրուկ շրջադարձը հնարավորություն չի տալիս Անտանտի հայտարարության և այդ դատավճռի օրինական կատարմանը: Այն կատարեցին հայ վրիժառու հայրենասեր հերոսները: Մինչդեռ ֆաշիստական հանցագործները կանգնեցին միջազգային դատարանի առջև ու կրեցին իրենց արժանի պատիժը: Ուստի և անիմաստ է այս առնչությամբ արևմտահայերի զոհերի թիվը անգամ արհեստականորեն նվազեցնելու միտումը, որը ևս «սրտառուչ», բայց անհաջող փորձ է «մեղմացուցիչ» հանգամանքներ գտնելու օսմանյան կայսրությունում կատարված միջազգային բնույթի հանցագործության համար, քանզի այն նույնպես որևէ կերպ չի կարող փրկել նրանց իրենց սպասվող համամարդկային ակեղ, բայց արդար դատավճռից: Եվ ինքնին հասկանալի է, թե ինչու այս դատապարտելի ու անընդունելի, հայ հասարակության լայն զանգվածների շահերին հակասող երիտհայերի սույն ազգախորթ դատողությունները օրինաչափորեն համընկնում են թուրքական պատմագրության հետ, թերևս ավելի ստույգ նրա սոսկ կրկնությունն են, դրանից բխող քաղաքական բոլոր հետևանքներով: Այս «նոր» մոտեցման կողմնակիցները ուղղակի թուփակում են պատմության կողմից առարկայորեն վաղուց արդեն դատապարտված ու մերժված սնանկացած դասը: Այդօրինակ երիտհայ քաղաքագետներին ու պատմագետներին թուրքական կառավարող շրջանները ոչ միայն մեծ հաճույքով կդարձնեն անձամբ Քեմալ Աթաթուրքի նախաձեռնությամբ ստեղծված «Թուրքական պատմական ընկերության» «պատվավոր» անդամներ, այլև շոայլորեն կշնորհեն «ամենաբարձր» և «ամենահեղինակավոր» «գիտական» կոչումներ ու աստիճաններ: Չէ՞ որ հայ ժողովրդի դահիճներից

¹ "Вестник Европы", Петроград, 1915г. № 6, с. 268.

մեկը՝ Թալեաթը, պատասխանելով գերմանական թերթերից մեկին, արևմտահայերի զոհերի մասին հարցին, լպիրշորեն նվազեցնելով անմեղ նահատակվածների թիվը՝ սկիզբ դրեց Հայոց Ցեղասպանության պատմության խեղաթյուրմանը, որը պարարտ հող գտնելով՝ անմիջապես ժառանգվեց թուրք պատմագրության կողմից, իսկ արդ ՀՀ նախորդ իշխանությունների սև ձեռքերի հետևանքով նրանց սնանկացած «տեսաբանների» և պահպանված քաղաքական սովորիկների կողմից: Երիտհայերի պաշտոնաշեփորափողները իրենց անսքող ու քողարկված քարոզչությամբ անհաջող ճիգեր են գործադրում ներշնչելու և համոզելու, թե այսօրվա Թուրքիան այլևս այն չէ, ինչ ութ տասնամյակ առաջ, որ նա արդեն «քաղաքակրթվել» է՝ ևս մի «պատմափաստ» հայ ժողովրդին վերստին մոլորեցնելու համար, թուլացնելու նրա իրատես զգոնությունը: Ըստ էության, նման դատողության և խորհրդային ժամանակաշրջանում քարոզվող պաշտոնական գաղափարախոսության ու քաղաքականության միջև դժվար է տեսնել և գտնել մեծ տարբերություն, քանզի ԽՍՀՄ-ի ղեկավարները նույնպես հանուն «նոր» Թուրքիայի հետ «բարեկամության» ու «եղբայրության», ոչ միայն անհիմաստորեն, հենց իսկ Ռուսաստանի ազգային պետական շահերից ելնելով՝ շռայլորեն զոհաբերեցին հայոց հողերը, այլև տասնյակ տարիներ շարունակ արգելում էին նույնիսկ օգտագործել Ցեղասպանություն բառը, կատարել պատմագիտական հետազոտություններ, հրապարակավ ու ազատ սզալ իրենց անմեղ նահատակների հիշատակը, որպեսզի այն «մոռացության» մատնվի հայ ժողովրդի պատմական հիշողությունից: Թերևս կարող են տարբեր լինել միայն մոտեցման ձևերը, մարտավարությունը, մինչդեռ սկզբունքորեն նույնն էր գլխավորը, հիմնականը, առաջնայինը՝ քաղաքական բովանդակությունը և ռազմավարությունը: Ի՞նչ տարբերություն սույն դատողությունների և ԽՍՀՄ-ի առանձին բարձրաստիճան գործիչների կողմից Թուրքիա կատարած պաշտոնական այցերի ժամանակ հայ ժողովրդի դահիճներից մեկի՝ Քեմալ Աթաթուրքի դամբարանին ծաղկեպսակներ դնելու փաստի միջև, որը արդարացի բուռն դժգոհություն, անասելի զայրույթ, ցասումնալից վրդովմունք էր առաջացնում հասարակայնության լայն շրջաններում, քանզի դա ոչ այլ ինչ էր. եթե ոչ ազգային արժանապատվության ոտնահարում: Ավելին, նույն ղեկավարության թեթև ձեռքով, առանց հայ ժողովրդի կամքը հարցնելու, առանց նրա ցանկությունը նկատի ունենալու, քաղաքական դիրքորոշումը հաշվի առնելու, զավեշտական է, բայց փաստ, հենց նրա անունից հայտարարեցին թե ոչ մի տարածքային հավակնություն, պահանջ չունեն Թուրքիայի նկատմամբ: Հայ-թուրքական նոր և նորագույն ժամանակաշրջանի ողջ առնչությունները միանգամայն օրինաչափորեն, թե պատմական և թե քաղաքական ա-

ռուսով աներկբայորեն վկայեցին, որ այդ հարաբերություններում չի եղել, չկա, թերևս չի էլ լինի «նոր», «քաղաքակրթված», «ժողովրդավարական» Թուրքիա՝ Հայկական հարցը, Մեծ եղեռնը, Արցախյան հերոսամարտը որպես լավագույն վկայություն: Հիրավի, աբդուլ-համիդյան հայաջինջ ծրագրերը յուրացրին ու ոճագործության առումով ավելի «բարձր մակարդակի» հասցրին երիտթուրքերը, ուստի իզուր չէ, որ նրանց պարագլուխները պարծենկոտաբար հայտնում էին, թե այն, ինչ չկարողացավ կատարել արյունոտ սուլթանը հայկական հարցում 30 տարում, իրենք իրագործեցին 3 ամսվա ընթացքում: Ինչ չկարողացան երիտթուրքերը, փորձեց ավարտին հասցնել նրանց գաղափարակից Քեմալ Աթաթուրքը: Երիտթուրքերի ոճագործություններն Արևմտյան Հայաստանում և ողջ կայսրությունում, քեմալականների հանցագործությունները Արևելյան Հայաստանում և Կիլիկիայում կազմում են Հայոց Ցեղասպանության ընդհանուր քաղաքականության բաղադրամասերը: Այն, ինչ կատարեցին երիտթուրքերը, և շարունակեցին քեմալականները, այլ կերպ, քան քաղաքական վամպիրություն՝ արյունախմություն անվանել պարզապես անհնարին է, դա բացահայտ քաղաքական կանիբալիզմ էր՝ բարձրացած պաշտոնական-պետական քաղաքականության մակարդակին: Արդ էլ պահպանվում է, կենսունակություն ցուցաբերում մեծ թուրանական պետության ստեղծման գաղափարը, որի լուծման գործում առկա մի շարք խոչընդոտների մեջ առանցքային է Հայաստանը որպես քաղաքական արգելափակոց և պատմականորեն ձևավորված «խոց» նրա իրագործման ճանապարհին: Պատմականորեն և առարկայորեն թուրքական կառավարող շրջանների կողմից հարյուրամյակների ընթացքում հետևողականորեն կենսագործվող հակահայ քաղաքականության հետևանքով, արդ, հայ-թուրքական առնչություններում ստեղծվել է չափազանց բարդ իրավիճակ դիվանագիտական լաբիրինթոսների մեջ, առավել կնճռոտ լաբիրինթոս, որի իրատես, հատկապես ազգաշահ հաղթահարումը պահանջում է ոչ միայն ժամանակ, այլև քաղաքական իմաստություն, դիվանագիտական հմտություն, ճկունություն և հեռամտություն: Հիրավի, քաղաքական ինչպիսի՞ իրատես գիծ մշակել և կենսագործել Թուրքիայի նկատմամբ՝ հաշվի առնելով հիմնահարցի հրատապությունը և արդիականությունը, կհարցնի հետաքրքրասեր ու անաչառ ընթերցողը:

Հայ-թուրքական առնչությունները «կարգավորե՞լ» արդյոք Հայոց Ցեղասպանության «մոռացության» խախուտ ու անհեռանկարային, էլ չենք ասում՝ ազգային արժանապատվության ոտնահարման անպատվաբեր կամուրջով: Բնավ էլ ոչ, որովհետև հակառակ պաշտոնական զանգվածային քարոզչության և զանազան «հիմնավորումների», այսպիսի քաղաքականությունը, ի պատիվ հայ հասարա-

կայնության բացարձակ մեծամասնության, թերևս իր ամբողջության մեջ երբեք չընդունվեց, առավել ևս՝ չարդարացվեց լայն շրջանների կողմից: Պատմական անխուսափելիությամբ նախկին իշխանավորների «անվրեպ » և «ոսկերչական», բայց իրականում ինքնագովազդային դատարկ հակազգային խորթ քաղաքականությունը պաշտպանություն չի գտնի հաջորդ սերունդների շրջանում: Ազգային սրբությունները վառ պահելու հաստատականության մեջ է հայ ժողովրդի քաղաքական հավերժությունը մարմնավորող Աստվածային նախախնամությունը: Մեր նախնիները մեզ կտակեցին Հայրենիք և Ազգ: -Անբասիր պահենք այս սրբությունները, ասաց Քաջ Վարդանը, Հայոց Մեծ Պատերազմի՝ Ավարայրի անմոռաց ճակատամարտից առաջ: Այս անմահ, ազգային խոր արմատներ ունեցող միշտ կենսունակ գաղափարը կտրելով հարյուրամյակներ, անցավ ելևէջներով ու հասնելով մեզ, գնում է դարերի խորքը, ազդարարելով հայ ժողովրդի գոյությունը, ապրելու կամքը և վճռականությունը, պատմական արդարությունը վերականգնելու իր իրատես ակնկալիքները: Հետևապես հայոց բազում վերքերի սուրբ-սրբոցի պատմության մեջ «ուղղուններ» մտցնելու միտումը դիտարկել որպես նուրբ, ծկուն, հեռամետ քաղաքականություն միանգամայն անընդունելի է ու սխալ, հատկապես միջազգային քաղաքական տեսանկյունից, եթե, իհարկե, մի պահ անտեսենք, որ նման դիրքորոշումը առանձին ժամանակավոր խալիֆներին իրենց ստրկական հավատարմությունը որոշ գործերը ուժերին ցույց տալու միջոց էր, նրանց պահանջը հլու-հնազանդությամբ կատարելու ցանկություն՝ գեթ մի պահ երկարացնելու սեփական անփառունակ իշխանությունը: Նախ, քաղաքական նման մոտեցումը աստիճանական անխուսափելիությամբ հեղինակագրկում էր Հայաստանի Հանրապետությանը համաշխարհային հանրության համակարգում, քանզի որդեգրած քաղաքական նման գիծը լավագույն դեպքում զարմանք էր պատճառում ու բնականաբար չէր ընկալվում իրեն հարգող ոչ մի ազգային պետության կողմից: Եվ դա միանգամայն պարզ էր ու հասկանալի, օրինաչափ և անխուսափելի, որովհետև երիտհայերի օտարամոլ քաղաքականությամբ զոհաբերվում էր ազգային սրբությունը, հայոց այն ծանր վերքը, որից արդ էլ արյուն է կաթում: Երկրորդ, քաղաքական այս վարքագիծը հարվածում էր առարկայորեն ու ենթակայորեն Հայոց Ցեղասպանության ճանաչմանը, որը անշուշտ, զարգանում է վերընթաց գծով և ունի միջազգային մասշտաբով լայնությամբ ու խորությամբ ծավալվելու իրատես նախահիմքեր: Այդ են աներկբայորեն վկայում արդեն ընդունված միջազգային քաղաքական ու դիվանագիտական առանձին կարևորագույն վավերագրերը՝ հատկապես մի շարք տեղությունների

պետական բարձրագույն մարմինների հայոց ողբերգությունը դատապարտող և ճանաչող պաշտոնական որոշումները:

Հիրավի, Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչումը, թեև դանդաղ, այնուհանդերձ հարթում է իր դժվարին, բայց և արդար անխուսափելի ուղին: Արդ, հանրահայտ են Եվրոխորհրդարանի կարևորագույն քաղաքական որոշումը, ԱՄՆ-ի նախկին նախագահ Ջ. Բուշի, ներկայիս նախագահ Բ. Քլինթոնի պաշտոնական հայտարարությունները ցեղասպանության սգո տարելիցների կապակցությամբ, որոնցում ցավակցություն են հայտնվում ողջ հայ ժողովրդին և, իհարկե, Ռուսաստանի դաշնության Պետական դումայի Մեծ Եղեռնի 80-ամյա տարելիցի նախօրյակին ընդունած Հայոց Ցեղասպանությունը հստակ ու միանշանակ դատապարտող պատմական կարևորագույն նշանակություն ունեցող որոշումը: Սակայն արդ համաշխարհային ասպարեզում դեռևս գործում են մեծ ու ազդեցիկ ուժեր, որոնք գերապատվություն տալով ռազմաքաղաքական բազմաթիվ գործոններին, ելակետ ունենալով հատկապես Թուրքիային պահելու իրենց ռազմավարական ուղեծրում, պաշտպանում են պաշտոնական Անկարայի տեսակետը և գնահատականը, դիմում գործող գործնական քայլերի Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման գծերնթացը կասեցնելու կամ մասնակիորեն խոչընդոտելու համար: Թերևս դյուրին է սույն հիմնադրույթը ապացուցելու համար բերել մի քանի պատմափաստեր, դրանցից սակայն մենք կփշատակենք միայն ամենակնհայտը, ամենանշանակալիցը, ամենաէականը: Խոսքը գնում է մոտ մի տասնամյակ առաջ ամերիկյան աչքի ընկնող սենատոր, հայտնի թուրքամետ Բերդի ու նրա կողմնակիցների կատաղի պայքարին, որի հետևանքով տապալվեց Հայոց Ցեղասպանության ճանաչման հարցը: Սակայն ամերիկյան Ծերակույտում Բերդի կողմնակիցների հաջողությունը սենատոր Ռ. Դոուլի ու վերջինիս գաղափարակիցների նկատմամբ, որոնք հանդես էին գալիս հայոց Մեծ Եղեռնի միջազգային ճանաչման օգտին, նման էր Պյուրոսյան հաղթանակին: Նախ, Բերդը ստացավ ձայների չնչին մեծամասնություն, որը պերճախոս վկայում է Ծերակույտում Ցեղասպանության ճանաչման գործընթացում կատարված լուրջ տեղաշարժերի մասին: Երկրորդ, թեև, անշուշտ, աներկբա է ԱՄՆ-ի քաղաքական գծի և դիրքորոշման վճռորոշ դերը միջազգային քաղաքական հիմնահարցերի քննարկման, ընդունման, առավել ևս լուծման համար, այնուհանդերձ օրինաչափորեն շարունակվում է Մեծ Եղեռնի պաշտոնական ճանաչման գործընթացը: Իհարկե, պատմադիվանագիտական տեսանկյունից կարճամտություն կլինի թերագնահատել, առավել ևս լիովին անտեսել ամերիկյան քաղաքական կեցվածքը, քանզի հենց դրանով է նաև գերազանցապես պայմանավորված Թուրքիայի կառավարող շրջան-

Ների անհաշտ և կոշտ, անհանդուրժող ու ժխտողական դիրքորոշումը Հայոց Ցեղասպանության հիմնախնդրում: Նրանք քաջ պատկերացնում են, որ ԱՄՆ-ը հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ու Թուրքիայի միջև եղած ուժերի հարաբերակցությունը միջազգային քաղաքական հաշվեկշռում և համաշխարհային ասպարեզում ընդհանրապես, ելակետ ունենալով հայ-ամերիկյան ու թուրք-ամերիկյան առնչությունների տեղը և նշանակությունը իր արտաքին քաղաքական ռազմավարության ու մարտավարության համակարգում որպես կանոն նախապատվում է Թուրքիային, որը դիվանագիտական առումով և համենայն դեպս ներկայիս պատմաքաղաքական փուլում ինքնին հասկանալի է և օրինաչափ: Թուրքիայի կառավարող շրջանների համար, իհարկե, դժվար չէ տեսնել և հասկանալ, թե ինչպիսի գործը ուժ են ամերիկյան թուրքամետ սենատորները, որոնք կարողանում են ակտիվորեն ներգործել երկրի արտաքին քաղաքական գծի, թե՛ մշակման և թե՛ կենսագործման վրա: Ահա ինչու Հայոց Ցեղասպանության հիմնահարցի բոլոր քննարկումների ընթացքում թուրքական բազմաթիվ էմիսարներ տառացիորեն գործելով մաքիավեյան սկզբունքով կանգ չէին առնում խտրության առաջ ու իրենց հատուկ կեղտոտ ու ստոր միջոցներով ձգտում ինչ գնով էլ լինի հասնել հետապնդած նպատակին:

Սենատոր Բերդը թուրքերից ստացավ շնորհակալական շատ նամակներ, իսկ Թուրքիայի ղեկավարությունը նրան նույնիսկ հրավիրեցին այցելել իրենց երկիր: Այդ նամակներում շնորհակալություն էր հայտնվում թուրքամետ սենատորին, չէ որ նրա ջանքերով թաքցվում էր հանրահայտ իսկությունը, ձախողվում ճշմարտության հաղթանակը, իսկ արդարացի դատապարտումից ու անխուսափելի փոխհատուցումից խուսափում էին միջազգային բնույթի հանցագործները և նրանց իրավահաջորդ պաշտպանները: Այս ամենը նույնքան կեղծ է ու շողոքոթող, որքան թուրք վայ պատմաբանների «փաստարկները», թե իբր Օսմանյան կայսրությունում ոչ մի ցեղասպանություն էլ չի եղել, իսկ օրթոդոքս խեղաթյուրողները հասել են այնտեղ, որ նույնիսկ «պնդում» են, թե իբր ոչ թե թուրքերն են կոտորել հայերին... այլ ուղիղ հակառակը՝ հայերն են սպանել թուրքերին: Եթե ԱՄՆ-ի ազդեցիկ ուժերին, այնուամենայնիվ, հաջողվել է թեկուզև խախտու հենքի վրա դեռևս շրջափակել Հայոց Ցեղասպանության պաշտոնական ճանաչումը, ապա այն եղավ ոչ միայն թուրքական ոճրագործությունները արդ սրբագործող թուրք պետական գործիչների ու դիվանագիտության ստոր աշխատանքի, քարոզչության ու շանտաժի հետևանք, դրան աներկբայորեն նպաստում էր միջազգային քաղաքական բարոկյանքը, լաբիրինթոսային քաղաքական իրադրությունը և մթնոլորտը: Սա է պատմաքաղաքական իսկությունը, հետևապես և մինչ երբ

պետք է դիվանագիտական սառը հաշվարկները և քաղաքական կոն-
յուկտուրան խափկանք դառնան պատմական ճշմարտության ազնիվ
ճանապարհին, ողբերգություններ «ընծայեն», աղաղակող անարդա-
րություններ պարզեն փոքրաթիվ ժողովուրդներին:

Միջազգայն հանրության հասարակական կազմակերպություն-
ների (խաղաղասեր ուժերի համաշխարհային վեհաժողովը, եկեղե-
ցիների համաշխարհային խորհուրդը, Եվրոխորհրդարանը, ժողո-
վուրդների մշտական դատարանը) հատկապես մի քանի պետու-
թյունների կողմից (Արգենտինա, Ռուրուզվայ, Կիպրոս, Ռուսաստան,
Յունաստան, Լիբանան, Ֆրանսիա) Հայոց Ցեղասպանության պաշ-
տոնական ճանաչումը և դատապարտումը, նրա ներկայիս գործըն-
թացը ոչ միայն սոսկ անկեղծ հարգանքի տուրք է անմեղ նահատակ-
ների հիշատակին, այլև շարունակությունն այն մարդասիրական մեծ
ու անհավասար պայքարի, որ սկսեցին Մեծ Եղեռնի պահից այնպիսի
նշանավոր հասարակական-քաղաքական գործիչներ, դիվանագետ-
ներ, բանաստեղծներ, գրողներ, ինչպիսին են գերմանացիներ Յ.
Լեփսիուսը, Ա. Վեգները, ամերիկացիներ Գիբոնսը, Յ. Մորգենթաուն,
ռուսներ Վ. Բրյուսովը, Յ. Վեսելովսկին, Ա. Գորդլևսկին, նորվեգացի
Ֆ. Նանսենը, անգլիացի Ա. Թոյնբին և շատ ու շատ մեծանուն դեմքեր
և մարդասեր հսկաներ, այն իրատես մտայնությամբ, որպեսզի հա-
մաշխարհային հանրությունից մեկընդմիջտ վերացվեն նման ոճրա-
գործությունները:

Հայ ժողովրդին միանգամայն հասկանալի է, թե ինչու Հայոց Ցե-
ղասպանության ճանաչման ու դատապարտման համար մղվող տ-
ևական պայքարում ռուսաց հասարակական- քաղաքական մտքի ա-
ռաջավոր ներկայացուցիչները, ի սկզբանե, ընթացան առաջին շար-
քերում:

Հայ-ռուսաց դարավոր քաղաքական, զինակցային ու մշակու-
թային առնչությունները, Ռուսաստանի հանդեպ հայ ժողովրդի ունե-
ցած առարկայական ու ենթակայական ակնկալիքները հայկական
հարցում, ռուսաց դիվանագիտության ընդհանուր առմամբ և իր ամ-
բողջության մեջ հայանպաստ դիրքորոշումը, հայոց ազգի համաշ-
խարհային մշակույթի գանձարանում ծանրակշիռ ներդրման մասին
նրանց քաջիմացությունը և, իհարկե, վերջիններիս մեծ մարդասի-
րությունը առարկայորեն նպաստեցին ու ամխուսափելի դարձրին մի
կողմից հայապաշտպան գործունեության, իսկ մյուս կողմից թուրքա-
կան ոճրագործությունները դատապարտելու համար: Արդ, երբ ար-
դեն Հայոց Ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գոր-
ծընթացում տեղաշարժերն ակնհայտ են ու անվիժելի օրվա հրամա-
յականն է մեծ ոճրագործությունը ուշադրության կիզակետում պահե-
լով հանդերձ միաժամանակ ընդգծել մեծ տերությունների ստանձ-

Նաժ պաշտոնական պարտավորությունները արևմտահայության նկատմամբ, լայն քարոզչության միջոցով ներկայացնել հայկական հարցը, նշել միջազգային իրավունքի տեսանկյունից միջազգային պայմանագրերի կատարման կարևորությունն ու անհրաժեշտությունը, օգտագործել ժողովրդական դիվանագիտության բոլոր լծակները և հիմքում ունենալով իրավաժառանգության ու իրավահաջորդության սկզբունքը, սպառնիչ ձևով լուսաբանել այդ երկրների հասարակայնության լայն շրջաններին Եվրոպական մեծ պետությունների քաղաքական և դիվանագիտական վարքագիծը, ռազմավարությունն ու մարտավարությունը հայկական հարցում, նշել, որ նրա լուծումը մնալով որպես «մեռած տառ» ստեղծեց սողանցքներ օսմանյան կայսրության պարագլուխների՝ արյունոտ սուլթան Չամիդից մինչև երիտթուրքեր Թալեաթը, Էնվերը, Ջեմալը, նրանցից մինչև Քե մալ Աթաթուրքը մարդկության պատմության մեջ եղած մեծագույն ոճրագործություններից մեկի՝ Չայոց Ցեղասպանության իրագործման համար: Չետևապես Չայոց Ցեղասպանության հետ սերտորեն միահյուսված հայկական հարցը նույնպես ամենածանր, թերևս չապաքինված մեծագույն վերքերից է, որի առողջարար քաղաքական բաղձալի սպեղանին լինելու է այնժամ, երբ լիովին կիրականանան համայն հայության ակնկալիքները: Ուստի և Չայկական հարցը, Չայ Դատը իր ներքին ու արտաքին քաղաքական բովանդակությամբ արդ էլ չի կորցրել իր հրատապությունը, ավելին, այն կմնա հույժ արդիական, մինչև պատմական արդարության վերականգնումը:

ԳԼՈՒԽ I

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՍԱՆ-ՍՏԵՖԱՆՈՅՈՒՄ ԵՎ ԲԵՈՒԽՆՈՒՄ ՌՈՒՄԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՍԲ

*«Բեռլինի դաշնագիրը իմ ծա-
ռայողական գործունեության
ամենասև օրն է»:
Ա. Գորչակով*

*«Խաբեություն և կեղտո-
տություն է նաև Եվրոպա-
կան դիպլոմատիան»:
Ալ. Սյասնիկյան*

*«Նույնպես և իմ»:
Ալեքսանդր Երկրորդ*


1877-78 թթ. ռուս-թուրքական Ռուսաստանի համար հաղթական պատերազմով, Բալկաններում և Անդրկովկասում նրա ռազմաքաղաքական դիրքերի հնարավոր բացահայտ ամրապնդման հետևանքով ու հատկապես Եվրոպական մեծ տերությունների դժկամության ու մտավախության առնչությամբ կյանքի կոչված Բեռլինի վեհաժողովը դիվանագիտության պատմության մեջ ճանաչելի դարձավ ոչ միայն սլավոնական ժողովուրդների պետականության վերականգնումը կամ օսմանյան ծանր լծի մասնակի թեթևացումը պաշտոնապես վավերացնող կարևորագույն պատմաքաղաքական փաստով, այլև հայոց հարցի արծարծմամբ, որը դուրս գալով միջազգային ասպարեզ շուրջ կես դար իր վրա գամեց արևմտյան մեծ տերությունների ուշադրությունը, որոնք շահարկելով այն օգտագործում էին որպես խաղաքարտ ու մանրադրամ և դրանով իսկ կործանում հայ ժողովրդի իղձերը և ակնկալիքները:

Ռուսական պատմագրության և հասարակական քաղաքական մտքի տարբեր ուղղությունների ներկայացուցիչներ միանգամայն օրինաչափորեն պատշաճ ուշադրություն են դարձրել այդ հիմնահարցերին, տվել են իրենց գնահատականները Բեռլինի վեհաժողո-

վում մեծ տերությունների քաղաքականության վերաբերյալ, հատկապես սլավոնական ժողովուրդների պատմական ճակատագրերի նկատմամբ և այդ առնչությամբ կատարել ուշագրավ հետևություններ ու իրատես եզրահանգումներ: Ռուսաց պատմագրության մեջ հայոց հարցը լուսաբանվել է Ռուսաստանի արևելյան քաղաքականության, ռուս-թուրքական միջպետական և ռազմաքաղաքական հարաբերությունների, Բալկաններում, Մերձավոր Արևելքում ու Անդրկովկասում գերիշխելու, Եվրոպական մեծ տերությունների միջև ծավալված դիվանագիտական սուր պայքարի կապակցությամբ, քանզի հայոց պատմության այս ճակատագրական փուլի թեկուզև հպանցիկ ուսումնասիրությունը, անշուշտ, նպաստում էր իրենց կողմից հետապնդած խնդրո առարկա հիմնահարցի համակողմանի բացահայտմանը: Հետազոտողները հիմնականում, առանձին բացառություններով հանդերձ, պատմականորեն ճիշտ են ներկայացնում ինչպես այդ պատերազմի ռազմաքաղաքական ընթացքը և արդյունքները, այնպես էլ հայոց հարցի էությունը, առարկայորեն դրական համարում հայաշատ հայաբնակ ու հայահող որոշ տարածքների միացումը Ռուսաստանին, թե՛ ռուսաց պետության և թե՛ հայ ժողովրդի համար:

Ռուսական պատմագրության մեջ լայնորեն քննախոսվել են Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերը: Ընդհանրապես ռուսական հասարակական-քաղաքական միտքը, ապա նաև պատմագրությունը բացառիկ հետաքրքրություն ցուցաբերեց բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարին ու այդ կապակցությամբ Ռուսաստանի, որպես սլավոնական և քրիստոնյա ամենագորեղ տերության, պատմական առաքելությանը, նրա հանդեպ տածած ակնկալիքներին:

Ռուսական հասարակական-քաղաքական մտքի տեսակետները և գնահատականները, իրատես հույսերը ու անիրատես ակնկալիքները, իրենց արտացոլումը գտան պատմագրության տարբեր ուղղությունների մեջ, քանզի այն խոսափող էր արտաքին քաղաքականության հիմնավորման համար: Միայն այդպիսի ելակետային մոտեցման դեպքում է հնարավոր դառնում համակողմանիորեն պարզաբանել, թե ինչու Բեռլինի վեհաժողովի նկատմամբ ընդհանրապես, ռուսաց դիվանագիտության գործունեության հանդեպ հատկապես, պատմագրության մեջ եղան տարբեր, թերևս, իրարամերժ գնահատականներ: Դրանք աղերսվում են հասարակական-քաղաքական մտքի յուրովի մեկնաբանության հետ, որի հիմքում ընկած էին տարբեր մոտեցումներ, Ռուսաստանի ու քրիստոնյա ժողովուրդների շահեր, ռուսաց կայսրության միջազգային հեղինակության հիմնահարցեր:



11
86343
ԵԼԳՅ

Ռուսական հասարակական-քաղաքական մտքի, ապա և պատմագրության տարբեր ուղղությունների ներկայացուցիչները ռուսաց պատվիրակության անդամների դիվանագիտական գործունեությունը և Բեռլինի վեհաժողովի ողջ արդյունքները գնահատելիս որպես կանոն ելնում են այդ իրադարձությունների անմիջական մասնակիցների հուշագրություններից, պաշտոնական գրագրություններից, եվրոպական տերությունների ներկայացուցիչների հետ ունեցած հանդիպումներից, միջազգային ասպարեզում քաղաքական այդ պահին հաստատված ուժերի հարաբերակցությունից, Ռուսաստանի մեկուսացման հնարավոր միտումից և այլ առարկայական ու ենթակայական գործոններից:

Բեռլինի վեհաժողովի որոշումների նկատմամբ ռուսաց հասարակական քաղաքական մտքի առանձին ներկայացուցիչների դժգոհությունը առաջին հերթին պայմանավորված էր Սան-Ստեֆանոյի պայմանագրի վերանայման եվրոպայի պահանջին Ռուսաստանի տված համաձայնության և դրանից բխող հեռու գնացող հետևանքներից: Հետևաբար միանգամայն օրինաչափ է, որ ռուսաց պատմագրության մեջ Բեռլինի վեհաժողովի արդյունքների քննադատները դրվատանքով են խոսում Սան-Ստեֆանոյի որոշումների մասին, բարձր գնահատում այդ պայմանագրի հեղինակ նշանավոր դիվանագետ գեներալ Իգնատևին, իրենց դժկամությունը հայտնում Գորչակովից, Շուվալովից, պատվիրակության այլ անդամներից՝ չափից ավելի զգուշավորության, վեհաժողովի մասնակիցներին զիջելու պատրաստականության, եվրոպական մեծ պատերազմի մեջ ներքաշվելու գերազնահատման և մտավախության համար: Ռուսաց պատմագրությունը բարձր է գնահատում Սան-Ստեֆանոյում Թուրքիայի հետ կնքված պայմանագիրը ռուսաց զենքի հաղթանակին համագոր լինելու համար, այն առումով որ պարտված հակառակորդը ընդունեց Ռուսաստանի հիմնական պահանջները, որոնք ընդ հանուր գծերով արտահայտում էին, նախ, բալկանյան ժողովուրդների առաջին հերթին Բուլղարիայի, ապա և արևմտահայության շահերը, որոնք սակայն վերանայվեցին Բեռլինի վեհաժողովում եվրոպական տերությունների դիրքորոշման պատճառով և միջամտության հետևանքով: Բեռլինի վեհաժողովի քննադատները, որպես կանոն, իրենց հայեցակետը հիմնավորելու համար հենվում են Իգնատևի նոթերի վրա, որոնք թեև ունեն ենթակայական բնույթ, այնուհանդերձ շատ գնահատականներ անաչառ են և հնարավորություն են ընձեռնում Սան-Ստեֆանոյում ու Բեռլինում ծավալված դիվանագիտական սուր պայքարը սպառիչ մեկնաբանելու համար: Եվ օրինաչափ է, որ Իգնատևի հուշերը ստացել են «Սան-Ստեֆանո» և «Սան-Ստեֆանոյից հետո» խորագիրը, որոնք տպագրված են Ա.Սու-

վորինի և Շուբինսկու կողմից դեռևս 1880 թ. հիմնադրված «Պատմական լրագրեր» պատմա-գրականագիտական ամսագրի 1915-1916 թթ. համարներում Ա.Բաշմակովի և Կ.Գուբասովի առաջաբանով և ծանոթագրություններով: Նրանք ըստ արժանվույն ներկայացնելով Իգնատևի դիվանագիտական գործունեությունը Սան-Ստեֆանոյում, Ռուսաստանի միջազգային քաղաքական, ազգային պետական շահերի տեսանկյունից գիտակցելով պայմանագրի կարևոր նշանակությունը, միաժամանակ ցավով արձանագրեցին, որ Բեռլինի չարաբաստիկ վեհաժողովում պատերազմում հաղթանակ տարած Ռուսաստանը փաստորեն հայտնվեց մեղադրյալի աթոռին¹: Իհարկե, դժվար է համաձայնվել նման խիստ և ծայրահեղ գնահատականի հետ, քանզի դատապարտյալի մասին խոսք լինել չէր կարող, պարզապես Եվրոպական դիվանագիտությանը, թեև հաջողվեց վերանայել Սան-Ստեֆանոյի պայմանագիրը ի վնաս Ռուսաստանի, այնուամենայնիվ բնականաբար չկարողացավ լիովին վերացնել ռուսական զենքի հաղթանակի արդյունքները:

Հայոց հարցի պատմության տեսանկյունից Իգնատևի հուշերը ներկայացնում են պատմագիտական մեծ հետաքրքրություն այն առումով, որ դրանց մանրակրկիտ ուսումնասիրության շնորհիվ մեր առջև պատկերվում է 16-րդ հողվածի հանդես գալու առարկայական և ենթակայական շարժառիթները, նրա նշանակությունը Ռուսաստանի և հայության համար: Չէ որ ռուս նշանավոր դիվանագետը և զեներալը՝ «այդ հիանալի գործիչը» իրատեսորեն համարվում է «զլխավոր և առավել լուսավոր ստեղծագործության»² Սան-Ստեֆանոյի պայմանագրի նախաձեռնողը, մշակողը և զլխավոր հեղինակը: Իգնատևը, ելնելով հաղթողի իրավունքից թուրքական ներկայացուցիչներից նախապես պահանջեց կատարել «հանուն մեր անդրկովկասյան սահմանների բարելավման տարածքային զիջումներ Հայաստանում»³: Միաժամանակ թուրքիայից պահանջվեց 1410 մլն. ռուբլի արծաթով ռազմատուգանք, սակայն հաշվի առնելով Օսմանյան կայսրության ֆինանսական ծանր վիճակը ու նկատի ունենալով սուլթանի խնդրանքը նորին գերազանցություն կայսրը մեծահոգաբար համաձայնվեց կրճատել նախատեսվող ռազմատուգանքի գումարը, դրա փոխարեն Ռուսաստանին զիջել Արդահանը, Բաթումը, Կարսը, Կաղզվանը, ռուսական սահմանին հարող Լազիստանի ու Հայաստանի հատվածը մինչև Սողանլուղ: Ռուս-թուրքական խառը հանձնաժողովը տեղում կորոշի սահմանազատման ման-

¹ "Исторический Вестник". Историко-литературный журнал, М. 1915г., январь, 139, с 28.

² Նույն տեղում, էջ 27:

³ Նույն տեղում, էջ 44:

րամասնությունները¹: Բանակցությունների ժամանակ, ինչպես վկայում է ռուս դիվանագետը, իրենց խնդրանքով Ադրիանապոլիս էին ժամանում սլավոնական երկրների, ապա և արևմտահայության ներկայացուցիչները: «Անհամեմատ ավելի դժվար էր,- գրում էր իր գեկուցագրում Իգնատևը,- սթափեցնել հայերին (հույների համեմատությամբ- Մ.Մ.) որոնք նույնպես ինձ հոգնեցնում էին իրենց խնդրանքներով և հաճախ ինձ դնում մոլորության մեջ: Ոչ միայն Կոստանդնուպոլսի հայ պատրիարքը որոշեց Ադրիանապոլսի թեմի իր փոխերեցի միջոցով գլխավոր հրամանատարին ուղարկել շնորհավորական բաց նամակ, որը նորին գերազանցությանը հանձնվեց հանդիսավորությամբ, այլև Օսմանյան բարձրաստիճան հայազգի պաշտոնյաները Կոստանդնուպոլսից ժամանեցին այստեղ (Ադրիանապոլիս-Մ.Մ.), որպեսզի բացեիք բաց խնդրեն Ռուսաստանի հովանավորությունը: Այսպես, օրինակ, պետական խորհրդի անդամ Նուրյան-էֆենդին և զինվորական նախարարության գլխավոր բժիշկ Ստեփան փաշան... Կարմիր Կիսալուսնի (այսինքն մեր Կարմիր Խաչը) գործերի պատրվակով ժամանեցին Ադրիանապոլիս՝ իրականում որպեսզի հասնեն Հայաստանի (Արևմտյան-Մ.Մ.) ինքնավարությանը»²:

Հայազգի այդ Օսմանյան չինովնիկները մանրամասնորեն պատմելով հայերի աղետների մասին Փոքր Ասիայում և Անատոլիայում, միաժամանակ զգուշացրին Իգնատևին, որ հայ հոգևորականությունը նախապատրաստվում է Նորին Մեծության անունով ուղարկել խնդրագիր՝ Սվազի, Վանի, Մուշի և Երզրումի մարզերին ինքնավարություն շնորհելու մասին: Ռուս դիվանագետը հիշեցրեց - Նուրյանին ու Ստեփան փաշային, թե իրենք դեռևս վերջերս թշնամաբար էին գործում Ռուսաստանի նկատմամբ, միաժամանակ իր զարմանքը արտահայտեց նրանց նման բացահայտ և կտրուկ դիմումի համար: Համոզվելով որ Իգնատևին քաջ հայտնի էր ամեն ինչ, նրա զրուցակիցները չէին էլ փորձում հակաճառել, այլ բացատրում էին, որ իրենց կարծիքով հայերը օգուտ քաղելու համար և թուրքիայում որևէ նշանակություն ունենալու նպատակով պետք է հավատարիմ մնային Բարձր Դռանը, քանի դեռ կարելի էր հուսալ թուրքական կայսրության պահպանման, ապա և Եվրոպայի կողմից մտահոգաված վերափոխումների միջոցով նրա վերածնության վրա: Բայց քանի որ այժմ թուրքիայի գոյությունը, որպես մեծ տերություն, դառնում է անհնարին, ապա հայերին անհամեմատ ավելի շահավետ է ձգտել

¹ "Исторический Вестник". Историко-литературный журнал, М. 1915г., январь, 139, с 47-48.

² "Исторический Вестник". 1915г., апрель, т. 140, с 52.

Հայաստանի վերածննանը Ռուսաստանի հովանավորության ներքո¹:

Հատկանշական է, որ արևմտահայերի այս ազդեցիկ ներկայացուցիչների այցից հետո, ինչպես վկայում է Իգնատևը, Ադրիանապոլիս ժամանեց նոր պատգամավորություն իր հետ բերելով նորին գերազանցության ռուսաց կայսրին հղած խնդրագիր և նամակ Ներսես պատրիարքից: Խնդրագիրը ստորագրված էր վերջինիս և ինը արքեպիսկոպոսի կողմից հայ ողջ ժողովրդի անունից, ուր կայսրին խնդրում էին իրենց վերցնել իր հովանավորության ներքո, և Անատոլիայի հայերի համար պահանջել նույնպիսի ինքնավար կառավարում, որպիսին տրվելու էին Եվրոպական Թուրքիայի մարզերին: Այս խնդրագիրը ինչպես և Թուրքիայի քրիստոնյա բնակչության պատգամավորների այլ գրավոր դիմումներ Իգնատևի կողմից հավասարապես առաքվեցին կանցլերին կայսրին ներկայացնելու համար²: Հետևաբար Իգնատևի քաղաքական-դիվանագիտական դիրքորոշումը հայկական հարցում հստակ էր, նա քաջ գիտակցում էր, որ դրա լուծումը միանգամայն ձեռնտու էր Ռուսաստանին: Իգնատևը ոչ պակաս չափով լիովին պատկերացնում էր արևմտահայերի ակնկալիքները ռուսաց կայսրության նկատմամբ, նրանց բանագնացների պաշտոնական այցերի նպատակները Ադրիանապոլիս: Մինչդեռ հիմնահարցին բուրրովին այլ տեսանկյունից էր մոտենում և այլ ձևով պատկերացնում կանցլեր Գորչակովը, որի մասին է վկայում նրա հեռագիրը Իգնատևին, վերջինս ամբողջովին այն ուշել է իր նոթերում: Այդ հեռագրում ուղղակի մատնանշվում էր, որ կայսերական կառավարությունը մտադրված չէ Թուրքիայի հայ բնակչությանը ընդունել Ռուսաստանի հովանավորության ներքո, առավել ևս նրան տրամադրել այն առավելությունները, ինչ նախատեսվում էր Բալկանյան թերակղզու քրիստոնյա ժողովուրդներին: «Ձեզ (Իգնատևին-Մ.Մ.) հավանաբար հայտնի է, - նշված էր կանցլերի հեռագրում, - մեծ իշխան Միխայիլ Նիկոլակիչի (կայսրի եղբոր-Մ.Մ.)՝ կայսրի հավանությանը արժանացած տեսակետը՝ Հայաստանում նոր չափավոր սահմանագիծ անցկացնելու վերաբերյալ»³: Իգնատևի ու նրա նոթերի ծանոթագրությունների հեղինակների իրատես կարծիքով, որի հետ, ի դեպ, համաձայն էին ռուսաց պատմագիտական և քաղաքական մտքի շատ և շատ ներկայացուցիչներ, սա բնականաբար չէր կարող համահնչուն լինել պատրիարքի հույսերի հետ, քանզի վերջինս ակնկալում էր հայ բնակչության համար այնպիսի

¹ "Исторический Вестник", 1915 г., апрель, т. 140, с. 53.

² "Исторический Вестник", т. 140, с. 53.

³ Նույն տեղում, 1915թ հունիս. էջ 794:

ինքնակառավարում, որպիսին նախատեսվում էր Բոսնիայի, Յերցեգովինայի և Կրետեի համար¹: Բաշնակովը բարձր գնահատելով Իգնատևի դիվանագիտական գործունեությունը Ադրիանապոլսում և Սան-Ստեֆանոյի պայմանագրի կնքման գործում, միաժամանակ մատնանշում էր, որ ռուս դիվանագետի կողմից նախագծված սահմանը ասիական տարածքում, թեև համաձայնեցված չէր Կովկասի փոխարքայության հետ, այսուհանդերձ լիովին համահնչուն էր փոխարքայի մտահղացումներին: Հատկանշական է, որ Իգնատևի նոթերը «Պատմական լրաբեր» ամսագրում տպագրվեցին 1915-1916 թթ., այսինքն, ռազմաքաղաքական այն պահին, երբ եռուն շրջանում էր առաջին աշխարհամարտը, երբ ռուսական բանակը հայ կամավորական ջոկատների ամենակտիվ մասնակցությամբ ազատագրում էին Արևմտյան Հայաստանի տարածքները, որոնց համար, թերևս, հարկ չլիներ թափել այդչափ թանկ արյուն, եթե ռուսաց դիվանագիտությունը հանձին Գորչակովի ու Շուվալովի լիներ ավելի շրջափայց և պաշտպաներ Սան-Ստեֆանոյի պայմանագիրը: Ահա ինչու Բեռլինի վեհաժողովում դիվանագիտական անհաջողությունները կապված Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածի վերանայման հետ ամսագրում քննադատվում է առավել կրքոտությամբ՝ քաղաքական հրատապության տեսանկյունից: Իգնատևի դիվանագիտական դիրքորոշումը կայսրության շահերի տեսակետից հիմնավորելով Բաշնակովը իրավամբ նշում էր, որ մշակելով 16-րդ հոդվածը Սան-Ստեֆանոյի հեղինակը ղեկավարվում էր կովկասյան սահմանների ամրապնդման, նրա ասիական տարածքների պաշտպանունակությունը զորեղացնելու միտումով: Ավելին, Բաշնակովի ընդունելի կարծիքով Իգնատևը նպատակադրվել էր ոչ միայն դժվարացնել ապագայում Թուրքիայի հնարավոր հարձակումը Ռուսաստանի վրա և դրանով իսկ անվտանգել հարավային սահմանները, այլև զգալիորեն կրճատել ռազմական ծախսերը: Չէ որ Սան-Ստեֆանոյի պայմանագրով Ռուսաստանին էին անցնելու ոչ միայն Կարսը և Բաթումը, այլև Բայազետի մարզը Ալաշկերտի հովիտի հետ հանդերձ: Մինչդեռ Բեռլինի վեհաժողովի որոշմամբ Ալաշկերտի հովիտը և Բայազետի տարածքը վերադարձվեցին Թուրքիային: Ռուսական դիվանագետները Իգնատևի ղեկավարությամբ տեղեկացրին Սաֆեթ փաշայի գլխավորած թուրքական լիազորներին (որի քարտուղարը ազգությամբ հայ Սարգիս բեյն էր՝ արտաքին գործերի նախարարության գրասենյակի տնօրենը), թե բանակցությունները շարունակվելու են մինչև փետրվարի 18-ը, որ այն ավարտվելու է փետրվարի 19-ին՝ կայսր Ալեքսանդր Բ-ի գահակալման օրը: Եվ նրանք կարողացան

¹ "Исторический Вестник", 1915 г., апрель, с 794.

հիանալիորեն իրագործել իրենց մտահղացումը, քանզի արդեն փետրվարի 18-ին ժամը 12-ին Ռուսաստանի անունից Իզնատևը և Նելիդովը, իսկ Թուրքիայի կողմից Սաֆեթ փաշան ու Սադուլահը ստորագրեցին Սան-Ստեֆանոյի պայմանագիրը: Իզնատևը նույն օրը՝ փետրվարի 18-ին հեռագրեց կանցլերին. «Ուրախ եմ, որ կարող եմ ձեզ տեղեկացնել, թե թուրքերը, երկարատև ու դժվարին բանավեճից հետո, վերջացրին համաձայնությամբ մեզ զիջելու Բաթումը, Արդահանը, Կարսը և Բայազետը: Դեռ չարունակում ենք վիճել սահմանազատման մանրամասների շուրջ»¹:

Մի քանի ժամ հետո, երեկոյան, Իզնատևը հեռագրեց Գորչակովին. «Ի լրացումն իմ այսօրվա հեռագրի տեղեկացնում եմ, որ Օլթին, Արդանուշը, Արդվինը, Ալաշկերտը, Կաղզվանը, և Խամուրը մնում են Ռուսաստանին»²: Պատմագիտության և հատկապես դիվանագիտության պատմության մեջ Սան-Ստեֆանոյի պայմանագիրը հաճախ անվանվում է պրելիմինար, մինչդեռ նախապես Թուրքիան պատրաստ էր այն համարել վերջնական և, բնավ էլ, չէր ցանկանում օգտագործել «նախնական» արտահայտությունը: Թուրքական պաշտոնական լիազորների այս առաջին հայացքից տարօրինակ առաջարկ-պահանջի մեջ, որը ի դեպ առարկայորեն համապատասխանում էր Ռուսաստանի շահերին, իրականում ըստ էության տարօրինակ ոչինչ չկար, այն պարզապես պայմանավորված էր հավանաբար հետևյալ գործոններով: Նախ, Սան-Ստեֆանոյի պայմանագիրը դիտարկել ոչ վերջնական և համարել նախնական մտավախություն էր առաջացնում Թուրքիային, որի կառավարող շրջանների կարծիքով այն կարող էր Ռուսաստանին դիվանագիտական-քաղաքական սողանքներ թողնել ավելի ծանր պահանջներ ներկայացնելու համար: Երկրորդ, Թուրքիան լիովին համոզված չէր Եվրոպական դիվանագիտության թուրքամետ դիրքորոշման վրա, ընդ որում, նրան քաջ հայտնի էր, որ անգամ նման պարագայում իրեն հարկ կլինի լուրջ զիջումներ կատարել մեծ տերություններին, հատկապես Անգլիային: Թերևս, հենց այս շարժառիթներից դրոշմած թուրքական լիազորները համառորեն պնդում էին, որպեսզի պայմանագրում բացառվի պրելիմինար-նախնական բառը, որի հետ Իզնատևը բնականաբար հաճույքով համաձայնվեց, ենթադրելով, թե իրեն կհաջողվի տրված հրահանգներից նահանջելու հանգամանքը մեկնաբանել և արդարացնել թուրքերի համառ պահանջով:

Սակայն Սան-Ստեֆանոյի պայմանագրի գլխավոր հեղինակի հույսերը չարդարացան, քանզի փետրվարի 18-ի երեկոյան նա

¹ "Исторический Вестник", 1915г., август, т. 141, с 387.

² Նույն տեղում, էջ 387:

ստացավ կանցլերի ուշացած ճեպագիրը, որը չափազանց չոր և սառ ձևով հաստատում էր գերագույն նախկին կարգադրությունը՝ պայմանագիրը անվանել «պրեզիդիմար»¹: Պատմագիտական առումով և միջազգային քաղաքական-դիվանագիտական տեսանկյունից, անշուշտ, կարևոր է պարզել, թե ինչ շարժառիթներից դրոշված ռուսաց կանցլերը նախընտրեց դիվանագիտական այդպիսի մարտավարություն: Առանցքային նշանակություն ունեցող սույն հիմնահարցի պատասխանը չի եղել միանշանակ, քանզի տարբեր էին մոտեցումները, սկզբունքները, մեկնաբանությունները: Ռուսաստանի արտաքին գործոց գերատեսչության ղեկավար կանցլեր Գորչակովը ցանկանում էր Սան-Ստեֆանոյի պայմանագիրը դիտարկել «նախնական», որպեսզի հավանաբար կարողանար խուսափել դիվանագիտական մեկուսացումից, իսկ նրա հոդվածները համաձայնեցնել եվրոպական տերությունների հետ:

Գնահատելով Գորչակովի այս ճեպագրի հետևանքները Բաշմակովը գրում է, թե «սրտի ցավով հարկ եղավ ենթարկվել և քարտուղարները արդեն գիշերը ձեռնամուխ եղան նորից գրել նախապատրաստվող պայմանագրի երկու օրինակների առաջին էջերը: Կարելի է պատկերացնել,- ամփոփում է Բաշմակովը,-թե որքան էր այն ցավալի և ծանր ոչ միայն Իգմատևին, այլև նրա բոլոր աշխատակիցներին»²: Ընդհանրապես նրա կարծիքով Իգմատևի «Նոթերի» այս տողերից երևում է, որ «ծանրագույն մեղքը Ռուսաստանի հանդեպ Բեռլինի վեհաժողովում նրա ստորացման համար ամբողջովին ընկնում է իշխան Գորչակովի վրա, որը ոչ միայն անհրաժեշտ համարեց իրագործել ռուսական ազգային շահի տեսանկյունից անկասկած վնասակար «գերագույն կարգադրությունը», այլև իր հոգևոր զարմանալի թուլությունը հասցրեց այն աստիճանի, որ վնաս պատճառեց իր հայրենիքին»³: Հատկանշական է, որ ռուսական ամենաբարձրաստիճան ներկայացուցիչների՝ կայսրից մինչև մեծ իշխան Նիկոլայ Նիկոլևիչը, կանցլեր Գորչակովից մինչև Իգմատևը, գրագրությունները անվիճելիորեն ու աներկբայորեն վկայում են, որ նրանք քաջ գիտակցում էին Ռուսաստանի համար Սան-Ստեֆանոյի պայմանագրի ողջ կարևորությունը և քաղաքական նշանակությունը:

Իգմատևը Թուրքիայի լիազորների հետ պաշտոնական բանակցությունների ժամանակ ձգտում էր բացատրել և համոզել նրանց, որ Ռուսաստանի գերագույն խնդիրն է ու նպատակը «արգելել օտա-

¹ "Исторический Вестник", 1915г., апрель, т. 140, с 391.

² "Исторический Вестник", ... с 391.

³ Նույն տեղում, էջ 391:

րերկրյա նավերի մուտքը նեղուցներ»¹: «Մուտքը նեղուցներ,- հրահանգավորում էր Իգնատևը ռուսաց պատվիրակության թարգման Մ.Կ. Օնուխն,- ծառայում է որպես շքամուտքի դուռ մեր տան (Ռուսաստանի-Մ.Ս.) համար»²: Այս միտքը կարմիր թելի պես անցնում էր այն պաշտոնական զեկուցագրերում, որոնք հասցեագրված էին կանցլեր Գորչակովին, նրա տեղակալ Գիրսին, արտգործնախարարության ասիական դեպարտամենտի կառավարչին, Թիֆլիսում նստած Կովկասի փոխարքային: «Պատիվ ունեմ տեղեկացնել Ձերդ կայսերական մեծությանը,-նշված էր Կովկասի փոխարքային հղված զեկուցագրում,- որ հաշտության պայմանները հենց նոր ստորագրվեցին Սան-Ստեֆանոյում: Կարսը, Բաթումը, Բայազետը, Արդահանը, Օլթին, Արդանուշը, Արդվինը, Ալաշկերտը, Կաղզվանը, Խանուրը մնում են Ռուսաստանին»³: Հետևապես նախնական համաձայնությամբ հայկական հողերի մի զգալի մասը անցնելու էր Ռուսաստանին: Եթե նկատի ունենանք, որ վերոհիշյալ տարածքների զգալի մասը վերադարձվեց Թուրքիային, ապա պարզ կդառնա, թե ինչու ռուսական հասարակական-քաղաքական և պատմագիտական մտքի շատ ներկայացուցիչներ խիստ դժգոհ լինելով Բեռլինի վեհաժողովից խստագույնս դատապարտում էին պայմանագիրը ստորագրած կանցլերին ու նրա գործընկերներին: Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչը փետրվարի 19-ին կայսրին ուղարկեց հետևյալ հեռագիրը. «Երջանիկ եմ շնորհավորել Ձերդ մեծությանը հաշտության կնքման կապակցությամբ: Աստված արժանացրեց մեզ, թագավոր, ավարտել ձեր կողմից նախաձեռնած սուրբ մեծ գործը: Գյուղացիության ազատագրման օրը դուք ազատագրեցիք քրիստոնյաներին մահմեդականների լծից»⁴: Կայսրը այս հեռագիրը ստացավ երեկոյան ժամը 9-ի սկզբներին և արդեն 8 անց 40 րոպեին մեծ իշխանին տվեց հետևյալ պատասխանը: «Երախտապարտ եմ աստծուց հաշտությունը կնքելու առթիվ: Սրտագին շնորհակալություն քեզ և մեր բոլոր կտրիճներին ձեռք բերած արդյունքների համար: Միայն թե Եվրոպական վեհաժողովը չվատթարացնի այն, ինչ մենք ձեռք բերեցինք մեր արյամբ: Ալեքսանդր»⁵:

Ավելին, կայսրը պատասխանելով նախարարների կոմիտեի նախագահ Իգնատևի շնորհավորական նամակին նշում էր, թե ինքը ուրախ է, որ Իգնատևի որդուն բախտ վիճակվեց «ստորագրել Ռուսաս-

¹ "Исторический Вестник", 1915г., апрель, т. 140, с. 44.

² Նույն տեղում, էջ 44:

³ "Исторический Вестник", 1915г., сентябрь, т. 141, с. 732.

⁴ Նույն տեղում, էջ 733:

⁵ Նույն տեղում, էջ 733:

տանի համար այդչափ պանծալի հաշտություն: Այժմ մնում է ցանկալ, որպեսզի Եվրոպական մեր բարեկամները իրենց միջամտությամբ չխանգարեն այն ի կատար ածելու համար»¹: Ռուս դիվանագետը Սան-Ստեֆանոյի պայմանագրի կետերը Թուրքիայի ներկայացուցիչների հետ պաշտոնապես համաձայնեցնելուց հետո շտապեց այդ մասին տեղեկացնել Լոնդոնի, Փարիզի, Բեռլինի, Վիեննայի, Յոնի դեսպաններին՝ կոմս Շուվալովին, իշխան Օռլովին, Ուբրիին, Նովիկովին, բարոն Իքսկուլյուին: «Նախնական հաշտության պայմանագիրը, նշված էր Իզմատևի հեռագրում, - հենց նոր ստորագրվեց... Կարսը, Արդահանը, Բայազետը, միացված են Ռուսաստանին: Այս բոլոր տարածքները փոխարինում են դրամական վարձատրությամբ սահմանված երեք քառորդին»²: Իզմատևի այս դիվանագիտական քայլը խորապես մտածված էր և իրատես: Նախ, հեռագրելով ռուս դեսպաններին նա անկասկած, համոզված էր, որ վերջիններս անմիջապես տեղյակ կպահեն Եվրոպական տերությունների կառավարող շրջաններին ու դրանով իսկ նրանց կկանգնեցնեն քաղաքական-դիվանագիտական փաստի առաջ, կստիպեն հաշվի նստել արդեն ստորագրված պայմանագրի հետ: Երկրորդ, նպաստավոր հաշտության պայմանագիրը ծեռք է բերվել ռուս զինվորների արյան գնով, իսկ հայկական տարածքների դիմաց զգալիորեն կրճատվել է դրամական հատուցումը՝ ռազմատուգանքը: Երրորդ, դժվար չէ կռահել Իզմատևի հետապնդած քաղաքական նպատակը՝ համոզել Ռուսաստանի պաշտոնական լիազորներին Եվրոպայի մայրաքաղաքներում գործի դնել դիվանագիտական արվեստը, նրա զինանոցում եղած ողջ հնարքը Սան-Ստեֆանոյի պայմանագիրը անասան պահելու և համաեվրոպական՝ հնչեղություն հաղորդելու համար: Սակայն Իզմատևի այս լավատեսական ակնկալիքները չիրականացան, որի մասին է նշում հենց ինքը՝ Սան-Ստեֆանոյի գլխավոր հեղինակը: Նրա իրատես կարծիքով Ռուսաստանի համար այս չափազանց կարևոր փաստը, որը պետք է վճռորոշ լիներ բանակցությունների ժամանակ անտեսվեցին սկզբում «մեր դեսպանի (Շուվալովի-Մ.Ս.) Լոնդոնում Սոլսբերիի հետ բանակցությունների ընթացքում, իսկ այնուհետև ռուսաց լիազորները Բեռլինի վեհաժողովում մոռացան, լռության մատնեցին կամ կորցրեցին տեսադաշտից»³:

Սան-Ստեֆանոյի պայմանագրի և Բեռլինի դաշնագրի վերջնական արդյունքի առումով, հատկապես մեզ հետաքրքրող 16-րդ - կետը 61-րդ հոդվածի ենթափոխվելու իմաստով պատմադիվանա-

¹ "Исторический Вестник" 1915г., сентябрь, т. 141, с 733-734.

² Նույն տեղում, էջ 734:

³ Նույն տեղում, էջ 734:

գիտական մեծ հետաքրքրություն են ներկայացնում Իզնատևի «Նոթերի» այն տողերը, որտեղ խոսք է գնում Գորչակովի դիրքորոշման և գնահատականի մասին: Իզնատևի վկայությամբ կանցլերը իրեն դիմավորեց քաջալերանքով, որովհետև վերջինիս հաջողվել էր «անսպասելիորեն այդչափ արագ հասնել ցանկալի արդյունքի»¹: Իսկ բուն պայմանագրի մասին նա արտահայտվեց, թե «այն իր չափավորությամբ հազիվ թե բավարարի ռուսական հասարակական կարծիքը, որը իր լիազորներից սպասում էր անհամեմատ ավելի շատ, և որ իր համոզմամբ այս պայմանագիրը խոչընդոտների չի հանդիպի Եվրոպայի կողմից, քանզի հենվելով Բիսմարկի ու Անդրաշիի վրա, նրան հեշտ կլինի ամենակարճագույն ժամկետում հաղթահարել Բիքոնսֆիլդի (Դիզրայելիի-Մ.Մ.) անբավականությունը և Եվրոպայից ստանալ Թուրքիայի հետ ձեռք բերած պայմանների հաստատումը»²: Դժվար չէ կռահել, որ Գորչակովը շարունակում էր հույսեր փայփայել երեք կայսրերի դաշինքի վրա, որը ռազմաքաղաքական ու դիվանագիտական առումով իրեն ոչ միայն լիովին սպառել էր, այլև ինչպես ցույց տվեց Բեռլինի վեհաժողովը ու հատկապես դրան հաջորդած երկու տասնամյակը գտնվում էր քաղաքական հոգևարքի մեջ: Ահա ինչու կանցլերի լավատեսությունը անխուսափելիորեն պետք է ի դերն ելներ, ակնհայտ էր, որ ռուս փորձված դիվանագետը հիմնահարցերին ցուցաբերում էր ոչ այնքան առարկայական, որքան ենթակայական մոտեցում, պարզ էր, որ նա ցանկալին ընդունեց որպես իրականություն: Իզնատևը Գորչակովի հետ զրույցի ընթացքում որոշ կասկածանք հայտնեց ակնկալվող նման հեշտ դիվանագիտական հաջողության համար և, ի վերջո, սահմանափակվեց նրանով, որ սրտանց ցանկություն հայտնեց որպեսզի կանցլերի հույսերը իրականանան և որպեսզի թուրքերին ներկայացված իր բոլոր պահանջները, սպասածին հակառակ, բոլոր տերությունները գտնեն չափավոր³:

Գորչակովը Սան-Ստեֆանոյի պայմանագիրը համարեց չափավոր, որը պատմադիվանագիտական առումով արդեն անիրատես գնահատական էր, քանզի Բեռլինի վեհաժողովում նա անձամբ կատարեց լուրջ զիջումներ Եվրոպական մեծ տերություններին, ներառյալ 16-րդ հոդվածում: Ակնհայտ էր, որ Գորչակովի դատողությունները ուղղակի խարսխված էին ավագի վրա: Կանցլերը, իհարկե, սխալվում էր, որովհետև ռուսական հասարակական-քաղաքական ու պատմադիտական միտքը գերազանցապես դժգոհեց Բեռ-

¹ "Исторический Вестник", 1915 г., ноябрь, т. 142, с 414.

² Նույն տեղում, էջ 414-415:

³ Նույն տեղում, էջ 415:

լինի վեհաժողովի արդյունքներից հենց Սան-Ստեֆանոյի պայմանագրի վերանայման համար, որը զգալիորեն սահմանափակեց Ռուսաստանի իրավունքները: Բեռլինի պայմանագրի քննադատները որպես այլընտրանք մատնանշում էին Սան-Ստեֆանոյի պայմանագիրը, որը հիմնականում համազոր էր ռուսական զենքի հաղթանակին, ուստի և դրականորեն գնահատվեց հասարակական-քաղաքական ու պատմագիտական մտքի ներկայացուցիչների կողմից: Բեռլինի վեհաժողովի արդյունքները Սան-Ստեֆանոյի պայմանագրի տեսանկյունից առաջինը իրատեսորեն քննադատեց Իգնատևը: Նրա կարծիքով կանցլերը ուներ միայն մի մտահոգություն՝ ինչպես նվազեցնել Սան-Ստեֆանոյի պայմանագրի և նրա հեղինակի ծառայությունների նշանակությունը, ապա նաև հնարավորություն ստեղծել վեհաժողովում Եվրոպայի առջև փայլելու համար¹: Իգնատևի այս հիմնականում ենթակայական դատողության մեջ, անշուշտ, առկա է իրական հատիկ, որի վրա հենվելով հետագայում այն զարգացրին հասարակական-քաղաքական և պատմագիտական մտքի առանձին ներկայացուցիչներ:

Իգնատևը համոզված էր, որ Սան-Ստեֆանոյի պայմանագիրը շուտով կստանա իրավական ուժ և միջազգային ճանաչում մանավանդ որ թուրքական սուլթանը փետրվարի 27-ին² վավերացրեց պայմանագիրը, իսկ մարտի 5-ին կանցլեր Գորչակովի կաբինետում կատարվեց վավերացված պայմանագրերի պաշտոնական փոխանակում նրա ու սուլթանի կողմից մոր նշանակված արտակարգ դեսպանի միջև³: Չէ որ միջազգային իրավունքի հիմունքով և այդ գիտության հեղինակությունների տեսակետով լիազորների ստորագրված համաձայնագրի բոլոր պայմանները երկու կողմերի համար դառնում են պարտադիր կառավարությունների կողմից այն վավերացնելու րոպեից, իսկ առավել ևս վավերացված պայմանագրի փոխանակման պահից: Սակայն, երբ միջազգային իրավունքի այս հանրաճանաչ սկզբունքներին հակառակ պարզ դարձավ, որ համեմատական վեհաժողովի գումարումը անխուսափելի է, Իգնատևը արդեն շտապեց արագորեն կազմել արտգործնախարարության և անձամբ կանցլեր Գորչակովի համար բացատրագիր, որտեղ հիմնավորված էր Սան-Ստեֆանոյի պայմանագրի յուրաքանչյուր հոդվածի ծագումը և նշանակությունը, որը, իհարկե, կարող էր օգտակար լինել վեհաժողովի ռուսական պատվիրակներին ոչ միայն Ռուսաստանի, այլև սլավոնական ու քրիստոնյա ժողովուրդների շա-

¹ "Исторический Вестник", 1915г., ноябрь, т. 142, с 414.

² Նույն տեղում, 1915, հոկտեմբեր, հ. 142, էջ 79:

³ Նույն տեղում, 1915, նոյեմբեր, հ. 142, էջ 416:

հերը պաշտպանելու տեսանկյունից: Արևմտահայերին վերաբերող 16-րդ հողվածին Իզնատը նույնպես տալիս էր մեծ նշանակություն և դրանով իսկ հիմնավորում, թերևս հրահանգավորում Ռուսաստանի պատմիրականության ապագա ներկայացուցիչներին գործի դնել դիվանագիտական ողջ կարողությունը և հմտությունը այն պաշտպանելու և ուժի մեջ թողնելու համար: «Այս հողվածը, - նշում է Իզնատը բացատրագրում, - լիովին բավարարում է հայերի համընդհանուր ցանկությունները: Առաջին անգամ Հայաստանի անունը հրապարակվեց միջազգային պայմանագրում և Թուրքիայի կողմից ընդունված պարտավորությունները կարող են հիմք ծառայել խնամակալության համար Փոքր Ասիայի քրիստոնյա բնակչության մեծամասնության նկատմամբ: Այս հողվածը կապացուցի Եվրոպային, որ Ռուսաստանը մտահոգված է ոչ միայն բացառապես սլավոնների, ոչ էլ նույնիսկ իր կրոնակիցների մասին, որ նա մարդասիրությունից դրդված նկատի ուներ ապահովել Թուրքիայի ողջ քրիստոնյա բնակչության բարեկեցությունը... Ասիայում անդրկովկասյան նոր սահմանը անցկացվել է Թիֆլիսում հավանության արժանացած նախագծի համաձայն, որը և իրագործվեց բոլոր մանրամասնություններով: Ռուսաստանը ձեռք է բերում հյուսիսային Անատոլիայի շտեմարան համարվող հարուստ երկրամաս, Բաթումի հիանալի նավահանգստով և կարևորագույն ռազմավարական դիրքերով, որոնք դյուրացնում են դեպի Էրզրում տանող մատույցները, անհնարին չափով դժվարացնում հակառակորդի ցանկացած հարձակում Կովկասյան մեր տիրույթների վրա:

Կարսը, Բաթումը և Բայազեդը մնում են մեր իշխանության ներքո: Դրանից դուրս մենք կգերիշխենք Պարսկաստանի տարանցիկ ճանապարհին և ստացանք քրդական բոլոր խոշոր ցեղերին մեր ձեռքում պահելու հնարավորություն, տիրելով այդ վայրերին, կհեշտանա տարածել մեր ազդեցությունը Անատոլիայի ողջ բնակչության վրա և ունենալ ազատ ելք Մուշի ու Վանի հովիտը՝ հայ ժողովրդի գլխավոր օջախները»¹:

Իզնատը Սան-Ստեֆանոյի պայմանագրի պատմաքաղաքական և դիվանագիտական կարևորությունը սլավոնական ժողովուրդների և արևմտահայերի համար մեկ անգամ ևս ընդգծելու նպատակով անհրաժեշտ գտավ հիշեցնել, որ ոչ միայն բուլղարները և սլավոնները ընդհանրապես, այլև «հայերը արծագանքում էին մեր ցեղակիցներին»², որոնք մի կողմից արտահայտում էին իրենց համակրանքը, շնորհակալությունը, իսկ մյուս կողմից ցավակցություն հայտ-

¹ "Исторический Вестник", 1915 г., октябрь, т. 142, с 85-88.

² Նույն տեղում, 1916, մայիս, հ. 144, էջ 336:

նում Բեռլինի վեհաժողովին չմասնակցելու պատճառով: Այս տեսակետից ուշագրավ է Խորեն արքեպիսկոպոսի հայկական պատվիրակության անդամներից մեկի ջերմ նամակը, որ նա ուղարկել էր Պետերբուրգից 1878թ. մայիսի 24-ին Իգնատևին: Նա այդ պահին հիվանդ էր և ապաքինվում էր գյուղում: Կարևորելով նամակի բովանդակությունը ռուս դիվանագետը այն զետեղել է իր նոթերում: «Սեզ համար,գրում է Խորեն արքեպիսկոպոսը,- ձեր հիվանդությունը կրկնապատիկ ցավալի է, այն համընկավ այնպիսի վճռական պահի հետ,երբ դուք մեզ այնքան էիք անհրաժեշտ վեհաժողովում:

Դուք կկարողանալիք մեզ պաշտպանել ցանկացած բարեկամից լավ և նկարագրել մեր թշվառ դրությունը: Վեհաժողովում դուք Եվրոպայի առջև կլինեիք մեր լավագույն հովանավորողը և պաշտպանը: Ինչ էլ պատահի ու թեև ձեր պերճախոսությանը առիթ չի ներկայանա դրսևորվելու մեր օգտին Բեռլինում, ես երբեք չեմ մոռանա և մեր երկիրը նույնպես չի մոռանա այն, ինչ դուք կատարեցիք մեր փրկության համար: Ապագա պատմաբանը կասի, որ գեներալ Իգնատևին է պատկանում հայերին առաջին անգամ Եվրոպական պայմանագրի մեջ ներդնելու պատիվը և թուրք կեղեքիչներին հարկադրելու փառավոր փաստաթղթում պաշտոնապես ճանաչելու անարդարացիորեն տառապող, մոռացված քրիստոնյա ժողովրդի գոյությունը: Դուք ձեռք բերեցիք մեր ողջ ժողովրդի երախտագիտության ամմոռանալի իրավունքը»¹:

Իգնատևի հուշերում ներկայացված է դիվանագիտական այն սուր պայքարը, մրցակցությունը, հակամարտությունները, երկկողմանի բանակցությունները, քողարկված ու բացահայտ սակարկվող պահանջները, որոնք հաջորդելով Սան-Ստեֆանոյի պայմանագրին ու նախորդելով Բեռլինի վեհաժողովին, ի վերջո վճռորոշ նշանակություն ունեցան նրա արդյունքների վրա: Դիվանագիտական այդ խաղերին ու սակարկումներին անմիջական մասնակցություն ունեցավ նաև սույն նոթերի և Սան-Ստեֆանոյի պայմանագրի հեղինակը, վերջինս մասնավորապես կայսր Ալեքսանդր II-ի և կանցլեր Գորչակովի հանձնարարությամբ մեկնել էր Վիեննա Ավստրո-Ռուսգարական կայսր Ֆրանց Իոսիֆի և կոմս Անդրաշիի հետ հանդիպելու, նրանց դիրքորոշումը պարզելու, ունեցած հավակնությունները բացահայտելու նպատակով: Սակայն Իգնատևի այցը Վիեննա և զրույցները կայսրի ու հատկապես Անդրաշիի հետ մեկ անգամ ևս վկայեցին, որ ակնկալել ավստրո-հունգարական քաղաքական-դիվանագիտական աջակցությանը, հույսեր փայփայել թե նրանք կճանաչեն Թուրքիայի հետ կնքած պայմանագիրը (Սան-Ստեֆանոյի) ուղղակի անիրատես

¹ "Исторический Вестник", 1916, май, т. 144, с 336.

են, ուստի և օրինաչափ է, որ դրանք ոչինչ չտվեցին, իսկ բանակցութ-
յունները ի դերն ելան: Չախողվելով Վիեննայում Պետերբուրգը փոր-
ձեց դիվանագիտական հեռակետ գտնել Լոնդոնում, որը նույնպես
արդյունավետ լինել չէր կարող, քանզի հիշեցնում էր օվկիանոսի հա-
տակից դուրս եկած, իսկ այնուհետև բոցավառ կրակի մեջ կամա-
վոր մտած մարդու անհիմաստ քայլին: Հիրավի, երկու հզոր ախտ-
յանների՝ Ռուսաստանի և Անգլիայի դարավոր ու խոր հակասութ-
յունների զորեղ պատմեջը անկարող գտնվեց հաղթահարել կամ
շրջանցել անգամ դիվանագիտական մուրք արվեստը:

Անգլիայի ռազմա-քաղաքական մարտավարությունը ռուս-թուր-
քական պատերազմում քննախոսելուց հետո, խորհրդային ժամանա-
կաշրջանի պատմաբան Ն.Ի.Բելյակը եզրակացնում է, որ Բիքոնսֆիլ-
դը (Դիգրայելին) ձգտում էր հավասարապես թուլացնել թե՛ Ռուսաս-
տանին և թե՛ Թուրքիային, ու օգտվելով դրանից անարգել, ի հաշիվ
Թուրքիայի, իրագործել անգլիական բուրժուազիայի զավթողական
ախորժակները¹: Հիմնականում համամիտ լինելով հիմնահարցի ռուս
խորագիտակ հետազոտողի հետ, միաժամանակ անհրաժեշտ է նշել,
որ Բիքոնսֆիլդը, այնուամենայնիվ, մտահոգված էր ոչ այնքան Թուր-
քիային թուլացնելու խնդրով, որքան անհանգստացած էր Սան-Ստե-
ֆանոյի պայմանագրից, որը Ռուսաստանին ապահովում էր գերիշ-
խող դիրք Բալկաններում ու Արևմտյան Հայաստանում: Չէ որ հենց
իսկ Բելյակի վկայությամբ Բիքոնսֆիլդը հայտարարել էր, թե Անգ-
լիան վավերական չի ճանաչի հաշտության ռուսական նախնական
պայմանները և հաշվի չի նստի դրանց հետ: Ավելին, անգլիական
ճավախումբը առանց սուլթանի համաձայնության անցավ Դարդա-
նելը, մտավ Սարմարա ծով ու խարիսխ գցեց Իշխանաց կղզիներ-
ում²:

Խորհրդային պատմաբանի իրատես կարծիքով Ռուսաստանին
պատերազմով ահաբեկելու մեջ էր կայանում անգլիական կառավա-
րության պայքարի հիմնական ձևը Սան-Ստեֆանոյի պայմանագրի
դեմ³: Բելյակը սկզբունքորեն համաձայն է Ալեքսանդր II-ի կառավա-
րության ռազմական նախարար Դ. Ա.Միլյուտիևի գնահատականի
հետ. վերջինս իր «Օրագրում» ընդգծում էր, որ անգլիացիների դիր-
քորոշումից ռուսական կառավարությանը իրավունք էր վերապահ-
ված եզրակացնելու, թե Անգլիան վեհաժողովին չնասնակցելու դեպ-

¹ И.И. Беляев, Русско-турецкая война 1877-1878 гг., М. 1956, с.442.

² Նույն տեղում, էջ 421:

³ Նույն տեղում, էջ 423:

քում կգնա խզման և պատերազմի Ռուսաստանի դեմ¹: Սակայն Միխուտինի գնահատականին լիովին համաձայնվել դառնում է ուղղակի անհնարին, երբ համակողմանիորեն ուսումնասիրվում են Իզմատևի նոթերը, որոնք, ի դեպ, ամբողջովին դուրս են մնացել Բել-յակի տեսադաշտից: Իզմատևի նոթերում բացատրվում է, թե ինչու իրեն չընդգրկեցին ռուսական պատվիրակության կազմում, ինչպես փակվեց նրա առջև Բեռլին տանող ճանապարհը, ինչու չմասնակցեց եվրոպական վեհաժողովի աշխատանքին, և դրանով իսկ զրկվեց դիվանագիտական կլոր սեղանի շուրջ նստելու հնարավորությունից: Անշուշտ, Իզմատևը որպես Սան-Ստեֆանոյի պայմանագրի հիմնական հեղինակ իրավունք ուներ լիովին ակնկալելու Բեռլինի վեհաժողովում լինելու, եթե ոչ առաջին, ապա պարտադիր կերպով գոնե երկրորդ ջութակը ռուսական պատվիրակության կազմում: «Սկզբնապես նախատեսվում էր վեհաժողովում երկրորդ լիազոր նշանակել ինձ,- գրում է նա,- և նախքան գումարումը ուղարկել Բեռլին, որպեսզի ըստ հնարավորին համաձայնության գալ Բիսմարկի հետ ... միայն ապրիլի երկրորդ կեսին կոմս Շուվալովի նամակի հետևանքով՝ իմ նկատմամբ Բիքոնսֆիլդի անբարեհաճության վերաբերյալ, ապա իմ ու անգլիացի լիազորի միջև բախման մեր դեսպանի երկյուղը...հարկադրեցին կայսրին երկրորդ լիազոր նշանակելիս նախընտրել Լոնդոնի մեր դեսպանին»²: Դրանից հետո, երբ Իզմատևին հայտնի դարձավ, որ Անգլիայի վարչապետ Բիքոնսֆիլդը վճռապես հանդես է գալիս Սան-Ստեֆանոյի պայմանագրի դեմ, նա Գորչակովին ներկայացրած «Յնարավոր զիջումները Անգլիային» խորագրով զեկուցագրում նշում էր, որ «Սան-Ստեֆանոյի պայմանագրի 19-րդ - հոդվածով Ասիայում մեր նոր ձեռքբերումներով որոշված սահմանագիծը կարող է փոփոխվել այնպես, որ Բայազեդ քաղաքը և Ալաշկերտի հովիտը թողնվեն Թուրքիայի սահմաններում: Դրանով Մեծ Բրիտանիան կստանար լիակատար բավարարում Ռուսաստանի կողմից զիջվող Բայազեդի վրայով Պարսկաստան տանող առևտրական ուղուց: Բայց, քանի որ, մեր նոր սահմանի ծախս թևը կլիներ լիովին անպաշտպան, ապա արդարացի կլիներ ի փոխ պարտադրել Թուրքիային քանդելու Բայազեդի ու Էրզրումի ողջ ամրությունները»³: Ինչ վերաբերում է Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ կետին, ապա Իզմատևը խորհուրդ էր տալիս այդ հոդվածը քննարկելիս «պահանջել Թուրքիայից մատնացույց անել այն բարենորոգումներ-

¹ Н. Н. Беляев, Русско-турецкая война 1877-1878 гг., М. 1956, с. 423. Д. А. Милотин Дневник: М. 1950, м 3, с. 28.

² "Исторический Вестник", 1916, апрель, т. 144, с 44.

³ Նույն տեղում, 1916, ապրիլ, հ. 144, էջ 36:

րը, որոնք նա կմտցնի Ասիայում քրդերի, չերքեզների և այլոց գազանություններից հայ բնակչությանը պաշտպանելու և քրիստոնյա բնակչությանը անձնական անվտանգություն տրամադրելու համար»¹։ Բեռլինի վեհաժողովում ծավալված դիվանագիտական անգիջում պայքարի և վերջնական արդյունքների ուսումնասիրման, առավել ևս Ռուսաստանի դիվանագիտական մեկուսացման առարկայական և ենթակայական պատճառները պարզաբանելու համար կարևորվում են ռուս աչքի ընկնող դիվանագետ Անգլիայում ռուսական դեսպան, վեհաժողովի ռուսական պատվիրակության փաստական ղեկավար (եթե նկատի ունենանք, որ Գորչակովը արդեն 80 տարեկան էր և քիչ էր մասնակցում նիստերին), կոմս Պ.Ա. Շուվալովի², ապա և վեհաժողով՝ Գորչակովի ու Շուվալովի տրամադրության տակ գործուղված գեներալ-լեյտենանտ Դ.Գ.Անուչինի հուշերը³։ Թեև հուշերում լիովին անտեսված է հայ ժողովրդի համար առանցքային նշանակություն ունեցող 61-րդ հոդվածը և Հայաստանը գրեթե ընդհանրապես, այսուհանդերձ, այնտեղ գետեղված նյութերը հնարավորություն են ընձեռում անուղղակիորեն հատկապես Բուլղարիային ու սլավոնական մյուս ժողովուրդներին վերաբերող հոդվածներով, նրանց ճակատագրի օրինակով պարզաբանելու, թե ինչու մայրամուտ ապրեց 16-րդ հոդվածը, ինչպես ծնվեց 61-րդ կետը, ինչու և ինչպես Ռուսաստանը քայլ առ քայլ նահանջեց Սան-Ստեֆանոյի պայմանագրից։

Իհարկե, աչքի ընկնող դիվանագետի հուշերը յուրատեսակ արդարացման միջոց են իր դիվանագիտական գործունեությունը դրականապես գնահատելու համար։ Այն, անշուշտ, նախատեսված էր ոչ այնքան պաշտոնական ղեկավարության, որքան Պետերբուրգի բարձր հասարակության համար, վերջինս դժգոհ էր թե Գորչակովից և թե Շուվալովից՝ ցարական պատվիրակության առաջին ղեմքերից։ Շուվալովը փորձում է համոզել, որ պարզապես սխալ է դժգոհել Բեռլինի վեհաժողովի որոշումներից, քանզի ռուսաց դիվանագիտությունը այնտեղ հասավ առավելագույնին՝ բախվելով Եվրոպական տերությունների մի ամբողջ հզոր խմբակցության հետ։ Ուստի և նրա կարծիքով անհիմն են այն մեղադրանքները, թե իբր ինքը վեհաժողովում կատարել է լուրջ զիջումներ։ Իրականում, ըստ ռուս դիվանագետի, ոչինչ էլ չի զիջվել, այլ ձեռք է բերվել այն ամենը ինչ արձանագրված է եղել վեհաժողովի նախօրյակին՝ մայիսի 30-ին ստո-

¹ "Исторический Вестник", 1916, апрель, т. 144, с. 45.

² "Красный Архив", М, 1933, т. 4-6 (59-61)

³ "Русская старина" 1912: т 149 кн 1, с. 39-58: т 149 кн 2, с. 232-255: т 149 кн 3, с. 461-470: т 150 кн 4, с. 3-12: т 150 кн 5, с.223-236: т 152 кн 11, с.221-238: т 152 кн 12, с. 482-503:

րագրված ռուս-անգլիական համաձայնագրի մեջ, որի բովանդակությունը բավարարել էր թե կայսրին և թե նրա խորհրդակաճներին:

Շուվալովի հուշերում ներկայացված են տեղեկություններ Կարսը Ռուսաստանին հանձնելու կամ ավելի ճիշտ նրա կազմում թողնելու մասին: Ռուս դիվանագետը նշում է, որ մինչև Բեռլինի վեհաժողովը իրեն արդեն հաջողվել էր Լոնդոնում համաձայնություն ձեռք բերել Ռուսաստանին Կարսը հանձնելու վերաբերյալ, որը զարմանք էր պատճառել թե՛ «երկաթե կանցելը» Բիսմարկին և թե՛ կայսր Վիլհելմ II-ին, որոնց հետ Բեռլին այցելելու ժամանակ պաշտոնական գրույցներ է ունեցել կապված գալիք վեհաժողովի գումարման հետ¹: Բիսմարկի հետ հանդիպման ժամանակ Շուվալովը Կարսը և Բաթումը Ռուսաստանին հանձնելու անհրաժեշտությունը հիմնավորեց պատմական զուգահեռներ անցկացնելու միջոցով, որի դեմ առարկել դժվար էր անգամ «երկաթե կանցելիք»:² «Ռուսաստանում, - ասաց ռուս դեսպանը, - այս երկու կետերի (Կարսի և Բաթումի-Մ.Մ.) միացման օգտին հասարակական կարծիքը արտահայտվել է նույնքան եռանդագին, որքան այն Գերմանիայում 1870թ. պահանջում էր միացնել Էլզասը»²: Պատմաքաղաքական և դիվանագիտական առումով ուշագրավ է Ալեքսանդր II-ի տեսակետը, որը ծանոթանալով Լոնդոնից Շուվալովի բերած նախնական պայմաններին, նույնպես արտահայտելով իր զարմանքը ասաց. «Ինչ վերաբերում է... Կարսին ու Բաթումին...ես ոչնչի չեմ հավատում: Անգլիացիները կիրաժարվեն դրանից, երբ գործը հասնի Համաձայնագրի ստորագրմանը: Մի խոսքով նրանք մեզ խաբում են»³: Սակայն ռուս դիվանագետի հուշերի եզրափակիչ հատվածից պարզ է դառնում, որ նա բոլորովին էլ չէր կիսում իր կայսրի կարծիքը: Շուվալովի տեսակետով, եթե հաշվի առնենք Եվրոպական տերությունների թշնամական դիրքորոշումը Ռուսաստանի նկատմամբ, ապա պետք է ոչ թե քննադատել վեհաժողովի արդյունքները, այլ ընդհակառակը, պարզապես զարմանալ Ռուսաստանին կատարված զիջումներից⁴: Ակնհայտ է՝ նա ցանկանում էր ուղղակիորեն ջատագովել իր դիվանագիտական գործունեությունը Բեռլինում, նրա որոշումները դիտարկել որպես լուրջ հաղթանակ: «Այս հարցի վերաբերյալ անկանխակալ պատմությունը, - եզրակացնում է ռուս դիվանագետը, - կարտահայտի իր դատողությունը, նա կորոշի, թե վեհաժողովում ում դրությունն էր ավելի նպաստավոր՝ «պոչն իրեն քաշած» հայրենիք վերադարձած ռուս

¹ "Красный Архив", М., 1933, т. 4 (59), с. 96.

² "Красный Архив", М., 1933, т. 4 (59), с.96.

³ Նույն տեղում, էջ 98:

⁴ Նույն տեղում, էջ 104:

լիազորների, թե անգլիական նախարարների, որոնց տանը դիմավորեցին մեծարանքով և հաղթանակով»¹: Շուվալովը անտեսել է ռուս-անգլիական համաձայնագրի այն կետերը, որոնք վերաբերվում էին Արևմտյան Հայաստանին ու արևմտահայերին, այդ թերությունները ինչ-որ չափով լրացվում է Անուշիհի հիշողությունում: Նա պայմանագրին Ռուսաստանի շահերի տեսանկյունից տալիս է միանշանակ բացասական գնահատական և այդ առնչությամբ խստագույնս դատապարտում է ու քննադատում Լոնդոնում ռուսաց դեսպանի դիրքորոշումը²: Անուշիհը ուշադրությունը սևեռում է պայմանագրի 7-րդ - հոդվածի վրա, որի համաձայն Սան-Ստեֆանոյի հաշտությամբ սահմանված պարտավորությունները Հայաստանի վերաբերյալ արդեն պետք է վերաբերվեին, ոչ միայն Ռուսաստանին, այլև Անգլիային³: «Մենք ինքներս,- գրում է ռուս գեներալը,- մեր սեփական ձեռքերով ոչնչացնում ենք մեր հաղթանակների պտուղները և անձնատուր ենք լինում Եվրոպայի կամքին»⁴: Անուշիհը անդրադառնում է նաև հայկական տարածքներին վերաբերվող ռուս-անգլիական պայմանագրի 10-րդ հոդվածին, որով Նորին Կայսերական գերագանցություն համառուսաստանյան կայսրը հայտնում էր իր համաձայնությունը Թուրքիային վերադարձնել Ալաշկերտի հովիտը և Բայազեդ քաղաքը⁵: Հետևաբար, եթե անգլո-ռուսական պայմանագրի 7-րդ հոդվածը պարզապես սահմանափակում էր Ռուսաստանի նախաձեռնությունները Արևմտյան Հայաստանում, ըստ էության կապում նրա ձեռքերը ազատ գործելու հնարավորությունից ու իրավունքից, ապա 10-րդ կետով ռուսաց դիվանագիտությունը կատարեց ուղղակի լուրջ զիջում և ակնհայտորեն նահանջեց Սան-Ստեֆանոյի համաձայնագրից: Իսկ սա առարկայորեն հակասում էր արևմտահայերի շահերին, ուղղվում նրա դեմ: Ռուսաստանի գործողությունների շրջանակները սեղմելու առումով, ուշագրավ է ռուս-անգլիական պայմանագրի 11-րդ հոդվածը, որի համաձայն անգլիական կառավարությունը թեև պատրաստակամություն է հայտնում չընդդիմանալ ռուսաց կայսրի ցանկությունների իրագործմանը Բաթումի նավահանգիստը ձեռք բերելու վերաբերյալ և Ռուսաստանի կազմում պահելու Հայաստանում նվաճած հողերը, այնուամենայնիվ, չի կարող թաքցնել իր կարծիքը, որ ռուսական սահմանների նման ընդարձակման դեպքում գալիք խաղաղությանը սպառնացող դժվարությունների վտանգից խուսա-

¹ "Красный Архив", М., 1933, т. 4 (59) с. 107.

² "Русская старина" 1912, т. 149, кн 2, с. 245.

³ Նույն տեղում, էջ 247:

⁴ Նույն տեղում, էջ 245:

⁵ Նույն տեղում, էջ 247:

փեղու մասին¹: Այս իմաստով թերևս առարկայական է հայոց պատմության քաջատեղյակ հետազոտող Ա.Ա. Ամֆիտատրովի տեսակետը, որը իր «Հայկական հարցը» խորհմաստ գրքույկում Բեռլինի վեհաժողովի որոշումները դիտարկեց որպես «Եվրոպական դիվանագիտության հաղթանակի խորհրդանիշ ռուսական զենքի նկատմամբ»²: Իսկ ռուս ճանաչված լրագրող և հրապարակախոս Դիևը իր «Հայկական հարցը Թուրքիայում» ընդհանուր խորագրով չորս նամակում հասցեագրված թուրք գործընկերոջը համակողմանիորեն քննախոսելով հիմնախնդիրը անդրադարձավ նաև 16-րդ և 61-րդ - հողվածներին, զուգահեռներ անցկացրեց դրանց միջև, նշեց Եվրոպական դիվանագիտության դիրքորոշումը և հատկապես Ռուսաստանի դերը և նշանակությունը հայ ժողովրդի ճակատագրում: Դիևը անհրաժեշտ համարեց հիշեցնել իր թուրք գործընկերոջը, որ 1878թ. փետրվարի 19-ին Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի համաձայն Թուրքիան Ռուսաստանի առաջ պարտավորվեց անցկացնել անհապաղ բարենորոգումներ հայերով բնակեցված շրջաններում ու ապահովել նրանց անվտանգությունը քրդերից և չերքեզներից³: Բայց, շարունակում է ռուս հրապարակախոսը, հողվածը կյանքի չկոչվեց, թեև Ռուսաստանի նախածեռնության արդարությունը և նպատակասլացությունը այնքան էր ակնհայտ, որ դրան պետք է միանար նաև Բեռլինի վեհաժողովը՝ չնայած մասնակիցների անբարեհաճությանը Սան-Ստեֆանոյի պայմանագրին ընդհանրապես և 16-րդ կետին մասնավորապես: Համադրելով արևմտահայերի համար ճակատագրական նշանակություն ունեցող և հայ ժողովրդին հուզող երկու հողվածները Դիևը նշում էր. «Բեռլինի դաշնագրի § 61-ը ամբողջովին կրկնեց § 16-ը, իր կողմից ոչ այլ ոք, քան Սուլիսթյուրիի (Սուլթերիի-Մ.Մ.) առաջարկությամբ միակցելով նոր պարտավորություններ Թուրքիային, այսինքն՝ պարտավորություն վերոհիշյալ նպատակի համար ձեռնարկած միջոցների մասին պարբերաբար տեղեկացնել տերություններին, որոնք կհետևեն դրանց կիրարկմանը»⁴: Դիևը ցանկանում էր ընդգծել, որ Եվրոպական տերությունները նույնպես կողմնակից են բարենորոգումներին և դրանով իսկ դատապարտում են օսմանյան բռնությունները արևմտահայության նկատմամբ: Ահա ինչու նա թուրք գործընկերոջ ուշադրությունը սևեռում է 1878 թ. հունիսի 4-ին ստորագրված անգլո-թուրքական կոնվենցիայի

¹ "Красный Архив", М., 1933, т. 4 (59) с. 248.

² А.А. Амфиатов: Армянский вопрос, СПб., 1906, с.8.

³ Гр.А. Диев, Армянский вопрос в Туршии, с.395, в кн. "Положение армян в Туршии до вмешательства держав в 1895 году" М., 1896.

⁴ Նույն տեղում, էջ 395:

վրա, որով Անգլիան Փոքր Ասիայի նկատմամբ ձեռք էր բերում հովանավորության (պրոտեկտորատի) իրավունք, իսկ Թուրքիան նաև Անգլիայի առաջ երրորդ անգամ պարտավորվեց անցկացնել հայերի անվտանգության համար անհրաժեշտ բարենորոգումներ¹: Դիևը բացի այս կոնվենցիայից նկատի ուներ Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ, Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածները, որոնցով Թուրքիան պաշտոնապես ստանձնում էր պարտավորություններ բարենորոգումներ անցկացնել Արևմտյան Հայաստանում, ապահովել արևմտահայերի անձի ու գույքի անվտանգությունը:

Ռուսական պատմագրության մեջ գնահատվել են Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի հետևանքները արևմտահայության ճակատագրում, որոնք հիմնականում առարկայական են, անաչառ և իրատես, ուստի և ներկայացնում պատմագիտական մեծ հետաքրքրություն ու քաղաքական հրատապություն: Այս հիմնահարցը ռուս հետազոտողները քննախոսում են եվրոպական դիվանագիտության լույսի ներքո, միջազգային հարաբերությունների շրջանակներում, որը էլ ավելի է բարձրացնում նրանց գնահատականների պատմագիտական նշանակությունը և արժեքը:

Նրանք միաձայն իրավացիորեն նշում են, որ Բեռլինի վեհաժողովում ծնված և միջազգային ասպարեզ ելած հայկական հարցը հանձին 61-րդ հոդվածի իր բոլոր սահմանափակումներով հանդերձ կենսագործման դեպքում արևմտահայության համար կարող էր ունենալ որոշ դրական արդյունք: Ահա ինչու ուշադրությունը սևեռվում է ոչ այնքան հոդվածի անկատարությամբ, որքան չիրագործման պատմափաստի վրա: Ավելին, քաջ գիտակցվում էր հիմնական պատճառը, որը ձախողեց և սոսկ թղթի վրա թողեց արևմտահայությանը անմիջապես վերաբերող հոդվածը: «Չնայած հովանավորողների այդ լիառատությանը, իսկ միգուցե հենց նման լիառատության շնորհիվ,-գրում է Դիևը,- ռուսական առածի համաձայն յոթ դայակների պահած երեխան հսկող աչք չի ունենա, հայերը մինչև այժմ, այսինքն ավելի քան 13 տարի (Դիևը իր նամակը գրել է 1891 թ.-Մ.Մ.) թուրքերից զուր պահանջում են բարենորոգումներ, որոնք Թուրքիան դեռևս 1878 թ. պարտավորվեց մտցնել առանց հետագա երկարածգման»²: Հիմնավորումը ավելի քան հանդիչ է՝ մեծ տերությունների հակամարտության ու մրցակցության պատճառով երբեք «երեխան հսկող աչք չի ունենա», այսինքն արևմտահայության ակնկալիքները միշտ կմնան անիրագործելի ցանկություն: Այս կարևոր

¹ Գր.А. Днев, Армянский вопрос в Турции, с.395-396, в кн. "Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году"М., 1896.

² Գր.А. Днев: Армянский вопрос в Турции..... с. 396.

տեսակետը ավելի որոշակի ու հստակ է նշում Ամֆիտատրովը, որի կարծիքով «Բեռլինի դաշնագրի 61-րդ կետը, որով Եվրոպայի կամքը նախանշում էր Հայաստանին (Արևմտյան-Մ. Մ.) նույնպիսի բարենորոգումներ, ինչ 23-րդ կետով նա խոստացել էր Մակեդոնիային, ամենևին էլ առաջ չնդեց հայ ժողովրդի բարեկեցությունը և իրավական դրությունը»¹ : Հեղինակի իրատես կարծիքի համաձայն «61-րդ կետը դուրս չի գալու տեսական նախանշումների ոլորտից և դատապարտված է ժամանակի ընթացքում կարծրանալու մեռյալ տառի. դա ոչ միայն նախագգում էին, այլև քաջ գիտեին բոլորը, ովքեր 1878 թ. հուլիսի 13-ին ստորագրեցին պատմական ակտը Բեռլինում»² : Ամֆիտատրովի միանգամայն ընդունելի տեսակետով իրենց մեղսակցությունն ունեն ոչ անհայտ ռուս դիվանագետներ Նելիդովը և հատկապես Լոբանով-Ռուստովսկին, քանզի բավական էր հանձին Հայաստանի վերջինիս «Ռուսաստանը չի ցանկանում երկրորդ Բուլղարիա» տխրահռչակ արտահայտությունը, «որպեսզի բոլոր աննշան բարենորոգումները, որոնցով Բեռլինի վեհաժողովը հայ ժողովրդին մատնացույց էր անում ինքնավարության շավիղը, անհապաղ հայտնվեին մահուդի տակ և Փոքր Ասիայի համար բացվեր Եվրոպայի պատմության մեջ անօրինակ ահաբեկչության շրջանը»³ :

«Բեռլինի պայմանագիրը ստորագրած կառավարությունները պահանջեցին արդյո՞ք դրանից հետո սուլթանից պարբերական տեղեկություններ Հայաստանում նրա կողմից ենթադրված բարենորոգումների մասին,- հարցնում է պրոֆ. Կամարովսկին,- ինչպես դա անպայմանականորեն արտահայտված է այդ պայմանագրի 61-րդ հոդվածում»⁴ : Եվ բնականաբար տալիս է բացասական պատասխան, մինչդեռ բուն իրավիճակը «վճռապես պահանջում է հայկական հարցի հանդեպ մեծ տերությունների անընդհատ հսկողություն»⁵ : (ընդգ-Ուսիլևի Կամարովսկու-Մ.Մ.) Ռուս հասարակական-քաղաքական մտքի նշանավոր ներկայացուցիչ Մ. Կովալևսկին իր «Հայկական հարցը» ուշագրավ հոդվածում հակիրճ քննախոսելով 16-րդ և 61-րդ հոդվածները նույնպես ընդգծում էր, որ դրանք մնացին թղթի վրա: Նա ոչ առանց հիմքի եզրակացնում էր, որ «Թուրքիան կարողանում էր ձևական գրությամբ օձիքն ազատել, իսկ Եվրոպական տերությունները իրենց պնդումների մեջ չդրսևորեցին հաստատակա-

¹ А.А. Амфиатов, Армянский вопрос... с. 7-8.

² Նույն տեղում, էջ 8:

³ Նույն տեղում, էջ 7:

⁴ "Поляжение армян в Турции до вмешательства держав в 1895 году", М. 1896.
Предисловие проф. Л.А. Камаровского с. VIII.

⁵ Նույն տեղում, էջ VIII-IX:

մություն: Նույնիսկ կարելի է ասել, որ Բեռլինի պայմանագիրը ի վերջո հանգեցրեց հայերի ճակատագրի վատթարացմանը¹: Ռուս պատմաբանները ոչ միայն առարկայորեն մեկնաբանեցին հայ ժողովրդի համար կարևորագույն նշանակություն ունեցող հիմնահարցերը, այլև իրատեսորեն քննախոսեցին դրանց «մեռյալ տառ» դառնալու գործոնները: Նրանք, ուսումնասիրելով պատմափաստերը և համակողմանիորեն վերլուծելով դիվանագիտական վավերագրերը, արծանագրում են, որ Աբդուլ Յամիդը մասնակի զիջումներով ու հատկապես «ձևական գրությամբ օձիքն ազատելու» միջոցով կարողացավ լուծել Օսմանյան կայսրությանը վերաբերող «ինքնավարություն, թե դիահերծում» այլընտրանքը: Դիվանագիտական այս թևավոր և խորիմաստ արտահայտությունը՝ «Autonomie un anatomie» («ինքնավարություն կամ անատոմիա») պատկանում է ռուսաց արտգործնախարարության պարագլուխ Գորչակովին, որը օգտագործել է ֆրանսիացի նշանավոր պատմաբան Ալբերտ Վանդալը²: Վերջինիս վկայությամբ Գորչակովը այս խորիմաստ միտքը արտահայտել է 1877 թ.՝ ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին, հատուկ նշելով, որ Թուրքիայի համար բռնի կազմալուծումից խուսափելու միակ միջոցը ինքնավար մարզերի կազմավորման մեջ է. ուստի և օրինաչափ է, որ խորամանկ թուրքական կառավարող շրջանները, թեև դժկամությամբ, այնուամենայնիվ ուժի և դիվանագիտության ճնշման ներքո համաձայնվում էին քրիստոնյա ժողովուրդներին շնորհել ինքնավարություն, որը նրանց խոր համոզմամբ մնալու էր թղթի վրա, որպես «մեռյալ տառ»

Ռուսական պատմագրությունը քննախոսելով հայկական հարցի՝ 16-րդ և 61-րդ հոդվածների միջազգային ասպարեզ դուրս գալու գործոնները և հետևանքները հասավ լուրջ հաջողության, որը ակնհայտ է ու անժխտելի: Այս գիտական հաջողությունը, թերևս, նվաճումը անվիճելի է հատկապես խորհրդային ժամանակաշրջանի պատմագրության վրա նրա ներգործության առումով՝ մի վկայություն ևս պատմագիտական զանազան ուղղությունների հաջորդականության և ժառանգականության: Այն վերստին ապացուցում է, որ արհեստականորեն տարանջատել ռուսական պատմագիտական միտքը չի արդարացվում ոչ ժամանակի ու տարածության, ոչ էլ ձևի ու բովանդակության մեջ, ցույց տալիս, որ պատմաբանի առաջնահերթ խնդիրն է վեր հանել տարբեր պատմափուլերում ձևավորված ուղղությունների և հայեցակետերի միջև եղած ընդհանրությունը, որի շնորհիվ միայն հնարավոր կլինի անաչառությամբ համակողմանի-

¹ "Вестник Европы", Пгр. 1915, т. 3, кн 6, с. 257.

² "Вестник Европы", Пгрд. 1915, т. 8, кн 6, с. 118-119.

րեն ու անբողջությամբ ներկայացնել ազգային պատմագրության անցած ուղին, նրա արժանիքը և ներդրումը հասարակական-քաղաքական մտքի գանձարանում: Խորհրդային ժամանակաշրջանի ռուսաց պատմագրության մեջ հայոց հարցը նույնպես լուսաբանվել է Ռուսաստանի արևելյան քաղաքականության, ռուս-թուրքական միջպետական և ռազմաքաղաքական հարաբերությունների, Բալկաններում, Մերձավոր Արևելքում ու Անդրկովկասում գերիշխելու, Եվրոպական մեծ տերությունների միջև ծավալված դիվանագիտական սուր պայքարի կապակցությամբ, քանզի նրա ներկայացուցիչների կարծիքով հայոց պատմության այս ճակատագրական փուլի թեկուզև հպանցիկ ուսումնասիրությունը, անշուշտ, նպաստում էր իրենց կողմից հետապնդած խնդրո առարկա դարձած հիմնահարցի համակողմանի բացահայտմանը: Նրանք անդրադարձել են նաև ռուս-թուրքական պատերազմին հայերի մասնակցության, Սան-Ստեֆանոյի պայմանագրի ու Բեռլինի վեհաժողովի հիմնահարցերին, որոնք չեն վրիպել նաև խորհրդային թուրքագետ պատմաբանների տեսադաշտից, բայց արդեն գերազանցապես թուրքիայի պատմության առնչությամբ: Խորհրդային պատմաբանները հիմնականում, առանձին բացառություններով հանդերձ, պատմականորեն ճիշտ են ներկայացնում ինչպես այդ պատերազմի ռազմաքաղաքական ընթացքը և արդյունքները, այնպես էլ Բեռլինի վեհաժողովում ծավալված դիվանագիտական սուր պայքարը, հայոց հարցի էությունը, առարկայապես դրականորեն գնահատում հայաշատ-հայաբնակ ու հայահող որոշ տարածքի միացումը Ռուսաստանին, թե ռուսաց պետության և, թե հայ ժողովրդի համար: Մինչդեռ այս հարցում Ա.Ֆ. Միլլերը փորձում է հանդես գալ յուրօրինակ մեկնաբանությամբ, բայց իրականում ու գործնականում իր անսքող, բացահայտ միակողմանի հակապատմական հայեցակետով: Թուրքիային նվիրված իր աշխատություններից մեկում նա հպանցիկորեն անդրադառնալով Բեռլինի վեհաժողովի արդյունքներին ու նշելով, որ Ռուսաստանին անցան Կարսը, Բաթումը, Արդահանը, միաժամանակ փորձում է Լեմինին վերագրված բառերով «հիմնավորել», թե «թալանում են (Եվրոպական մեծ տերությունները-Մ. Մ.) Թուրքիան»¹: Միլլերի այս գնահատականին համաձայնվել ուղղակի անհիմաստ է պատմագիտական առումով, իսկ քաղաքական տեսանկյունից անհարիր, կոպիտ սխալ լինելու պատճառով: Նախ, դժվար չէ կռահել, որ Միլլերը Բեռլինի վեհաժողովին տալիս է խիստ արտահայտված թունդ բացասական իմաստ, յուրատեսակ անարդարացի ձգտում Թուրքիան «թալանելու» և «մասնատելու» համար: «1878թ. հուլիսի 13-ին

¹ Փ.А. Миллер, Краткая история Турции, ОГИЗ 1948, с. 97-98.

կնքված Բեռլինի պայմանագիրը,- գրում է թուրքագետ պատմաբանը,- անուղղելի վնաս հասցրեց թուրքիային»¹: Ընդ որում, նրան բնավ չի հետաքրքրում, թե ովքեր էին ապրում Ռուսաստանին անցած Կարսի մարզում, ինչպիսին էր տեղական բնակչության ցանկությունն ու վերաբերմունքը պատերազմող երկրների, ինչպես նաև Բեռլինի վեհաժողովի համապատասխան հոդվածների հանդեպ: Կարսի հայաշատ բնակչությունը ինքն էր ձգտում ազատվել թուրքական գերիշխանությունից, որի մասին է վկայում հայության ըստվար հատվածի մասնակցությունը ռուս-թուրքական պատերազմին: Ուստի և Միլլերի օգտագործած «կողոպտել», «զավթել» բառերը հնչում են անիրատես ու սին: Կարսի մարզի միացումը Ռուսաստանին առարկայորեն ուներ դրական նշանակություն, որը պատմական անվիճելի փաստ է, եթե նկատի ունենանք թուրքիայի կողմից գերիշխող հայաբնակ տարածքներում ապրող արևմտահայության տխուր և ողբերգական վախճանը:

Երկրորդ, Միլլերը պարզապես ինքը մոլորության մեջ լինելով ապակողմնորոշում է ընթերցողներին, երբ թուրքիան «թալանելու» մասին միտքը փորձում է «հիմնավորել» Լենինին չպատկանող բառերով: Իհարկե, նրան խիստ ցանկալի էր իր համար շատ կարևոր, բայց իրականում կեղծ պատմափաստը պատճառաբանել խորհրդային ողջ պատմագրության համար «բացարձակ ճշմարտություն» խորհրդանշող Լենինյան գնահատականներով, որին առարկել կամ վիճարկել ոչ միայն անհնարին էր, այլև անհիմաստ: Իրականում Վ.Ի. Լենինը իր հայտնի «Տետրեր իմպերիալիզմի վերաբերյալ» գրքում պարզապես օգտագործել է բուրժուական հետազոտողներից մեկի տեսակետը և գնահատականը (տետր «Էգելիաֆ»), որը Միլլերը միտումնավոր, թե սխալմամբ վերագրել է Լենինին, ուր ի դեպ ասված է. «1877-1878 թթ. (ազգային պետությունների ազատագրումը Բալկաններում): Կողոպտում («բաժանում են») թուրքիան, (Ռուսաստանը + Անգլիան + Ավստրիան)... 15.1.77 թ. Ռուսաստանի և Ավստրիայի պայմանագիրը (թուրքիան բաժանելու մասին)... 1878 (թիվ-Մ.Մ.) Բեռլինի կոնգրեսը (թալանում են թուրքիան)»²: Այսպիսով, Լենինը լավագույն դեպքում կարող է սոսկ համաձայնվել այս մտքին, բայց ոչ նրա հեղինակը լինել, որի մասին պարտավոր էր զգուշացնել կամ հիշեցնել պատմաբանը: Ավելին, նա աղճատելով տեքստի ողջ բովանդակությունը վերցնում է միայն այն բառերը, որոնք համապատասխանելով իր հայեցակետին, ուղղակիորեն ներգրվում են նախապես մշակված սեփական մտացածին սխեմա-

¹ Փ.Ա. Миллер, Крайкая история Турции, ОГНЗ, 1948, с. 37.

² Վ.Ի. Լենին, ԵԼԺ, հ. 28, էջ 843, 848:

յին՝ Թուրքիային ներկայացնել զավթաներխուժման զոհ դարձած երկիր, որին «թալանում» էին Ռուսաստանը, Անգլիան և Ավստրիան: Այլապես Միլլերի տեսադաշտից չէր վրիպի տեքստում եղած ու իր համար այնպիսի «մանրուք», բայց իրականում էական նշանակություն ունեցող «Ազգային պետությունների ազատագրումը Բալկաններում» բառերը, որոնք լիովին փոխում են բովանդակությունը և աներկբայորեն մերժում Թուրքիան միայն «բաժանելու», «կողոպտելու» նրա հայեցակետը: Անշուշտ, ազգային պետությունների վերականգնումը և սլավոնական քրիստոնյա ժողովուրդների ազատագրումը արդեն, ինքնին, անկախ Ռուսաստանի հետապնդած նպատակներից, պատմականորեն առաջադիմական քաղաքական իրադարձություն էր, որը չի կարող անտեսել և ոչ մի լուրջ, անաչառ, անկողմնակալ պատմաբան: Ինչ վերաբերում է Ռուսաստանին ու Ավստրիային, ապա նրանց մերթ սուր հակասությունները ու դիվանագիտական պայքարը, մերթ գործարքը և դաշինքը ուղղված էին Բալկաններում իրենց դիրքերը ամրապնդելու հիմնախնդիրներին: Հետևաբար Միլլերը խեղաթյուրում է 1913 թ. Շտուտգարդում հրապարակված գերմանացի գրող Էգելհաֆի «Նորագույն ժամանակաշրջանի պատմություն» մենագրությունում տեղ գտած մտքերը, ոչ միայն այն առումով, որ դա վերագրում է Լենինին, այլև միակողմանի է ներկայացնում Էգելհաֆի գնահատականը Բեռլինի վեհաժողովի որոշումների մասին: Իր աշխատության բազում էջերում կոկորդիլոսի արցունքներ թափելով Թուրքիան «թալանելու» վերաբերյալ, Միլլերը միաժամանակ չի նկատում, որ Սան-Ստեֆանոյում ու Բեռլինի վեհաժողովում ընդունվեցին 16-րդ և 61-րդ հոդվածները, նրա համար զոյություն չունեն ոչ հայկական հարց, ոչ թուրքական լուծ ու ոչ էլ հայկական հողերի բռնազավթման պատմափաստեր: Այս ամենը, իհարկե, չի կարող տեղ գտնել Թուրքիան «թալանելու» և «կողոպտելու» մասին նրա մշակած մտացածին սխեմայի մեջ: Ուստի միանգամայն օրինաչափ է և հատկանշական, որ նա այս հարցում գրեթե հետևորդներ չունեցավ, քանզի խորհրդային ժամանակաշրջանի ռուսաց պատմագրությունը չլիսելով, բայց ոչ էլ ուղղակիորեն քննադատելով նրա սխալ տեսակետը, պարզապես հաշվի առավ անաչառ ու անժխտելի պատմական ճշմարտությունը, և ելնելով ընթացիկ քաղաքական ուղեգծից, Ռուսաստանի արտաքին քաղաքականության և ռուսաց կայսրության դիվանագիտական գործառնության մեջ իրավացիորեն տեսավ անառարկելի առաջադիմական նշանակություն ունեցող երևույթներ Բալկանյան և Անդրկովկասի քրիստոնյա ժողովուրդների պատմաքաղաքական կացությունում: Այս տեսակետից հատկապես արժանի է հատուկ ուշադրության պատմական վավերագրերով նյութառատ, բովանդակությամբ հա-

րուստ «Դիվանագիտության պատմության»(հ. II) հեղինակների հաշվեկշռված, անաչառ, պատմադիվանագիտական եզրահանգումները Բեռլինի վեհաժողովի նկատմամբ անբողջապես և հատկապես արևմտահայության ճակատագրի վերաբերյալ: «Պատմության զարգացման ընթացքը հանգեցրեց նրան, որ ռուս զինվորը իր արյամբ օգնեց բուլղար ժողովրդի և Բալկանյան մյուս ճնշված ժողովուրդների ազատագրմանը... Հայ ժողովրդի այն հատվածը, որին ռուսական զորքերը ազատագրեցին թուրքական տիրապետությունից դրա շնորհիվ փրկվեց մասսայական ֆիզիկական բնաջնջումից, որը հետագայում բաժին ընկավ Թուրքիայի սահմաններում մնացած հայերին»¹: Հայկական հարցի պատմության տեսանկյունից հատկապես չափազանց արժեքավոր է նրանց իրատես և մեր օրերի համար հնչել զնահատականը Բեռլինի վեհաժողովի որոշումների վերաբերյալ. «Բեռլինի դաշնագիրը հայ ժողովրդի զգալի մասը (ոչ միայն բնակչության, այլև հայոց տարածքների մեծ մասը-Մ.Ս.) թողեց թուրքերի լծի տակ: Պատմությունը ցույց տվեց,- եզրակացնում են «Դիվանագիտության պատմության» հեղինակները,- որ կապիտալիստական տերությունների այդ որոշումը ճակատագրական եղավ արևմտահայերի համար. այն նրանց դատապարտեց ֆիզիկական բնաջնջման»²: Այնուհանդերձ, անգամ այս ծավալուն, ֆունդամենտալ մենագրությունը, որի ստեղծմանը մասնակցեցին խորհրդային ժամանակաշրջանի պատմադիվանագիտական մտքի գրեթե բոլոր լավագույն ներկայացուցիչները, զերծ չմնաց լուրջ թերություններից, մասնավորապես նրանք ևս կրկնելով փաստորեն Միլլերի սխալը նույնպես Թուրքիան «բաժանելու» մասին տեսակետը փորձեցին հավաստել Լենինյան զնահատմամբ: Սա լուրջ, թերևս սկզբունքային մշանակության սխալ է, որը, իհարկե, նվազեցնում էր իր ընդհանրության մեջ ծանրակշիռ գրքի պատմագիտական արժեքը:

Ուշագրավ է, թերևս, որ այս հիմնահարցերը ընդհանուր ուղղություններով արտացոլվել են դեռևս 20-ական թթ. խորհրդային պատմագիտական մտքի աչքի ընկնող ներկայացուցիչ Գուրկո-Կրյաժինի Թուրքիայի պատմությանը նվիրված գրքում³ ռուս-անգլիական հակամարտության, քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ սուլթանի դժնդակ բռնության, օսմանյան կայսրության հանդեպ Անգլիայի կենսագործած քաղաքականության լուսաբանման առնչությամբ: Դա հատկապես մեկ անգամ ևս երևաց Կիպրոսի վերաբերյալ անգլո-թուրքական կոնվենցիայի ստորագրման պահին, երբ

¹ "История дипломатии", М., 1963, т. II, с.133.

² "История дипломатии", М., 1963, т. II, с.333.

³ В. Гурко-Кряжин, История революции в Турции ,М., 1925.

«...սուլթանը պարտավորվեց իրագործել բարենորոգումներ, որոնք անհրաժեշտ էին պատշաճ կառավարման ու հպատակ քրիստոնյաներին հովանավորելու համար»¹: Հեղինակը, ամենայն հավանականությամբ, նկատի ունի նաև արևմտահայությանը, թեև այն չի հիշատակվում, ավելին, նրա մոտ նույնպես անտեսված է, թե, Սան-Ստեֆանոյում և թե, Բեռլինի վեհաժողովում ընդունված հոդվածները արևմտահայության վերաբերյալ: Գուրկո-Կրյաժնի կողմից արևմտահայությանը վերաբերող երկու կարևորագույն հոդվածների անտեսումը նրա աշխատության լուրջ թերություններից է, որովհետև, դա նրան ըստ էության զրկեց այդ կետերը համադրելու հնարավորություններից, առանց որի անհնարին է հստակ պատկերացնել Ռուսաստանի ու Անգլիայի քաղաքականությունը Թուրքիայի հանդեպ, էլ չենք ասում նրանց տարամերժ դիրքորոշումը հայոց հարցում: Մինչդեռ դա խիստ անհրաժեշտ է անաչառ մեկնաբանման համար, որպեսզի պարզվի, թե ինչու՞ «... դրանից հետո Անգլիան աստիճանաբար դադարում է հետաքրքրվել հայերի դրությամբ և ակնկալիքներով»², ինչու՞ «... հայերը չարդարացրին անգլիական կառավարության ու կղերական շրջանների փայփայած գաղտնի հույսերը և չհամաձայնվեցին անգլիական ու հայ-լուսավորչական եկեղեցիների միացմանը»³: Այն անհնարին էր գերազանցապես քաղաքական շարժառիթներով, չէ որ Բեռլինից հետո արևմտահայությունը պետք է լիովին հիասթափվեր վեհաժողովի մասնակից եվրոպական մեծ տերություններից, գերազանցապես Անգլիայի կառավարող շրջաններից, որոնց սառը հաշվարկված քաղաքականությունը դարձավ արևմտահայության դառնությունների գլխավոր պատճառը: Հայերը ոչ թե չարդարացրեցին անգլիացիների հույսերը, այլ պարզապես հուսախաբ եղան, երկդիմի Ալբիոնի նենգ քաղաքականությունից, որի մութ հետքերի վրա դեռևս շատ էին սայթաքելու, թե արևմտահայերը, և թե արևելահայերը՝ այսինքն, ողջ հայ ժողովուրդը: Անգլիան մի առ ժամանակ «դադարում է հետաքրքրվել հայերի դրությամբ», այսինքն, հայկական հարցով, որպես Թուրքիայի վրա ճնշում գործադրելու հիմնական նախապայման, քանզի Բեռլինում նա հասավ իր հետապնդած նպատակին՝ առանց որևէ զոհերի, կրակոցի՝ Երուսաղեմ ևս, պատերազմի հարկադրեց սուլթանին ընդունելու իր պահանջները և միաժամանակ ձախողեց Ռուսաստանի հաղթանակը թողնելը, որքան դա հնարավոր էր և իրատես եվրոպական վեհաժողովի համակարգում:

¹ В. Гурко-Кряж. «История революции в Турции», М., 1925, с. 49.

² Նույն տեղում, էջ 49:

³ Նույն տեղում, էջ 49:

Գուրկո-Կրյաժինի միանգամայն ընդունելի տեսակետով, «հայա-սիրության» շահարկման գործում միմյանց հետ մրցակցում էին երկու անհաշտ ախոյանները՝ Ռուսաստանը և Անգլիան, ընդ որում բրիտանական կառավարող շրջաններում հայության նկատմամբ համակրանքի ալիքը, որպես կանոն, բարձրանում էր այն ժամանակ, երբ օրակարգի հարց էր դառնում տարածքային զավթումը օսմանյան կայսրությունից, որի հաջող իրագործումից հետո այդ ալիքը նույն հաջողությամբ իջնելով անմիջապես մարում էր: Անգլիական կառավարությունը, ըստ հեղինակի, հայոց հարցի «լուծմանը», ձեռնամուխ եղավ Բեռլինի վեհաժողովի նախօրյակին, երբ քաղաքական պահի խնդիրն էր մի կողմից կասեցնել կայսերական Ռուսաստանի արտաքին քաղաքական ծրագրերը, իսկ մյուս կողմից ամրանալ Կիպրոսում, որը ի դեպ սուլթանը արդեն գաղտնի խոստացել էր զիջել Անգլիային: Այդ կարճ ժամանակաշրջանում անգլիացիները, Գուրկո-Կրյաժինի վկայությամբ, ընդունում են հայոց պատրիարք Ներսեսի պատվիրակներին, նրանց խոստումներ տալիս վերականգնելու Հայաստանը վեց վիլայեթներով, Հարավային Քրդստանի ու Սվազի մարզի սահմաններում «ճիշտ է, առանց դուրս գալու դեպի ծով»¹: Պատմաքաղաքական առումով հրատապ և այժմեական է այն, որ նրա մոտ, բնավ, կասկած չի հարուցում այդ հողերը հայ ժողովրդին, Հայաստանին վերադարձնելու արդարացիությունը, ավելին, նա դատապարտում է անգլիացիների քաղաքականությունը ոչ թե այն, ի սկզբանե, հայոց տարածքը իրենց օրինական տերերին վերադարձնելու խոստումների, այլ ընդհակառակը, դրանցից հրաժարվելու, հայերին լքելու և ըստ էության նոր արհավիրքների մեջ զցելու համար, որը և երևաց ու սկսվեց Բեռլինի վեհաժողովից: Այսպիսով, Գուրկո-Կրյաժինը ընդունում է, թեպետ ոչ անվերապահորեն, հայոց հարցի գոհաբերումը եվրոպական դիվանագիտության լաբիրինթոսում: Սակայն հեղինակի կողմից կամ չի ընկալվել, կամ էլ ավելի ստույգ անտեսվել է այն պատմաքաղաքական փաստը, որ Բեռլինի վեհաժողովից հետո հայոց հարցը դուրս եկավ միջազգային ասպարեզ: Միաժամանակ պարզաբանված չէ այնպիսի կարևորագույն պատմահարց, ինչպիսին Ռուսաստանի դիրքորոշումն էր վեհաժողովում, նրա ներկայացուցիչների դիվանագիտական պայքարը, միջազգային մեկուսացումը և վերջիվերջո փաստորեն նկատելի պարտությունը: Չէ որ Ռուսաստանի պետական քաղաքական շահերը հենց այդ պատմափուլում, անշուշտ, պահանջում էին պաշտպանել արևմտահայերին, այսինքն իրագործել 61-րդ հոդվածը: Հայկական հարցին Գուրկո-Կրյաժինը համեմատաբար ավելի

¹ В. Гурко -Кряжин, История революции в Турции, М., 1925, с. 48-49.

մեծ տեղ է հատկացրել ու քիչ թե շատ խորությամբ քննարկել խորհրդային առաջին հանրագիտարանում տպագրված հոդվածում, որտեղ նա հայոց պատմության համար առանցքային նշանակություն ունեցող հիմնախնդրին ցուցաբերում է երկակի մոտեցում՝ մի կողմից այն դիտվում է որպես մեծ տերությունների ձգտում աջակցել օսմանյան կայսրության կենտրոնախույս ուժերին թուրքիային թուլացնելու նպատակով (ավելի ճիշտ այնտեղ գերիշխելու նպատակով), իսկ մյուս կողմից դա համարում ազգային բուրժուազիայի գլխավորությամբ հայ ժողովրդի պայքար ազգային ինքնորոշման համար: Ռուս պատմաբանի կարծիքով հայկական հարցը ծնող պատճառներից մեկը եղավ 70-ական թթ. հայ գյուղացիության վիճակի խիստ վատացումը թուրքիայում կապված օսմանյան կառավարության հարկերի բարձրացման, ինչպես նաև հայ-քրդական հարաբերությունների սրման հետ»¹: (Նրա ոչ ճշգրիտ տվյալներով հայկական հինգ վիլայեթների տարածքում այդ ժամանակ հայերը կազմում էին փոքրամասնություն՝ 20-40 %, մյուս մասը կազմում էին քրդերը)²: Այս հիմնահարցում, անշուշտ, ավելի անաչառ են հայ պատմաբանները, քանզի նրանց տվյալները ավելի ստույգ են ու իրատես՝ 19-րդ դարի վերջերին Արևմտյան Հայաստանում հայերը կազմում էին բնակչության հարաբերական, իսկ առանձին շրջաններում բացարձակ մեծամասնություն: Գուրկո-Կրյաժինը անտեսում է մի կարևորագույն հանգամանք, որը լիովին բացահայտում է Արևմտյան Հայաստանում բնակչության կազմի փոփոխման միտումը: Նա չի նկատում կամ պարզապես հաշվի չի առնում, որ Բեռլինի վեհաժողովից հետո, երբ հայկական հարցը դարձավ միջազգային և կարևորվեց արևմտահայության և Արևմտյան Հայաստանում բնակվող մահմեդական բնակչության թվաքանակի տոկոսային հարաբերակցությունը, արևմտահայության կազմը այդ տարածքներում պակասացնելու, համեմատաբար փոքրամասնություն կազմելու նպատակով Աբդուլ Համիդը կատարեց վարչական բաժանումներ այնտեղ բնակեցնելով մահմեդականներին ու քրդերին: Ի դեպ, այդ մասին նշում են Ա. Միլլերը և Կինյապինան: «Բեռլինի վեհաժողովի որոշումները,- եզրակացնում է ռուս հետազոտողը,- հայ բուրժուազիայի ղեկավար շրջաններում արթնացրին օգնության հույսեր հայ ազգային պետականություն ստեղծելու համար իրենց մղվող պայքարում, այս անգամ կապված ոչ թե Ռուսաստանի, այլ բոլոր մեծ տերությունների հետ: Այս պատրանքները ուժգնորեն պաշտպանում էր անգլիական դիվանագիտությունը, որը խոստանում էր «ծովից ծով», Մեծ Հա-

¹ ԵՇՅ, Մ., 1926, Կ. 3, Ը. 435.

² Նույն տեղում, էջ 435:

յաստան»¹ : Այնուհետև ավելացնում՝ «Սակայն միջազգային դրուս-
յան առումով հայերի կողմնորոշման փոփոխությունը միայն հան-
գեցրեց նրանց լիովին մեկուսացմանը: Ռուսաստանից նրանք հրա-
ժարվեցին ինքները, իսկ Անգլիային տվյալ պահին հարկավոր էր
միայն թույլ չտալ Ռուսաստանին օգտագործել հայերին իր մերծա-
վորարևելյան քաղաքականության մեջ»² : Անշուշտ, քաղաքական
դիվանագիտական տեսանկյունից պատրանքներ էին ունեցած ակն-
կալիքները Եվրոպայի հանդեպ, բայց սխալվում է հեղինակը, երբ մե-
ղադրում է հայերին ռուսական կողմնորոշումից նահանջելու, առա-
վել ևս այն փոխելու համար: Եթե անգամ այդ դատողության մեջ առ-
կա է ռացիոնալ հատիկ, ապա դա պետք է փնտրել Ռուսաստանի
մեջ, որն ամբողջովին անտեսել է Գուրկո-Կոյաժինը: Այստեղ արժե
հիշեցնել հեղինակին, որ Անգլիայի իսկական նպատակները հայոց
հարցում ուշացումով լավագույն ձևով է մեկնաբանել այդ երկրի
նշանավոր պետական քաղաքական գործիչ ու աչքի ընկնող դիվա-
նագետ Լլոյդ-Չորջը, որի կարծիքով Մեծ Բրիտանիան հայոց դատը
դրեց զոհասեղանին, հանուն իր եսասիրական նպատակների ու շա-
հերի: Հիրավի, մեկնաբանված է պարզ, հստակ ու որոշակի, ահա
ինչու ավելի լավ ասել ուղղակի դժվար է, թերևս, անհնարին, թեև,
ինչպես նշվեց, ասվել է զգալի ուշացումով, տարիներ հետո:

Բռնիքի վեհաժողովում տեղի ունեցած անգիջում ու սուր, հա-
մառ ու կատաղի դիվանագիտական պայքարին հիմնական գծերով
իրենց ֆունդամենտալ մենագրությունում³ անդրադարձել են Կին-
յապինան, Գեորգիեվը, Պանչենկովան, Շերեմետը, ուր արտացոլ-
ված է, իհարկե, չափազանց հակիրճ նաև հայոց հարցը: Թեև հեղի-
նակները ավելի շատ ուշադրությունը սևեռում են Բալկանյան ժո-
ղովուրդների պատմությանը, գերազանցապես խոսում սլավոնա-
կան պետությունների մասին, այնուհանդերձ, հայկական հարցի լու-
սաբանումը կարելի է, թերևս, համարել բավարար: Ավելին, մենագ-
րությունը զգալիորեն տարբերվում է մյուս աշխատություններից
այն առումով, որ նրա հեղինակները խորհրդային պատմագրության
մեջ առաջին անգամ հայկական հարցին հատկացրել են, թեև փոք-
րիկ, բայց և այնպես առանձին ենթակետ «Հայկական հարցը և տե-
րությունները» խորագրով, որը սակայն, քննարկվում է ոչ թե ռուս-
թուրքական պատերազմին վերաբերվող զլխում, այլ «19-րդ դարի
90-ական թթ. մերծավորարևելյան ճգնաժամը» բաժնում: Ինչևիցե,

¹ ԵՏՁ, Մ., 1926, Կ. 3, շ. 435.

² Նույն տեղում, էջ 435:

³ Н.С. Киньяшина, В.А. Георгиев, М.Т. Панченкова, В.Н. Шеремет: Восточный вопрос во внешней политике России (конец XVIII - начало XX вв), М. 1978.

հայկական հարցին վերաբերող ենթակետը փոքր է, ընդամենը տաս էջ, ահա ինչու անտեսված են հարցի ծագման շարժառիթը, իմաստը և բովանդակությունը: Այսուհանդերձ, մենագրության հեղինակները ընդունում են, որ Թուրքիայի հայ բնակչության դրությունը չափազանց ծանր էր: Ավելին, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին հայկական ջոկատների մասնակցության, Ռուսաստանին աջակցելու համար Թուրքիան պատասխանում էր դաժան պատժամիջոցներով, որն էլ ավելի էր բարդացնում արևմտահայության սոցիալ-տնտեսական ու քաղաքական կացությունը: Հետևաբար, նրանք մի կողմից ընդունում են հայ ժողովրդի համակրանքը Ռուսաստանի նկատմամբ, նրա զորքերին աջակցելու պատմաւիաստը, իսկ մյուս կողմից նշում թուրքական իշխանությունների դաժանությունները և ոճրագործությունները արևմտահայության հանդեպ: Քաղաքական մասն հանգամանքներում Ռուսաստանը, բնականաբար, չէր կարող զերծ մնալ կամ հանդես գալ կողմնակի դիտորդի դերում, իրավացիորեն նշում են հետազոտողները, մանավանդ որ պատերազմի նպատակներից էր ոչ միայն գերիշխանություն հաստատել Բալկաններում, այլև ամրապնդվել նաև Արևմտյան Հայաստանում:

Ռուսաստանը Բեռլինի վեհաժողով ուղարկեց կանցլեր Գորչակովին, Լոնդոնում ռուսաց դեսպան Շուվալովին, Բեռլինում ռուսաց դեսպան Ուբրիին: «Բեռլին,-գրում են հեղինակները,- ժամանեցին նաև Հունաստանի, Ռումինիայի, Սերբիայի, Չեռնոգորիայի ... ու հայ բնակչության ներկայացուցիչները»¹: Սա, անշուշտ, անհաջող և, թերևս, անորոշ արտահայտություն է, պարզապես մնում է կռահել, որ հեղինակները նկատի ունեն Բեռլին մեկնած հայոց պատվիրակությանը խորհմյան Հայրիկի առաջնորդությամբ, որին սակայն չթողեցին մասնակցել վեհաժողովի աշխատանքներին, թեև «... միայն Հունաստանի ու Ռումինիայի պատգամավորները, ոչ առանց Գորչակովի աջակցության, մասնակցեցին խորհրդաժողովի աշխատանքներին իրենց երկրների կառուցվածքի հարցերը քննարկելու ժամանակ»²: Խորհրդային պատմաբանները ընդգծում են Ռուսաստանի դրական վերաբերմունքը արևմտահայության նկատմամբ, մատնանշում են, որ Սան-Ստեֆանոյի զինադադարով Ռուսաստանին անցան Արդահանը, Կարսը, Բայազեդը, Բաթումը³: Կինյայինան ու նրա գործընկերները այդ հողերի անցումը Ռուսաստանին նույնպես չեն դիտում որպես Թուրքիային «թալանելու» և «բաժանե-

¹ Н.С. Княпина, В.А. Георгиев, М.Т. Панченкова, В.И. Шеремет, Восточный вопрос во внешней политике России (конец XVIII - начало XX вв), М. 1978, с.229.

² Նույն տեղում, էջ 229:

³ Նույն տեղում, էջ 224:

լու» միջոց, չեն կասկածում, որ այդ հայկական հողերի անցումը կայսրությանը ընդհանուր առմամբ համապատասխանում է նրանց շահերին: Ուստի միանգամայն տրամաբանական է, որ նրանք դրանից հետո հպանցիկորեն անդրադառնում են 16-րդ հողվածին: «Փորձելով պաշտպանել հայերի (արևմտահայերի -Մ.Մ.) իրավունքները, մատնանշում է Կինյապինան,- Ռուսաստանը կարողացավ Սան-Ստեֆանոյի պայմանագրի մեջ մտցնել 16-րդ հողվածը, որը նախատեսում էր Արևմտյան Հայաստանում անհապաղ բարելավումներ ու բարենորոգումներ անցկացնելու անհրաժեշտությունը»¹ : Սակայն ռուսական պատմագիտական միտքը ներկայացնողները չեն նշում ոչ 16-րդ հողվածի հեղինակի՝ ռուսաց պատվիրակության ղեկավար կոմս Իգնատևի անունը և ոչ էլ այդ կետի պատմականորեն երևան գալու առարկայական պատճառները: Իգնատևը կանցլերին և Կովկասի փոխարքային տեղեկացնում էր, որ թուրքերը Ռուսաստանին զիջեցին Կարսը, Օլթին, Արդահանը, Բաթումը, Բայազեդը, Արդանուշը, Արդվինը, Ալաշկերտը, Կաղզվանը: Սակայն չկարողանալով պատերազմի իրավունքով գրաված բոլոր շրջանները միացնել Ռուսաստանին, նա հարկադրված է լինում մշակել ու պայմանագրի մեջ մտցնել Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայերի վերաբերյալ նշված կետը: Հետևաբար, կոմս Իգնատևը հայկական հարցի լուծման ուղղությամբ կատարեց առաջին դրական քայլերը: Ուստի Ռուսաստանը ոչ թե իր կամքով, այլև դրան հակառակ հետագայում հարկադրված եղավ վերադարձնել Արևմտյան Հայաստանի տարածքները: Արևմտահայության համար Սան-Ստեֆանոյի պայմանագրի քաղաքական նշանակությունը և կարևորությունը հիմնավորելու նպատակով հեղինակները ցիտում են ֆրանսիացի պատմաբան Դրիոյին, վերջինս պայմանագիրը համարեց «հայերի օգտին միջազգային ցույց²»: Նրանք նույնպես համերաշխվում են խորհրդային պատմագրության մեջ լայնորեն տարածված և անառարկելի համարվող տեսակետին, որի համաձայն Սան-Ստեֆանոյի պայմանագիրը ընդհանրապես և 16-րդ հողվածը մասնավորապես դժկամությամբ ընդունեց Անգլիան և, ի վերջո, հարկադրեց Ռուսաստանին վերանայելու և հրաժարվելու նրա մի շարք կետերից: «Այդ պատճառով էլ Բեռլինի վեհաժողովում և դրանից ավելի վաղ Լոնդոնում Պ.Ա.Շուվալովի հետ բանակցությունների ժամանակ Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հողվածին տրվեց միջազգային տեսանկյուն: Բեռլինի դաշնագրի 61-րդ հողվածով Ռուսաստանի հանդեպ Թուր-

¹ Н.С. Киняпина, В.А. Георгиев, М.Т. Панченко, В.И. Шеремет, Восточный вопрос во внешней политике России (конец XVIII- начало XX вв), М. 1978, с.259.

² Նույն տեղում, էջ 259:

քիայի պարտավորությունները կապված Հայաստանում (Արևմտյան-Մ.Ս.) բարենորոգումների հետ տարածվեցին եվրոպական բոլոր պետությունների վրա: Նրանց էր հանձնարարվում հայերին հովանավորելու և բարենորոգումներ անցկացնելու համար վերահսկողության իրականացումը»¹: Սակայն չի նշվում 61-րդ հոդվածի ծանր հետևանքները, մինչդեռ պարզ էր, որ այն, ի սկզբանե, ենթակա էր ծախողման, քանզի եվրոպական երկրների միջև առկա սուր և անհաղթահարելի հակասությունների ներքո անխուսափելիորեն տրորվելու էին արևմտահայերի շահերն ու իրավունքները, հայկական հարցը դառնալու էր սոսկ շահարկման միջոց Թուրքիայի վրա ճնշում գործադրելու, նրանից զիջումներ կորզելու համար: Այսուհանդերձ, մենագրությունում ընդգծվում է, որ «սուլթանը ոչ միայն չկատարեց իր պարտավորությունները, այլև ծրագիր մշակեց հայերին ոչնչացնելու ճանապարհով հայկական հարցը «վերացնելու» համար»²: Նրանց իրավացի տեսակետով նշանակություն չունեցան նաև եվրոպական երկրների՝ Թուրքիային հղած 1880 թ. հունիսի 11-ի ու հոկտեմբերի 7-ի վերջնագրերը, որոնցում նրանք սուլթանին հիշեցնում էին միջազգային դաշնագրերի ուժի և հատկապես կիրարկման անհրաժեշտության մասին»³: Ընդհանրացնելով Բեռլինի վեհաժողովի աշխատանքները, ի վերջո, ընդունվում է ռուսաց դիվանագիտության անհաջողությունը՝ ընդգծվում, որ «Ա.Ս. Գորչակովը և Ալեքսանդր II-ը հուսախաբ էին վեհաժողովի որոշումներից»⁴: Ավելին, հեղինակները այս անվիճելի տեսակետը լիովին հիմնավորելու համար հենվում են խորհրդային պատմագրությանը (Ներառյալ և հայ) քաջ հայտնի Գորչակովի՝ ցարին ներկայացրած զեկուցագրի վրա, որտեղ աչքի ընկնող ռուս դիվանագետը ցավով նշում է. «Բեռլինի դաշնագիրը իմ ծառայողական գործունեության ամենասև օրն է»: Այս դառը, բայց իրատես խոստովանությանը կայսրը ավելացրեց ոչ պակաս պերճախոս բառեր՝ «նույնպես և իմ»⁵: Այս ամենից հետո միանգամայն անհամոզիչ, էլ չենք ասում անտրամաբանական են դառնում այն դատողությունները, թե իբր ռուս-թուրքական պատերազմից հետո «Հայաստանի ու Վրաստանի զգալի հատվածը, որը ավելի վաղ մտցված էր Թուրքիայի կազմում, միացվեց Ռուսաստա-

¹ Н.С. Книгина, В.А. Георгиев, М.Т. Панченкова, В.И. Шерemet, Восточный вопрос во внешней политике России (конец XVIII- начало XX вв), М. 1978, с.259.

² Նույն տեղում, էջ 259:

³ Նույն տեղում, էջ 259:

⁴ Նույն տեղում, էջ 234:

⁵ Նույն տեղում, էջ 234:

նին»¹ : Այսպիսի եզրակացությունը տարօրինակ է հնչում հենց իսկ այն պատմափաստի համայնապատկերի վրա, որը ներկայացված է գրքում: Եթե Հայաստանի ու Վրաստանի տարածքների մեծ մասը անցնեին Ռուսաստանին, ապա հազիվ թե Գորչակովը վեհաժողովի արդյունքները գնահատեր որպես իր դիվանագիտական ծառայության ամենասև օրը: Բեռլինի վեհաժողովից հետո Ռուսաստանին անցավ միայն Կարսի մարզը և ոչ թե Հայաստանի զգալի մասը: Անշուշտ, եթե Սան-Ստեֆանոյի կետերը մնային ուժի մեջ, ապա այն կլինեի Գորչակովի և կայսրի ոչ թե ամենասև օրը, այլ Ռուսաստանի հերթական հաղթարշավը, որը կասեցվեց եվրոպական տերությունների համատեղ հակառուսական, առարկայորեն նաև հակահայկական գործողություններով: «1877-1878թթ. պատերազմը,-հեղինակների կարծիքով,- կարևոր դեր խաղաց Բալկանյան թերակղզու բազմազգ բնակչության և Կովկասի ժողովուրդների ճակատագրերում»² : Իհարկե, բուլղարների, սերբերի, ռումինացիների համար պատերազմը, իսկապես, ունեցավ պատմաքաղաքական կարևոր նշանակություն, քանզի նրանք ռուսական զենքի հաղթանակի շնորհիվ վերականգնեցին իրենց անկախությունն ու պետականությունը, որը, դժբախտաբար, չտարածվեց արևմտահայության վրա: Այս թերությունները և վրիպումները սակայն, բնավ, էլ չեն նսեմացնում Կինյապինայի, Գեորգիևի, Պանչենկովայի և Շերեմետի մենագրության պատմագիտական արժեքը, մանավանդ որ նրանք 90 - ական թթ. և հատկապես առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Ռուսաստանի կենսագործած արտաքին քաղաքականության առնչությամբ վերստին անդրադառնում են հայոց հարցին:

Բեռլինի վեհաժողովում Բիքոնսֆիլդը և Սոլսբերին, Բիսմարկը և Վադդինգտոնը համատեղ ջանքերով մեկուսացրին Ռուսաստանին և անուղղակիորեն ճակատագրական հարված հասցրին արևմտահայերին: Նրանք իսկապես մտավախելով ռուսաց կայսրության ռազմաքաղաքական ակնհայտ հզորացումից պաշտպանում էին, ոչ այնքան Թուրքիային, որքան ղեկավարվում սեփական եսասիրական շահերով, հատկապես հանդես գալիս Ռուսաստանի դեմ, որը սակայն, ի վերջո, նշանակում էր Օսմանյան կայսրության բացահայտ պաշտպանություն, հայ ժողովրդի շահերի աներկբա ոտնահարում: Չէ որ Բեռլինի վեհաժողովում ընդունված 61-րդ հոդվածը ոչ այլ ինչ էր, եթե ոչ եվրոպական տերությունների համատեղ դիվանագիտական գործունեություն, փոխզիջման համաձայնեցված արդյունք, յու-

¹ Н.С. Киняпина, В.А. Георгиев, М.Т. Панченкова, В.И. Шеремет, Восточный вопрос во внешней политике России (конец XVIII- начало XX вв), М. 1978, с.259.

² Н.С. Киняпина, В.А. Георгиев, М.Т. Панченкова, В.И. Шеремет, Восточный вопрос во внешней политике России (конец XVIII- начало XX вв), М. 1978, с.236.

րատեսակ գործարք Ռուսաստանի թիկունքում ու ի վնաս հայ ժողովրդի: Իսկապես, եվրոպական երկրների միջամտության, Սան-Ստեֆանոյում ամրագրված 16-րդ կետի վերածնության ծնունդ՝ Բեռլինի վեհաժողովում ընդունված 61-րդ հոդվածը կարծես վերջապես անդորրություն, անձի ազատություն և գույքի անձեռնմխելիություն և անվտանգություն, օսմանյան կայսրության մեջ հնարավոր քիչ թե շատ տանելի կյանք էր հեռագծում արևմտահայության լայն զանգվածներին: Այդպես էին մտածում բոլոր նրանք, ովքեր ցանկանում էին սոցիալ-տնտեսական ու քաղաքական նման կացության մեջ տեսնել արևմտահայերին, բոլոր նրանք, ովքեր տուրք տալով մտացածին երևակայությանը և զոհ դառնալով պատրանքներին, արևմտահայության համար այլ հեռանկար չէին տեսնում, մտովի չկարողանալով անգամ պատկերացնել այն, ինչ կատարվեց մոտ երկու տասնամյակ հետո, որը կարծես դարձավ նախադեպ ու սովորական երևույթ, իր բարձրակետին հասավ 1915 թ., մակընթացությամբ և տեղատվությամբ շարունակվեց մինչև 20-րդ դարի 20-ական թթ. առաջին տարիները: Այլ կերպ խորհել զրեթե «անիմաստ էր և անմտություն», չէ որ անվտանգության և անձեռնմխելիության մասին, իրականում դատարկություն պարունակող վերոհիշյալ չարաբաստիկ հոդվածը երաշխավորում էին աշխարհի հսկաները, քանզի արևմտահայության «թիկունքում» կանգնած էին որոշակի պարտավորություններ ստանձնած մեծ տերությունները, միջազգային քաղաքական առանցքային հիմնահարցեր լուծողները, մոլորակի և բազում ժողովուրդների ճակատագրեր տնօրինողները: Մինչդեռ, եթե Բեռլինի վեհաժողովի հանդեպ ընդհանրապես և 61-րդ հոդվածի նկատմամբ հատկապես ցուցաբերվեր ոչ թե զգացմունքային ու հախուռն, մակերեսային ու դյուրահավատ, այլ զգաստ և անկողմնակալ, խոր ու բազմակողմանի, պատմաքաղաքական և դիվանագիտական սթափ, հաշվեկշռված, զգաստ, իրատես մոտեցում, ապա թերևս, հնարավոր լիներ գոնե ինչ-որ չափով կանխատեսել ճակատագրական նշանակություն ունեցող դեպքերի զարգացման հետագա ողջ ընթացքը և դրանով իսկ արևմտահայության թեկուզև մի հատվածին դուրս բերել, փրկել այդ աղետալի ու ողբերգական վիճակից: Դժբախտաբար Աբդուլ-Ջամիլը և նրա խառնախումբը ավելի իրատես գնահատեցին ու մոտեցում ցուցաբերեցին արևմտահայությանը վերաբերող հոդվածին:

Երանք համոզված էին, ընդ որում ոչ առանց հիմքի, որ Եվրոպական լաբիրինթոսում խճճված սուր և անհաղթահարելի հակասությունները հնարավորություն չեն ընձեռի Բեռլինի վեհաժողովի մասնակիցներին հետևելու նրա կենսագործմանը, առավել ևս հետևողականորեն հովանավորելու արևմտահայությանը:

Ավելին, շահերի ակնհայտ տարբերությունները, սուր հակամարտությունները քաղաքական այդ պահին դարձան լավագույն միջոց «գյավուր անհավատներին», «անվստահելի ազգին», օսմանյան կայսրությանը անհնազանդ ժողովրդին պատժելու ռուսաց բանակին աջակցելու համար: Սուլթան Յամիդը լավ հասկանում էր, որ հանուն փոքրաթիվ ժողովրդի շահերի պաշտպանության եվրոպական տերությունները, հազիվ թե, փորձեն տիաճություններ պատճառել իրեն, առավել ևս հակամարտության մեջ մտնեն օսմանյան կայսրության հետ:

Այս ամենը լիովին ընկալված է և մեկնաբանված ռուսական հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչների կողմից և հստակորեն քննախոսված պատմագրության մեջ: Ահա ինչու նրանց թողած հարուստ ժառանգությունը լուրջ ներդրում է հայոց պատմության այդ կարևորագույն դրվագը լուսաբանելու գործում, ուստի և օրինաչափ, որ դրանից քննադատական մոտեցմամբ հանդերձ օգտվեց հայոց պատմագրությունը:

ԳԼՈՒԽ II

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԱԲԴՈՒԼ-ՀԱՄԻԴՅԱՆ «ՁՈՒԼՈՒՄԻ» ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ ՌՈՒՄԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՏՔԸ

*«Սորթելով հայերին՝
Աբդուլ-Համիդը մորթում էր
ռուսական ուժը, ռուսական
համակրությունը»:
Ա. Ամֆիտեատրով*

*«Հայերի շրջանում
գոյություն չունի որևէ
անջատողականություն»:
Վորոնցով-Դաշկով*

Ռուսաց պատմագրությունը՝ հատկապես Մախախորհրդային պատմագիտական և հասարակական միտքը իր ուշադրության կիզակետում պահեց աբդուլ-համիդյան «զուլումի» տարիներին արևմտահայության համար ստեղծված առավել դժնդակ իրավիճակի հիմնահարցը: Նրա ներկայացուցիչները քննարկելով աբդուլ-համիդյան արյունոտ ներքին, մասնավորապես վայրենաբարո ազգակուլ քաղաքականությունը, այդ առնչությամբ հակիրճորեն արձանագրում են այն ինքնապաշտպանական գոյամարտերը, որոնք ի պատասխան ազգատյաց ոճրագործությունների տեղի էին ունենում օսմանյան կայսրության տարբեր շրջաններում: Դրանց մեջ առանցքային էր եվրոպայում լայն արձագանք գտած արևմտահայերի պայքարը, որը, ի վերջո, հարկադրեց մեծ տերություններին վերստին անդրադառնալ ու քննարկել արդեն միջազգայնացված հայոց հարցը:

Ռուս հեղինակները փաստերի ճնշման ներքո նույնպես ընդունում են, որ աբդուլ-համիդյան արյունոտ վարչաձևի տարիներին Թուրքիան դարձավ առավելագույնս բռնատիրական երկիր, ուր առանձնապես ծանր էր այլազգիների՝ առաջին հերթին քրիստոնյա ժողովուրդների սոցիալական ու քաղաքական կացությունը: Ռուսական պատմագիտական և հասարակական-քաղաքական մտքի առանձին

ներկայացուցիչներ տվել են Աբդուլ-Չամիդ II-ի սպառիչ արյունոտ քաղաքական դիմանկարը, որպեսզի ոչ միայն ավելի որոշակի ու համոզիչ դարձնեն օսմանյան կայսրության հայաջինջ քաղաքականությունը, այլև հիմնավորապես արդարացնեն արևմտահայության կյանքի ու մահվան անհավասար կռիվները: Արևմտահայության կոտորածները իրենց ծավալով լինելով մինչ այդ եղած կոտորածներից խոշորագույնը օսմանյան բռնատիրական կայսրության արյունոտ պատմության մեջ նույնպես նպաստեցին, որպեսզի հայկական ջարդերը և ի պատասխան դրան տեղի ունեցած ինքնապաշտպանական մարտերը իրենց վրա գամեին եվրոպական մեծ տերությունների ուշադրությունը, մշակել բարենորոգումների նախագիծ: Արևմտահայության կոտորածները յուրատեսակ քաղաքական ամպրոպ էին պարզ երկնքում, որը անսպասելի անակնկալ էր, քանզի մեծ տերությունների կողմից Բեռլինի վեհաժողովում ընդունված 61-րդ հոդվածը նրանց պատկերացմամբ քաղաքական իրադարձությունների զարգացման այդպիսի ընթացք չէր նախանշում:

Ռուսական հասարակական քաղաքական միտքը հակառակ Լոբանով-Ռոստովսկիների, մեղմ ասած, ոչ հայանպաստ դիրքորոշման, ի պաշտպանություն արևմտահայության պահանջեց անհպաղ դադարեցնել կոտորածները, պատասխանատվության ենթարկել աբդուլհամիդյան վարչակազմին, պաշտպանել նրան, իրագործել ստանձնած պարտավորությունները հայկական հարցում: Դեռևս արևմտահայության կոտորածների և ինքնապաշտպանական գոյամարտի թեժ պահին և դրանից անմիջապես հետո Ռուսաստանում հրատարակվեցին պատմաքաղաքական առումով երկու չափազանց արժեքավոր, մնայուն աբդուլհամիդյան հանցագործությունները արևմտահայության նկատմամբ դատապարտող և պակասեցնող ժողովածուներ¹: Ռուս հայտնի պրոֆ Կամարովսկու հիանալի ներածականով լույս տեսած առաջին ժողովածուի մեջ զետեղված են եվրոպայի աչքի ընկնող պետական հասարակական-քաղաքական գործիչների, միջազգային իրավունքի ճանաչված խոշոր մասնագետի, դիվանագետ-հյուպատոսի (Գլադստոն, Գրին, Դիլոն, Մաքլոլմ, Ռոմեն-ժեկմեն) հոդվածները, որոնցում ներկայացված են անաչառ գնահատականներ արևմտահայության ողբերգության վերաբերյալ: Նրանց հետ մեկտեղ օսմանյան կայսրության արյունոտ քաղաքականությունը արևմտահայության հանդեպ դատապարտում է նաև ռուս հրապարակախոս և լրագրող Դիկը թուրք գործընկերոջը ուղղված իր չորս, հիրավի, պատմական նամակում: Այն գրվել է 1891 թ.

¹ "Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году", М., 1896, "Братская помощь пострадавшим в Турции Армянам", М., 1897.

ընդ որում առաջին նամակը Սեվ ծովի ափին, (քաղաքը նշված չէ), երկրորդը՝ Սևաստոպոլում, երրորդ և չորրորդ նամակները Մոսկվայում, իսկ Հավելումը 1895 թ. Մոսկվայում: Հատկանշական է, որ 1895 թ. Դիևի նամակները հրապարակվել են , իսկ 1898 թ. վերահրատարակվել առանձին գրքույկով¹, որը, անշուշտ, պայմանավորված էր հրատապ քաղաքական գործունով՝ աբդուլհամիդյան հայաջինջ քաղաքականությունը վկայակոչելու և դատապարտելու հեռանետ նպատակով: Նամակները գրվելու ընթացքում արևմտահայության գլխին արդեն կուտակվում էին սև ամպեր, փոթորիկ, ամպրոպ և ռուս լրագրողը ելնելով նրանց դեմ ձեռնարկված բռնություններից և հալածանքներից, հիմք ընդունելով զանազան անհեթեթ և կեղծ պատրվակներով կազմակերպված դատավարությունները կռահում էր կարմիր սուլթանի հայաջինջ ծրագրերը, նրա արյունոտ ոճրագործությունների անխուսափելիությունը:

Խեղկատակություն հիշեցնող այդպիսի մի դատավարությանը թուրք գործընկերոջ հետ միասին Կ.Պոլսում ներկա է եղել նաև Դիևը, երբ կանխավ դատապարտված հայազգի զոհերը սպասում էին իրենց ճակատագրի վճռին թուրքական թեմիսի այն ներկայացուցիչներից, որոնք որսում էին «դատախազի ձեռքի ցանկացած հրամայական շարժում»², իսկ «չալմաներով ու ֆեսերով դատապաշտպանները զարմացնելով իրենց շողոքորթող ճառերով և ստրկամիտ շարժումներով մերկացնող ջերմեռանդության մեջ ըստ արժանվույն մրցում էին դատախազի հետ, ցելխի մեջ տրորելով դատապաշտպանի ազնիվ կոչումը... ներկայացված էր նման ծաղրերգություն, սրբապղծություն արդարադատության նկատմամբ»³: Անցնելով իր գլխավոր հիմնախնդրին՝ հայկական հարցին թուրքիայում, Դիևը հատուկ ընդգծում է այն միտքը, որի համաձայն արևմտահայերի քաղաքական ակնկալիքները Ռուսաստանի և ռուսական կողմնորոշումը ընդհանրապես նրանց համար միջոց էր և ոչ թե նպատակ, դա յուրատեսակ պատասխան էր թուրքական հայախալած քաղաքականության, անխուսափելի քայլ ինչպես պատմական, այնպես էլ տրամաբանական առումով: Ռուս հրապարակախոսի և լրագրողի տեսակետը ավելի քան պարզ է ու հասկանալի, եթե թուրքական իշխանությունները գեթ մի փոքր լոյալ վերաբերվեին արևմտահայերի նկատմամբ, ապա նրանց շրջանում հազիվ լիներ ռուսամետ քաղաքական վարքագիծ՝ ռուսական կողմնորոշումը հե-

¹ Գր. Ա. Днев, Армянский вопрос в Турции (из переписки со стамбульским публицистом), М., 1985.

² Գր. Ա. Днев, Армянский вопрос в Турции, с. 378, в книге "Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году", М., 1986.

³ Գր. А. Днев, Армянский вопрос в Турции....., с. 378-379.

տւանք է, իսկ դրա պատճառը հայաջինջ քաղաքականությունն է իր բոլոր արյունոտ ու վայրենաբարո գծերով:

Հայկական հարցը Թուրքիայում ավելի տարողունակ ու անաչառ լուսաբանելու, թուրքական անհիմն մեղադրանքները արևմտահայության հանդեպ հերքելու հիմնախնդիրը պատմական իրատեսությամբ ներկայացնելու և գնահատելու նպատակով Դիևը միանգամայն իրավացիորեն անհրաժեշտ է համարել իր նամակներում վերլուծել հայ-ռուսական առնչությունների քաղաքական ողջ գործընթացը: Ելնելով այդ ամենից նա առաջիններից մեկը խստագույնս դատապարտում է արևմտահայության նկատմամբ Աբդուլ Համիդի ձեռնարկած զանգվածային առաջին կոտորածները: Այս ամենից հետո Դիևը անցնում է Սասունի կոտորածներին և թե՛ հետքերով դատապարտում աբդուլհամիդյան ոճրագործներին իր վերջին նամակում և Հավելվածում՝ գրված Մոսկվայում 1895 թ., այսինքն, այն ժամանակ, երբ առաջին նամակը գրելուց արդեն անցել էր 4 տարի և «... շատ ջուր էր հոսել, բայց դժբախտաբար ոչ միայն ջուր, այլև շատ, շատ... արյուն, անմեղ հայ տառապյալների արյուն: Ամնարդկային, հրեշագործ անգամ խելակորույս մահմեդական մոլեռանդության համար հայերի սիստեմատիկ ոչնչացման ծրագիր, ձեզ համար ատելի հայկական հարցը վերացնելու նպատակով... Սատանայական այդպիսի զգուշավորությամբ մտածված և նույնիսկ բաշիբուզուկների համար անմարդկային սառնասրտությամբ իրագործված Սասունի սպանող» բերեց «հեղեղված անմեղ արյան հեղեղներ Սասունի բարձունքներում», որը «ձեզ էժան չի նստի ուժի աստվածացմամբ հանդերձ»¹: Դիևը դատափետում է օսմանյան իշխանություններին Արևմտյան Հայաստանի համար Ռուսաստանի, Անգլիայի ու Ֆրանսիայի դեսպանների կողմից մշակված բարենորոգումների ծրագրի կենսագործումից փարիսեցիորեն խուսափելու համար:

Սակայն նա այդ ամենով չի բավարարվում և միաժամանակ դատապարտում է ռուսական պարբերական մամուլի այն օրգաններին, որոնք իրենց տպագրված հոդվածներով փաստորեն հակազդում էին արևմտահայության համար նախատեսված վարչական և դատական բարենորոգումների անցկացմանը, որոնց միջոցով հնարավոր կլիներ ապահովել նրան քրդերի ավազակային ասպատակություններից ու թուրքական ծախու վարչակազմի շահագործումից²: Ռուսական առանձին պարբերականների բացահայտ անսովոր թուրքամետությունը Դիևին ուղղակի զարմացրեց, քանզի ռուսական հասարակական-քաղաքական միտքը որպես կանոն հայկական հարցում

¹ Гр. А. Диев, Армянский вопрос в Турции....., с. 423-425.

² Երևան տեղում, էջ 247:

հանդես էր գալիս հայանպաստ դիրքերից: Եւ Դիւը իրավացի է, բայց եթէ նկատի ունենանք Լորանով-Ռոստովսկու քաղաքականությունը հայ-թուրքական առնչությունների հիմնախնդրում, ապա, իհարկե, զարմանալի ոչինչ չկար նման հրապարակումների մեջ: Այս կապակցությամբ Դիւը քննադատում է «Գրաժդանին» և «Մոսկովսկիե Վեդոմոստի» թերթերին, որոնք մոռանալով ռուսական ավանդական քաղաքականությունը Արևելքում, իրենց թուրքամետությամբ ցուցաբերեցին նախանձախնդիր փութաջանություն, չցանկանալով տեսնել, որ արևմտահայերի օգտին բարենորոգումներ անցկացնելու անհրաժեշտությունը պատկանում է Ռուսաստանին՝ հանձին Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածի: «Թուլյատրելի է արդյոք օրինակ,- գրում է նա, ծաղրի ենթարկել ինչպես դա անում է «Գրաժդանինը» Ռուսաստանի ազատագրական առաքելությունը Արևելքում և մասնավորապես ԴժԲԱԽՏ (հեզնորեն, ընդգծումը պատկանում է «Գրաժդանինին») Սերբիայի կամ ԴժԲԱԽՏ Բուլղարիայի ազատագրումը»¹ «Ելնելով նույն արդարև մարդակերական ատելությունից,- շարունակում է Դիւը,- «Գրաժդանինը» հարկավ դատապարտում է ռուսական դիվանագիտությանը Թուրքիայի «ԽԵՂԵ» (հեզնական ընդգծումը «Գրաժդանինին») հայերի օգտին բարենորոգումների վերաբերյալ Անգլիայի հետ համաձայնության գալու համար»²: Դիւը քննադատում է նաև «Մոսկովսկիե Վեդոմոստի» թերթին, որի էջերում տպագրվեց հոդվածաշար «Ռուսական հարցը Թիֆլիսում»³ ահեղ խորագրով: «Ամնարդկային չէ արդյոք, ինչպես դա անում են մշտապես «Մոսկովսկիե Վեդոմոստին», - նշում է Դիւը,- ծաղրել անպաշտպան տառապյալների անօրինակ դժբախտությունները, դժբախտություններ, որոնց մասին են վկայում ոչ միայն անգլիացիները, այլև բոլոր ամերիկացիները»⁴: Ռուս հրապարակախոսը ամենայն հավանականությամբ նկատի ուներ անգլիացի նշանավոր պետական քաղաքական գործիչ Գլադստոնին, ապա նաև Մաքլոլմին, Դիլոնին, Սասունի դեպքերի ականատես ամերիկացի միսիոներ Գրինի անաչառ գնահատականները⁵:

«Մոսկովսկիե Վեդոմոստին» դատափետվում է սուլթան Յամիդի արյունոտ վարչակազմին ներբողներ շռայլելու և «խառնակիչ» հայերին պարսավելու համար⁶: Եւ դա միանգամայն հասկանալի է,

¹ Гр. А. Диев, Армянский вопрос в Турции..... ,с. 427. "Гражданин" 1895, 26 мая, № 142.

² Гр. А. Диев, Армянский вопрос в Турции..... ,с. 428.

³ "Московские Ведомости", 1895, № 163.

⁴ Гр. А. Диев, Армянский вопрос в Турции..... ,с. 429.

⁵ "Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году", М., 1896.

⁶ Гр. А. Диев, Армянский вопрос в Турции..... ,с. 430.

քանզի «Մոսկովսկիե Վեդոմոստի» թերթի կարծիքով, «որքան սուլթանը դրսևորում է հանդուրժողականություն և իմաստություն այն ժողովուրդների հանդեպ, որոնք ենթարկվում են նրա օրենքներին, այնքան նա անողոք է խռովարարների նկատմամբ»¹ : Եւ վերջապես թուրքերին արդարացնելու իր չափից դուրս ջերմեռանդության մեջ «Մոսկովսկիե Վեդոմոստին» Դիևի միանգամայն իրատես գնահատմամբ հասավ բացարձակ լկտիության, երբ հայերի հետապնդումները Թուրքիայում համարեց հերյուրանք, երևակայության արգասիք² : Չատկանշական է, որ պատմաքաղաքական իրադարձությունները խեղաթյուրելու գերագույն ճիգեր գործադրող բացահայտ թուրքամետ թերթը աղմկարարություն և մտացածին է համարում նույնիսկ Թուրքիայում հայերի հալածանքները, իսկ ջարդերի ու կոտորածների մասին խոսք անգամ լինել չի կարող: Սասունի դեպքերը պարզապես արժանի են կշտամբանքի, քանզի դրանք ոչ այլ ինչ էին, եթե ոչ ուղղակի «խառնակչություն», «խռովություն» չափից ավելի մեծ «զիջողականություն», «հանդուրժողականություն» ցուցաբերող «իմաստուն» սուլթանի նկատմամբ:

Դիևի կարծիքը հստակ է ու միանշանակ՝, թե «Գրաժդանին» և թե՛ «Մոսկովսկիե Վեդոմոստի» թերթերը անսքող թուրքամետ են, և օրինաչափ է, որ իրենց գնահատականների մեջ նրանք լիովին անտեսում են Ռուսաստանի ազգային պետական շահերը, ոտնահարում պատմաքաղաքական ճշմարտությունները, խեղաթյուրում հայ-ռուսական առնչությունների պատմական գործընթացները: Նրա անաչառ կարծիքով այդ երգչախմբին մերթ ընդ մերթ միանում է իր անսկզբունքայնությամբ ու անպարկեշտությամբ «Նովոյե Վրեմյան», որի էջերից մեկում գետեղվեց «Մեծ Չայաստանը մինչև Դոնի Ռուտով», Դիևի բառերով «ոմն, հավանաբար, հայակուլությամբ ցնորված մոլագար պ. Անտիկվարիայի անիմաստ թերթոնը, որը ավելի մեծ կարևորության համար հողվածը հագեցնում է հնամնացուկներով»³: Դիևը տալիս է տխրահռչակ հողվածագրի դիպուկ գնահատականը նշելով, որ «այդ տխուր կերպարի կատաղած ասպետը հիշեցնում է «Մոսկովսկիե Վեդոմոստիի» տխրահռչակ աշխատակից Թիֆլիսի աստիճանավոր Մասկիևսկու Ջուբկային»⁴ որոնք «հայկան բուլղարացի բառը արտասանելիս կրճտացնում են ատամներ

¹ Գր.А. Днев, Армянский вопрос в Туршии..., с. 430. "Московские Ведомости", 1895, № 6.

² Գր.А. Днев, Армянский вопрос в Туршии..., с. 430. "Московские Ведомости", 1895, № 291.

³ Գր.А. Днев, Армянский вопрос в Туршии..., с. 431. "Новое Время"; 7 ноября, 1895.

⁴ Սույն տեղում, էջ 431:

րը»¹: Իր հայատյաց մոլուցքի մեջ հյուսիսային մայրաքաղաքում հրատարակվող թուրքամետ պարբերականներին ձգտում էր ոչնչով չզիջել Թիֆլիսում տխրահռչակ Վելիչկոյի խմբագրությանը լույս տեսնող «Կավկազ» թերթը: Պատճենավորելով թուրքասեր ավագ գրչակիցներին և կուրորեն հետևելով նրանց, «Կավկազը» իր հերթին ազգային, պատմական, քաղաքական, գաղափարական ճակատով սկսեց անփառունակ գրոհ ընդհանրապես հայ ժողովրդի ու հատկապես երկրամասի հայության դեմ: Հայատյաց մոլուցքից կուրացած Վելիչկոն իր թերթի էջերում կանխամտածված զրպարտանքների տարափ տեղաց հայության վրա, որպեսզի նրան կատամանք բորբոքվի ատելություն, որպեսզի հիմք ստեղծվի իրենց սև գործը իրականացնելու և արդարացնելու համար: Եթե քաղաքակիրթ եվրոպան հիմնականում դատապարտեց աբդուլհամիդյան զուլումը՝ իրեն զարհուրանք պատճառած արևմտահայերի զանգվածային կոտորածները, ապա Վելիչկոն հայերի ջարդերին արծագանքեց կարճառոտ ու սադրիչ հոդվածով, ուր մասնավորապես ասվում էր, թե հայերը արժանացան իրենց ճակատագրին, որ նրանց Աստվածն է պատժում, որ նրանց՝ շահագործողներին և խռովարարներին այդպես էլ պետք է, և այլ անպատվաբեր հերյուրանքներ: Եւ այս ամենը մի ժողովրդի հանդեպ, որը ոչ թե շահագործել է, այլև իր դարավոր պատմության ընթացքում մղել է ազգային-ազատագրական պայքար օտար ասպատակողների և կեղծքիչների լուծը թոթափելու համար: Ուստի միանգամայն օրինաչափ է, որ Վելիչկոյի բոլոր փորձերը ռուս և հատկապես վրաց ժողովրդի շրջանում թշնամանք, ատելություն սփռել երկրամասի հայերի նկատմամբ, լայն տարածում չգտան: Նրա գրած կեղծ գարշանքները միայն տվեցին աննշան արդյունքներ և բնականաբար որևէ իրական հետևանք չունեցան: Ավելին, այդ ամենը խիստ դժգոհություն և վրդովմունք առաջացրեց Անդրկովկասի առաջադիմական ուժերի շրջանում, ի վերջո, հարկադրելով տեղական իշխանություններին 1900 թ. սկզբին հեռացնել նրան երկրամասից: Բայց թուրքամետ ուղղության պարբերականների և հետևաբար նման բովանդակությամբ հոդվածների թիվը մեծ չէր, ուստի և «Բարեբախտաբար,- ինչպես նշում է Դիևը,- ռուսական մամուլի օրգանների մեծամասնությունը չի բաժանում հիշյալ երկու թուրքամետ թերթերի արտառոց հայեցողությունը»²: Եվ որպես ծանրակշիռ ու անառարկելի ապացույց նա նշում է «Պրավիտելստվեննի Վեստնիկում» 1895 թ. օգոստոսին տպագրված «Հայաստանը և նրա նկատմամբ ռուս ժողովրդի վերաբերմունքը» հոդվածը, որտեղ ար-

¹ Գր.Ա. Днев,Армянский вопрос в Турции.... ,с. 432. "Новое Время"; 7 ноября, 1895.

² Գր.Ա. Днев, Армянский вопрос в Турции.... ,с. 431.

ծանագրված են բազում տվյալներ թուրքերի գազանությունների մասին վերջին երեք դարերի ընթացքում: Հողվածագիրը, հիմք ընդունելով թուրք պատմաբանի տվյալները՝ դեռևս 16-րդ դարում երգրունի պաշարման ժամանակ թուրքերի կողմից հայ խաղաղ գյուղական բնակչության նկատմամբ կատարված գազանությունների մասին, կատարում է կարևոր եզրակացություն, որի համաձայն «այդ գազանությունները... շարունակվեցին 3 դարերի ընթացքում և ինչպես հայտնի է, կրկնվում են տակավին և մեր օրերում»¹: «Իսկ Սասունի կոտորածի» հեղինակները և Համիդի « իմաստուն կառավարման ազնիվ փաստաբանները» ցանկանում են հավատացնել, թե հայերին հետապնդելու մասին բոլոր լուրերը հերյուրանք են»²: Դիևի գնահատականը միանշանակ է՝ անհրաժեշտ է դատապարտել, մերժել թուրք չարագործների «հայրական» ռեժիմի ջատագովների դատողությունները³, քանզի հանդուրժել նման բացահայտ խեղաթյուրումը ոչ այլ ինչ է, եթե ոչ «... բացահայտ անարգանք դժբախտների հանդեպ... հազարավոր բռնաբարված հայ կանանց ու երեխաների ճիչերի նկատմամբ... որովհետև դրանց հետ ծանոթանալու դեպքում յուրաքանչյուր սիրտ ունեցող մարդու մազերը կանգնում են ցիցցից և մարմնով սարսուռ է անցնում... այդպիսի գիշատիչ ծանակունը,- եզրակացնում է հեղինակը,-անուն չունի»⁴:

Ռուս հասարակական մտքի ամենապայծառ դեմքերից մեկը՝ նշանավոր գրականագետ, բանաստեղծ, թարգմանիչ Յուրի Վեսելովսկին Արևմտյան Հայաստանում 90-ական թթ. կատարված կոտորածներից անմիջապես հետո ռուսական մամուլում առաջիններից դատապարտեց այդ ոճիրները և դրանով իսկ զգալիորեն նպաստեց, որպեսզի ռուս ընթերցողը նույնպես պարզ և հստակ պատկերացում կազմի քաղաքակիրթ աշխարհից մեծ հեռավորության վրա գտնվող Սասունի և Ջեյթունի արյունոտ իրադարձություններին: Վեսելովսկին ևս պսակագերծում էր թուրքական իշխանավորներին, որոնք իրենց քաղաքական հանցագործությունները փորձում էին «արդարացնել» պետական անհրաժեշտությամբ, իսկ հայերի տեղահանումը պայմանավորել երկրի անվտանգության ապահովման կանխակալմամբ: Այս սովորական գրասենյակային բացարձակ կեղծիքը, որին բազում անգամ և քանիցս դիմում էին Օսմանյան պաշտոնյաները, նպատակ ունեին, իրատեսորեն նկատում է հեղինակը.

¹ Գր.Ա. Դևե, Армянский вопрос в Турции..., с. 430".Правительственный Вестник". 1895. № 189.

² Գր.Ա. Դևե, Армянский вопрос в Турции..., с. 430.

³ Նույն տեղում, էջ 430:

⁴ Նույն տեղում, էջ 431:

թաքցնել սեփական ոճրագործության հետքերը, ջրից դուրս գալ չոր, այնժամ, երբ նրանց մեղադրում էին դաժանության և անօրինակա-
նության մեջ: Իհարկե, շարունակում է նա, չարագործությունները
այնքան էին ակնհայտ, որ թուրք դիվանագետներին հնարավոր չե-
ղավ ապակողմնորոշել որևէ մեկին: Ավելին, հեղինակը նշում է, որ
հայկական կոտորածները Արևմտյան Հայաստանում և Օսմանյան
կայսրության հայաբնակ վայրերում իրագործվում էին ծրագրված
համաչափությամբ ու պարբերաբար, որոնք իրենց դաժանությամբ
գերազանցում էին միմյանց: Այս ամենը լուսաբանված է «Հայերի ճա-
կատագիրը ամերիկյան գրողի պատկերմամբ», «Արևմտյան Հայաս-
տանի ճակատագիրը», «Հայերի ճակատագիրը և աճող ռուսական
սերունդը», «Լավագույն օրերի արշալույսին» հրապարակախոսա-
կան հոդվածներում:

Յու. Վեսելովսկին առանձնապես սրտի կսկիծով է արձանագ-
րում այն արհավիրքները, որոնց ենթարկվեցին հայ մանուկները՝
նրանց ողբերգական վիճակը պատկերավոր ձևով է ներկայացված
«Թշվառ երկրամասի զավակները», «Տառապյալ երեխաները (թուրք
հայկական իրականության սարսափների աշխարհից)» աշխատու-
յուններում, որոնցում մեկ անգամ ևս բացահայտվում է թուրքական
կառավարողների փարիսեցիությունը: Չէ որ «հեղափոխականների»
շրջանում, «որոնց դեմ պայքարում էր թուրքական կառավարությու-
նը, եղել են 10 տարեկանից փոքր երեխաներ, երբեմն ծծկեր երեխա-
ներ, դա հաստատված է բոլոր նրանց ցուցմունքներում, ովքեր չեն
կորցրել արդարության ու անաչառության զգացմունքը»¹:

Ռուսական պարբերական մամուլի էջերում գետեղված իրարա-
մերժ կարծիքները և բևեռացված գնահատականները վկայում են,
որ հայկական հարցում ռուսական դիվանագիտության ավանդա-
կան քաղաքականության մեջ ոչ միայն նկատվում էին երերման ակն-
հայտ միտումներ, այլև կատարվում էին լուրջ փորձեր դրանից նա-
հանջելու ուղղակի քայլեր թուրքիայի ստատուս-քվոն պաշտպանե-
լու եղանակով մերժենալու կայսրության հետ, որը առարկայորեն
ուղղված էր արևմտահայության դեմ: Ակնհայտ էր, որ թուրքիայի
ստատուս-քվոյի ճանաչումը նշանակում էր պաշտպանել Օսմանյան
կայսրության «ամբողջականությունը», մինչդեռ զաղտնիք չէր, որ
այդ տարածքները պատկանում էին հայերին, հույներին, բալկանյան
ժողովուրդներին, արաբներին, որոնք բռնակալված էին թուրքերի
կողմից:

Ռուսական պարբերականներում տպագրված թուրքաճապատ ու
բացահայտ հակահայ հոդվածները նպատակ ունեին ստեղծելու հա-

¹ "Армянский Вестник", 1917, № 39-40, с. 4.

սարակական կարծիք, ներշնչելու արտաքին քաղաքականության վերագնահատման անհրաժեշտության ու նոր կուրսի կիրառման: Սակայն նրա հեղինակները մանկամտորեն «մոռանում են», որ անսքող թուրքամետությունը և հատկապես արևմտահայության կոտորածները, որոնք բացահայտորեն սրբագործվում են արդարացնելու առումով, միաժամանակ ուղղված են Ռուսաստանի դեմ, մի կարևորագույն քաղաքական պատմափաստ հստակորեն նշված այդ ոճրագործություններին քաջատեղյակ իռլանդացի էմիլ Դիլոնի կողմից¹:

Ի տարբերություն պարբերական մամուլի, ռուսական պատմագրությունը Արևմտյան Հայաստանում կատարվող քաղաքական իրադարձությանների նկատմամբ ուներ միանգամայն այլ դիրքորոշում: Նախ, գնահատականները անաչառ են և անկողմնակալ, երկրորդ, արևմտահայության կոտորածները որակվում են որպես ոճրագործություն ուղղված մարդկության դեմ, երրորդ, մեղադրվում է ոչ միայն աբդուլհամիդյան արյունոտ վարչակարգը, այլև Եվրոպական տերությունները, ներառյալ և Ռուսաստանը, որոնք իրենց անտարբերությամբ կամ երկչուտ, կիսատ-պռատ գործողություններով հեռու էին ոչ միայն Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու մտքից, այլև կոտորածները կանխելու մտայնությունից:

Ահա ինչու արևմտահայերի համար ստեղծված ամենածանր պահին հրապարակված սովարածավալ ժողովածուի² ներածականում պրոֆ. Լ.Ա. Կամարովսկին գրում էր, թե այն նպատակ ունի «մեր (ռուսական-Մ.Մ.) հասարակությանը ըստ հնարավորին համակողմանիորեն և անկողմնակալորեն ծանոթացնել չարաբախտ հայերի դրության և տառապանքների հետ՝ թուրքերի լծի ներքո»³: Հենվելով կոտորածների անժխտելի փաստի վրա և նկատի ունենալով Աբդուլ Համիդի ծրագրերը կայսրության քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ ռուս պատմաբանը իրավացիորեն անհնարին է համարում «համաձայնվել նրանց հետ, ովքեր այդ հարցի (հայկական կոտորածների-Մ.Մ.) մեջ տեսնում են միայն Լոնդոնում գտնվող հայանգլիական հեղափոխական կոմիտեի արդյունք, կամ անգլիական դիվանագիտության կողմից արհեստականորեն բորբոքվող միջոց... որպեսզի հատկապես վնաս հասցնեն Ռուսաստանին»⁴: Միանգամայն իրատես եզրահանգում, քանզի հայկական հարցը իր ամբողջության մեջ ուներ անհամեմատ ավելի խոր քաղաքական բովանդակություն, թեև չի կարելի լիովին ժխտել, որ պարբերաբար կա-

¹ "Братская помощь пострадавшим в Турции Армянам". М., 1897, кн 1, с. G, VII.

² "Положение армян в Турции до вмешательства держав 1895 году". М., 1896.

³ Նույն տեղում, էջ VII:

⁴ Նույն տեղում, էջ VIII:

տարվող ջարդերը Արևմտյան Հայաստանում նպատակ ունեին հայերին բնաջնջելու միջոցով վերացնել Եվրոպայի միջամտությունը Թուրքիայի գործերին: «Դառն է և ամոթալի, բայց պետք է խոստովանել, գրում է Կամարովսկին, որ միգուցե Եվրոպայի պաշտպանությունը դարձավ ոչ թե բարիք, այլ չարիք, այն տեսակետից, որ ուժեղացրեց նրանց դեմ մահմեդականների դաժանությունները և բացեց վերջիններիս աչքերը իրենց բոլոր նողկալիության դեմ Եվրոպայի բողոքի երևութականության վրա»¹: Կամարովսկու կարծիքով Թուրքիայի գոյության փաստը համատարած անարգանք է քրիստոնյա ժողովուրդների համար, և եթե նրանք որոշեին ինչպես հարկն է համաձայնության գալ միմյանց հետ կանգնելով բարոյականության, իրավունքի և մարդասիրության հողի վրա, կկարողանային արագորեն առանց նկատելի ցնցումների վերջ տալ այդ տերությանը, որը նրանց մեջ իրենից ներկայացնում էր անախրոնիզմ և աղաղակող հասարակական խաբեություն²:

Այս հիմնախնդիրները ստացել են համակողմանի և սպառիչ պատասխաններ, անաչառ ու առարկայական զնահատականներ Ամֆիտեստրովի «Հայկական հարցը» գրքում: Ավելին, նրա աշխատությունը և Դիևի նամակները անվիժելիորեն դասվում են հայոց հարցի պատմության լավագույն հետազոտությունների թվին ռուսաց պատմագրության մեջ: Նրանք հայկական հարցը ընդհանրապես ու 90-ական թթ. կոտորածները Օսմանյան կայսրությունում և ինքնապաշտպանական մարտերը Արևմտյան Հայաստանում քննարկում են միջազգային հարաբերությունների և մեծ տերությունների կենսագործած արտաքին քաղաքականության համայնապատկերի վրա: Այս առումով քննախոսելով իրենց առջև դրված հիմնահարցը թե՛ Դիևը և թե՛ հատկապես Ամֆիտեստրովը կարողացել են գտնել այն առարկայական պատճառները, որոնք, ի սկզբանե, և ի վերջո, ծախողում էին ոչ միայն հայկական հարցի լուծումը ամբողջապես, այլ անգամ բարենորոգումների չափավոր ծրագրերը: Ի դեպ, Ամֆիտեստրովը ևս եղել է 90-ական թթ. հայոց ողբերգության ժամանակակիցը և ականատեսը, բայց նրա գիրքը լույս է տեսել Դիևի նամակների հրատարակումից շուրջ 10 տարի անց, ուստի և նրա աշխատությունը առարկայորեն ունի որոշակի առավելություններ: Չէ որ Դիևը նամակները գրում էր այն ժամանակ, երբ շատ փաստեր կապված աբդուլհամիդյան արյունոտ ոճրագործությունների հետ, դեռևս լիովին բացահայտված չէին, երբ նոր էին հեռավոր Սասունից ստացվում առաջին տեղեկությունները հայ խաղաղ բնակչության

¹ "Положение армян в Турции до вмешательства держав 1895 году", М., 1896 IX.

² "Положение армян в Турции"... , с IX.

զանգվածային կոտորածների մասին, իսկ արյունոտ սուլթանը անհաջող փորձեր էր կատարում թաքցնել համաշխարհային հանրությունից իր կամակատարների ոճրագործությունները: Չնայած դրան, ի պատիվ Դիևի, նա այնուամենայնիվ կարողացավ սպառնիչ բացահայտել թուրքական հանցագործ քաղաքականության հեռու գնացող հայատյաց նպատակները: «1896 թ. փետրվարին,- գրում է Ամֆիտեատրովը,- ես Կոստանդնուպոլիս ժամանեցի Սոֆիայից... Կոստանդնուպոլիսը դեռևս լի էր ոչ վաղուցվա «հեղափոխության» հետքերով, ինչպես չգիտես ինչու քաղաքում անվանում էին հայերի հենց նոր վերապրած ջարդը՝ Ստամբուլի մահմեդական տականքների կողմից, որը կազմակերպել էր սուլթան Աբդուլ Յամիդի ոստիկանությունը, մշտական զորքերի պաշտպանության տակ»¹: Դժվար չէ կռահել, որ ռուս պատմաբանը նկատի ունի 1895 թ. սեպտեմբերին Կոստանդնուպոլսում տեղի ունեցած խաղաղ ցույցի ջարդը՝ կազմակերպված թուրք ոստիկանության կողմից: Հայտնի է, որ Եվրոպայի մեծ տերությունների ուշադրությունը գրավելու և նրանց օգնությամբ Մայիսյան բարենորոգումների ծրագիրը գործադրելու համար հնչակյանների գլխավորությամբ Կ.Պոլսի հայ խաղաղ ցուցարարների թափորը 1895թ. սեպտեմբերին շարժվել էր դեպի Բաբը Ալի՝ կառավարության նստավայրը: Հնչակյանները նախապես զուլաջրել էին մայրաքաղաքի եվրոպական դեսպաններին, որ ցույցն ունի խաղաղ բնույթ ու խնդրել էին, որ կանխվի զինվորական իշխանությունների միջամտությունը: Բայց ապարդյուն՝ ոստիկանները ոչ միայն կանգնեցնում են ցուցարարներին կես ճանապարհին, ոչ միայն արգելում են պահանջագիրը հանձնել կառավարությանը, այլև կրակ բացում ցուցարարների վրա, որից հետո սկսվում են ջարդերը ողջ մայրաքաղաքում, զոհ են դառնում շուրջ 2000 մարդ: Ահա հենց այս բարբարոսությունը Օսմանյան կայսրության մայրաքաղաքում նրա մոլեռանդ հայատյաց ուժերը անվանեցին «հեղափոխություն», ինչպիսի լկտիություն և լպիրշություն:

Ինչ վերաբերում է Եվրոպական տերությունների դիվանագետներին, ներառյալ և Ռուսաստանի պաշտոնական ներկայացուցիչներին, ապա նրանք Ամֆիտեատրովի իրատես կարծիքով շարունակում էին պահպանել սառ լռություն և անտարբերություն, իսկ ռուսական կացավայրի սպաները դժգոհ էին, նրանց զարմանք էր պատճառում, թե ինչու միջազգային նավախումբը այդ սարսափելի օրերին ուշացավ, ինչու չհասավ ճիշտ ժամանակին, ինչու կատարվեց այդ սպանող, չէ որ նվազագույն բողոքացույցն անգամ բավարար էր հազարավոր զոհերին փրկելու համար: Ամֆիտեատրովը

¹ А.А. Амфиатов, Армянский вопрос, с. 3.

մանրամասնորեն նկարագրում է այդ սարսափելի օրերին Կ.Պոլսի հայության վերապրած ողբերգությունները՝ թուրքական մտածողությանը «հեղափոխությունը», այսինքն, բարբարոսական այն ձևերը, որոնցով թուրք խուժանը կանոնավոր զորքի հետ համատեղ հոշոտում էր խաղաղ բնակչությանը, թալանում նրա ունեցվածքը: «Այնուհետև ... ոստիկանությունը սկսեց ջրի մեջ խեղդել նաև կենդանի մարդկանց... և եթե զոհը անմիջապես չէր իջնում հատակին, այլ թարտում էր ջրի երեսին, նրան վերջ էին տալիս թիակներով»¹: Այդ արյունոտ խրախճանքի օրերին, «տերությունների չեզոքությունը, այդ թվում և մեր հայրենիքի (ՌուսաստանիՄ.Մ.), պահպանվեց այնպիսի խստությանը, որ առանձին հայեր, որոնք այնուպես այնպիսի, խույս տվեցին խեղդվելուց չվերցվեցին եվրոպական նավակների վրա և զոհվում էին հետապնդողների կողմից նրանց աչքերի առջև, ումից իզուր պաշտպանություն էին աղերսում: Միայն ֆրանսիացիները հաստատականություն չցուցաբերեցին՝ ոմանց փրկեցին ու պատսպարեցին»²: Ամֆիտատրովը քննադատության է ենթարկում ռուսաց դիվանագիտության պասիվ դիրքորոշումը, որը «մոռացության» էր մատնել, իսկ հետո բոլորովին երես դարձրել հայկական հարցից, քանզի սուլթան Աբդուլ Համիդը հասցրեց ներշնչել Պետերբուրգի կառավարող շրջաններին խստագույն նախապաշարմունք հայոց ազգային զարթոնքի դեմ, այն ներկայացնելով որպես միջազգային սոցիալական հեղափոխության տարատեսակ: Այս քայլով նա ծրագրում էր մի կրակոցով սպանել ոչ թե երկու, այլ և միանգամից երեք նապաստակ: Նախ, սքողել իր հեռու գնացող նպատակները հայկական հարցում և հայ ժողովրդի նկատմամբ ընդհանրապես: Երկրորդ, կանխել Եվրոպական տերությունների միջամտությունը, քանզի վերջիններիս կառավարող շրջաններին սուլթանից ոչ պակաս չափով մտահոգություն, թերևս վախ էին պատճառում ազգային զարթոնքը, ազատագրական պայքարը, առավել ևս հեղափոխությունները: Երրորդ, սուլթանը կարծես նախազուշացնում էր ռուսական բարձրաստիճան պետական այրերին, որ արևմտահայության ազգային զարթոնքը ու ազատագրական շարժումը կարող է անխուսափելիորեն տարածվել արևելահայերի վրա, ուստի և Ռուսաստանի շահերից է բխում պաշտպանել իր քաղաքականությունը հայկական հարցում: «Այդ խայծը տվեց իր շոշափելի արդյունքը, քանզի Նելիդովի ու Լոբանով-Ռոստովսկու (որոնք եղել են Ռուսաստանի դեսպանները Կ.-Պոլսում, իսկ վերջինս նաև արտգործնախարար-Մ.Մ.) տխուր և անուղղելի մոլորությունը հարկադրեց ռուսաց կառավարությանը հա-

¹ А.А. Амфитеатров, Армянский вопрос, с. 6.

² Նույն տեղում, էջ 6:

յերի ճակատագրում լվանալ ձեռքերը»¹: Հեղինակի իրատես կարծիքով և ճշմարտացի գնահատմամբ այս ոչ հեռատես քաղաքականությունը խտացված ձևով ամփոփվեց «Ռուսաստանը չի ցանկանում երկրորդ «Բուլղարիա» հայտնի արտահայտության մեջ»²: Հետևապես Ռուսաստանը իրավունք չուներ ոչ միայն ազգային շահերի պաշտպանության առումով, այլև բարոյական տեսանկյունից հրաժարվել Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած ռազմաքաղաքական իրադարձություններին մասնակցելուց, որովհետև «Սասունի 1894 թ. սարսափները գերազանցեցին և Բարդուղիմեոսյան գիշերը և Սիցիլիական ճրագալույսը, և Քրիստիան Երկրորդի Արյունոտ Բաղնիքը»³ և, թերևս կավելացնենք մենք համաշխարհային պատմության մեջ մինչ այդ եղած այլ արյունոտ խրախճանքները: Իսկապես «Ռուսաստանը Մախ, հատուցեց կորցնելով քաղաքական հեղինակությունը Փոքր Ասիայում, ապա քրիստոնյա ժողովուրդների վստահությունը, որոնք ավելի վաղ նրա մեջ էին տեսնում իրենց ազատագրման միակ հույսը»⁴: Հետևապես, զարգացնելով ռուսաց պատմագիտական և հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչների ճնշող մեծամասնության հայեցակետը Ամֆիտատրովը նույնպես անդրադառնում է Սասունում կատարված արյունոտ իրադարձություններին, հիմնավորում արևմտահայության ինքնապաշտպանության պատճառները, այն բացատրում երկու կարևոր գործոնով: Նախ, արդուլիհամիդյան «զուլումի» քաղաքականությամբ, որը գերազանցապես ուղղված էր քրիստոնյա ժողովուրդների, առաջին հերթին արևմտահայության դեմ: Երկրորդ, Եվրոպական տերությունների կրավորական կեցվածքով, որի օգնությունը և միջամտությունը նա պատկերավոր ու դիպուկ ձևով նմանեցնում է և համեմատում աղքատին տված փշրանքի հետ: «Բարենորոգումների հույսը հայերին նետվեց որպես բարոյական տացք, իբրև կեղծ ողորմություն աղքատին, որի կողքով բարեգործ մարդուն անհարմար է անցնել բնավ ոչինչ չտալով նրա աղաղակող աղքատության դիմաց, բայց լրջորեն օգնելու և ոչինչ չկա և ոչ էլ ցանկություն»⁵: Այսպիսի պարագայում անհրաժեշտ էր ապավինել սեփական ուժերին, քանզի նա կանգնած էր դաժան ու ահարկու երկընտրանքի առջև՝ կամ զենքը ձեռքին պայքարել արդուլիհամիդյան ու քրդական ջարդարարների դեմ ու պատվով զոհվել կամ էլ չդիմագրավել այդ բռնություններ-

¹ А.А. Амфитеатров, Армянский вопрос, с.7.

² Նույն տեղում, էջ 7:

³ Նույն տեղում, էջ 7:

⁴ Նույն տեղում, էջ 7:

⁵ Նույն տեղում, էջ 8:

րին ու աստիճանաբար կոտորվել, հոշոտվել և իջնել պատմության ասպարեզից: Եվ արևմտահայերը ընտրեցին առաջին ուղին՝ օսմանյան հայաության բռնատիրական քաղաքականությանը հակադրեցին ապրելու իրենց վճռականությունը: Ամֆիտատրովի իրատես կարծիքով երբեք չի եղել հայկականից բացի մեկ այլ ազատագրական շարժում, որը ավելի մեծ դաժանությամբ դավաճանվեր և թողնվեր ի զոհաբերություն բռնությանը: Չէ որ Եվրոպայից ակնկալվող օգնության փոխարեն ապստամբները հանդիպեցին ամենաակներև անբարյացկամության մեծ տերությունների կողմից, բացառությամբ սակավազոր Իտալիայի, որը բուլղոսի վերջերս էր նվաճել իր սեփական ազատությունը որպեսզի դավաճաներ մյուսների ազատությանը¹: Ամֆիտատրովը քաջ պատկերացնում է հայկական հարցի կնճռոտ, բարդ ու հակասական լինելու հանգամանքները, որոնք նրա իրատես կարծիքով պայմանավորված են մեծ տերությունների միջպետական սուր հակամարտություններով, Օսմանյան Թուրքիայում գերիշխելու, Փոքր Ասիայում և Մերձավոր Արևելքում ծավալված մրցակցության և ազդեցության հաստատման հետ²: Ահա ինչու հայ ազատագրական շարժումը և հատկապես արևմտահայության ինքնապաշտպանական մարտերը ոչ միայն չարժանացան կարեկցության, այլև հանդիպեցին նրանց իսկական հակակրության: Նա բավականին անաչառ և իրատեսորեն է ներկայացնում մեծ տերությունների քաղաքական դիրքորոշումը թե հայկական հարցի և թե արևմտահայերի գոյամարտի վերաբերյալ: «Անգլիայի ու Գերմանիայի կառավարությունները շատ երկար ժամանակ հայկական շարժումը համարում էին ռուսական քարոզչության արդյունք, որը հարթում էր գաղտնի ուղիներ ապագա տարածքային զավթումներին Փոքր Ասիայում՝ տարածելով այդ ձեռքը Բոսֆորին, իսկ ձախը՝ Պարսից ծոցին, Ելքին դեպի Չնդկական օվկիանոս: Այդ համոզումները թափանցեց նաև հասարակական գիտակցության մեջ՝ հատկապես նշված երկրներից երկրորդի (Գերմանիայի- Մ.Մ.) մեջ»³: Ինչու՞ եվրոպական մեծ տերությունների դիրքորոշումը հայկական հարցում ոչ թե կայուն էր, այլ փոփոխական, հաճախ իրարամերժ ի վերջո որպես կանոն թշնամական: Այս հիմնահարցում էլ Ամֆիտատրովի պատասխանը ընդունելի է, քննախոսումը սպառիչ ու անաչառ: Գերմանիայում հայկական հարցի համեմատաբար քիչ հանրածանոթ լինելու հանգամանքը Ամֆիտատրովը պատճառաբանում է երկու կարևորագույն գործոններով: Նախ, Կ.Պոլսի սուլթանական դիվանից

¹ А.А. Амфиатов, Армянский вопрос, с.9.

² Նույն տեղում, էջ 9:

³ Նույն տեղում, էջ 10:

սնուցվող կեղծ լուրերով, թե իբր հայկական անկարգությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ ռուսական նվաճողական քաղաքականության խորամանկ բանսարկություն, և հայերը իրենց անընդմեջ ազգային շարժումով, ոչ ավելի քան ռուսական գործակալներ են, որոնք գիտակցաբար, թե անգիտակցորեն օգտագործում են միջազգային սադրանքի վիթխարի ծրագիր, որը տանում է դեպի եվրոպական պատերազմ¹: Երկրորդ, մասամբ նաև գերմանական կայսերական կառավարության համանման քարոզչությամբ, որպեսզի քղարկվի կամ հիմնավորվի բացահայտ թուրքամետ քաղաքականությունը: Ամֆիտեատրովը նման մոտեցումը համարում է անհիմն և անհեթեթ, մանավանդ որ Ռուսաստանը տվեց անթիվ ակներև չափազանց ցավալի ապացույցներ հայ ժողովրդի ճակատագրի հանդեպ իր խոր անտարբերության մասին: Չնայած դրան, ամփոփում է հեղինակը, այդ չարախոսությունը և բամբասանքը ամուր պահպանված է նույնիսկ մինչև այժմ²: Ահա ինչու գերմանական դեսպանության բողոքը Սասունի կոտորածների դեմ կարող էր միայն ծիծաղեցնել Աբդուլ Յամիդին, որովհետև քանի դեռ դիվանագիտությունը սպառնում էր սուլթանին, կայսր Վիլհելմը նրան ուղարկեց հանգստացուցիչ նամակ, խորհուրդ տալով պահել կայսրերին հատուկ արժանապատվություն, հիշեցնելով միաժամանակ, թե ոչ ոք բացի սուլթանից ու աստծուց իրավունք չունի տնօրինելու իր հպատակների ճակատագիրը: Յետևապես, մահմեդական արյունոտ սուլթանին քրիստոնյա կայսրը տալիս է ձեռքերի ազատություն իր կրոնակից ու հավատակից արևմտահայության նկատմամբ, սրբագործում և արդարացնում նրա ոճրագործությունները: Խոցելի է սակայն Ամֆիտեատրովի տեսակետը 1894-96թթ. արևմտահայության կոտորածների նկատմամբ Անգլիայի դիրքորոշման վերաբերյալ: «Հանգուցյալ Գլադստոնի ահեղադողորդ ճառերը շրջեցին Անգլիայի քաղաքականությունը նոր՝ հայերի համար բարենպաստ հունի մեջ: Հասունացավ միջամտելու հարցը: Անգլիան այն տերություններից չէ, որոնք սիրում են անտեղի բարերարություններ շռայլել, բայց 1894-96 թթ. նրա վարքագիծը հայկական հարցում կարելի է համարել լիովին անշահախնդիր»³: Ռուս հեղինակի կարծիքով Անգլիայի նման «անշահախնդրության» համար «միակ առաջնդիչը» եղավ այն սարսափը, որ Սասունի պատերազմից հետո միացյալ երեք թագավորության հասարակությանը ներշնչվեց «Գլադստոնի խաչաձև քարոզչությամբ»⁴: Այդպիսի տեսա-

¹ А.А. Амфи́театров, Армянский вопрос, с. 10.

² Նույն տեղում, էջ 10:

³ Նույն տեղում, էջ 12:

⁴ Նույն տեղում, էջ 13:

կետը անընդունելի է պատմադիվանագիտական առումով, քանի որ քաղաքականության մեջ չկա գթություն և անշահախնդրություն, մանավանդ, երբ խոսքը գնում է ավանդական խորամանկ ու բազմափորձ դիվանագիտության մասին: Պարզապես այդ ժամանակահատվածում բրիտանական քաղաքականության հիմնախնդիրներից էր ճնշում գործադրել Թուրքիայի վրա, որը առարկայորեն նախապայմաններ ստեղծեց հայանպաստ դիրքորոշման համար:

Հատկանշական է, որ ռուս դիվանագետ Վ.Տեպլովը իր «Իշխան Ալեքսեյ Բորիսովիչ Լոբանով-Ռոստովսկի» գրքույկում զարգացնում է միանգամայն հակադիր տեսակետ Թուրքիայի նկատմամբ Անգլիայի կենսագործած քաղաքականության վերաբերյալ: Նրա գնահատմամբ «մարկիզ Սուլբերիի պահպանողական կաբինետը քրդերի կողմից հայկական կոտորածների պատրվակի ներքո իսկական արշավ սկսեց Թուրքիայի դեմ, նպատակ ունենալով սուլթանին ու Թուրքիային ենթարկել Եվրոպայի խիստ հսկողությունը, ընդ որում ինքը՝ Մեծ Բրիտանիան մտադրվել էր իր ձեռքում կենտրոնացնել Օսմանյան կայսրության ճակատագրի տնօրինությունը»¹: Այս քաղաքականությունը ըստ Տեպլովի հակասում էր Ռուսաստանի շահերին և «... իշխան Լոբանովը... անմիջապես հասկացավ, որ մարդասիրական շահերը չէին ընկած անգլիացիների գործողությունների հիմքում, որոնք ջանում էին տերություններին ներքաշել Թուրքիայի ներքին գործերին միջամտելու, հանդես գալով միջնորդի դերում սուլթանի և հայ խռովարար կոմիտեների միջև»²: Ավելի քան տարօրինակ է Տեպլովի դատողությունը, որը առանց այլևայլության խռովության մեջ է մեղադրում նրանց, ովքեր անհավասար գոյամարտում պաշտպանում էին իրենց անձը, գույքը, պատիվը, ընտանիքը, բռնադատված հայրենի հողը: Այսուհանդերձ Տեպլովը իրավացի է, երբ ներկայացնում է Անգլիայի հետապնդած քաղաքականությունը, որտեղ չկար մարդասիրության, բարոյականության գեթ մի նշույլ, սակայն հեղինակը պարզապես անտեսում է, որ Ռուսաստանը ևս հայկական հարցում հանդես չէր գալիս զուտ մարդասիրական մղումներից: Իրականում, երբ Ռուսաստանի քաղաքականության մեջ գերակշռում էր Թուրքիայի քաղաքական ստատուս-քվոն պաշտպանելու գաղափարը, այն ժամանակ արևմտահայության դիմակայումը աբդուլհամիդյան գազանություններին սառնասրտորեն դիտարկվում էր որպես խռովություն: Իր հերթին, երբ Անգլիային անհրաժեշտ էր լինում կասեցնել Ռուսաստանի դիրքերի հնարավոր ամրապնդումը Մերծավոր Արևելքում և քրիստոնյա ժողովուրդների շրջանում, նա արևմտահա-

¹ В. Теплов, "Князь Алекссй Борисович Лобанов-Ростовский", СПб, 1897, с. 65.

² Սույն տեղում, էջ 65:

յերի ազատագրական ծագումները ներկայացնում էր որպես արհեստական շարժում, հրահրված ռուսական դիվանագիտության կողմից, որպես ռուսական սադրանքի արդյունք, հայերին համարում ռուսական գործակալներ: Հետևապես, անգլո-ռուսական մրցակցությունից և հակամարտությունից երկու դեպքում էլ տուժում էր արևմտահայությունը, իսկ հայկական հարցը տրոհվում էր և դառնում այդ երկրների դիվանագիտության համար յուրատեսակ խաղալիք ու ի վերջո նրանց զոհը: Այդպիսին էր հայկական բարդ և կնճռոտ հարցի ճակատագիրը: Ռուսական հասարակական-քաղաքական ու պատմագիտական մտքի այն ներկայացուցիչները, որոնք հանդես էին գալիս հայանպաստ դիրքերից ու Ռուսաստանի քաղաքականության մեջ հայկական հարցում տեսնում էին դրական միտումներ, որպես կանոն գերազնահատում էին Անգլիայի քաղաքականության մեջ առարկայորեն եղած դրական գործոնները արևմտահայության նկատմամբ, գունագարդված ներկայացնում մեծ ծերուկ Գլադստոնի որպես կանոն հայանպաստ ճառերի նշանակությունը: Այդպիսի հեղինակներից է նաև Ամֆիտատրովը: Ընդհանրապես նա իրատեսություն հանդգնած էր, որ Ռուսաստանի ազգային-պետական շահերը պահանջում են հայկական հարցի ոչ թե անտեսում և անուշադրության մատնում կամ սառ անտարբերություն, էլ չենք ասում լքում ու նրա նկատմամբ հակահայկական դիրքորոշման գրավում, այլև գրեթե միշտ, թերևս բոլոր հանգամանքներում կենսագործել հիմնականում հայանպաստ քաղաքականություն: Այս արժեքավոր պատմա-քաղաքական հայեցակետը հաստատվում է հայ-ռուսական առնչությունների դարավոր զարգացման ընթացքով, որը ձևավորվելով աստիճանաբար ու քաղաքական հասակ առնելով 18-րդ հարյուրամյակում լիովին իմաստավորվեց Սան-Ստեֆանոյում ու Բեռլինում: Պատմագիտական այս հայեցակետը և քաղաքական դիրքորոշումը պաշտպանում էին ռուսական հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչների ճնշող մեծամասնությունը: Իսկ առարկայապես ոչ հայանպաստ դիրքորոշում ունեցող ռուս առանձին գործիչները, որոնք կազմում էին չնչին փոքրամասնություն, ընկնելով մյուս ժայրահեղության մեջ ոչ միայն թերազնահատում էին Անգլիայի քաղաքականությունը հայկական հարցում, այլև չէին տեսնում դրական միտում, այն դիտարկում որպես դիվանագիտական միջոց, քաղաքական զենք Ռուսաստանի դեմ: Այդպիսի պատմաքաղաքական հայեցակետ է զարգացնում մասնավորապես Տեպլովը: Նա ընդունում է, որ իշխան Լոբանով-Ռոստովսկին՝ ոչ անհայտ դիվանագետը (1895 թ.) մարտի 6-ին արտգործնախարար նշանակվելուց հետո հարկադր-

ված եղավ զբաղվել մի կարևոր հիմնախնդրով՝ «Հայկական հարցով»¹: Հատկանշական է, որ եթե Տեպլովը Լորանով-Ռուստովսկու առարկայորեն ոչ հայանպաստ քաղաքականությունը հիմնավորում է Ռուսաստանի ազգային պետական շահերով, Ամֆիտատրովը ընդհակառակը նոր արտգործնախարարի քաղաքական դիրքորոշումը հայկական հարցում գնահատեց որպես կարճամիտ ու Ռուսաստանի շահերին բնավ չհամապատասխանող քաղաքականություն: Տեպլովի կարծիքով Լորանով-Ռուստովսկին, որը ի դեպ եղել էր Կ.Պոլսում ռուսական դեսպանը, իսկ ինքը՝ հեղինակը, դեսպանատան առաջիժմ քարտուղարը, հայկական հարցը դիտարկելով ռուս-թուրքական քաղաքական հարաբերությունների շրջանակներում նախապատվությունը տվեց Օսմանյան կայսրության քաղաքական ստատուս-քվոյի պահպանմանը, որին իբր սպառնում էր հայկական հարցի լուծումը: «Մի կողմ թողնենք,- գրում է Տեպլովը,- թե որչափով Ռուսաստանի շահերից կլիներ աջակցել իր կողքին ստեղծելու ինքնավար նահանգ, ապագա ինքնուրույն հայկական թագավորության սաղմը, որպես ձգտման կենտրոն հայերով բնակեցված սեփական մարզերի համար»²: Նրա տարօրինակ գնահատականի համաձայն Ռուսաստանը պետք է խոչընդոտի հայկական հարցի զարգացման նման հնարավորությունը և հեռանկարը, քանզի այն իբր չի ներգրվում կայսրության քաղաքականության ուղեծրում: Հետևապես, Տեպլովը նախ, միտումնավոր թե ոչ, գերազնահատում է այն հնարավոր բարեփոխումները, որոնք մեծ տերությունները կարող էին անցկացնել Արևմտյան Հայաստանում: Իսկապես, հետագայում նրանց կողմից մշակված ծրագրերը չեն նախատեսել ոչ ինքնավարություն, ոչ էլ առավել ևս թագավորության ստեղծում, այդ ամենի մասին ոչ մի խոսք, անգամ ակնարկ չի եղել և չէր էլ կարող լինել: Երկրորդ, Տեպլովի կարծիքով հայերի երազանքը Փոքր Ասիայում ինքնավար մարզ ստեղծելու վերաբերյալ չունի իրական հիմք, որովհետև նման մարզի ստեղծման համար առաջին պայմանը պետք է լինի հայկական բնակչության վճռական թվական գերակշռությունը առաջարկված մարզի սահմաններում³: Նա հենվելով անգլիական տվյալների և ռուսական աղբյուրների վրա⁴ արձանագրում է, որ փոքրասիական 9 վիլայեթներում, որտեղ հանդիպում են հայերը, ամենուր գերակշռությունը պատկանում է մահմեդականներին, որոնք հնգապատիկ ա-

¹ В. Теплов, "Князь Алексей Борисович Лобанов-Ростовский," СПб, 1897, с. 52.

² В. Теплов, "Князь Алексей Борисович Лобанов-Ростовский," СПб, 1897, с. 68.

³ Նույն տեղում, էջ 68-69:

⁴ "Карта распределения Армянского населения в Турецкой Армении и Курдистане", Зеленого и Сысоена, СПб, 1895.

վելի մեծաքանակ են հայերից¹: Սակայն այս աղբյուրները, որոնց վրա հենվում է Տեպլովը, հեռու են հավաստի լինելուց, որովհետև պատմական փաստ է, որ Արևմտյան Հայաստանում հայերը կազմում էին բնակչության կամ բացարձակ կամ էլ հարաբերական մեծամասնություն, ուստի և եթե հետևենք ռուս հետազոտողի տրամաբանությանը, լիովին իրավունք ունենին հավակնելու թե ինքնավարության և, թե ազգային պետության ստեղծմանը: Հատկանշական է, որ Տեպլովը պարզապես նշում է այդ տվյալները, նրան քիչ է հետաքրքրում, թե ինչ գնով է մահմեդական բնակչությունը ձեռք բերում մեծամասնություն հիշատակված վիլայեթներում: Հայտնի է, որ Աբդուլ Համիդը ձգտում էր դրան հասնել հայերին բռնագաղթեցնելու, նրանց կոտորելու և մահմեդական բնակչությանը վերաբնակեցնելու միջոցով: Տեպլովի կարծիքով անգլիական «Կապույտ գիրքը» հնարավորություն է տալիս մեզ ծանոթանալու իշխան Լոբանովի գործելակերպին հայկական հարցում²: Ռուսաստանի արտգործնախարարի դիրքորոշումը հայկական հարցում կայսրության շահերից արդարացնելու համար Տեպլովը հիմք է ընդունում Լոբանով - Ռոստովսկու գրույցը Մեծ Բրիտանիայի դեսպանի հետ, նշելով ռուս դիվանագետի թերահավատությունը Հայաստանը խաղաղեցնելու Անգլիայի առաջարկներին³: Ավելին, այս գրույցից, որը ի դեպ տեղի էր ունեցել 1895 թվականի մարտին, կես տարի անց Լոբանով-Ռոստովսկին ուղղակի ասաց, որ չի բաժանում Սուլբերիի հայացքները, քանզի չի «հավատում Փոքր Ասիայի գործերի վիճակի արագ բարելավմանը, որովհետև դեռևս չափազանց ուժեղ է ինչպես մահմեդականների, այնպես էլ հայերի գրգռումը, իսկ վերջիններիս շրջանում հուզումը՝ հայկական հարցի կտրուկ հարցադրման հետևանք, գործերի այդպիսի վիճակի համար պատասխանատվությունը գլխավորապես ընկնում է Անգլիայի վրա»⁴: Սակայն թե՛, Ռուսաստանի և թե՛, հատկապես հայերի շահերից միանգամայն անհիմն է Տեպլովի ձգտումը արդարացնելու Լոբանով-Ռոստովսկու դիրքորոշումը: Նախ, առաջնորդվել մահմեդականների ու հայերի գրգռման փաստով, որը անհանգստացնում է և մտավախություն պատճառում Լոբանով-Ռոստովսկուն, ըստ էության կնշանակեր ավանդաբար հավասարության նշան դնել կողմերի միջև, չնկատել, որ դիվանագիտության մեջ գոյություն ունեն գոհ և գազան քաղաքական հասկացությունները: Երկրորդ, անշուշտ սխալվում են թե՛, Լոբանով - Ռոստովսկին և թե՛ նրա

¹ В. Теплов, "Князь Алексей Борисович Лобанов-Ростовский", СПб, 1897, с. 69.

² В. Теплов, "Князь Алексей Борисович Лобанов-Ростовский", СПб, 1897, с. 69.

³ Սույն տեղում, էջ 69:

⁴ Սույն տեղում, էջ 69-70:

քաղաքականությունը ջատագովող Տեպլովը, երբ պարզապես արևմտահայերի գործողությունների մեջ տեսնում են միայն անգլիական դիվանագիտության բանսարկության արդյունք, հակառուսական գործելակերպի հետևանք և այդ տեսանկյունից մոտենալով քաղաքական-դիվանագիտական հիմնահարցերին ամբողջ պատասխանատվությունը բարդում Անգլիայի վրա: Իհարկե, հայկական հարցը եղել է ռուս-անգլիական հակամարտության և ընդհանրապես միջազգային դիվանագիտության զոհը, սա անժխտելի փաստ է: Սակայն ոչ պակաս անմերժելի փաստ է, որ այդ հարցը ծնվեց արևմտահայության սոցիալ-տնտեսական ու քաղաքական դժնդակ պայմաններից, նրա պայքարից, սուլթանական տիրապետությունը թոթափելու վեհ նպատակներից: Վերստին նշենք, որ եթե արևմտահայության կացությունը լիներ քիչ թե շատ տանելի անգլիական ոչ մի բանսարկություն չէր կարող պատճառ դառնալ «հայկական անկարգությունների» համար: Դժբախտաբար Տեպլովը հենց այդպես է գնահատում Կ.Պոլսում 1895թ. տեղի ունեցած միջադեպը՝ սուլթանի բռնությունները հայերի նկատմամբ դատապարտելու փոխարեն ռուս հեղինակը այն դիտարկում է որպես «անկարգություն» և դրանով իսկ ուղղակիորեն ու անուղղակիորեն արդարացնում սուլթանին: Ահա ինչու Ռուսաստանը չպաշտպանեց անգլիական կառավարող շրջաններին, որոնք առաջարկում էին մեծ տերություններին համաձայնության գալ Թուրքիայում բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ, որոնք պետք է պարտադրվեին սուլթանին: Վիեննայում պաշտպանություն գտած այս նախաձեռնությունը հանդիպեց Տեպլովի իսկ վկայությամբ իշխան Լոբանովի վճռական հակազդեցությանը: «Միջամտության սպառնալիքը», - ասաց նա անգլիական դեսպանորդին, - «միայն կխախտի սուլթանի հեղինակությունը և ուղղակի կհանգեցնի հակադիր արդյունքների, որոնց ցանկանում ենք հասնել»¹:

Անգլիայի ներկայացուցիչ Գոշենի այն դիտողությանը, թե անթույլատրելի է որպեսզի շարունակվեն փոքրասիական սարսափները, իշխան նախարարը առարկեց, քանզի Արևելքում երկար ժամանակ գտնվելու փորձը նրան համոզել է, որ նման հուզումները հանդարտվում են, խաղաղվում, մարվում ինքնին, երբ թշնամական տարրերը չեն քաջալերվում կամ խրախուսվում շարունակելու պայքարը, չեն խրախուսվում դրսից, իսկ տերությունների ամեն մի միջամտություն կթուլացնի, կուժեզրկի սուլթանին և ավելի շատ կգրգռի հայերին²: Լոբանով-Ռոստովսկուն հետևապես թուրքերի ջարդարա-

¹ В. Теплов, "Князь Алексей Борисович Лобанов-Ростовский", СПб, 1897, с. 70.

² Եւոյն տեղում, էջ 70:

րական գործողությունները ներկայանում են որպես երկկողմանի բախումներ, որոնք ժամանակի ընթացքում կմարեն, եթե տերությունները չմիջամտեն հատկապես չժավալեն սադրիչ քայլեր: Ակնհայտ էր, որ Լոբանով-Ռոստովսկուն անհանգստացնում էր Թուրքիայի քաղաքական համակարգի երերման, առավել ևս հնարավոր փոփոխման վտանգը, ահա ինչու նրա կարծիքով Պոլսում տերությունների կողմից կոնդոմինիումների հաստատումը կլիներ ամենաանկախուն և վտանգավոր կենսամիջոց, այսինքն ցավամոքիչ, բայց չբուժող դեղ: Ռուսաստանի արտգործնախարարի պատկերացմամբ Թուրքիայի մայրաքաղաքի ռազմակալումը նմանապես կարող էր առաջացնել տերությունների բախման և, անկասկած, հանգեցնել ընդհուպ մինչև համաեվրոպական պատերազմի, դրան ուղեկցող բոլոր արհավիրքներով՝ անչափ ավելի խոշոր այն չարիքից, որ բխում էր հայերի կոտորածներից¹: Պարզ է, որ հայերի պաշտպանության և անվտանգության կեղծ մտահոգությամբ Լոբանով-Ռոստովսկին դիվանագիտական քողարկված հնարքներով փորձում էր համառորեն պահպանել Թուրքիայի քաղաքական ստատուս-քվոն: Արդարացնելով Լոբանով-Ռոստովսկու քաղաքականությունը և հիմնավորելով նրա փարիսեցիական «մտահոգությունը» արևմտահայության ճակատագրով Տեպլովը կատարում է հետևյալ եզրակացությունը, որի համաձայն «պարզ է, որ Թուրքիայում հանդուրժելի կարգերը վերականգնելու համար և հայկական վիլայեթներում բարենորոգումների կիրարկման համար... անհրաժեշտ է օգտվել գոյություն ունեցող միակ իշխանությունից՝ սուլթանի իշխանությունից և հենց նրան էլ պետք է ոչ թե թուլացնել, այլ ամեն կերպ ամրապնդել»²: Ասված է պարզ և որոշակի, որը տալիս է ամբողջական պատկերացում Լոբանով-Ռոստովսկու քաղաքականության մասին, թե Թուրքիայի և թե հայկական հարցի նկատմամբ, որոնք բնականաբար դիտարկվում են միասնության մեջ: Ըստ Տեպլովի հավանաբար մոտավորապես նույն պատճառներով իշխան Լոբանով-Ռոստովսկին անընդունելի համարելով դեմ արտահայտվեց նեժ տերությունների ռազմանավերը Բոսֆոր և Դարդանել մտցնելու կոմս Գոլուխովսկու առաջարկին³: Չետևապես, Տեպլովի խոր համոզմամբ միայն Ռուսաստանի արտգործնախարարի կողմից մշակված քաղաքական դեղատոմսով էր կարելի ապահովել քրիստոնյա ժողովուրդների անվտանգությունը, անցկացնել բարենորոգումներ Արևմտյան Հայաստանում, վերջնականապես լուծել հայկական հարցը: Այս տեսանկյունից մոտենալով

¹ В. Теплов, "Князь Алексей Борисович Лобанов-Ростовский", СПб, 1897, с. 71.

² Նույն տեղում, էջ 71:

³ Նույն տեղում, էջ 71:

հիմնահարցին ռուս հեղինակը տալիս է դրական գնահատական 1895թ. հոկտեմբերին մեծ տերությունների՝ Ռուսաստանի, Անգլիայի ու Ֆրանսիայի միջև կնքված համաձայնագրին¹: Ակներև է, որ հիմնախնդրի այսօրինակ մեկնաբանությունը, ոչ այլ ինչ է, եթե ոչ քաղաքական փարիսեցիություն կամ էլ մանկամտություն ու անիրատեսություն, քանզի այդ ուղին արևմտահայերին ապահովում էր միայն ստրկության հավերժություն, որի հետ երբեք չէր հաշտվել և չի հաշտվի հայ ժողովուրդը:

Ի տարբերություն Տեպլովի հայեցողության Ամֆիտատրովը գտնում է, որ «այն ժամանակվա ռուսական պաշտոնական մամուլի հավաստիացումներին հակառակ հայերի նկատմամբ անգլիական համակրանքը չուներ ռուսական ազդեցության դեմ հետին նպատակներ: Անգլիան, - շարունակում է նա, - այն ժամանակ մինչև իսկ դեմ չէր հայկական բարենորոգումների անցկացման ծրագիրը վստահել Ռուսաստանին: Արգայիլի դուքսը իր աղմուկ հանած բրոշյուրում հայտարարեց, որ նա նույնիսկ նախընտրում է Փոքր Ասիայի վրա Ռուսաստանի հովանավորությունը մասայական սպանությունների արյունոտ ռեժիմը շարունակելու փոխարեն, որոնք «Կարմիր սուլթանը» բարձրացրեց կանոնավոր՝ համարյա մեխանիկական համակարգի»²: Իր հերթին Ամֆիտատրովը մոռանում է, որ մեծ տերությունների՝ Ռուսաստանի և Անգլիայի հայանպաստ քաղաքականությունը հատկապես պետք է դիտարկել ռուս-թուրքական հակասությունների, անգլո-թուրքական հակամարտությունների, ռուս-անգլիական դարավոր ավանդական պայքարի ու մրցակցության լույսի ներքո, որպես հակադարձ համեմատություն՝ եթե թուրքիայի հետ նրանց միջպետական կապերը անամպ են, դրացիական, ապա դիրքորոշումը որպես կանոն մեղմ ասած ոչ հայանպաստ է, այլ ուղիղ հակառակը: Այս պատմահայեցակետը մեկ անգամ ևս ապացուցվում է, երբ համակողմանիորեն ուսումնասիրում ենք Ամֆիտատրովի գրքույկը, քանզի ռուս պատմաբանի կարծիքով Գլադստոնյան դպրոցի և Գլադստոնյան ավանդույթների անգլիական քաղաքագետները մինչև այժմ (1906 թ.- Մ.Մ.) կրկնում են, թե բավարար չափով հայկական հարցը ի վիճակի է լուծել միայն Ռուսաստանը: «Անգլիայի փորձը, - գրում է նա, - վերջ դնելու սուլթանի դաժանություններին ու հայերի տառապանքներին, բախվելով Ռուսաստանի կատեգորիկ մերժման հետ, անհաջողություն կրեց, որի կամքը ինչպես արձագանք կրկնեց ֆրանսիան իր նախարար Յանոտոյի շուրթերով»³: Սակայն

¹ В. Теплов, "Князь Алексей Борисович Лобанов-Ростовский" СПб, 1897, с. 71.

² А.А. Амфитеатров, Армянский вопрос, с. 14.

³ А.А. Амфитеатров, Армянский вопрос, с. 14-15.

ռուս պատմաբանը չի մեկնաբանում, թե, այնուամենայնիվ, ինչ գործոններ էին հարկադրում Ֆրանսիային հայկական հարցում գրավելու: Կրավորական դիրք և ընդօրինակելու Ռուսաստանին: Պարզապես ֆրանսիան գամված էր Ռուսաստանի քաղաքական մարտակառքին, գերազանցապես 1891-1893 թթ. ռուս-ֆրանսիական ռազմա-քաղաքական համաձայնագրով, որը վերջինիս համար ծանրակշիռ երաշխիք էր միջազգային հարաբերությունների ուղորտում Գերմանիայի հնարավոր նոր ահեղ վտանգի դեմ: Հատկապես Ռուսաստանի հետ հարաբերությունը ոչ միայն չբարդացնելու, այլև ավելի սերտացնելու նպատակով ֆրանսիական կառավարող շրջանները հաճին Հանոտոյի հայկական հարցում պաշտպանում էր Լոբանով - Ռոստովսկու քաղաքական դիրքորոշումը: Սակայն Ամֆիտեատրովը խտացված է ներկայացնում գույները և գերազնահատում Ռուսաստանի ազդեցությունն ու ներգործությունը Ֆրանսիայի վրա, որի քաղաքական ակունքները գալիս էին դեռևս 1875թ. Բիսմարկի ռազմական ահազանգից՝ Ֆրանսիային երկրորդ անգամ ջախջախելու նպատակից, նրան երկրորդականերորդական տերություն դարձնելու ծրագրից, որը կանխվեց Ռուսաստանի վճռական միջամտության շնորհիվ, հանձին արտագործնախարար Գորչակովի դիվանագիտական հեռամետ գործունեության:

Ֆրանսիայի դիվանագիտական և քաղաքական դիրքորոշման նկատմամբ գույները խտացված են մանավանդ որ հենց իսկ Ամֆիտեատրովի վկայությամբ Սասունի 1904թ. հայտնի արյունոտ դեպքերից հետո, որը միաժամանակ հայ ազատամարտի հերոսական դրսևորումներից է աբդուլհամիդյան բռնատիրական վարչակազմի դեմ, հայկական հարցը վերստին հանդես եկավ Ֆրանսիայում և հենց նրա շնորհիվ, բայց ոչ պաշտոնական, այլ աջ և ծախ սոցիալիստական, ապա և կաթոլիկական ընդդիմության ջանքերով այն կրկին իր վրա գամեց միջազգային հանրության ուշադրությունը: Այս առնչությամբ «հայասեր Contemporary Review»-ի խմբագիր Բենթինգը անկեղծորեն խոստովանեց, որ դեռևս երկու տարի առաջ (Սասունի դեպքերից- Մ. Մ.) նա ոչ մի դեպքում չէր հավատա, թե իբր հայկական հարցը ի վիճակի է խոր հատակից, ուր նա իջել էր, բարձրանալ ջրի երես»¹: Հատկանշական է, որ Ամֆիտեատրովը ֆրանսիական ընդդիմության ներկայացուցիչների մասնավորապես Կոշենի միջոցով մեկ անգամ ևս քննադատում է Հանոտոյի և դատապարտում Լոբանով-Ռոստովսկու քաղաքականությունը հայկական հարցում: Կաթոլիկ և պահպանողական Կոշենը, գրում է ռուս պատմաբանը, հրապարակեց Հայ Հեղափոխական Դաշնակցության քաղա-

¹ А.А. Амфи́театров, Армянский вопрос, с. 15.

քական ծրագիրը, որից հետո եզրակացնում է նա, «Պալատը(Ֆրանսիայի բարձրագույն ներկայացուցչական հաստատությունը-Մ.Ս.) ոչ առանց զարմանքի լսեց, որ այդ սարսափելի մարդկանց (Դաշնակցության-Մ.Ս.) ծրագիրը իրենից ներկայացնում է միայն Բեռլինի դաշնագրի բարենորոգումների վերաբերյալ պայմանների բառացի կրկնությունը, և միաձայն ճանաչեց, թե հայ ժողովրդի հավակնությունները ոչ միայն լիովին օրինական են, բավարարելի, և պետք է բավարարվեն, այլև ապշեցնում են իրենց խելամիտ չափավորությամբ»¹: Լոբանով-Ռոստովսկու քաղաքականությունը հայկական հարցում դատապարտելու և նրա իսկական էությունը բացահայտելու համար Ամֆիտեստրովը օգտագործում է հայտնի հասարակական գործիչ Ֆրանսիացի Ժան Ժորեսի ապշեցուցիչ վառ ճառը, որտեղ առաջին անգամ հրապարակվեց Լոբանով-Ռոստովսկու ասացվածը, որը բացատրում է, թե ինչու էր Ռուսաստանը հրաժարվում միանալ մյուս տերություններին թուրք-հայկական հարաբերություններին միջամտելու համար: «Ես չեմ ուզում, որպեսզի Արևմտյան Հայաստանը դառնա երկրորդ Բուլղարիա և որպեսզի, արևելահայերը չօգտագործեն մեր դեմ այն հիմնարկությունները, որոնք կստեղծի հայկական ինքնավարությունը թուրքական հովանավորության ներքո»²: Այս քաղաքականությունը արդարացնելու համար հայ ժողովրդի գլխին թափվեցին անթիվ և անհամար տեղատարափ մեղադրանքներ ընդհուպ մինչև ծայրահեղ փութաջանություն ցուցաբերող «Նովոյե Վրեմյայի» թղթակցի շրջանառության մեջ դրած «մինչև Դոնի-Ռոստով Մեծ Հայաստանի ստեղծման ֆանտաստիկ երևակայական առասպելական ուրվականը»: Դրանով իսկ եզրակացնում է Ամֆիտեստրովը «կտրուկ փոխեցինք Ռուսաստանի պատմական քաղաքականությունը Մերձավոր Արևելքում և հարկադրեցինք նրան հրաժարվելու մահնեղական լծի ներքո հեծող քրիստոնյաների պաշտպանի իր դարավոր ամպլուալից: Մենք, չարունակում է նա իր իրատես քննադատությունը, -սխալմամբ սուլթանին զոհաբերեցինք ասիական Հայաստանի ճակատագիրը, հաշվի առնելով նրա ստրկական անզորությամբ ապահովել անդորրը մեր սեփական Անդրկովկասում: Մենք սառնարությամբ չնկատեցինք 1894թ. Սասունը, որտեղ քրդերը կոտորում էին հայերին, իսկ 1896թ. Եվրոպական մամուլը խիստ մեղադրում էր սուլթանին առընթեր մեր դեսպան Ա. Ի. Նելիդովին Կ.Պոլսի արյունոտ ճնշամիջոցների զանցաթողության մեջ»³: Ամֆիտեստրովը նկատի ունի հայ մի խումբ հայրե-

¹ А.А. Амфи́театров, Армянский вопрос, с. 16.

² А.А. Амфи́театров, Армянский вопрос, с.17.

³ Նույն տեղում, էջ 17:

նասերների փորձը Կ.Պոլսի Օտտոմանյան Բանկի պայթեցման սպառնալիքով հարկադրել սուլթանին կատարելու Արևմտյան Հայաստանում բարենորոգումների վերաբերյալ պաշտոնապես ստանձնած պարտավորությունները, որոնց ներքո դրված են մեծ տերությունների ներկայացուցիչների ստորագրությունները: Այս անմախընթաց միջադեպը, որը խիստ մտահոգեց Կ.Պոլսի եվրոպական դեսպաններին, առիթ տվեց սուլթանին վերստին դիմելու ճնշամիջոցների հայ բնակչության նկատմամբ: Ռուսաստանի հակահայկական դիրքորոշումը և արյունոտ սուլթանին «հասկանալու» միտումն այնքան էր ակնհայտ և անսքող, որ «վատ լուրերը նույնիսկ չջլատեց այն ակներև հանգամանքը, որ անկարգությունները միայն դադարեցվեցին հենց ռուսական դեսպանության միջամտության շնորհիվ, որ միայն դեսպանատան ավագ թարգման Ն. Վ. Մաքսիմովի եռանդը փրկեց Օտտոմանյան բանկը կործանումից, և թուրքական կառավարության և եվրոպական կապիտալին՝ այդ թանկ ծառայության փոխարեն հնարավորություն տվեց հայ «հեղափոխականներ» ինքնապաշտպաններին թողնել Կ.Պոլիսը և մեկնել Մարսել»¹: Սակայն դա էլ չփրկեց Ռուսաստանի հեղինակությունը, քանզի եվրոպական դիվանագիտությունը, մասուլը, հասարակական կարծիքը անընդհատ կրկնում էր և տարբեր ձևերով մեկնաբանում «իր թե Նելիդովի կողմից Արդուլ-Համիդին ասված տխրահռչակ "massacre 2 majeste", երբ սուլթանը պարզաբանեց նրան իր անզորությունը խաղաղ միջոցներով հաղթահարել հայկական հեղափոխության հրդեհը»²: Պատմագիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ամֆիտատորովի կարծիքը Նելիդով անձի ու դիվանագետի վերաբերյալ, մանավանդ որ ռուս պատմաբանը Կ.Պոլսում եղած ժամանակ հանդիպել և զրուցել է նրա հետ: Նելիդովին տված գնահատականը երկակի է, թերևս իրամերժ, նրա (դիվանագետի-Ս.Մ.) հետ երեք զրույցի ազդեցության ներքո բոլոր տվյալները ունեն հավատալու, որ իրեն վերագրված առասպելական նախադասությունը նա չի ասել, ապա և իր բնավորության մեղմությամբ, դաստիարակության նրբագեղությամբ հազիվ թե ունակ լիներ արտասանելու: Բայց դժբախտաբար նա տածում էր ինչ-որ ռասայական հակակրանք հայության նկատմամբ, խորապես համոզված էր, որ հայերը ընդվզում են ոչ միայն թուրքական այլանդակ վարչաձևի դեմ, այլև իրենցից ներկայացնում են համաշխարհային հեղափոխության խնորհիչը, հավատում արևելահայերի անջատողական իղծերին և այս բոլոր պատճառներով այս ճակատագրական հարցում հոժարակամորեն գրավեց վտանգավոր,

¹ А.А. Амфитеатров, Армянский вопрос, с. 17.

² Նույն տեղում, էջ 18:

քողարկված չեզոքության դիրքորոշում»¹: Սակայն Նելիդովի դիվանագիտական գործունեության մեջ հայկական հարցում նկատել «չեզոքություն» ըստ էության կնշանակի գտնել մեղմացուցիչ, թերևս արդարացուցիչ հանգամանքներ, որը թե, պատմական և թե, քաղաքական առումով անընդունելի է ու սխալ: Ավելին, Նելիդովը ինչպես հայկական հարցում, այնպես էլ աբդուլհամիդյան Թուրքիայի հիմնախնդրում լիովին կիսում էր Լոբանով-Ռոստոպսկու դիվանագիտական թե ռազմավարությունը և թե մարտավարությունը: Եվ դա ընդամուր առմամբ ընդունում է նաև Ամֆիտեատրովը՝ Նելիդովի դիվանագիտական գործունեության մեջ զանազան մեղմացուցիչ հանգամանքներ փնտրելով հանդերձ: «Փակելով աչքերը ռասայական և դավանական տարբերության վրա, -գրում է ռուս պատմաբանը, -նա (Նելիդովը-Մ.Մ.) պնդում էր, որ հայկական հարցը թուրքական կայսրության ներքին հարց է, և, որ սուլթանին, որպես ինքնակալ միապետի չի կարելի զրկել հնագանդեցնելու իրավունքից»²: Դժվար չէ կռահել, թե ինչ իրավունքի մասին է խոսում Նելիդովը, նրա խոր համոզմամբ սուլթանը կարող է անպատիժ ճնշել իր հպատակների գերազանցապես քրիստոնյաների ապստամբությունները, նրանց ազատագրական շարժումները:

Ամֆիտեատրովի համար արտառոց և արտասովոր էր, ոչ միայն արևելյան քաղաքականության ողջ համակարգի բաղկացուցիչ մաս կազմող հայկական հարցի հանդեպ Լոբանով-Ռոստոպսկու, Նելիդովի ռուսական դիվանագիտության ավանդական հայեցակետից ու դիրքորոշումից կտրուկ շրջվելու և արմատապես շեղվելու հանգամանքը, այլև հասարակական-քաղաքական մտքի կրավորական կեցվածքը, քանզի «մեր հասարակության նույնիսկ առաջադեմ խմբերը հայկական մարտիրոսագրությանը վերաբերվում էին անտարբերությամբ, դրպես մարդկայնորեն, իհարկե, ցավալի, բայց օտար և խորթ գործի»³: Ռուս հրապարակախոսի և պատմաբանի կարծիքով «հայությանը ծանր և բոլորովին անարդարացի բարոյական հարված հասցրեց կոմս Լ.Ն.Տոլստոյը, հրաժարվելով Փոքր Ասիայում հալածանքների զոհերի օգտին հրապարակված Գ.Ն. Ջանչիևի ժողովածուում մասնակցություն ունենալուց»⁴: Իհարկե, Ամֆիտեատրովը իրավունք ուներ կշտամբելու, տեղին էր նրա դժգոհությունը, քանզի աշխարհահռչակ ռուս գրողը և մեծ հումանիստը պարզապես պետք է բարոյապես աջակցեր արևմտահայությանը: Այսուհանդերձ արդա-

¹ А.А. Амфитеатров, Армянский вопрос, с. 18.

² Նույն տեղում, էջ 18:

³ Նույն տեղում, էջ 20:

⁴ Նույն տեղում, էջ 20:

րութունը պահանջում է ասել, որ Լ.Ն. Տոլստոյը դրանից հետո նա-
մակով դիմեց ժողովածուի խմբագրությանը, որտեղ առարկայական
գործոններով պատճառաբանվում էր իր նման վարքագիծը:

Ամֆիտատրովը փորձում է գտնել ռուսական հասարակական-
քաղաքական մտքի տրամադրվածության փոփոխության գլխավոր
շարժառիթները հայկական հարցում, նրա տեսակետները և գնահա-
տականները այդ հիմնախնդրում հիմնականում սպառիչ են ու ընդու-
նելի, իրատես և հրատապ՝ մեր օրերի համար ուսանելի՝ հայ-ռուսա-
կան քաղաքական առնչությունների զարգացման հեռանկարների
տեսանկյունից: Նախ, ռուս առաջադիմականների տեսիլքների և Հա-
յաստանի դժբախտությունների միջև ցավոք կանգնած էր ռուսական
Անդրկովկասի պրիզման, որի քաղաքներում հայերը մինչև վերջին
ավերումները ներկայացնում էին կապիտալիստական ու պահպա-
նողական տարրը¹: Այդպիսի նախատրամադրվածությունը խորթ չէր,
հարկ է համարում նշել հեղինակը, նույնիսկ հանգուցյալ Ն.Կ.Միխայ-
լովսկուն: Այսպիսով, կատարում է նա պատկերավոր և իրատես եզ-
րակացություն, ռուսական հասարակության համար հայկական
հարցը սերմնահատիկ էր երկու ջրաղացքարերի միջև²: Իսկպպես, ե-
թե «հետադիմականները և պահպանողականները, պանսլավիստնե-
րը և ռուսամուկները հայությանը որպես հեղափոխական ուժի հայ-
տարարեցին պատերազմ», ապա «առաջադիմականները, չմոռանա-
լով հայերի «չարչիությունը» «նրանց պաշտպանության գործում ցու-
ցաբերում էին բարեկիրթ, բայց սառ անտարբերություն, ըստ ծառա-
յական պարտականության ընդհանուր մարդասիրություն, բայց ա-
ռանց փոքրագույն ոգևորության»³: Հիմնովին կիսելով նրա տեսակե-
տը և գնահատականը, այնուհանդերձ անհրաժեշտ է նշել, որ Ռու-
սաստանը երբեք պաշտոնապես չի մշակել, առավել ևս հետևողա-
կանորեն չի իրագործել հայերի ռուսականացման քաղաքականու-
թյուն: Ամֆիտատրովի մոտ այս հիմնախնդիրը նկատելիորեն չափա-
զանցված է, որը միանգամայն հասկանալի է, քանզի նա իր գիրքը
գրել է քաղաքական թեժ հետքերով ու հրատարակել 1906թ-ին, երբ
Անդրկովկասի ցարական սատրապները կենսագործում էին բացա-
հայտ հակահայկական քաղաքականություն ու հանձին Գոլիցին-Պլ-
ևենների դիմում անսքող սադրանքի՝ թուրք-թաթարական (ադրբեջա-
նական) մուլեռանդ ամբոխին ուղղում հայության՝ երկրամասի ամե-
նագիտակից և ամենաառաջադեմ-հեղափոխական ուժի դեմ: Ամֆի-
տատրովի գնահատմամբ, որը ի դեպ լիովին իրատես է, առարկա-

¹ А. А. Амфитеатров, Армянский вопрос, с.20.

² Նույն տեղում, էջ 20:

³ Նույն տեղում, էջ 20:

յական ու անաչառ, Լոբանով-Ռոստովսկի - Նելիդով, Գոլիցին - Պլեխանովների հակահայկական դիրքորոշումը արտաքին քաղաքական ասպարեզում ու ներքաղաքական ոլորտում չէին կարող բխել և իսկապես չէին բխում Ռուսաստանի ազգային-պետական շահերից, որը ըստ Ամֆիտատրովի շուտով հիմնականում գիտակցեցին երկրի ավելի հեռամետ կառավարող գործիչները: «Պահանջվեց Անդրկովկասի դեպքերի համաժամանակյա ողջ սարսափը, որպեսզի բոլոր ռուսները բացեն աչքերը հայոց վշտի հանդեպ ու հասկանան այն պետական չարիքը, որ մեզ համար իր մոտ աճեցրեց թուրքիան...», իսկ մենք նրանից հլուքամբ ընդունեցինք, փոխադրեցինք մեր տարածք ու կատարելագործեցինք պետերբուրգյան բյուրոկրատիայի ծաղկուկների պատվաստմամբ¹: Հիրավի, սթափ գնահատական ու հիանալի պատկերավոր համեմատություն: Եվ միանգամայն օրինաչափ է, որ այս և նման գնահատականները իրենց հետագա զարգացումը գտան ռուսական պատմագիտական ու հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչների աշխատություններում: Այսպես, Ն. Մ. Լագովը համառոտակի քննարկելով գրեթե նույն հարցերը ըստ էության կատարում է նմանատիպ եզրահանգումներ՝ արդարացնում հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը, ընդգծում նրա ունեցած ակնկալիքները Ռուսաստանից, օրինաչափ և օրինական համարում հայկական հարցի արդարացի լուծումը, դատապարտում մեծ տերություններին, ներառյալ և Ռուսաստանին, որոնք զանազան առարկայական գործոններով պայմանավորված չէին նպաստում հիմնախնդրի հայանպաստ կարգավորմանը, վերջապես մերկացնում արքունիկայի ռազմա-քաղաքական գործունեությունները արևմտահայության նկատմամբ: Լագովը ռուսաց դիվանագիտության առարկայորեն հայանպաստ քաղաքականությունը համարում է ինքնին հասկանալի, քանզի այն բնական էր Ռուսաստանի ազգային-պետական շահերի տեսանկյունից: «Թուլացած և զազազած թուրքիան,-գրում է նա,- իր ամբողջ ծանրությամբ հարձակվեց նրա սահմաններում մնացած հայության վրա, դիվանագիտական ներգործության եղանակով արևմտահայերի վիճակը թեթևացնելու եվրոպական տերությունների փորձերը միայն վատացրին Հայաստանի դրությունը: Հայկական ջարդերը,- կատարում է կարևոր ու իրատես եզրակացություն,-Լագովը,- թուրքիայում վերածվեցին սիստեմի, մինչդեռ մեծ տերությունների համառ առաջադրումներին թուրքիան մշտապես պատասխանում էր Հայաստանում (Արևմտյան-Մ.Մ.) արմատական բարեփոխումներ անցկացնելու խոստումով, բայց նրա կողմից գործնականում ընդունվում էին

¹ А.А. Амфи́театров, Армянский вопрос, с.20.

ամենադաժան բոլոր միջոցները ամբողջ միլիոնանոց հայկական բնակչությանը վերջնականապես բնաջնջելու համար»¹: Անդրադառնալով 1894-1896 թթ. ջարդերին ռուս հեղինակը գրում է, որ «Հայաստանը (Արևմտյան-Մ.Մ) դարձավ իր դաժանությանը և չափերով դեռևս չեղած կոտորածների ասպարեզ»², որոնք սկսվեցին Սասունում և փոթորկալից անցան Տրապիզոնով, Դիարբեքիբով, Սվասով, Ուրֆայով, Արաբկիրով, Մալաթիայով և այլ վայրերով»³: Լագովը նկարագրում է կոտորածների սարսափները, որոնք ըստ էության գրեթե չեն տարբերվում ռուս և արևմտաեվրոպական հեղինակների թողած տեղեկություններից, հետևապես հիմնականում հավաստի են, արժանի ուշադրության, քանզի նույնպես գրված են իրական փաստերի հիման վրա, առանց տուրք տալու երևակայությամբ: Թուրքերը, գրում է նա, իրենք իրենց գերազանցեցին դաժանություններով, մարդկային կյանքը և կանանց պատիվը նրանց համար չունեի որևէ արժեք, տղամարդկանց սպանելուց հետո անխուսափելի էր կանանց և աղջիկների պատվի արատավորում, ընդ որում «նույնպես էր ոչ միայն մոլեռանդորեն տրամադրված ամբոխը, այլև կանոնավոր զինվորները, ոստիկանները և բարձրաստիճան թուրքերը...տեղի էր ունենում հայության ողջ ունեցվածքի անողոր թալան ու ոչնչացում: Դրանից հետո հազարավոր այլանդակված դիակներ շաբաթներով ընկած էին քաղաքների փողոցներում... շուկաները լցվում էին հայ գերուհիներով, որոնց բացեփբաց փոխանակում էին ձիերի և ավանակների հետ»⁴: Իսկ ինչպիսին էր մեծ տերությունների կեցվածքը՝ կարևորելով հիմնահարցը Լագովը ուշադրությունը սևեռում է երկու հիմնական փաստի վրա: Նախ, ընդգծվում է, որ այդ երկրների ներկայացուցիչներից ստեղծված միջազգային հետաքննող հանձնաժողովը անհերքելի փաստաթղթերով պարզեց և ապացուցեց դեպքերի վայրերում թուրքական անթիվ գազանություններ, որոնց ցմցող մանրամասնությունները ժողովված են ֆրանսիական Դեղին Գրքում⁵: Երկրորդ, մեծ տերությունների միջև իշխող անվստահության ու տարածայնության պատճառով սուլթանի վրա գործադրված նրանց ճնշումը ոչ միայն կրեց զուտ ձևական բնույթ, այլև թուրքերին թողեց անպատիժ կատարված ոճրագործությունների համար: Ավելին, նա հենց այս իրատես հանգամանքով է բացատրում, թե ինչու

¹ Лагов Н.М. Армения. Очерки прошлого, природы и культуры, Пгр., 1915, с. 18-19.

² Նույն տեղում, էջ 19:

³ Նույն տեղում, էջ 19:

⁴ Նույն տեղում, էջ 19-20:

⁵ Նույն տեղում, էջ 19:

Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի ճնշման ներքո, թեև Աբդուլ Յամիդը 1895թ. հոկտամբերի 20-ին ընդունեց Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու ծրագիր, բայց չիրագործեց, այսինքն այն մնաց որպես թուղթ և «մեռած տառ»: Հատկանշական է, որ «մեռած տառ» բառերը դրվեցին դիվանագիտական շրջանառության մեջ, լայնորեն օգտագործվեցին պաշտոնական վավերագրերում՝ Կ.Պոլսի ռուսաց դեսպանատան աշխատակիցների կողմից: Նրանցից հատկապես առանձնանում է Անդրե Մանդելշտամը, քանզի նա իր բոլոր աշխատություններում դատապարտում է արքուլիամիդյանների կազմակերպած հայկական ջարդերը, պաշտպանում արևմտահայերին, որովհետև սուլթանը և նրա վարչակարգը խախտեցին միջազգային իրավունքը, ամենաբիրտ ձևով ոտնահարեցին այն ու գազանաբար ոչնչացրեցին հայ բնակչությանը:

Միջազգային իրավունքի նշանավոր պրոֆեսորը և մեծ հումանիստը մերժում է բոլոր այն տեսությունները, որոնք ջատագովում են ուժի, բռնության հաղթանակը իրավունքի նկատմամբ, քանզի այդ պարագայում ոտնատակ են արվում ազգերի, անհատների, մարդկանց, ժողովուրդների ակնկալիքները և իրավունքները, որի պերճախոս վկայությունը եղավ արևմտահայության ողբերգական ճակատագիրը օսմանյան կայսրությունում: «Մենք կը հաւատանք,- գրում է ռուս դիվանագետը,- որ պետութեան իրավունքէն վեր կը բարձրանայ միջազգային իրաւունքը և այս երկու իրաւունքներէն վեր մարդկային իրաւունքը»¹: Հեղինակը դատապարտում է օսմանյան ողջ արյունոտ կայսրությունը, որովհետև այնտեղ իրավունքի գաղափարին հայտարարված է հավիտենական, մշտական պատերազմ: Ռուս դիվանագետը, նկատի առնելով օսմանյան կայսրության պարագլուխների քամահրանքը միջազգային իրավունքի հանդեպ և այդ լույսի ներքո վերլուծելով արքուլիամիդյան ներքին և արտաքին քաղաքականությունը, անխուսափելի է համարում հայկական կոտորածները և բացահայտ ազգայնամոլությունը քրիստոնյա մյուս ժողովուրդների նկատմամբ: Մանդելշտամը ևս Աբդուլ Յամիդին գնահատում է որպես մեծագույն բռնակալներից մեկը, որպիսին երբևիցէ գիտեր Արևելքը: «Համիտեան ըժժմի մասին կարելի է ըսել, թե ան թուրք պետութեան յատկանշական բոլոր կողմերը մղեց մինչև իրենց ծայրագոյն արտայայտութեանը, որոնք են, բռնապետութիւն հանդէպ բոլոր օսմանեան հպատակներուն, բուն հալածանք

¹ Ա. Մանդելշտամ, Օսմանյան կայսրության ճակատագիրը և Հայկական հարցը, Կ.Պոլիս, 1919, մաս I, էջ 12:

և ջարդ Քրիստոնեաներուն...»¹: Անձամբ «Աբդուլ Յամիդի հրամանով հարյուր հազարավոր դժբախտ հայերի... մորթոտեցին»², դրանք «պատմության առաջ վկայում են քրիստոնյա իր հպատակների նկատմամբ Աբդուլ Յամիդի իսկական վերաբերմունքի մասին»³: Ռուս դիվանագետը նկատի ուներ 1894-1895թթ. հայկական կոտորածները, որոնք հանգեցրին Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի միջամտությանը և արյունոտ սուլթանի կողմից 1895թ. հոկտեմբերի 20-ի օրենքի ընդունմանը, որն ի դեպ, նա նույնպես համարեց «մեռած տառ», քանզի մեծ տերությունների հակամարտությունը և մրցակցությունը Արևմտյան Չայաստանում նախատեսվող բարենորոգումների շուրջ հնարավորություն չէին ընձեռում որպեսզի համաձայնագիրը դադարի թղթի կտոր լինելուց և ձեռք բերի ու ստանա նյութական բովանդակություն: Ի տարբերություն Արևմտյան Չայաստանի մեծ տերությունները՝ Ռուսաստանը, Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան Կրետե կղզու հիմնահարցում փոխգիշման շնորհիվ հասան լուրջ հաջողության և պարտադրեցին արյունոտ թունակալին կատարելու բոլոր պահանջները: Սանդելշտամը նշում է Կրետեի հիմնախնդրում Աբդուլ Յամիդին հարկադրած զիջումները: Նախ, սուլթանը 1896 թ. օգոստոսի 27-ին ընդունեց կանոնագիր, որից հետո եվրոպական չորս մեծ տերությունները Կրետեի ինքնավարությունը վերցրեցին իրենց հովանավորության ներքո, ապա 1898թ. հարկադրեցին Թուրքիային իր գորքերը դուրս բերել կղզուց, իսկ 1899թ. մասնակցեցին Կրետեի սահմանադրության մշակմանը: Չետևապես, եթե Արևմտյան Չայաստանի բարենորոգումների և ընդհանրապես հայկական հարցի վերաբերյալ դիվանագիտական քննարկումները որպես կանոն ձախողվում էին և մտնում փակուղի, կամ էլ, անտեսվելով սուլթանի կողմից վերածվում թղթի կտորի՝ «մեռած տառի», ապա գրեթե նույն պատմափուլում ծագած Կրետեի հիմնախնդիրը իր բոլոր սահմանափակումներով և թերություններով հանդերձ, այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ ստացավ իրավաքաղաքական դրական լուծում: Չավանաբար, Կրետեի հիմնահարցում մեծ տերությունների և առաջին հերթին ավանդական մրցակիցների ու հակառակորդների՝ Ռուսաստանի և Անգլիայի հակամարտությունները այդ աշխարհահատվածում նվազ թույլ էին Արևմտյան Չայաստանում ունեցած շահերի համեմատությամբ: Ռուսաստանը Կրետեում չունեի այնքան մեծ քաղաքական շահեր ինչպես Անգլիան, Ֆրանսիան,

¹ Ա. Մանդելշտամ, Օսմանյան կայսրության ճակատագիրը և Չայկական հարցը, Կ. Պոլիս, 1919, մաս I, էջ 8:

² А. Мандельштам, Младотурецкая держава, М., 1915, с. 4.

³ Նույն տեղում, էջ 5:

Գերմանիան թուրքիայում ընդհանրապես, Արևմտյան Հայաստանում մասնավորապես՝ կարևորագույն քաղաքական հիմնապատճառ, որը մի կողմից առարկայորեն նպաստեց Կրետեի հարցի դրական լուծմանը, իսկ մյուս կողմից՝ Արևմտյան Հայաստանում բարենորոգումների կանխադեմանը: Երկրորդ, Կրետեի հիմնախնդրի դրական լուծումը կապված էր Անգլիայի պետական քաղաքական գործիչների ձեռնարկած հետևողական, վճռական գործողությունների, դիվանագիտական ճկունության հետ, որով հնարավոր դարձավ ոչ միայն հաղթահարել Աբդուլ Համիդի դիմադրությունը, այլև ստանալ մեծ տերությունների համաձայնությունը: Այդպիսի վճռական դիվանագիտական ու քաղաքական դիրքորոշում ոչ Ռուսաստանը և ոչ էլ որևէ մեկ այլ մեծ տերություն չցուցաբերեց ու հետևողականորեն չպարտադրեց Աբդուլ Համիդին 1895թ. հոկտեմբերի 20-ին կանոնագիրը ընդունելուց հետո իրագործելու Արևմտյան Հայաստանի բարենորոգումների ծրագիրը: Ձգացվում էր Ռուսաստանի զգուշավորությունը, ակնհայտ էր Լոբանով-Ռոստովսկու քաղաքականության սովորուածեքը: Ռուսաստանը նման հաստատականություն դրսևորեց 1878թ. Բեռլինի վեհաժողովում, բայց մեկուսացվեց Եվրոպական դիվանագիտության կողմից ու հարկադրաբար նահանջեց գիշումներ կատարելով մեծ տերություններին, որից գերազանցապես տուժեցին արևմտահայերը և, իհարկե, շահեց թուրքիան: Ահա ինչու հայկական հարցը ոչ միայն մեռյալ կետից չէր շարժվում, այլև լուծում չէր ստանում, դառնում «մեռած տառ» Եվրոպական դիվանագիտության լաբիրինթոսում: Ռուսի միանգամայն օրինաչափ է ու տրամաբանական, որ Մանդելշտամը ևս իր բոլոր աշխատություններում ուշադրություն է սևեռել Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու շուրջ մեծ տերությունների կողմից մշակված նախագծերի, դրանց քննարկումների, հակասությունների, թուրքիայի նկատմամբ տերությունների իրարամերժ դիրքորոշման վրա: Ամեն անգամ Եվրոպայի միջամտությունից հետո առիթ էր ներկայանում Օսմանյան կայսրության տիրակալների համար իրագործելու հայկական ջարդերը: Բավական է ասել, որ Գերմանիայի կայսեր Վիլհելմ 2-րդը երկու անգամ այցելեց թուրքիա և իրեն հայտարարեց բոլոր մահմեդականների բարեկամը: «Ապտիլ Համիդ է որ հայու արինով կարմրած իր ձեռքը, - գրում է Մանդելշտամը, - դրաւ այն թագակիր մեծ խեղկատակին (Վիլհելմ 2-րդի-Մ.Մ.) ձեռքին մեջ, որ ինքզինքը յայտարարեց իբր բարեկամը 300 միլիոն Իսլամներու»¹:

¹ Ա. Մանդելշտամ, Օսմանյան կայսրության ճակատագիրը և Հայկական հարցը, Կ.Պոլիս, 1919, մաս I, էջ 12:

Հայկական հարցի, Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու շուրջ Եվրոպական մեծ տերությունների միջև ծավալված դիվանագիտական սուր պայքարի, հայկական ջարդերի պատմաքաղաքական հիմնախնդիրները արտացոլվել են նաև Պ. Ն. Միլյուկովի արդեն վտարանդիության մեջ գրված «Հիշողություններում», որտեղ միաժամանակ ուշագրավ և հետաքրքիր տեղեկություններ են հաղորդվում տարբեր երկրների հատկապես Անգլիայի պետական այրերի ու հայասեր գործիչների հետ ունեցած հանդիպումների մասին, որոնք հնարավորություն են ընձեռում ամբողջացնելու հիմնահարցի լուսաբանումը: «Հայերը,- գրում է ռուս պատմաբանը,-չնայած ռուսական հին վարչակազմի կողմից (ցարական կառավարության-Մ.Մ.) նրանց ազգային գիտակցությանը հասցված ծանր վիրավորանքներին, Կովկասի բոլոր ժողովուրդներից առավել հավատարիմ մնացին Ռուսաստանին:

Նրանք ակտիվորեն մասնակցեցին թուրքիայի դեմ ռուսական բոլոր պատերազմներին»¹: Միլյուկով-պատմաբանը և քաղաքական-պետական գործիչը սակայն չի նշում, թե ինչ ծանր վիրավորանքների մասին է խոսքը, նկատի ուներ արդյո՞ք նա Լոբանով-Ռոստովսկու քաղաքականությունը, թե՞ հայոց առաքելական եկեղեցու ունեցվածքը բռնագրավելու մասին 1903թ. հունիսի 12-ի կայսերական օրենքը, իսկ միգուցե՞ փոխարքա Գոլիցինի թաթարներին (ադրբեջանցիներին) խաղաղ հայ բնակչության դեմ ուղղելու 1905-1906թթ. սադրանքները կամ դրան հաջորդած երկարատև դատավարությունը Յ.Յ. Դաշնակցություն կուսակցության դեմ, որը փաստորեն ուղղվեց մի ամբողջ ժողովրդի դեմ, թե՞ վերջապես հայությանը անջատողականության (սեպարատիզմի) մեջ մեղադրելու պետական քաղաքական աստիճանի բարձրացած անհեթեթությունը: Միլյուկովը վտարանդիության մեջ էլ հավատարիմ մնալով իր դավանած քաղաքական կրեդոյին՝ հավատամքին, քաջ գիտակցում էր, որ առարկայորեն ոչ հայանպաստ քաղաքականությունը, ի սկզբանե, չի կարող լինել իրատես, առավել ևս բխել Ռուսաստանի ազգային-պետական ծավալապաշտական շահերից: Պատմական անվիճելի ճշմարտություն՝ Ռուսաստանի բոլոր հեռատես պետական ու նշանավոր քաղաքական գործիչները, որոնց համար գերակայող էին երկրի ազգային շահերը, որոնք ելակետային էին համարում պատմական իրատեսությունը և քաղաքական սթափ և անաչառ մոտեցումները, որպես կանոն ունեցել են հայանպաստ դիրքորոշում, որը թե օրինաչափություն է և թե, անհրաժեշտություն: Միլյուկովը, անշուշտ, նրանցից մեկն է, որի խոր համոզմամբ «հայերն ուրիշներից

¹ П.Н. Миллюков, Воспоминания, М., 1990, т. I, с. 120.

ավելի մոտ էին մեզ (ռուսներին, Ռուսաստանին-Մ.Մ.) նաև քաղաքական տեսանկյունից»¹: Նրա կարծիքով արևմտահայերը ի տարբերություն օսմանյան կայսրության լծի տակ գտնվող մյուս քրիստոնյաների ապրում էին եվրոպայի տեսադաշտից հեռու, որի պատճառով էլ նրանց սոցիալ-տնտեսական և քաղաքական դրության մասին համեմատաբար քիչ էր հայտնի մայրցամաքում: Մինչդեռ քառասուն տարվա ընթացքում թուրքերը և հատկապես քրդերը, որոնց միջավայրում ապրում էին հայերը, հետևողականորեն ու անընդմեջ կտորում էին նրանց կարծես իրականացնելով «Չայկական հարցի լուծումը հայերին գլխովին ոչնչացնելու մեջ է»² ծրագիրը: Միլյուկովի արժեքավոր և ճշմարտացի վկայությամբ «անգլիական կառավարությունը Թուրքիային հովանավորելու իր քաղաքականության մեջ մատների արանքով էր նայում ջարդերին և դրանով իսկ այն կարծես խրախուսում»³: Իսկ «անգլիական ֆիլանտրոպները և հյուպատոսները,-շարունակում է իր միտքը ռուս պատմաբանը, - հայկական կոտորածները կատարվելուց հետո խնամքով հանրագումարի էին բերում դրանց թվական արդյունքները»⁴: Այսուհանդերձ Միլյուկովը անտեսել է մի կարևորագույն պատմաքաղաքական գործոն անգլիական խորամանկ ու ճկուն քաղաքականության մեջ՝ հայկական հարցը բրիտանական պետական քաղաքական այրերը անհրաժեշտության դեպքում հմտորեն օգտագործում էին ու ծառայեցնում նույն Թուրքիայի վրա ճնշում գործադրելու համար, նման պարագայում Անգլիան, ինչպես դա եղավ 90-ական թթ. ընդունեց հայանըպաստ կեցվածք, և կարծես անխուսափելի դարձրեց Ռուսաստանի թուրքանպաստ դիրքորոշումը, որը Չայաստանի և հայերի համար միշտ ունեցել է ու կունենա ճակատագրական նշանակություն: «Այդ ժամանակ,-գրում է Մ.Կովալևսկին -«Վեստնիկ եվրոպի» ամսագրում, Լոբանով-Ռոստովսկուն էին վերագրում ավելի քան չնտածված «Ռուսաստանը ցանկանում է ձեռք բերել Չայաստանը առանց հայերի» դատարկախոսությունը»⁵: Այդպիսի քաղաքականության գլխավոր պատճառն այն էր, որ հայերը, ըստ հեղինակի, այն ժամանակ համարվում էին յուրատեսակ հեղափոխական թթխմոր Կովկասում: «Կառավարությունը չէր ցանկանում ավելացնել նրանց թիվը և նրանց համար գծտվել Թուրքիայի հետ»⁶: Հեղինակավոր հոդվա-

¹ П.Н. Милуков, Воспоминания, М.,1990, т. I, с. 120.

² Նույն տեղում, էջ 120-121:

³ Նույն տեղում, էջ 121:

⁴ Նույն տեղում, էջ 120:

⁵ "Вестник Европы"; Пгр., 1915, № 6, с.258.

⁶ Նույն տեղում, էջ 258:

ժագրի տեսակետով ևս 90-ական թթ. արևմտահայության կոտորածների մեջ գլխավոր դահիճ Աբդուլ Յամիդի հետ մեղսակից էր ռուսաց ու ֆրանսիական դիվանագիտությունը, երկու երկրների արտգործնախարարներ Լոբանով-Ռոստովսկին և Յանոտոն, որոնք ժամանակին անհրաժեշտ քայլեր չձեռնարկեցին, որպեսզի անհնարին դարձնեին, կանխեին այդ արյունոտ խրախճանքը: Կովալևսկու նույնպես իրատես կարծիքով կոտորածները հետապնդում էին հայկական բնակչության խտությունը Արևմտյան Յայաստանում նոսրացնելու նպատակ, ահա ինչու աբդուլհամիդյան վարչակազմը կազմակերպում էր ու իրագործում այդ ոճիրները քրդերի ու չերքեզների միջոցով: Անժխտելի է Կովալևսկու պատմաքաղաքական հայեցողության ընդհանրությունը ոչ միայն Միլյուկովի, այլև Ամֆիտատրովի հայեցակետի հետ: «Մեր թշնամիները,- գրել է Ամֆիտատրովը, - մեզանից շատ ավելի լավ գնահատեցին հայերի, որպես Ռուսաստանի պատմական ու բնական դաշնակիցների դերը, և մեր քաղաքականությունը բալկանյան հուսախաբությունների տպավորության ներքո դեռ նոր էր թեքել իր երեսը Մերձավոր Արևելքից Յեռավորին, սուլթան Աբդուլ Յամիդը շտապեց ավերել ու ամայացնել Արևմտյան Յայաստանը, որպես անցյալի և ներկայի ռուսական արշավանքների պարտադիր կայան ու հենակետ... սարսափած համաշխարհային սոցիալական հեղափոխության ուրվականից ռուսական բյուրոկրատական դիվանագիտությունը չէր ցանկանում հասկանալ, որ մորթելով 300000 հայերի ... սուլթան Աբդուլ Յամիդը իրապես ոչնչացրեց գրեթե կես միլիոնանոց ռուսական ավանգարդը՝ և եթե ոչ ընդմիշտ, ապա տասնյակ տարիներով մեր հայրենիքը (Ռուսաստանը-Մ.Ս) զրկեց երեք միլիոնանոց բնակչության սիրուց և վստահությունից, որոնց համակրանքը մեզ համար ստեղծեց այդքան առավելություններ փոքր ասիական պատերազմների ռազմաբեմում»¹: Յետևապես «մորթելով հայերին,- վերստին կատարում է չափազանց կարևոր պատմաքաղաքական և իրատես եզրակացություն ռուս պատմաբանը,- Աբդուլ Յամիդը մորթում էր ռուսական ուժը, ռուսական համակրանքը ...»²: Նախահեղափոխական պատմագիտական և հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչների թողած ժառանգության ուսումնասիրությունը աներկբայորեն վկայում է, որ նրանք այս հիմնահարցի համակողմանի բացահայտման, լուսաբանման գործում էլ հասել են գիտական պատշաճ նվաճման, որոնց զնահատականները նույնպես օգտագործվել են հաջորդ սերնդի՝ խորհրդային ժամանակաշրջանի ռուսաց պատմագրության կողմից:

¹ А.А. Амфи́театров, Армянский вопрос, с. 27.

² Նույն տեղում, էջ 28:

Թեև նա այս հիմնահարցի քննախոսության ու վերջնական եզրահանգման մեջ ևս զգալիորեն զիջեց նախախորհրդային պատմագիտական մտքին, այսուհանդերձ, գիտական տեսանկյունից խորհրդային հեղինակների հայեցակետերը թերագնահատել, չանդրադռնալ, առավել ևս լիովին անտեսել պարզապես սխալ է, քանզի իրենց բոլոր թերություններով հանդերձ դրանք նախ, որոշակիորեն ներկայացնում են հետաքրքրություն, երկրորդ վկայում հաջորդականության մասին, երրորդ, նպաստում համակողմանիորեն պատկերացնելու հիմնահարցի վերաբերյալ ռուսական ողջ պատմագրության հայեցողությունը: Խորհրդային ժամանակաշրջանի ռուսաց պատմագրության մեջ մասնակիորեն արտացոլված է նաև աբդուլ-համիդյան «զուլումի» տարիներին արևմտահայության համար ստեղծված դժնդակ իրավիճակը: Անգամ խորհրդային թուրքամետ պատմաբանները քննարկելով աբդուլ-համիդյան արյունոտ ներքին, մասնավորապես վայրենաբարո ազգակուլ քաղաքականությունը, այդ առնչությամբ հակիրճորեն արձանագրում են այն ազատամարտերը և ինքնապաշտպանական կռիվները, որոնք ի պատասխան ազգատյաց ոճրագործությունների անխուսափելիորեն տեղի էին ունենում Օսմանյան կայսրության տարբեր շրջաններում: Ռուս պատմաբանները փաստերի ճնշման ներքո նույնպես ընդունում են, որ համիդյան արյունոտ վարչաձևի տարիներին Թուրքիան մնում էր առավելագույնս բռնատիրական երկիր, ուր առանձնապես ծանր էր հատկապես այլազգիների սոցիալական ու քաղաքական կացությունը: Այսպես, Ն. Սոկոլսկին գրում է, թե «Թուրքիան ... արևելյան տիպի բռնատիրական երկիր է»¹, որի սուլթան Աբդուլ-Յամիդը աչքի էր ընկնում «... իր դաժանությամբ»², դրա համար էլ այնտեղ պարբերաբար տեղի էին ունենում «...քրիստոնյա ճնշված բնակչության մի շարք ապստամբություններ և հայերի ու հույների կոտորածներ»³: Սակայն խորհրդային ժամանակաշրջանի գրեթե բոլոր ռուս հեղինակները հիմնահարցի մեջ ըստ էության չխորանալով, դրանց մոտենալով մակերեսորեն ու պարզապես հետապնդելով այլ խնդիրներ, չէին կռահում, որ արևմտահայության ապստամբությունները և ինքնապաշտպանական կռիվները սոսկ տարերային մեկուսացված պայքար չէին, այլ հայոց հարցի արդյունք, սերտորեն միահյուսված հայ դատի արդար լուծման հետ, ազգային-ազատագրական դարավոր շարժման ընդհանուր շղթայի հիմնօղակներ, ամբողջական հա-

¹ Н.Сокольский, Очерки современной Турции, Тифлис, 1923, с. 6.

² Նույն տեղում, էջ 6:

³ Նույն տեղում, էջ 6:

մակարգված պայքարի պատմափուլեր, դեպի անկախություն տանող երկար ու ձիգ, դժվարին և լուսավոր ճանապարհ:

Ընդհանրապես, ռուս պատմաբաններին համեմատաբար քիչ էր հետաքրքրում հայ ազգային-ազատագրական պայքարը, ահա ինչու, այն որպես կանոն, ներկայացված է պատահական դրվագի, կղզիացված, դիպվածային ձևով, պայմանավորված միայն Օսմանյան պետության սոսկ այս կամ այն ոճրոտ քայլի ու հանցավոր գործողության հետ: Նրանք ի վիճակի չեղան տեսնելու պատմական ճշմարտությունը, հասկանալու, որ դրանք միայն առիթ էին անընդմեջ գործող, պարբերաբար ժայթքող քաղաքական հրաբուխների համար, որոնք կմարեին սոսկ այն պահին, երբ դարավոր պայքարը կավարտվեր լիակատար հաղթանակով և ազատության նվաճմամբ: Այս կապակցությամբ անհամեմատ հետադեմ են և հետևաբար, թե՛ պատմագիտական, և, թե, պատմաքաղաքական իմաստով խիստ դատապարտելի ու հիմնովին մերժելի բացարձակ թուրքամետ Մ.-Պավլովիչի (Վելտման) հայացքները, քանզի նա, եթե, այնուամենայնիվ, տարբեր առիթով «հիշում է» արյունոտ սուլթանի հայադավությունները, ապա ոչ թե բազմաչարչար ժողովրդին կարեկցելու կամ մարդակեր Չամիդին զոնե անարգանքի սյունին գամելու, այլ միայն իր ռիսերին թշնամիներին, հեղափոխությանը և միջազգային բանվորական շարժմանը «դավաճանած» եվրոպական սոցիալիստներին պարսավելու համար: Չէ որ նրանք, ըստ Պավլովիչի, «հանդգնեցին» բողոքի հզոր ձայն բարձրացնել դատապարտելով հայոց կոտորածները ի պաշտպանություն հայոց ազգի, մինչդեռ ոչ մի քննադատական խոսք չուղղեցին մեծ տերությունների գաղութային քաղաքականության դեմ: «Երբ եվրոպական սոցիալիստները, գրում է նա, - լուրեր էին ստանում Թուրքիայում կատարված հայոց ջարդերի մասին, արյունոտ սուլթանի դեմ հաճույքով կազմակերպում էին ցույցեր, կազմակերպում բողոքի հսկա հանրահավաքներ... Բայց, երբ ֆրանսիական կառավարությունը տարեցտարի նոր զորքեր էր ուղարկում Մարոկկո և մորթոտում էր մահմեդական ցեղերին, 2-րդ Ինտերնացիոնալի սոցիալիստները լռում էին, նմանապես էին վարվում անգլիական սոցիալիստները Չնդկաստանում կատարված գազանությունների հանդեպ ... Եգիպտոսը ստրկացնելու նկատմամբ, մասսայական կոտորածների հանդեպ և սև մայրցամաքում անգլիական զորքերի արյունոտ ցոփության նկատմամբ»¹: Մեր խոր հանդամամբ երկու իրարամերժ, միանգամայն անհամադրելի քաղաքական երևույթների միջև նման միտումնավոր զուգահեռների անցկացումը և համեմատությունը պատմագիտական առումով կոպիտ

¹ Павлович М.П.,(Вельман), Восток в борьбе за независимость, М., 1980, с. 65-66.

սխալ է. իսկ քաղաքական տեսանկյունից ամբողջովին վնասակար և անհարիր «ինտերնացիոնալիստ» պատմաբան հորջորջվողի համար, քանզի, բնավ էլ, չարդարացնելով գաղութային համակարգը, միաժամանակ անհրաժեշտ ենք համարում հատուկ արձանագրել, որ նշված երկրներում, ի բացառություն Թուրքիայի, ցեղասպանությունը ազգային-կրոնական հողի վրա չի մշակվել պետական-քաղաքական նակարդակով և չի բարձրացվել պաշտոնական քաղաքականության աստիճանի: Ուստի, Պավլովիչին հետաքրքրում է ոչ այնքան թուրքական հրեշավոր ոճրագործությունը, որքան «օպորտունիստ» սոցիալիստներին դատապարտելու հաճույքը: «Հումանիստ և ինտերնացիոնալիստ», բայց իրականում անսքող թուրքամետ Պավլովիչը, հավանաբար, «կարճ հիշողության» պատճառով կամ քաղաքական հանգամանքներից դրդված պարզապես «մոռանում է», որ բոլշևիկների պարագլուխները նույնպես, ըստ էության լռում էին, լայնորեն չէին արծագանքում, երբ պարբերաբար տեղի էին ունենում հայոց զանգվածային ջարդերը, էլ չենք ասում Ջինովևի և Ռադեկի իսկական քաղաքական գործիչների համար անպատվաբեր վարքագիծ համագործարքը ... հանում «հեղափոխության» հայ ժողովրդի դահիճների, մարդկության դեմ ոճրագործություն կատարած միջազգային հանցագործների հետ:

Սա է նրանց թե՛ մարդ - անհատի, թե՛ քաղաքագետի, թե՛ «հեղափոխականի» իրական դիմագիծը: Պավլովիչի այս բացահայտ հակագիտական և հակապատմական հայեցակետը և անսքող հակահայ դիրքորոշումը անմիջապես մթազնվում է և հերքվում պատմության զարգացման ողջ առարկայական ընթացքով: Պավլովիչին բնավ էլ չէր հրապուրում Արևմտյան Եվրոպայում տեղի ունեցած բողոքի ցույցերը և հանրահավաքները ի պաշտպանություն արևմտահայության, ի բողոք օսմանյան ոճրագործության, որոնք կազմակերպում էին ականավոր հումանիստ հասարակական-քաղաքական և հայասեր գործիչները: Չէ որ արդեն 1900թ. Փարիզի առավել հայտնի քաղաքագետներ և գրականագետներ Անատոլ Ֆրանսը, Ժան Ժորեսը, Ֆրանսիս Պրեսանսեն, Ժորժ Կլեմանսոն և այլոք հիմնադրեցին «Pro Armenia» ամսագիրը, որը իր խմբագիր բանաստեղծ և գրականագետ Պ.Կիլյարի՝ 1896թ. Պոլսում հայերի ջարդերի ականատեսի ջանքերով արագորեն ձեռք բերեց համաեվրոպական ճանաչում: Իսկ 1902թ. Բրյուսելում Ֆրանսիայի, Բելգիայի, Դանիայի ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցավ հայասերների վեհաժողով, որին ողջունեցին և արևմտահայերին կարեկցեցին Եվրոպայի բոլոր վայրերից եկած ժամանակի շատ նշանավոր գործիչներ: 1903թ. փետրվարի 13-ին Փարիզի թատրոններից մեկում կայացավ զանգվածային հանրահավաք ավելի քան 6000 մարդու մասնակ-

ցությամբ Հասագայի խորհրդատուների պատգամավոր Դեստուրնել դե Կոնստանի նախագահությամբ, ուր ելույթ ունեցան Պրեսանսեն, Կոչենը, ժորեսը: Փարիզի հանրահավաքին արձագանքեցին քաղաքակիրթ աշխարհի բոլոր երկրները, առանձնապես Իտալիան: Հռոմում, Միլանում, Ջենովայում հայոց հարցի պաշտպանների շարքում էին այնպիսի անձինք, ինչպիսին էին մարդաբան Սերջին, սոցիոլոգ Տուրատին, բանաստեղծուհի Ադա Նեգրին, Անջելո Գուբերնատիսը, Մոնետան՝ ժամանակի իտալական մտավորականության լավագույն ծաղիկը: Ինչ վերաբերում է Անգլիային, ապա այնտեղ 1903թ. սեպտեմբերի 29-ից մինչև նոյեմբերի 16-ը՝ մոտ երկու ամսվա ընթացքում տեղի ունեցավ 64 հանրահավաք, որից առավել նշանակալիցը տեղի ունեցավ «Saint James Hall»-ում Գլադստոնի հին աշխատակից Ջեմս Բրայսի նախագահությամբ: ԵՎ վերջապես 1903թ հոկտեմբերի 25-ին Փարիզում կայացած խորհրդատուները, որի նիստերը «Կոնտինենտալ» հյուրանոցի դահլիճներում և հանրահավաքը Սարա Բերնարի թատրոնում ընդգծում էին մեկ անգամ ևս « Pro Armenia»-ի միջազգային քարոզչության կարևորությունը¹: Պավլովիչը գերագնահատում է Եվրոպական սոցիալիստների և 2-րդ Ինտերնացիոնալի ներկայացուցիչների սոսկ բողոքներից այն կողմ չանցած գործողությունները, որոնք, բնականաբար, ըստ էության ոչ մի որոշակի նշանակություն չունեցան արդուլիամիոյան ոճիրները կանխելու համար: Դա յուրատեսակ քաղաքական տուրք էր աշխարհի հնագույն, բարձր մշակույթ ունեցող քրիստոնյա ժողովուրդներից մեկին, որի շատ զավակներ զինվորագրվել էին սոցիալիստական մտքին ու գաղափարախոսությանը և դրանով իսկ համերաշխության համար ստեղծել, իրավ թե անիրավ, նախահիմքեր: Ընդհանրապես, Պավլովիչի հիմնովին դատապարտելի բոլոր աշխատությունները լույս տեսան խորհրդային պատմագրության ձևավորման արշալույսին, երբ ի սկզբանե, եթե նկատի չունենանք քաղաքական գործունը, առանց որևէ պատմագիտական նախադրյալների բացարձակապես գերագնահատվում էր և գունազարդվում, անհիմն գովերգվում էր ու մեծարվում Թուրքիայում տեղի ունեցած քեմալական շարժումը՝ դրանից բխող պատմաքաղաքական բոլոր հետևանքներով: Նրա լիովին մերժելի հայացքները և հակապատմական գնահատականները դառնալով յուրատեսակ ուղեմիջ հսկայական ներգործություն ունեցան, գերազանցապես ռուս, ապա և խորհրդահայ առանձին պատմաբանների վրա: Արդուլ-Համիդի ոճրագործությունները արևմտահայության նկատմամբ այնքան էին ակնհայտ, անվիճելի ու աներկբայորեն ապացուցված, որ այս պատմափաստը ընդունում է

¹ А.А. Амфитеатров, Армянский вопрос, с. 21-22.

անգամ Միլլերը Թուրքիային նվիրված իր աշխատություններից մեկում¹: Իր թուրքամետությանը հանդերձ նա գրում էր, թե Աբդուլ Յամիդ 2-րդը արյունոտ սուլթանի տխրահոռչակ պիտակին «արժանացավ» հայ բնակչության մասսայական կոտորածներով, չմոռանալով, սակայն, ավելացնել, որ ահաբեկչությունը իբրև թե տարածվեց նաև թուրք ժողովրդի վրա: Սրանով հեղինակը, ըստ էության, փորձում է հավասարակշռել սուլթանի հայակուլ քաղաքականությունը և կարծեցյալ հետադեմ դիրքորոշումը թուրքերի նկատմամբ, դրանով իսկ զարգացնել այն միտքը, թե բռնապետական համիդյան համակարգը հավասարաչափ տարածվում էր կայսրության տարածքում ապրող բոլոր ժողովուրդների, այդ թվում և թուրքերի վրա: Բայց նա «մոռանում» էր պատմաքաղաքական մի «մանրուք», որ թուրքական արյունոտ վարչակարգում «օրենքը» ամբողջովին ու անվերապահորեն պաշտպանում էր օսմանցուն, միշտ և ամենուր մեղավոր ծանաչում քրիստոնյաներին, այլազգիներին և առաջին հերթին արևմտահայերին: Եթե անգամ ընդունենք թուրքական աշխատավորական զանգվածների սոցիալական ծանր վիճակը, որը պատմական ճշմարտություն է, այնուամենայնիվ, համեմատել արևմտահայերի անմխիթար, դժնդակ վիճակի հետ անիրատես է, հակապատմական, քանզի թուրքերի ծանր դրությունը պայմանավորված էր միայն սոցիալական, մինչդեռ հայերինը՝ քաղաքական, ազգային, կրոնական գործոններով, որոնք պարբերաբար վերապրում էին ջարդեր և կոտորածներ: Այսուհանդերձ, խորհրդային ժամանակաշրջանի պատմաբանը արծանագրելով աբդուլհամիդյան հայատյաց քաղաքականությունը, միաժամանակ անդրադառնում է Սասունի ապստամբության ու այն արյան մեջ խեղդելու պատմափաստերին: Ինչպես մյուս հեղինակների, այնպես էլ Միլլերի պատճառաբանությունները չափազանց մակերեսային են, դեպքերի ու իրադարձությունների մեկնաբանությունները չափավոր ու հպանցիկ:

«Աբդուլ-Յամիդ 2-րդը, գրում է նա, - իրահրեց բախումներ մահմեդականների ու քրիստոնյաների միջև: Այդ սադրանքների զոհը 19-րդ դարի 90-ական թվականների կեսերին դարձավ բազմաչարչար հայ ժողովուրդը: Յայերը Փոքր Ասիայի արևելքում ապրում էին կոմպակտ, գրեթե հոծ զանգվածով: Ի տարբերություն Ստամբուլում (եւ այլ նավահանգստային կենտրոններում) հարստացող հայ կոմպրադորական բուրժուազիայի, հայ գյուղացիությունը ենթարկվում էր ֆեոդալական ու ազգային դաժան ճնշման: Յայ գյուղացիությունը 1877-1878 թ.թ. ռուս-թուրքական պատերազմից հետո հարկադրաբար ենթարկվեց նոր հալածանքների՝ Աբդուլ-Յամիդ 2-րդի կողմից

¹ Миллер Ф.А., Краткая история Турции, ОГИЗ, 1948.

Արևմտյան Հայաստան Բալկանյան թերակղզուց վերաբնակված վտարանդի մահմեդականներից...: Այս սաղրանքների հիման վրա Սասունի շրջանում 1894թ ամռանը բռնկվեց հայերի ապստամբությունը: Աբդուլ-Համիդը, ի պատասխան դրան, Սասուն ուղարկեց «համիդիե» հեծելազորը և այլ զորամասեր մարշալ Ջեքի փաշայի հրամանատարությամբ, հանձնարարելով նրան արյան մեջ խեղդելու ապստամբությունը: Սուլթանի նախարարներից մեկի արտահայտությամբ անհրաժեշտ էր «վերացնել հայոց հարցը հենց հայերի վերացմամբ»: Հայերի մասսայական ջարդերը Սասունում վերածնեցին միջնադարյան մռայլ սարսափները: «Համիդիեի» ջոկատները սպանում էին հայկական գյուղերի ու քաղաքների բնակիչներին, չխնայելով ոչ երեխաներին, ոչ կանանց, ոչ ծերերին: Սասունի կոտորածները տարան տասնյակ հազարավոր զոհեր, իսկ մարշալ Ջեքի փաշան այդ կոտորածների համար պարգևատրվեց շքանշանով: Հաջորդ՝ 1895 թվականին հայոց ջարդեր տեղի ունեցան նաև Էրզրումում, Տրապիզոնում, Բիթլիսում, Խարբերդում, Դիարբեքիրում, Ուրֆայում,...: Հայոց ջարդեր եղան նաև 1896-ին, այս անգամ կայսրության բուն մայրաքաղաք Ստամբուլում, որտեղ տուժեցին հայ բնակչության չքավոր և միջին խավերը¹ Ինչպես տեսնում ենք, հայոց կոտորածների մեջ էլ օրթոդոքս-մարքսիստ պատմաբանը ձգտում է ցուցաբերել գոեհիկ դասակարգային մոտեցում, ընդգծել, թե իբր հայ մեծահարուստները և ամիրաները ոչ միայն խուսափեցին կոտորածից, այլև նրանց կյանքին, ֆիզիկական գոյությանը, էլ չենք ասում ունեցվածքին, հարստությանը ընդհանրապես ոչ մի վտանգ չէր սպառնում, վերջիններս կարծես ապրում էին «ավետյաց» երկրում, որտեղ իբր ապահովված էին մարդու իրավունքները, որը բացարձակապես կեղծիք է մի քանի ակնհայտ գործոնների պատճառով: Նախ, թե Աբդուլ Համիդի, թե նրա կամակատար թուրք բարբարոս ջարդարարների համար հայը պարզապես միշտ էլ հայ էր, անկախ նրա սոցիալական պատկանելությունից: Երկրորդ, թուրք դահիճները կոտորում էին հայ խաղաղ բնակչությանը նաև հարստանալու ու հայերի ունեցվածքին տիրելու, այն զավթելու նպատակով: Հետևաբար, նման տրամաբանական կտրվածքով մոտենալով հարցին, դժվար չէ կռահել, որ նրանց ոչ պակաս չափով ձեռնառու էր հաշվեհարդար տեսնել նաև հայ մեծահարուստների հետ: Իսկ եթե, այնուամենայնիվ, առանձին մեծահարուստներ, իսկապես խուսափեցին թուրքական յաթաղանից, ապա իհարկե, համենայնդեպս ոչ Միլլերի նշած բացահայտ միակողմանի պատճառաբանության հետևանքով: Միլլերը, անշուշտ, սխալվում էր, երբ աբդուլհամիդյան արյունոտ ոճ-

¹ Миллер Ф.А., Краткая история Турции, с. 106-107.

րագործությունների մեջ տեսնում է սոսկ հրահրված բախումներ, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ հավասարակշռելու փորձ, յուրատեսակ ծգտում հավասարապես մեղադրել աբդուլհամիդյան իշխանություններին, մահմեդականներին և քրիստոնյաներին: Իրականում այն ոչ թե «հրահրված բախումներ էին», այլ «հայերին ոչնչացնելու միջոցով հայոց հարցը վերացնելու» խնամքով մշակված ծրագրի իրագործման բարբարոս փորձ: Հայ դատի և հայոց ջարդերի կապակցությամբ Միլլերը անդրադառնում է նաև եվրոպական տերությունների դիրքորոշմանը, որոնք նրա կարծիքով «... առաջվա նման դիվանագիտական միջամտության համար օգտագործում էին Թուրքիայի ներքին խժոժությունները, բայց դրանով,- եզրակացնում է թուրքագետ պատմաբանը, - նրանք (եվրոպական երկրները- Մ.Մ.) ոչ թե բարելավում էին, այլ վատացնում էին սուլթանի կողմից ճնշված ազգերի դրությունը»¹: Անշուշտ, եվրոպայի միջամտությունը գրգռում էր թե սուլթանին, և թե նրա սատրապներին, սակայն պարզ ճշմարտություն է նաև այն, որ դա ինչ որ չափով սամծում էր արյունարբու սուլթանին քրիստոնյա ժողովուրդների ու առաջին հերթին արևմտահայության դեմ ծրագրված ոճրագործություններից: Հեղինակը միանում է, ու թերևս, կիսում խորհրդային ժամանակաշրջանի ռուսաց պատմագրության կողմից ընդունված արդարացի այն տեսակետը, որի հա մածայն մեծ տերությունների միջամտությունը հայերին օգնելու առումով, կրում էր ավելի շատ սիմվոլիկ ու ձևական բնույթ, իսկ նրանց միջև եղած հակասությունները և, ոչ պակաս, անզիջում մրցակցությունը Մերձավոր Արևելքում ու Բալկաններում գերիշխելու համար, մեղմ ասած, բացասաբար էր անդրադառնում արևմտահայության քաղաքական կացության վրա, քանզի դրանից հնտորեն օգտվում էին թուրքական արյունռուշտ կառավարող շրջանները և սաստկացնում իրենց քաղաքականությունը նրանց նկատմամբ: «Հայոց հարցում Անգլիայի միջամտությունը,- գրում է Միլլերը,- արտահայտվեց սուլթանի կառավարությանը հղած մի քանի վերջնագրերի մեջ, որոնք բացի ջարդերի ուժեղացումից, այլ հետևանքներ չունեցան: Ռուսաստանը Անգլիայի հետ ունեցած տարածայնության հետևանքով, ինչպես նաև իր մոտ՝ Կովկասում զգուշանալով ազգային շարժման խրախուսումից արտահայտվեց Արևմտյան Հայաստանի ինքնավարության դեմ: Գերմանիան գրեթե բացահայտորեն պաշտպանում էր Աբդուլ-Համիդի ջարդարարական գործողությունները Հայաստանում (Արևմտյան-Մ.Մ.) ու Կրետեում»²:

¹ Миллер Ф.А., Краткая история Турции, с. 107.

² Миллер Ф.А., Краткая история Турции, с. 108.

Միլլերի տեսադաշտից դուրս են մնացել 90-ական թթ. արևմտահայության կոտորածների հետևանքով Կ.Պոլսում եվրոպայի մեծ տերությունների դեսպանների կողմից մշակված բարենորոգումների նախագծերը, դրանց շուրջ ծավալված քաղաքական սուր պայքարը, որն ավարտվեց անարդյունք, քանզի ոչ ոք լքջորեն, առավել ևս անկեղծորեն մտահոգված չէր օգնության կարիք ունեցող արևմտահայերի ճակատագրով, որովհետև արևմտյան դիվանագիտությունը, որպես կանոն, երեսպաշտ էր ի սկզբանե: Այս հիմնահարցը բնավ էլ չի հետաքրքրում պատմաբանին, մինչդեռ առանց դրա առարկայական վերլուծության գրեթե ամենարին է իրատեսորեն լուսաբանել Թուրքիայի արյունոտ պատմությունը, անաչառությամբ ներկայացնել բռնությամբ հպատակեցված տարբեր ժողովուրդների, առաջին հերթին քրիստոնյաների, գերազանցապես արևմտահայության ծանր ու ողբերգական էջերը: Արևմտահայության դժնդակ կացությունը ուշադրության կիզակետում պահելու, աբդուլհամիդյան հանցագործություններն ավելի խոր ու հիմնարար դատապարտելու փոխարեն, Միլլերը բավարարվում է միայն քննադատական սլաքը ուղղելով եվրոպական երկրների քաղաքականության դեմ, որոնք պարբերաբար օգտագործելով տարբեր առիթներ, ուղղակի միջամտում էին Թուրքիայի ներքին գործերին: Դա Միլլերի համար յուրատեսակ միջոց է, պատեհ առիթ ոչ այնքան պաշտպանելու արևմտահայերին, որքան դատափետելու Արևմուտքին, Թուրքիային ներկայացնելու որպես նրանց զոհ և շահագործման թիրախ: Այս կապակցությամբ պերճախոս է թուրքագետ պատմաբանի տեսակետը Անգլիայի քաղաքականության վերաբերյալ: «Հայոց..և ներծավորարևելյան քաղաքականության մի քանի այլ հարցերում, -գրում է Միլլերը,- դրսևորվեց Անգլիայի նոր կողմնորոշումը: Այժմ Անգլիայի դիվանագիտական միջամտությունը և ռազմածովային ցույցերը իրագործվում էին ոչ թե հօգուտ, այլ ընդդեմ Թուրքիայի: Բրիտանական կառավարությունը բացահայտորեն հեռանում էր օսմանյան կայսրության «ամբողջականության ու անձեռնմխելիության» մասին իր նախկին հայացքից»¹: Թերևս, դա միանգամայն հասկանալի էր, քանզի Անգլիան այդ պատմափուլում պարզապես ձգտում էր նոր հողերի հաշվին ընդլայնել Բրիտանական կայսրության շրջանակները, նաև ի հաշիվ օսմանյան տիրապետության տակ գտնվող տարածքների, որով էլ պայմանավորվեց երկդիմի Ալբիոնի քաղաքական դիրքորոշման ժամանակավոր փոփոխությունը, մանավանդ որ Թուրքիայի հանդեպ իր քաղաքականությունը կտրուկ կերպով փոխել էր նաև Անգլիայի վաղեմի ավանդական մրցակից ու հակառակորդ Ռուսաս-

¹ Миллер Ф.А., Краткая история Турции, с. 108.

տանը: Միլլերը, և ոչ միայն նա, որպես կանոն շեշտը դնում են ոչ թե թուրքական կառավարող շրջանների արյունոտ հանցագործությունների վրա, այլ եվրոպական տերությունների դիվանագիտական փարիսեցիական դիրքորոշման վրա, մինչդեռ կարևորը և զխափորը, ըստ էության, պատճառն է և ոչ թե հետևանքը: Հիմնահարցին պատմական նման մոտեցումը, իհարկե, պատահական չէ, այն ունի քաղաքական հեռագնա նշանակություն՝ ուղղակիորեն և անուղղակիորեն շեղել ուշադրությունը թուրքական ջարդարարների ոճրագործություններից և ուշադրության կիզակետում պահել «քաղաքակիրթ» արևմուտքի սառ անտարբերությունը: Բայց կարող էր արդյո՞ք հանուն հայերի շահերի եվրոպական տերությունների միջամտությունը միշտ ունենալ դրական հետևանք, իսկ բոլոր պարագաներում հայերի շահերի կույր պաշտպանությունը կլիներ արդյո՞ք պետական քաղաքականություն և դիվանագիտություն: Ուստի և անհրաժեշտ է պատմականորեն անջրպետել եվրոպական երկրների քաղաքականությունը սուլթանի հայաջինջ գործողություններից, քանզի նրանց քաղաքական քայլերը կարող էին ուժեղացնել կամ սահմանափակել, բայց ոչ երբեք պատճառ դառնալ օսմանյան կայսրության ազգային ոճրագործ քաղաքականության համար: Ակնհայտ է այս հիմնահարցում Մ. Պավլովիչի և Ա. Միլլերի պատմահայեցողության ընդհանրությունը: Միլլերը նույնպես չի խորանում արևմտահայության հանդեպ Ռուսաստանի կենսագործած քաղաքականության մեջ, մասնավորապես լիովին անտեսում ռուսաց արտգործնախարար Լոբանով-Ռոստովսկու ամերկբա թուրքամետ դիրքորոշումը: Մինչդեռ այս հիմնահարցի լուսաբանումը պատմագիտական առումով կարևոր է ոչ միայն հայոց դատի, այլև Թուրքիայի պատմության ուսումնասիրության համար: Հետևաբար, ռուսաց կայսրության քաղաքականության կտրուկ փոփոխությունը հարկադրեց հայերին նկատի ունենալ ոչ հեռավոր անցյալում իրենց հովանավորելու պատրաստակամությամբ հանդես եկած Ռուսաստանի նոր ուղեգիծը և ապավինել Անգլիային, թախանձագին դիմել Բրիտանական կառավարությանը ճնշում գործադրելու կարմիր սուլթանի վրա ու կանգնեցնելու արդեն հարյուր հազար հայերին կոտորած հանցավոր ձեռքը: Հայ ժողովրդի համար այդ պահին ստեղծված քաղաքական-դիվանագիտական իրավիճակը հիշեցնում էր անծայրածիր օվկիանոսում խեղդվողին, որը այլ ելք չուներնալով դիմում է ծայրահեղ քայլի ու կառչում փրփուրներից ու ծղոտից, թերևս, նախապես համոզված լինելով, որ դրական արդյունքի հավանականությունը հասցված է նվազագույնի: Սակայն նրա հարկադրական այս քայլերը բոլորովին այլ կերպ գնահատեց կայսերական կառավարությունը: Փոխանակ դրա համար հիմնարար պատճառները փնտրելու և գտնելու իր կող-

մից կենսագործած քաղաքականության մեջ, նրա իշխող շրջանները սկսեցին հայերին անհիմն մեղադրել «անջատողականության», մինչև իսկ «դավաճանության» մեջ:

Պարզվեց, որ Ռուսաստանի հայերը «իրավունք» չունեին մինչև իսկ աջակցել Թուրքիայում ապրող իրենց ազգակիցներին, որն էլ առիթ դարձավ նրանց անհիմն «խռովության» մեջ մեղադրելու համար: Յայերին «անջատողականության, խռովության» մեջ մեղադրանքները «հիմնավորելու» համար, արագորեն թխվեց ստահող վարկած այն մասին, թե իբր նրանք ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին ինքնավար Յայաստանի գահը առաջարկեցին Ռուսաստանի բարձրաստիճան անձանցից մեկին և այլ նման առասպելներ: Յատկանշական է, որ այս դատարկությունները մինչև իսկ իրական ընդունելու դեպքում անհնարին էր հայերին մեղադրել խռովության մեջ, որովհետև կարծեցյալ ինքնավար Յայաստանի գահի հնարավոր հանձնունը ռուսական արքունիքի բարձրաստիճանավորներից որևէ մեկին վկայում էր նրանց դեպի Ռուսաստան կողմնորոշվելու, այդ երկրի օգնությամբ օսմանյան կայսրության ճիրաններից ազատագրվելու ակնկալիքների, և ոչ թե մտացածին «անջատողականության» մասին: Ահա թե ինչու Կովկասում հայկական «անջատողականություն» երբեք էլ չի եղել, որովհետև դրա համար չկային անհրաժեշտ հիմքեր, համապատասխան արմատներ ու հող: Այս տեսանկյունից միանգամայն անհիմն է Գուրկո-Կոյաժինի փորձը արդարացնելու 90-ական թթ. Ռուսաստանի արտաքին քաղաքականության սառեցումը հայկական հարցում և այն գլխավորապես բացատրել ու հիմնավորել հայերի՝ Ռուսաստանի օգնությունից հրաժարվելու սին պատմափաստերով: Իրականում ոչ թե հայերն էին «հրաժարվել» Ռուսաստանի օգնությունից, այլ Լոբանով-Ռոստովսկու ջանքերով ռուսաց դիվանագիտությունն էր փոխել իր դիրքորոշումը: Սակայն այս հիմնախնդրում ևս ռուս պատմաբանը ընկնում է հակասության մեջ, քանզի միաժամանակ խոստովանում է, որ «այդ շրջանում նա (Ռուսաստանը-Մ.Ս.) Անդրկովկասում վարում էր ռուսացման քաղաքականություն և բացահայտորեն հանդես էր գալիս Ասիայում այնպիսի տարածքի ստեղծման գաղափարի դեմ, որտեղ հայերը կօգտվեին բացառիկ առավելություններից»¹: Ավելին, մեջ բերելով Լոբանով-Ռոստովսկու պերճախոս միտքը՝ «Ռուսաստանը թույլ չի տա իր սահմանագլխին ստեղծել մեկ այլ Բուլղարիա»², Գուրկո-Կոյաժինը փաստորեն լիովին մերժում է, հերքում իր իսկ տեսակետը, որի համաձայն, իբր Ռուսաստանի քաղաքական դիրքորոշման

¹ ԵՏՅ, Մ., 1926, Կ. 3, Ը. 436.

² ԵՏՅ, Մ., 1926, Կ. 3, Ը. 436.

փոփոխության մեջ մեղավոր էին հայերը: Բուլղարիայի օրինակը և համեմատությունը Հայաստանի հետ, առավել ևս պատմական զուգահեռները այնքան էլ իրատես չէին, թեև հայ և բուլղար ժողովուրդների քաղաքական ճակատագրերում, իհարկե, գոյություն ունեին ընդհանրություններ, սակայն առկա էին նաև տարբերություններ: Գուրկո-Կրյաժինը ուղղակի շեշտը դնում էր իրեն համար անհրաժեշտ ընդհանրությունների վրա, որպեսզի դրանով իսկ արդարացնի իր ոչ հայանպաստ արտաքին քաղաքական դիրքորոշումը: Արյունոտ և մարդակեր սուլթանի հայաջինջ քաղաքականությունը, եվրոպական տերությունների դիրքորոշումը Արևմտյան Հայաստանի համար ծրագրվող բարենորոգումների նախագծերի նկատմամբ և ընդհանրապես նրանց միջև ընթացող դիվանագիտական մրցակցությունը 90-ական թթ. վերստին սրված հայկական հարցի շուրջ համեմատաբար մանրամասնորեն է լուսաբանված Կինյապինայի ու նրա գործընկերների մենագրությունում¹: Համեմայն դեպս, մեզ հայտնի չէ խորհրդային ժամանակաշրջանի ռուս պատմաբանի որևէ աշխատություն, որտեղ ավելի ծավալուն կերպով քննարկված լինի սույն հիմնահարցը: Ավելին, հեղինակների հարցադրումները, անշուշտ ուշագրավ են, պատասխանները՝ հետաքրքիր, թեև, ինչ խոսք, առանձին գնահատականները անընդունելի են և քննադատելի, մասնավաճ, երբ մեկնաբանվում է Ռուսաստանի դիրքորոշումը հայոց հիմնահարցում ընդհանրապես և արևմտահայության համար վերափոխումներ նախատեսվող նախագծի նկատմամբ մասնավորապես: Լիովին ընդունելի են Աբդուլ-Համիդի հայակուլ քաղաքականությանը տրված գնահատականները, նրանց իրավացի տեսակետով սուլթանական բռնատիրական վարչակազմը խտրականություն չդնելով միջոցների մեջ հետևողականորեն ձգտում էր ոչնչացնել արևմտահայությանը: Այդ գործում հայերի «հանդեպ առանձնահատուկ դաժանություն ցուցաբերեց «համիդիեն», որը իր խնդիրը տեսնում էր նրանց (հայերի-Մ.Ս.) ֆիզիկական ոչնչացման մեջ»²: Միաժամանակ մատնանշվում է, որ սուլթանական իշխանությունները Արևմտյան Հայաստանում գավառներ կազմելու ժամանակ այնպես էին բաժանում տարածքը, որպեսզի գավառներից և ոչ մեկում արևմտահայերը չկազմեն բնակչության մեծամասնություն, հենց այդ նպատակով արյունոտ սուլթանը Բալկաններից վերաբնակեցնում էր մահմեդականներին, որպեսզի էլ ավելի սրի հարաբերությունները մի կողմից հայերի, իսկ մյուս կողմից թուրքերի և քրդերի միջև:

¹ Н.С. Киньяпина, В.А. Георгиев, М.Т. Панченкова, В. Шеремет, Восточный вопрос во внешней политике России (конец XVIII - начало XX вв.), М., 1978.

² Սույն տեղում, էջ 260:

Արևմտահայության անտանելի քաղաքական և սոցիալական պայմանները պատմաբանները փաստարկում են եվրոպական և ռուսական դիվանագիտական ներկայացուցիչների հավաստի պաշտոնական վավերագրերով, որն, անշուշտ, կազմում է աշխատության կարևորագույն գիտական արժանիքներից մեկը: Հենվելով հավաստի պատմափաստերի վրա նրանք եզրակացնում են, որ արևմտահայերը, թեև օգնություն էին խնդրում եվրոպական երկրներից, սակայն նրանց պատասխան անտարբերությունը նպաստում էր և թևավորում սուլթանին ու նրա ոճրագործներին իրագործելու արևմտահայերի ֆիզիկական բնաջնջման իրենց ծրագիրը: Ահա ինչու Կինյապինան արևմտահայության ձերբակալությունների ու սպանությունների մեջ, որոնք տեղի ունեցան Սասունում 1890թ., 1893թ. մայիս-հունիսին՝ Անկարայում, և այլուր, տեսնում է ոչ միայն «փոքր» ջարդեր, այլև յուրատեսակ քաղաքական նախերգանք 1894-1896 թթ. մասսայական կոտորածների համար: Այս առնչությամբ Կինյապինան առանձնացնում է Կ.Պոլսում Ֆրանսիայի դեսպան եռանդուն ու ազդեցիկ դիվանագետ Պոլ Կամբոնի գնահատականները, որոնց համաձայն «թուրքերի» վարչական ապաշնորհությունը և նրանց մոլեռանդությունը...հանգեցրին հայկական հարցի ծագմանը¹: Դեսպանը գտնում էր, շարունակում են պատմաբանները, որ «իրադարձությունները Հայաստանում (Արևմտյան-Մ.Մ.) դրսևորեցին լայն վերափոխումների նկատմամբ սուլթանական կառավարության անկարողությունը»²: Միանգամայն օրինաչափ է նրանց պատմագիտական հետաքրքրությունը Անգլիայի քաղաքական դիրքորոշման հանդեպ, քանզի 90-ական թթ., ինչպես արդեն նշվել է, հայոց հարցում բրիտանական կառավարող շրջանները ցուցաբերեցին առանձնակի աշխուժություն և հետաքրքրություն: Աշխատության մեջ հիմնականում ճիշտ է ներկայացվում Ալբիոնի այդպիսի մեծ ակտիվության շարժառիթները և դիվանագիտական նախաձեռնության գլխավոր պատճառները: Խաղարկելով հայոց հարցը անգլիական պետական և քաղաքական գործիչները և բուրժուազիան ցանկանում էին նաև ամրապնդել իրենց երբեմնի անուր տնտեսական դիրքերը Թուրքիայում, որոնք զգալիորեն թուլացրել էին նրա ավանդական մրցակիցներ Ռուսաստանը, ապա նաև Ֆրանսիան և Գերմանիան³: Ահա թե ինչու Լոնդոնի կաբինետը «խաչակրաց արշավանքի» կոչ էր անում թուրքերի դեմ դեռևս 80-ական թ.թ: Սասունի դեպքերից հետո Լոնդոնի մի-

¹ Н.С. Киняпина, В.А. Георгиев, М.Т. Панченкова, В. Шеремет; Восточный вопрос во внешней политике России (конец XVIII- начало XX вв.), М., 1978, с. 260-261.

² Նույն տեղում, էջ 261:

³ Նույն տեղում, էջ 261:

սիրներների կողմից ստեղծված հայկական կոմիտեները աշխուժացնելով իրենց գործունեությունը պահանջեցին Եվրոպայի միջամտությունը Թուրքիայի գործերին, հայոց հարցը քննարկվում էր պառլամենտում¹: Այսպիսով, Անգլիան շահարկելով հայկական հարցը և արևմտահայերին օգնելու պատրվակով, եզրակացնում են նրանք, ծգտում էր կայունացնել իր ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական դիրքերը Թուրքիայում: Դժվար չէ կռահել, որ խորհրդային պատմագրության ներկայացուցիչները միայն այդ տեսանկյունից լուսաբանելով Անգլիայի քաղաքականությունը հայոց հարցում գերազանցապես հետապնդում էին հեռու գնացող պատմաքաղաքական նպատակներ՝ այդ համայնապատկերի վրա արդարացնել 90-ական թ.թ. Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը, հիմնավորել նրա «հայանպաստ» դիրքորոշումը նաև այդ փուլում, որը սակայն, հեռու էր պատմական ճշմարտությունից: Իրենց իսկ կողմից ստեղծված մտացածին հայեցակետը «հիմնավորելու» համար նրանք օգտագործում են օտար և չեզոք աղբյուրներ, որպես հիմք ընդունում եվրոպական գործիչների վկայությունները և գնահատականները: «Չայերը փորձով գիտեին, որ Լոնդոնը իրենց համար չի պայքարի սուլթանի հետ»², որից հետո իրենց այս իրատես գնահատականները ավելի անաչառ ու համոզիչ դարձնելու համար նշում են ամերիկացի միսիոներ Ֆ.Դ. Գրինի կարծիքը. «Ես նկատեցի, ընդգծում էր վերջինս, հայերի բացահայտ ու արագ սառեցումը Անգլիայից հօգուտ Ռուսաստանի, որը այժմ օգնության միակ աղբյուրն է ներկայացվում»³: Անշուշտ, Սասունի կոտորածի ականատես Գրինը միանգամայն ճիշտ է կռահել հայերի տրամադրությունը, իսկություն էր նաև այն, որ Անգլիան հազիվ թե արևմտահայության կացության բարելավման համար դիմեր «խաչակրաց արշավանքի» Թուրքիայի դեմ: Սակայն նրանք ևս չկարողացան հաղթահարել խորհրդային պատմագրության ավանդական տեսակետը և նույնպես փորձեցին Ռուսաստանին հեռու պահել 90-ական թվականների արևմտահայության կոտորածների պատասխանատվությունից, մոռանալով, որ քաղաքականությունը սիրտ չունի, այլ ունի միայն սառը զլուխ և չոր պետական հաշվարկներ: Ահա թե ինչու ոչինչ չի ասվում Լոբանով-Ռոստովսկու բացահայտ թուրքամետ տխրահռչակ քաղաքականության մասին, որը սուլթանի համար լավագույն երաշխիք էր, յուրատեսակ ձեռքերի ազատություն Արևմտյան Չայաստանում զանգվածա-

¹ Н.С. Книжнина, В.А. Георгиев, М.Т. Панченкова, В. Шерemet; Восточный вопрос во внешней политике России (конец XVIII- начало XX вв.), М., 1978, с. 261.

² Նույն տեղում, էջ 261:

³ Նույն տեղում, էջ 261:

յին ջարդեր իրագործելու ուղղությամբ: Ինչ վերաբերվում է Անգլիային, ապա վերջինս թեկուզև իր եսասիրական նպատակների համար զոհն փորձում էր որոշ չափով ծնշում գործադրել Աբդուլ-Յամիդի վրա, որը այս անգամ էլ ոչ մի էական նշանակություն չունեցավ, վերստին եվրոպական տերությունների միջև դեռևս Բեռլինում սրված, ապա խորացված և 90-ական թվականներին շարունակված հակասությունների պատճառով: Սրանք պատմական անժխտելի փաստեր են, որոնք մենագրությունում ընդունվում են մասնակիորեն, քանզի նրա հեղինակների գլխավոր նպատակը՝ Ռուսաստանին արևմտահայերի բարեկամ ներկայացնելն է, նրա արտաքին քաղաքականությունն արդարացնելու միտումը: «ՉՆկատելով» ռուսաց դիվանագիտության անբարենպաստ դիրքորոշումը արևմտահայության հանդեպ, նրանք լավագույն դեպքում, այն էլ առանց մեկնաբանության, նշում են, որ հայոց հարցում ռուսաստանյան կառավարության քաղաքականությունը բարդ էր և շտապում են ավելացնել, որ ֆրանսիական փաստաթղթերում այն գնահատվում է որպես «զգույշ» և «նուրբ»: Այլ կերպ ասած, նրանց կարծիքով 90-ական թթ. արևելյան ճգնաժամի տարիներին Ռուսաստանը շարունակում էր ղեկավարվել իր ավանդական քաղաքականությամբ, որն ուղղված էր իբր քրիստոնյաներին հովանավորելու գործին, քանզի ելնելով Սան-Ստեֆանոյի և Բեռլինի վեհաժողովի դաշնագրերի որոշումներից, նա ոչ միայն պահանջում էր սուլթանից, այլև համառորեն պնդում էր բարենորոգումների անցկացման անհրաժեշտության վրա:

Չետևաբար, ակնհայտ է, որ հայոց նոր շրջանի պատմության համար առանցքային նշանակություն ունեցող այս հիմնահարցում նրանք անտեսեցին նախախորհրդային ռուս այն պատմաբանների աշխատությունները, որտեղ բավականին անաչառ, համակողմանիորեն քննադատվում է Լորանով-Ռոստովսկու ոչ հայանպաստ քաղաքականությունը: Սակայն անտեսելով նրանց մեկնաբանությունները և շարունակելով զարգացնել իրենց հայեցակետը, նրանք այս անգամ հենվում են Կ.Պոլսի ռուսաց հավատարմատար Վ.ժադովսկու պաշտոնական զեկուցագրի վրա, ուր վերջինս զրոն էր Յայաստանի (Արևմտյան-Մ.Մ.) կառավարման համար վերափոխումների արդյունավետ միջոցառումների անցկացման անհրաժեշտության մասին, ընդգծում, թե այն ներկայիս վիճակով երկար գոյություն ունենալ չի կարող: Ժադովսկին, եզրակացնում են ռուս պատմաբանները, զարմանալի նմանություն էր տեսնում Արևմտյան Յայաստանի 90-ական թթ. կացության և այն իրադրության միջև, որ ստեղծվել էր Բուլղարիայում 1876թ: Խորհրդային պատմաբաններն այս առնչությամբ նշում են, որ ժադովսկին նկատի ուներ թուրքական սուլթանի կողմից 1876թ. բուլղարական ապստամբությունը արյան մեջ ծնշելու հայտ-

նի պատմափաստը: Անշուշտ, օսմանյան արյունոռուշտ ռեժիմի դաժանությունը հավասարապես տարածվում էր արևմտահայության և բուլղար ժողովրդի վրա, այս առումով նրանց ճակատագրերը գրեթե նույնանում էին, այստեղ իսկապես պատմությունը կրկնվեց: Սակայն նմանություն էր սոսկ այսքանով, քանզի բուլղար ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը և հատկապես Թուրքիայի նկատմամբ ռուսական զենքի անվիճելի հաղթանակները անմիջապես հանգեցրին պատմական և քաղաքական մեծ իրադարձության՝ Բուլղարիան Բեռլինի վեհաժողովից հետո վերջապես վերականգնեց իր անկախ պետականությունը: Մինչդեռ 90-ական թթ. իրադարձությունները բուլղարովին այլ ընթացք ունեցան, որովհետև Արևմտյան Հայաստանում չանցկացվեցին բարենորոգումներ և ամենակարևորը՝ Ռուսաստանի դիրքորոշումը հայանպաստ չէր, ինչպես հայակողմ էր Բեռլինի վեհաժողովում: Այս տեսանկյունից չափազանց արժեքավոր են ռուսաց դիվանագետների խոստովանությունները, որոնք «...հենվելով սուլթանի ներկայացուցիչների կողմից հաղորդած տեղեկությունների վրա հայտնում էին Պետերբուրգ՝ Թուրքիայում ապրող հայերի հետ Ռուսաստանի կազմում գտնվող հայերի համերաշխության մասին»¹: Բայց Ռուսաստանը քաղաքական այս փուլում օգտագործեց իր բուլղար հզոր լծակները և գործոնները քաղաքական ստատուսքվոն պահպանելու համար, որը առարկայորեն անբարենպաստ էր արևմտահայության համար: Պատմագիտական առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նրանց գնահատականները Ռուսաստանի ու Անգլիայի քաղաքական մոտեցումներին Արևմտյան Հայաստանում կատարվող իրադարձությունների և հայ բնակչության համար նախատեսվող բարենորոգումների նկատմամբ: Չէ՞ որ նրանք փաստորեն ընդունում են և համամիտ են Կ.Պոլսում ֆրանսիական դեսպանի կարծիքին, վերջինս Արևմտյան Հայաստանի իրադարձություններին անդրադառնալով գտնում էր, թե միջազգային տեսանկյունից «հայոց հարցը դա անգլո-ռուսական հակամարտության ձևն է»²:

Հեղինակների իրավացի կարծիքով՝ Անգլիան շահարկելով հայկական հարցը, բնավ էլ, մտահոգված չէր արևմտահայերի ճակատագրով, նրան պարզապես անհրաժեշտ էր թուլացնել Ռուսաստանին, առավել ևս փակել նրա ճանապարհը դեպի Յնդկաստան և Միջերկրական ծով, Թուրքիա ներխուժելու սպառնալիքով ստանալ սուլթանի համաձայնությունը Եգիպտոսը իրեն զիջելու մասին: Իհարկե, այստեղ ըստ էության նոր խոսք չի ասվում, նրանք պարզա-

¹ Н.С. Киняпина, В.А. Георгиев, М.Т. Панченкова, В. Шеремег; Восточный вопрос во внешней политике России (конец XVIII- начало XX вв.), М., 1978, с. 262.

² Նույն տեղում, էջ 263:

պես նոր պատմափաստերով ուղղակի ամրագրում են խորհրդային ժամանակաշրջանի ռուսաց պատմաբանների հայեցակարգը: «Անգլիայի արտաքին գործերի նախարարի տեղակալ Կիմբերլին, Լոնդոնում Ֆրանսիայի դեսպանի հետ զրուցելիս անկեղծորեն ասաց, որ Անգլիան ցանկանում է արագացնել հայոց հարցի լուծումը, որպեսզի չկորցնի իր ազդեցությունը Հայաստանում, ինչպես կորցրեց այն Պարսկաստանում»¹: Եվ մի պատմափաստ, որի միջոցով խորհրդային պատմաբանները վերստին փորձում են իրատեսորեն բացահայտել Անգլիայի քաղաքականությունը:

Ընդհանրապես, հայոց հիմնահարցը խորհրդային ժամանակաշրջանի ռուսաց պատմագրությունը որպես կանոն քննարկում է Ռուսաստանի կենսագործած մերձավոր արևելյան քաղաքականության լույսի ներքո, այն, անշուշտ, ունի իր առավելությունները, ինչպես նաև թյուր կողմերը: Իհարկե, մերձավոր-արևելյան լայն տարապատկերի լուսաբանումը հնարավորություն է ընձեռում ընդհուպ մոտենալ ու պարզել Եվրոպական դիվանագիտության բարդ խաղարկումների բոլոր հակասությունները, նրանց հետապնդած նպատակները, որը, ի դեպ, ուսումնասիրության լայն առումով դուրս էր մնացել նախորդ փուլի պատմաբանների տեսադաշտից: Այս իմաստով էլ Կինյապինայի և իր գործընկերների մենագրության գիտական առավելությունն ակնհայտ է և անվիճելի: Սակայն նման մոտեցումը միաժամանակ երկրորդական պլան էր մղում հայկական հարցը, նրա ուսումնասիրությունը դարձնում հպանցիկ: Այս կապակցությամբ ուշագրավ են գրքում տեղ գտած պատմագիտական դատողությունները Եվրոպական տերությունների քաղաքականության մասին հայոց հարցում, մանավանդ որ վերջիններս արդեն բաժանվել էին ռազմաքաղաքական երկու խմբավորումների՝ ռուսֆրանսիական և եռյակ միության (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Իտալիա), միայն Անգլիան էր, որ այդ պահին կենսագործելով «փայլուն չեզոքության» քաղաքականություն, անհրաժեշտություն չէր զգում և հարկ էլ չէր համարում մտնելու և գործակցելու որևէ խմբավորման հետ: Եվ միանգամայն օրինաչափ է, որ «Անգլիայի ծրագրերին համատեղ հակազդում էին երկու կառավարությունները (ֆրանսիական և ռուսական-Մ.Մ.)... նրանք կանգնած էին սուլթանի վրա դիվանագիտական ճնշում գործադրելու օգտին, գործը չհասցնելով Եվրոպայի զինված միջամտության»²: Հետևաբար, մեկնաբանությունը պարզ է ու հստակ՝ ի հակադրություն Լոնդոնի պնդման

¹ Н.С. Киняпина, В.А. Георгиев, М.Т. Панченкова, В. Шеремет; Восточный вопрос во внешней политике России (конец XVIII- начало XX вв.), М., 1978, с. 264.

² Նույն տեղում, էջ 264:

ընդլայնել հայոց հարցը և քննարկել եվրոպական վեհաժողովի շրջանակներում, Ռուսաստանը և Ֆրանսիան ծագում էին տեղայնացնել այն՝ Փոքր Ասիայի հայ բնակչության համար բարենորոգումներ անցկացնելու միջոցով: Անգլիական կառավորող շրջանները լավ գիտակցում էին, որ իրենց կանխագծումները հիմնականում խոչընդոտվում են Ռուսաստանի բռնած անհաշտ դիրքորոշման պատճառով: Ահա ինչու «Անգլիան 1894թ. դեկտեմբերին, փորձելով թուլացնել ռուս-ֆրանսիական միասնությունը. որոշեց հայկական ու եգիպտական հարցերում համաձայնության գալ Ռուսաստանի հետ: Նա (Անգլիան-Մ.Ս.) առաջարկեց Պետերբուրգին «կարգ սահմանելու» նպատակով ռուսական զորքերը մտցնել Արևմտյան Հայաստան:

Ռուսաստանը իր կողմից պետք է ճնշում գործադրեր Ֆրանսիայի վրա, համոզելու նրան հրաժարվելու անգլիական քաղաքականությանը եգիպտոսում դիմակայելուց: Ռուսաստանի կառավարությունը բացահայտելով Լոնդոնի սադրիչ մտահղացումը չընդունեց նրա ծրագիրը»¹: Սակայն մենագրությունում չի նշվում, առավել ևս չի հիմնավորվում կամ լուսաբանվում, թե, այնուամենայնիվ, ինչու էր անգլիական առաջարկը սադրիչ, ինչով էր անընդունելի և ինչու էր վերջապես հակասում Ռուսաստանի շահերին: Չէ՞ որ ընդունելով Անգլիայի առաջարկը Ռուսաստանը կարող էր առանց վերջինիս հետ հակամարտության, հատկապես առանց մեծ ջանքերի ու զոհաբերության ամրանալ Արևմտյան Հայաստանում, որին նվաճելու նպատակով նա մեկ անգամ չէր պատերազմել Թուրքիայի դեմ, անհաջող փորձեր կատարել այդ տարածքում գերիշխելու համար, որը հատկապես երևաց հետագայում՝ առաջին աշխարհամարտի տարիներին, երբ ռուսական բանակը ոչ առանց դժվարության կարողացավ հաստատվել Արևմտյան Հայաստանի որոշ շրջաններում: Եթե անգամ ենթադրենք, որ քաղաքական նման իրադարձությունների ներքո Ֆրանսիան կարող էր հեռանալ Ռուսաստանից, ապա դա էլ քիչ էր հավանական, քանզի ռուսաց կայսրությունը որպես կայուն դաշնակից և հակակշիռ ուժ նրան խիստ անհրաժեշտ էր սպառնացող ահեղ, գլխավոր հակառակորդին՝ Գերմանիային դիմակայելու և արագ մոտեցող ու անխուսափելիորեն հասունացող ագրեսիան կանխելու կամ նրա դեմ հաջողությամբ պայքարելու համար: Ռուսաստանից Ֆրանսիայի հնարավոր, բայց քիչ հավանական հեռացումը անխուսափելիորեն կարող էր փոխհատուցվել ռուս-անգլիական մերձեցմամբ, որը կունենար ոչ պակաս կարևոր ռազմաքաղա-

¹ Н.С. Княпина, В.А. Георгиев, М.Т. Папченко, В. Шеремет; Восточный вопрос во внешней политике России (конец XVIII- начало XX вв.), М., 1978, с. 264-265.

քական նշանակություն: Պարզապես վերստին անտեսվում է Ռուսաստանի իրական դիրքորոշումը Թուրքիայի հանդեպ, որը հանգեցվում էր, ինչպես արդեն ընդգծվել է, վերջինիս քաղաքական ստատուս-քվոյի պահպանմանը: Ահա թե ինչու էին ֆրանսիական դիվանագետները Ռուսաստանի քաղաքականությունը գնահատում «զգույշ և նուրբ», չէ որ առճակատումը հայոց հարցում Անգլիայի դեմ շարունակվում էր, իսկ ռազմաքաղաքական դաշինքը Ֆրանսիայի հետ մնում էր կայուն ու ամուր:

Ինքնին հասկանալի է, եթե Անգլիայի նման առաջարկությունը Ռուսաստանին լիներ Բեռլինի վեհաժողովի նախօրյակին, առավել ևս դրանից անմիջապես հետո, ապա ռուսաց դիվանագիտությունը չէր հապաղի օգտվելու ընծեռած բարենպաստ հնարավորությունից, որովհետև այն ժամանակ այդպիսին էր նրա քաղաքական դիրքորոշումը Թուրքիայի նկատմամբ: Ի վերջո, հայոց հարցի շուրջ ծավալված դիվանագիտական մրցապայքարում, փաստորեն, հաղթանակեց, ինչպես իրավացիորեն նշվում է մենագրությունում, ռուսֆրանսիական տեսակետը, որոնց մշակած նախագծի համաձայն շուտով երեք տերությունների՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի ու Անգլիայի հյուպատոսությունների ներկայացուցիչները երզրումից մեկնեցին Բիթլիս հետաքննելու Սասունում կատարված արյունալի ու ողբերգական դեպքերը: Ռուսաստանը ներկայացնում էր գնդապետ Պրժևալսկին: Ռուսաստանը, ըստ հեղինակների տեսակետի, ձգտելով Արևելքում որքան հնարավոր է արագ հասնել «խաղաղության» կամ էլ «խաղաղեցնել» կողմերին իր ներկայացուցիչներին հրահանգավորել էր «չարել հարաբերությունները, ինչպես հայերի, այնպես էլ թուրքական հանձնաժողովի հետ»¹: Այդպիսի «չեզոքությունը» ձեռնտու էր արյունռուշտ սուլթանին, քանզի նման քաղաքական դիրքորոշմամբ զոհը՝ արևմտահայերը և դահիճը՝ թուրքական ոճրագործ ռեժիմը դրվում էին միևնույն հարթության վրա, այլ կերպ ասած, հավասարության նշան էր դրվում նրանց միջև: Սակայն կարծես համոզվելով այդ «չեզոքության» անհեռանկարայնության մեջ Ռուսաստանի արտգործնախարար Գիրսը միաժամանակ մատնանշում էր, որ «... մենք չենք ցանկանում, որպեսզի մեզ կասկածեն, թե մենք ձգտում ենք թաքցնել թուրքական վարչության գործողությունները, որին անկարելի է չմեղադրել հայկական բնակչության նկատմամբ դաժան հաշվեհարդար տեսնելու մեջ»²: Գիրսի այս հայտարարությունը ուներ սոսկ քաղաքական իմաստ, դա ավելի շուտ դիվանագի-

¹ Н.С. Книжнина, В.А. Георгиев, М.Т. Панченкова, В. Шеремет; Восточный вопрос во внешней политике России (конец XVIII- начало XX вв.), М. 1978. с. 265.

² Նույն տեղում, էջ 265:

տական քայլ էր համաշխարհային հասարակական կարծիք ստեղծելու համար, այն, առավել ևս, դրդված էր Ռուսաստանի հանդեպ արևմտահայության դեռևս պահպանված վստահությունը չկորցնելու մտավախությունից: Գրքի արժանիքներից մեկն էլ այն է, որ այնտեղ ուշադրությունը սևեռված է հայոց հիմնահարցի շուրջ ծավալված դիվանագիտական սուր պայքարին, որն անզիջում ընթանում էր եվրոպական երեք տերությունների ներկայացուցիչների և սուլթանական կառավարության միջև: «Յետաքննության ընթացքում պարզվեց հայերի ծանր տնտեսական դրությունը... Եվրոպական պատվիրակներին հաջողվեց պարզել, որ անկարգությունների մեջ հենց հայերի մեղսակցության մասին սուլթանի պնդումներին հակառակ, սպանությունները կատարել էին կանոնավոր բանակի զինվորները և «համիդիեի» զնդերը: Եվրոպական ներկայացուցիչները մատնանշում էին հայկական վիլայեթների վարչության արմատական վերակառուցման անհրաժեշտության մասին»¹: Սակայն արևմտահայության վիճակը ծանր էր ոչ միայն տնտեսական առումով, անտանելի էր նրա կացությունը քաղաքական ու կրոնական տեսակետից: Եվրոպական տերությունների ներկայացուցիչների եզրակացությունը ընդհանուր առմամբ հստակ էր ու որոշակի՝ նախ, սուլթանական իշխանությունները ոճրագործություններ են կատարել Սասունի խաղաղ բնակչության նկատմամբ, և երկրորդ, հայկական վիլայեթներում բարենորոգումները անհրաժեշտ են ու անխուսափելի: Այդպիսի եզրակացությունը, բնական է, պետք է անհանգստացներ Աբդուլ-Յամիդին, սուլթանը որոշեց իրեն հատուկ խորամանկ խուսանավումներով խառնել եվրոպական դիվանագետների խաղաքարտերը և դրանով իսկ ծախողել բարենորոգումներ անցկացնելու նրանց մտադրությունները: Սուլթանը Կ.Պոլսի անգլիական դեսպանին հավաստիացրեց, որ ինքը հայոց վիլայեթներում բարեփոխումներ անցկացնելու նպատակով արդեն ստեղծել է հատուկ հանձնաժողով, ուստի և «ավելորդ» է հայերի հանդեպ եվրոպական դեսպանությունների «հովանավորությունը»²: Սակայն դրանք սոսկ դատարկ խոսքեր էին և ուրիշ ոչինչ, և միանգամայն տրամաբանական է, որ «երեք տերությունների պատվիրակները չհավատացին Աբդուլ Յամիդ II-ի խոստումներին»³: Ավելին, «նրանք (Անգլիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի ներկայացուցիչները-Մ.Մ.) 1895 թ. ապրիլին սուլթանին հանձնեցին մի նախագիծ, որտեղ բարենորոգումներ անցկացնելու համար

¹ Н.С. Книпянина, В.А. Георгиев, М.Т. Панченкова, В. Шеремет; Восточный вопрос во внешней политике России (конец XVIII- начало XX вв.), М., 1978, с. 265.

² Նույն տեղում, էջ 265:

³ Նույն տեղում, էջ 265:

առաջարկվում էր նշանակել գերագույն կոմիսար...»¹: Խորհրդային պատմաբանները ճիշտ կռահելով սուլթանի նպատակները մատնանշում են, որ նա սուկ հասարակական կարծիքը փարատելու միտումով կատարեց որոշ զիջումներ, մասնավորապես Պետերբուրգում Թուրքիայի նախկին դեսպան Շաքիր փաշային նշանակեց գերագույն կոմիսարի պաշտոնում, հանեց Բիթլիսի վալուն (նահանգատիկն), ներում շնորհեց դատապարտված ու ձերբակալված հայերին: Եվ սուլթանը, կարելի է ասել հասավ իր նպատակին, քանզի 1895թ. հունիսին հանձնաժողովն ավարտեց իր աշխատանքը, իսկ Կ.Պոլսի՝ Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի դեսպանները սկսեցին զբաղվել բարենորոգումների նախագծի մշակմամբ, որի հիմնադրույթը մշակվեց ֆրանսիական կառավարության կողմից²: Մենագրությունում ուշադրություն է դարձվում ոչ միայն բարենորոգումներ անցկացնելու համար մշակված նախագծին, այլև նրա շուրջ ծավալված դիվանագիտական սուր և անզիջում պայքարին ու այս առնչությամբ կատարվում է ուշագրավ եզրահանգումներ, որոնք, ի դեպ, հիմնականում համահնչուն են խորհրդային ժամանակաշրջանի պատմագրության մեջ քաղաքացիություն ստացած գնահատականներին: Կ.Պոլսի եվրոպական դիվանագետները 1895 թ. մայիսի 11-ին Աբդուլ Չամիդին հուշագրի հետ միասին հանձնեցին իրենց մշակած նախագիծը, որը «նախատեսում էր Արևմտյան Չայաստանի վեց վիլայեթներում (Բիթլիսի, Վանի, Երզրումի, Սվասի, Դիարբեքի, Խարբերդի) անցկացնել վարչական, դատական, ֆինանսական բարենորոգումներ, որոնք պետք է կանխարգելեին թուրքական իշխանությունների կամայականությունները և հայ ժողովրդին երաշխավորեին կյանքի ու գույքի անվտանգության ապահովում»³: Թեև մշակված նախագիծը ուներ վերին աստիճանի սահմանափակ բովանդակություն և լավագույն դեպքում կարող էր նվազագույն չափով բավարարել արևմտահայության տարրական իրավունքները, այնուամենայնիվ, «1895 թ. հունիսի 13-ին Թուրքիան մերժեց դեսպանների խնդրանքը, ...այն համարելով ինքնիշխանության խախտում»⁴: Իր հերթին Աբդուլ-Չամիդը տերությունների ներկայացուցիչներին հանձնեց բարենորոգումներ անցկացնելու նախագծի վերաբերյալ պատասխանը, որը, ինչպես և սպասվում էր, կազմված էր վերին աստիճանի անորոշ, առանց դրանց իրագործման որևէ երաշխիքի, ուստի

¹ Н.С. Книпина, В.А. Георгиев, М.Т. Панченкова, В. Шеремет; Восточный вопрос во внешней политике России (конец XVIII- начало XX вв.), М., 1978, с. 265.

² Նույն տեղում, էջ 266:

³ Նույն տեղում, էջ 266:

⁴ Նույն տեղում, էջ 266:

և «առաջացրեց, ինչպես հայ բնակչության, այնպես էլ եվրոպական կառավարությունների դժգոհությունը»¹: Հատկապես խիստ անհաշտ դիրք էին գրավել բրիտանական կառավարող շրջանները: «Անգլիան այս պահից անցնում է սուլթանի հանդեպ սպառնալիքների քաղաքականությանը»²: Այս միտքը հիմնավորվում է Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Հանտոյի բառերով, որի համաձայն «Լորդ Սոլսբերին դիվանագիտական ընդհարման ֆազը համարեց ավարտված և առաջարկեց անցնել հարկադրական գործողությունների»³: Այդ պատճառով միանգամայն տրամաբանական է, որ մենագրությունում ուշադրություն է դարձված անգլիական պառլամենտում 1895 թ. օգոստոսի 15-ի Սոլսբերիի ելույթի այն հատվածին, որը վերաբերվում էր հայոց հիմնահարցին և եվրոպական տերությունների քաղաքականությանը թուրքիայի նկատմամբ: Սոլսբերին իր ցասկոտ ճառով հարձակվելով սուլթանի վրա ոչ միայն ընդգծեց հայկական հիմնահարցում Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի լիակատար հաներաշխությունը, ոչ միայն հիշեցրեց, որ թուրքիայի անկախությունը պարզապես հենվում է եվրոպական տերությունների կողմից այդ անկախությունը պահպանելու ցանկությունների վրա, այլև զգուշացրեց, որ թուրքիայի քաղաքականությունը հայոց հարցում կարող է հարկադրել եվրոպային մերժել սուլթանին՝ պաշտպանելու թուրքական պետության արհեստական գոյությունը: Անշուշտ, իրավացի են հեղինակները, նշելով որ «Սոլսբերիի հայտարարությունը երեք տերությունների միասնության մասին պարզապես չէր համապատասխանում իրականությանը»⁴: Իսկապես, այն ավելի շատ դիվանագիտական հնարք էր, ցանկալին իրականություն ներկայացնելու մտացածին հայտարարություն, քանզի, թեև Անգլիան և Ռուսաստանը հայոց հարցում հանդես էին գալիս համատեղ, այսուհանդերձ, տարբեր էին դրա լուծման եղանակները: Այլ կերպ ասած, տարածայնությունները ավելի խորն էին, քան շփման եզրերը: «Տերությունների միջև հակասություններն այնքան էին ակնհայտ, որ չվստահելով Անգլիային Ֆրանսիան և Ռուսաստանը չպաշտպանեցին թուրքիայի գործերին զինված միջամտության վերաբերյալ նրա պլանները»⁵: Իսկ ոճրագործ թուրքական կայսրությունը իր արյունոտ սուլթան Աբդուլ-Համիդի գլխավորությամբ օգ-

¹ Н.С. Княпина, В.А. Георгиев, М.Т. Панченкова, В. Шеремет; Восточный вопрос во внешней политике России (конец XVIII- начало XX вв.), М., 1978, с. 266.

² Նույն տեղում, էջ 266:

³ Նույն տեղում, էջ 266:

⁴ Նույն տեղում, էջ 266:

⁵ Նույն տեղում, էջ 266-267:

տագործելով եվրոպական տերությունների միջև եղած մշտական տարածայնությունները և հակասությունները այս անգամ արդեն մայրաքաղաքում՝ Կ.Պոլսում կազմակերպեց հայերի նոր կոտորած: «Կոտորածի համար,- նշում են պատմաբանները,- առիթ ծառայեին 1895թ. սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 2-ը շարունակվող հայերի խաղաղ ցույցերը, որոնք պահանջում էին նորմալացնել իրենց կյանքը»¹: Թուրքիայի նոր բռնությունները հարկադրեցին եվրոպական երեք տերություններին վերստին դիմել սուլթանին, այս անգամ նրանից պահանջելով «անհապաղ բարենորոգումներ անցկացնելու»²: Եվրոպական դիվանագիտության այս միջամտությունը նկատի ունենալով սուլթանը նորից սկսեց խուսաճալել և 1895 թ. հոկտեմբերի 20-ին իր հրամանագրով հաստատեց Բարձր Դռան կողմից հրատարակված բարենորոգումների նախագիծը: Այս փաստաթուղթը ևս, նրանց ընդունելի գնահատմամբ, սոսկ թղթի կտոր էր, քանզի օգտագործելով Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության Ասիական դեպարտամենտի պաշտոնական հաշվետվությունները եզրակացնում են, որ հայերի նկատմամբ բռնությունները շարունակվեցին նաև սուլթանի շնորհագրից հետո: Այդպիսի բռնություններ տեղի ունեցան Տրապիզոնում, Դիարբեքիում, Էրզրումում, Սարաչում, իսկ Վանը և նրա ծայրամասը 1896 թ. հունիսի ընթացքում վերածվեց ավերակների, այդ շրջանում ոչնչացվեց ու սրի քաշվեց ավելի քան 20 հազար հայ բնակիչ: Հանրագումարի բերելով 1894-1896 թթ. արևմտահայերի համար ողբերգական դեպքերը, նրանք նույնպես արձանագրում են, որ Թուրքիայի բռնությունների հետևանքով կոտորվեցին շուրջ 300 հազար հայեր: ³: Կ.Պոլսում հայկական ջարդերի կապակցությամբ անգլիացի հայասեր Գլադստոնը, նշել են մեծագործության հեղինակները, Աբդուլ-Համիդին անվանեց մարդասպան սուլթան: Իսկ Անգլիայի կառավարող շրջանները օգտվելով արևմտահայության դեմ ձեռնարկված նոր բարբարոսություններից, 1896 թ. հոկտեմբերին վերստին առաջարկեցին եվրոպական դեսպանների մակարդակով գումարել վեհաժողով և քննարկել բարենորոգումների մասին հարցը: Անգլիան միաժամանակ շարունակում էր պնդել սուլթանի դեմ ինտերվենցիա կազմակերպելու նպատակահարմարության մասին: Խորհրդային պատմաբանները, քննարկելով անգլիական առաջարկները և նկատի ունենալով, որ նրա ռազմա-նավերը հաժանավում էին Միջերկրական ծովում և Դարդանելի նե-

¹ Н.С. Княпина, В.А. Георгиев, М.Т. Панченкова, В. Шеремет; Восточный вопрос во внешней политике России (конец XVIII- начало XX вв.), М., 1978, с. 266-267.

² Նույն տեղում, էջ 267:

³ Նույն տեղում, էջ 267:

դուցում, եզրակացնում են, թե Մեծ Բրիտանիայի ռազմածովային բացահայտ առավելությունները լուրջ վտանգ էին ներկայացնում, ոչ միայն Թուրքիային, այլև եվրոպական տերություններին: Նրանք այս հարցում էլ հենվում են Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Յանտոյի գնահատականի վրա, որը Անգլիայի առաջարկը դիտեց որպես մի փորձ «ազդել հայերի ներքին շարժման վրա և գործել ի վնաս Ֆրանսիայի և Ռուսաստանի շահերի»¹: Իրատես է նաև այն տեսակետը, թե «անգլիական նախագիծը հատկապես անհանգստացրեց Ռուսաստանին: Նրա փոքրաթիվ և վատ զինված ռազմաճակատները զգալիորեն զիջում էին անգլիական նավերին»²: Ահա թե ինչու ռուսաց կառավարությունը մի կողմից համաձայնվելով Թուրքիայում բարենորոգումների նախագծի քննարկմանը, մյուս կողմից հրաժարվում էր սուլթանի դեմ ձեռնարկվելիք հարկադրական բուլոլ միջոցառումներից: Պատմագիտական առումով հետաքրքիր է տեսակետը նաև այն մասին, թե ինչու, երբ և ինչ առնչությամբ մեծ տերությունները մի կողմ թողեցին հայկական հարցը: Նրանց պատասխանը համոզիչ է՝ Եվրոպան ժամանակավորապես դադարեցրեց հայոց հարցի քննարկումը կրետեում ծագած ապստամբության կապակցությամբ³:

Մերձավորարևելյան ճգնաժամի ու եվրոպական մեծ տերությունների հակամարտությունների լույսի ներքո 90-ական թթ. հայկական բարենորոգումների հիմնախնդիրներին անդրադարձել են նաև «Դիվանագիտության պատմություն» (հ. II) աշխատության⁴ հեղինակները, որոնց սթափ և զգաստ, հակիրճ ու հավասարակշռված գնահատականները արժանի են մանրակրկիտ քննախոսության: Նախ, նրանք ամենայն որոշակիությամբ ու գիտական անաչառության սահմաններում հիմնականում փաստարկված ընդգծում են, որ մեծ տերություններից և ոչ մեկը անկեղծորեն չահագրգռված չէր հայկական բարենորոգումների իրագործման մեջ, հիմնավորում այն կարևոր տեսակետը, թե խոշոր տերությունների դիվանագետները և կառավարող շրջանները այս ամենը օգտագործում էին սուկ որպես պատրվակ, միջոց օսմանյան կայսրության վրա ճնշում գործադրելու, սուլթանից զիջումներ կորզելու նպատակով: Հետևաբար, հայ ժողովրդի ճակատագիրը ընդհանրապես, արևմտահայությանը մասնավորապես, բնավ էլ, չէր հետաքրքրում «քաղաքակիրթ»

¹ Н.С. Киняпина, В.А. Георгиев, М.Т. Панченко, В. Шеремет, Восточный вопрос во внешней политике России (конец XVIII- начало XX вв.), М., 1978. с. 268.

² Նույն տեղում, էջ 268:

³ Նույն տեղում, էջ 268:

⁴ "История дипломатии" М. 1963; т. II с. 333-338.

Եվրոպայի դիվանագիտությանը: Այս տեսակետը որոշ մասնակի շեղումներով ու վերապահումով համընդհանուր էր և բնորոշ, ինչպես ռուսաց, այնպես էլ խորհրդահայ պատմագրության համար: «Դիվանագիտության պատմության» մեջ իրավացիորեն մատնանշված է, որ ոչ միշտ էր Թուրքիայում ժայթքող ազգային-ազատագրական շարժումը և ոչ էլ բուլղո ղեպքերում սուլթանական կառավարության արյունոտ հանցագործությունները նրան կանգնեցրել միջազգային բնույթի դժվարությունների և բարդությունների առջև: Այն գերազանցապես կախված էր մեծ տերությունների ղեկավար շրջաններից, եթե նրանց շահերը և եսասիրական նպատակները տվյալ քաղաքական պահին չէին պահանջում օգտագործել օսմանյան կայսրության ներքաղաքական ճգնաժամը, այնժամ ազգային պայքարը պարփակվում էր նրա ներսում և սարսափելի ողբերգությունները, նողկալի հաշվեհարդարները, որոնք կենսագործվում էին սուլթանների կողմից իրենց ոչ թուրք հպատակների նկատմամբ, քչերին էր անհանգստացնում Եվրոպայում:

Դեպքերը այլ ընթացք էին ստանում և բուլղորովին ուրիշ ուղղությամբ զարգանում, երբ այս կամ այն տերության շահերը նրան դրդում էին միջամտել օսմանյան կայսրության գործերին: Այնժամ տարբեր օղակներով, ներառյալ հյուպատոսային և դեսպանական լրատվությունը, մամուլի էջերը հեղեղվում էին թուրքական գազանությունների նկարագրություններով, Թուրքիայում հալածվող քրիստոնյա բնակչության նկատմամբ համակրանքի արտահայտություններով: Մամուլը, այսպիսով, ստեղծում էր հասարակական կարծիք, հող նախապատրաստում արտաքին քաղաքականության հիմնական գործիքի՝ դիվանագիտության գործընթացի համար:

«Դիվանագիտության պատմության» հեղինակները «սուլթանների կայսրության մեջ եղած ներքին բարդությունների թվին, որոնք հանգեցրին միջազգային քաղաքական ճգնաժամի», դասեցին անցյալ հարյուրամյակի վերջին տեղի ունեցած «հայկական ազգային շարժման վերելքը»¹: Նրանք դա գլխավորապես պայմանավորում են բրիտանական դիվանագիտության գործունեությամբ, որը միջամտելով Թուրքիայի գործերին, որպես ձևական հիմնավորում օգտագործեց 1878 թ. կնքված Բեռլինի դաշնագրի արևմտահայությանը վերաբերող 61-րդ հոդվածը: Բացահայտելով եվրոպական, առաջին հերթին անգլիական դիվանագիտության փարիսեցիությունը հայկական հարցում, նրանք միաժամանակ հպանցիկորեն նշում են հայկական կոտորածների և արևմտահայության ինքնապաշտպանության մասին:

¹ "История дипломатии" М., 1963, т. II, с. 333.

«Անգլիական կառավարությունը հույս ուներ հօգուտ հայերի իր միջամտությամբ վախեցնել սուլթանին, որպեսզի հարկադրի նրան հաշտվելու Եգիպտոսի ռազմակալման հետ և ցարական ու կայզերական բարեկամությունը փոխարինի բրիտանական բարեկամությամբ: Այսպիսով, նա հուսով էր թուրքիային վերստին ենթարկել անգլիական ազդեցությանը, ինչպես դա եղել էր Պալմերստոնի ու Դիզրայելի ժամանակ»¹: Յետևաբար, լիովին պարզաբանված է անգլիական դիվանագիտության «հայամետ» համակրանքի իսկական նպատակները: Երկրորդ, «Դիվանագիտության պատմության» հեղինակների կողմից անվերապահորեն ընդունվում է արևմտահայության քաղաքական, սոցիալ-տնտեսական, ազգային-կրոնական դժնդակ կացությունը սուլթանական լծի ներքո ընդհանրապես, արդու-համիդյան արյունոտ վարչաձևի տարիներին հատկապես, որի դեմ ազատագրական անհավասար պայքար էր մղում հայ ժողովուրդը: «Ներքին կարգի տարբեր պատճառներ, -նշում են նրանք,- 90-ական թ.թ. սկզբներին ակտիվացրին հայ ժողովրդի ազգային պայքարը: Ի պատասխան՝ սուլթան Աբդուլ-Համիդը կազմակերպեց հայ բնակչության մասսայական կոտորած՝ Փոքր Ասիայի մի շարք վայրերում, իսկ այնուհետև իր կայսրության բուն մայրաքաղաքում»²: Յատկանշական է, որ նրանց կողմից հիշատակվում է Կ.Պոլսի օսմանյան բանկի վրա 1896թ. օգոստոսի 26-ին հայ ազատամարտիկների ձեռնարկած հանդուգն գրոհը և շենքի գրավումը, որն, ի դեպ, մեծ աղմուկ և խառնաշփոթություն առաջացրեց ոչ միայն սուլթանի դիվանում, այլև եվրոպական գրեթե բոլոր դեսպանատներում, որով հետև հենց այդ՝ աշխարհի խոշորագույն բանկերից մեկում էին պահվում միջազգային ֆինանսական օլիգարխիայի կապիտալները: «Ի պատասխան բանկի գրավման, իշխանությունները և մահմեդական հոգևորականությունը կազմակերպեցին հայերի կոտորած Ստամբուլի յուրմպեն-պրոլետարիատի ձեռքբերով»³: «Դիվանագիտության պատմությունը» այն եզակի աշխատություններից է, որտեղ խոսք է գնում թեկուզև շատ ու շատ հպանցիկ այդ բանկի գրավման մասին, առանց լայնորեն հիշատակելու այդ հերոսական քայլի իմաստը և նպատակը: Երրորդ, «Դիվանագիտության պատմության» մեջ առարկայական մոտեցում է ցուցաբերվում ռուսական դիվանագիտության դիրքորոշման և գործունեության նկատմամբ, որովհետև ընդունվում է, որ Ռուսաստանի քաղաքական կեցվածքը 90-ական թ.թ. հայկական բարենորոգումների հիմնահարցում, մեղմ ասած,

¹ "История дипломатии" М., 1963, т. II, с. 334.

² Նույն տեղում, էջ 333:

³ Նույն տեղում, էջ 336:

հայանպաստ չէր, որը հավաստվում է անառարկելի պատմափաստերով: Նկատի է առնվում անգլիական դիվանագիտության կեղծ թե իրավ առաջարկը Թուրքիան բաժանելու մասին, որը կտրականապես մերժվեց ռուսաց կայսրի կողմից: «Ես վճռականապես դեմ եմ, - ասում էր Նիկոլայ II-ը,- Անգլիայի հետ նման համաձայնության: Դա գործնականում կլիներ Թուրքիայի աստիճանական բաժանման առաջին քայլը»¹: Պատմական զուգահեռներ անցկացնելով, «Դիվանագիտության պատմության» հեղինակները կատարում են պատկերավոր և ճիշտ եզրակացություն, իրավացիորեն գտնելով, որ «Նիկոլայ I-ի Չամիլտոն Սեյմուրի հետ ունեցած գրույցի ժամանակից Պետերբուրգի և Լոնդոնի դերերը փոխվեցին»²: Նրանց իրատես կարծիքով ցարական կառավորությունը այդ պատմափուլում առանձնապես շահագրգռված չէր Արևմտյան Չայաստանը կայսրությանը բռնամիակցելու մեջ: Այս տեսակետը հիմնավորվում է անգլիական բարձրաստիճան կառավարող շրջանների առաջարկությամբ, որի նպատակն էր Ռուսաստանին շահագրգռելու, նրան զիջումներ կատարելու միջոցով ոչ միայն հաղթահարել երկկողմանի հակամարտությունները, այլև իրագործել հետապնդած ծրագրերը: Հիմք ընդունելով անգլիական հավաստի աղբյուրները, հատկապես վարչապետներ Ռոզբերիի ու Սուլբերիի ելույթները, հայտարարությունները, առաջարկները, ինչպես նաև Նիկոլայ II-ի պաշտոնական այցը Անգլիա ու բանակցությունների արդյունքները «Դիվանագիտության պատմության» հեղինակները արձանագրում են, որ այդ պատմափուլում բրիտանական դիվանագիտությունը ցանկանում էր որպեսզի ցարական ինքնակալությունը ոչ միայն ճանաչի Անգլիայի գերիշխանությունը Եգիպտոսում, այլև հարկադրի կամ համոզի սուլթանին հաշտվելու այդ մտքի հետ: Հետևապես անգլիական քաղաքականության մեջ Ռուսաստանին հատկացվում էր որոշակի դեր Եգիպտոսում ամրապնդվելու հիմնախնդրում, որի դիմաց նա պարտավորվում էր ընդունել Արևմտյան Չայաստանը գրավելու Ռուսաստանի իրավունքը: Այսպիսով, 90-ական թթ. հայկական բարենորոգումների հիմնահարցում Ռուսաստանի կենսագործած քաղաքականության գնահատականների մեջ աներկբա է «Դիվանագիտության պատմության» ու «Արևելյան հարցը Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեջ» ստվարածավալ աշխատությունների հեղինակների հայացքների տարբերությունը: Թեև Կինյապիման ու նրա համահեղինակները իրենց աշխատությունը հրապարակել են 70-ական թ.թ. վերջերին, այսինքն, «Դիվանագիտության պատմությունից» շուրջ

¹ "История дипломатии" М., 1963, т. II, с. 338.

² Նույն տեղում, էջ 338:

մեկ ու կես տասնամյակ հետո, այսուհանդերձ, նրանք ոչ թե խորացրին վերջինիս այդ կարևոր և իրատես գնահատականը, այլ պարզապես Ռուսաստանի դիրքորոշման մեջ չտեսան որևէ էական փոփոխություն Բեռլինի վեհաժողովի ժամանակ կենսագործած քաղաքականության համեմատ: Այս արժանիքներով հանդերձ «Դիվանագիտության պատմության» հեղինակները նույնպես զերծ չմնացին սկզբունքային նշանակություն ունեցող սխալներից: Նախ, նրանք արևմտահայության պայքարը արդու-համիդյան ոճրակարգ վարչածնի դեմ ներկայացնում են որպես սոսկ ազգային և ոչ թե ազգային-ազատագրական շարժում, որը, իհարկե, պատմագիտական ու քաղաքական տեսանկյունից աններելի սխալ է նման լուրջ աշխատության համար: Մինչդեռ ազգային և ազգային-ազատագրական շարժումների միջև առկա են էական, սկզբունքային, որակական տարբերություններ: Եթե որոշ վերապահումներով կարելի է ազգային անվանել երիտթուրքական կամ քեմալական շարժումները, ապա հայ ժողովրդի պայքարը սուլթանական բռնատիրության դեմ անվերապահորեն ազգային-ազատագրական էր, պատմականորեն լիովին համապատասխանելով նրա բոլոր բաղադրամասերին: Երկրորդ, աշխատության մեջ հաճախ են օգտագործվում հայ ազգայնականներ, ազգայնամուլներ բառերը, որոնք, անշուշտ, նեղացնում են, ուղղակիորեն սահմանափակում այդ շարժման պատմաքաղաքական շրջանակները: Այսպես, գրքի հեղինակները Կ.Պոլսի օսմանյան բանկի վրա գրոհողներին, ոչ ավել և ոչ պակաս, անվանում են հայ ազգայնականներ, միաժամանակ, նշելով, որ այդ աննախադեպ դեպքի կապակցությամբ «հայկական կազմակերպությունները արտասահմանյան դեսպանություններ ուղարկեցին աղերսագրեր միջամտելու խնդրանքով ի պաշտպանություն հայ ժողովրդի»¹: Երրորդ, անհամոզիչ է 90-ական թթ. հայկական բարենորոգումների հիմնահարցում Ռուսաստանի ոչ հայանպաստ դիրքորոշման վերաբերյալ հեղինակների պատճառաբանությունները: Իսկապես, հազիվ թե կարող է համոզիչ կամ ընդունելի լինել նրանց այն կարծիքը, որի համաձայն ռուսական կառավարությունը մերժեց այս պատմափուլում մերձեցման ձգտող իր մշտական մրցակցի ու հակառակորդի առաջարկը, որովհետև կռահեց Անգլիայի հետապնդած հիմնական նպատակը՝ թշնամացնել Ռուսաստանը Թուրքիայի հետ, որը, հեղինակների համոզմամբ, կազմում էր բրիտանական դիվանագիտության գլխավոր հիմնախնդիրներից մեկը: Անշուշտ, այս դատողության մեջ առկա է իրատես հատիկ, բայց սոսկ այդքան, որովհետև նման մեկնաբանությունը պարզունակ է ու միակողմանի, քանզի Ռուսաս-

¹ "История дипломатии" М., 1963, т. II, с. 336.

տանի քաղաքականության կտրուկ փոփոխությունը և հայկական բարենորոգումների հարցում գրաված դիրքորոշումը պայմանավորված էր քաղաքական բնույթի ավելի խոր գործունեությամբ: Ռուսաստանին, իհարկե, անհանգստացնում էր ոչ այնքան թուրքիայի հետ հարաբերությունները վատացնելու հանգամանքը, որքան Անգլիայի ազդեցության ուժեղացումը տարածաշրջանում ընդհանրապես ու թուրքիայում մասնավորապես, որը և ելակետ դարձավ ռուսական դիվանագիտության համար օսմանյան կայսրության քաղաքական ստատուս-քվոն պահպանելու, անգամ այն դեպքում, երբ, ինչպես նշված է «Դիվանագիտության պատմության» մեջ, Սուլթերին խոստացավ նեղուցների հարցում ընդառաջել Ռուսաստանի ցանկություններին, պատրաստակամություն հայտնեց զիջումներ կատարել այդ հիմնախնդրում: Ցարական դիվանագիտությանը անհրաժեշտ էր կանխարգելել Անգլիայի ծրագրերի իրագործումը Մերձավոր Արևելքում, որը և դարձավ հիմնապատճառ հայկական բարենորոգումների հարցում ոչ հայանպաստ դիրքորոշում ունենալուն: «Այդ պատճառով 1894-1896 թ.թ. ընթացքում հայկական գործերին միջամտած երեք տերությունների միջև ծավալվեց պայքար. անգլիական կառավարությունը ձգտում էր ուժեղացնել ճնշումը սուլթանի վրա, իսկ ռուսականը և ֆրանսիականը՝ նվազագույնի հասցնել նրա նկատմամբ պահանջները»¹: Չորրորդ, «Դիվանագիտության պատմության» մեջ լիովին անտեսված է XX դարի սկզբին վերաբացված հայկական հարցի շուրջ (1912- 1914 թթ.) ծավալված եվրոպական դիվանագիտության պայքարը, այս հիմնախնդրում ակնհայտ է Կինյապինայի ու նրա գործընկերների մենագրության պատմագիտական բացահայտ առավելությունը:

¹ "История дипломатии" М., 1963, т. II, с. 335.

ԳԼՈՒԽ III

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1912- 1914 ԹԹ. ՌՈՒՍԱԿԱՆ
ՀԱՍՄԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ
ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

*«Հայերը լավագույն և ազն-
վագույն ժողովուրդն են
աշխարհում»:
ժողեֆ Տուրնեֆոր պրոֆ.
Փարիզի ակադեմիայի ան-
դամ:*

*Երիտթուրքերը՝ «պաշտոնա-
կան ավագակները»
Վիկտոր Բերար՝ ֆրանսիացի
գիտնական:*

Հայ ժողովուրդը հրաշագործ և միաժամանակ հրեշավոր 20-րդ - դար թևակոխեց երկփեղկված. նրա պատմական հայրենիքի մի ստվար հատվածը՝ Արևմտյան Հայաստանը, շարունակում էր բռնամիակցված մնալ Օսմանյան Թուրքիային, իսկ արևելյան մասը գտնվում էր ռուսաց կայսրության կազմում: Ուստի միանգամայն օրինաչափ է, որ հայ ժողովրդի լավագույն զավակները, թե՛ Արևմտյան Հայաստանում, թե՛ Արևելյան Հայաստանում շարունակում էին իրենց անհավասար ու անկոտրում պայքարը Հայ Դատը արդար լուծելու համար: Թեև արևելահայերին, ի տարբերություն արևմտահայության, չէր սպառնում ֆիզիկական բնաջնջման և կոտորածների անմիջական վտանգ, այնուհանդերձ նրանց քաղաքական կացությունը XX դ. սկզբներին բավականաչափ ծանր էր Պլեե-Գոլիցին-Լորանով-Ռոստովսկի խմբակցության ներքաղաքական ու արտաքին քաղաքական ոչ հայանպաստ դիրքորոշման հետևանքով: Հիրավի, եթե 1894-1896 թթ. ժամանակահատվածում արևմտահայերը ենթարկվեցին սոսկալի հալածանքների ու աղետալի ջարդերի, ապա նրանց արևելահայ եղբայրները իրենց հերթին մասնակցելով ռուսաստանյան կայսրությունում 20-րդ դարի սկզբին տեղի ունեցած քաղաքական ի-

րադարձություններին, ի վերջո, դարձան թիրախ, ինքնակալության հետադեմ ուժերի համար: Այս իմաստով իրավացի է ռուս նշանավոր պատմաբան և քաղաքական գործիչ, ժամանակավոր կառավարության առաջին արտգործնախարար Պ.Ն. Միլյուկովը, որի իրատես կարծիքով «հայերը, չնայած ռուսական հին վարչակազմի կողմից նրանց ազգային գիտակցությանը հասցված դաժան վիրավորանքներին, Կովկասի բոլոր ժողովուրդներից առավել հավա տարին մնացին Ռուսաստանին: Նրանք ակտիվորեն մասնակցեցին Թուրքիայի դեմ ռուսական բոլոր պատերազմներին»¹: Միլյուկովը թեև դժբախտաբար չի նշում, թե հայերին կոնկրետ ինչ դաժան ազգային վիրավորանքներ հասցրին կայսերական բարձրաստիժան պաշտոնյաները իրենց սադրիչ գործողություններով, այնուամենայնիվ, դժվար չէ անշուշտ կռահել, որ նա ամենայն հավանականությամբ նկատի ուներ Լոբանով-Ռոստովսկու բացահայտ հակահայկական քաղաքականությունը, կամ հայոց առաքելական եկեղեցու ունեցվածքը բռնագրավելու 1903թ. հունիսի 12-ի ցարական օրենքը, իսկ միգուցե Կովկասի կառավարչապետ Գոլիցինի թաթարներին (ադրբեջանցիներին) խաղաղ հայ բնակչության դեմ ուղղելու 1905-1906 թթ. սադրանքները, կամ դրան հաջորդած երկարատև դատավարությունը Չայ Չեղափոխական Ղաշնակցություն կուսակցության դեմ, որը փաստորեն ուղղվեց մի ամբողջ ժողովրդի դեմ, թե հայության անջատողականության (սեպարատիզմի) մեջ մեղադրելու պետական աստիճանի բարձրացրած անհեթեթությունը: Միլյուկովը, անշուշտ, այն պետական գործիչներից մեկն է, որի խոր հանգամանք «հայերն ուրիշներից ավելի մոտ էին մեզ (ռուսներին, Ռուսաստանին - Մ.Մ.) նաև քաղաքական տեսանկյունից»²: Միլյուկովը կիսուն է ռուս հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչների և դիվանագետների տեսակետները, որոնք քաջ հասկանում էին թուրքական իշխանությունների ջարդարարական հետևողական քաղաքականության նպատակը՝ «Չայկական հարցի լուծումը հայերին գլխավին ոչնչացնելու մեջ է»³: Ընդհանրապես Միլյուկովը իր «Չիշողություններում» որոշակի տեղ է հատկացրել Չայկական հարցին և 1912-1914 թթ. հայկական բարենորոգումների հիմնախնդրին ու դրանով իսկ հավատարիմ մնացել ռուսական հասարակական-քաղաքական ու պատմագիտական մտքի աչքի ընկնող ներկայացուցիչների լավագույն ավանդույթներին: Այդպիսի հետաքրքրությունը պատմաքաղա-

¹ П. Н. Миллюков, Воспоминания, М., 1990, т. I, с. 120.

² Պ.Ն. Միլյուկով, նշվ. աշխ., էջ 120:

³ Նույն տեղում, էջ 120-121:

քական ու դիվանագիտական տեսանկյունից միանգամայն օրինա-
չափ է, քանզի հենց Ռուսաստանը հանդես եկավ հայկական հարցի
վերաբացման դիվանագիտական նախաձեռնությամբ և դրանով իսկ
իր արտաքին քաղաքականության մեջ Լորանով-Ռոստովսկու բացա-
հայտ հակահայկական դիրքորոշումից կտրուկ շրջադարձ կատարե-
լով անցավ ընդհանուր առմամբ հայանպաստ դիրքորոշման: Ինչ վե-
րաբերում է Միլյուկովին, ապա նրա հետաքրքրությունը պայմանա-
վորված էր նաև այն հանգամանքով, որ նա մի կողմից որոշ չափով
մասնակից էր եղել հայկական բարենորոգումների նախագծի մշակ-
մանը, իսկ մյուս՝ ծանոթ է եղել հայ հասարակական- քաղաքական
մտքի գործիչների հետ և վերջապես հիմնահարցը քննարկել անգ-
լիական բարձրաստիճան պաշտոնական այրերի հետ: Միլյուկովը օ-
րինաչափ է համարում, որ 1912թ. հենց ռուսական դիվանագիտութ-
յան նախաձեռնությամբ վերաբացվեց հայկական հարցը, իսկ հայ-
կական բարենորոգումների շուրջ ծավալվեց սուր պայքար մեծ տե-
րությունների միջև: Ռուսաստանը հայ ժողովրդի համար «... այս տա-
ռապալից ճանապարհի վերջին փուլում (1912 թ.) միջամտեց,- ընդգ-
ծում է ռուս պատմաբանը և քաղաքական նշանավոր այրը,- դիվա-
նագիտական եղանակով»¹: Ինքը Միլյուկովը 1913 թ. եղել է Կ.Պոլ-
սում ու ներկա գտնվել ռուսաց դեսպանատան աշխատակիցների
կողմից հայկական բարենորոգումների նախագծի մշակմանը, որում
ծրագրվում էր մեկ ինքնավար նահանգի մեջ միավորել հայկական
վիլայեթները: Միլյուկովի տեսադաշից չի վրիպել եզրիտահայ հա-
սարակական հայտնի գործչի, մեծահարուստ Նուբար Փաշայի դեկա-
վարած հատուկ պատվիրակության գործունեությունը, որին նշանա-
կել էր «Արևելյան Հայաստանում (եջմիածնում) ապրող հայ կաթողի-
կոսը»²: Հատկանշական է, որ Միլյուկովի քաղաքական գործունեութ-
յան մեջ մեծ տեղ զբաղեցրեց նաև քրիստոնյա, հատկապես բալկան-
յան ժողովուրդներին, ապա և արևմտահայերին թուրքական յաթա-
ղանից ազատագրելու հիմնահարցը: Այդ է թերևս պատճառը, որ նա
իր «Հիշողություններում» անդրադառնում է եվրոպական երկրներում
ստեղծված հայասեր ընկերությունների ու կոմիտեների գործունեութ-
յանը, որոնք նրա կարծիքով, փորձում էին զանազան եղանակներով
ու միջոցներով կամ փրկել արևմտահայերին թուրքական յաթաղա-
նից կամ էլ գոնե բարենորոգումներով մի փոքր թեթևացնել նրանց
սոցիալ- տնտեսական ու քաղաքական կացությունը: Նա նշում է, որ
1913թ. ինքը հերթական անգամ եղավ արտասահմանում ևս մի քրիս-
տոնյա ժողովրդին թուրքական լծից ազատագրելու հիմնահարցի

¹ П. Н. Миллюков, Воспоминания, М., 1990, т. I, с. 121.

² Նույն տեղում, էջ 121:

քննարկման կապակցությամբ: «Այս անգամ խոսքը գնում էր հայերի մասին»¹: Փարիզում 1913 թ. նոյեմբերին գումարվեց հայ ժողովրդի բարեկամների կոմիտեների խորհրդաժողով, այն պետք է ոչ միայն քննարկեր ու մշակեր հայկական բարենորոգումների նախագիծ, այլև իր վրա սևեռեր եվրոպական հասարակայնության ուշադրությունը, ստեղծեր համապատասխան դրական կարծիք, վերստին կիզակետում ունենալ հայ ժողովրդի սարսափելի ծանր դրությունը: «Ես այնտեղ ռուսական կոմիտեի ներկայացուցիչն էի և դրա համար ունեի թե՛ սկզբունքային, թե՛ անձնական պատճառներ»²: Իհարկե, Միլյուկովը իրավունք ունի, նա սկզբունքորեն իրեն պարտավորված էր զգում մասնակցել այդ խորհրդաժողովին, չէ՞ որ, ինչպես արդեն նշվեց, հայերը առավել հավատարիմ մնացին Ռուսաստանին: Հայերը քաղաքական տեսանկյունից նույնպես բոլորից մոտ էին կանգնած Ռուսաստանին: Եվ վերջապես հայ մտավորականությունը, ըստ հեղինակի, մեծամասամբ կիսում էր կաղետական գաղափարը և նրա ներկայացուցիչներ Աճեմյանը և Բաբաջանյանը մտնում էին Դումայի խմբակցության մեջ: Հետևապես անձնական ու ենթակայական առումով էլ նրա մասնակցությունը արդարացված է ու հիմնավորված: Խորհրդաժողովը գումարվեց այն ժամանակ, երբ ռուսական դիվանագիտության կողմից մշակված Արևմտյան Հայաստանի բարենորոգումների նախագծի քննարկումը գտնվում էր ամենաեռուն շրջանում, ուստի քաղաքական առումով պահը նպաստավոր էր, իսկ ժամկետի ընտրությունը ճիշտ: Այս երկու կարևորագույն քաղաքական իրադարձությունների ժամանակի մեջ համընկնելու հանգամանքը ավելի շատ օրինաչափ էր, քանզի նրա կազմակերպիչները նպատակադրվել էին մի կողմից ներգործել մեծ տերությունների ներկայացուցիչների վրա, իսկ մյուս կողմից ճնշում գործադրել թուրքական կառավարող շրջանների վրա, որպեսզի նրանք ընդունեն և իրագործեն ռուսաց նախագիծը: Միլյուկովը մեկ այլ առումով ևս անդրադառնում է խորհրդաժողովին, նշելով, որ Արևմտյան Հայաստանի բարենորոգումների նախագծի քննարկմանը զուգահեռ «յոթ տերությունների ներկայացուցիչները նոյեմբերի 17-ին Փարիզում «Asie Francaise» կոմիտեին կից քննարկում էին Թուրքիայի վրա ճնշում գործադրելու մասին հարցը փոխառության մերժման միջոցով: Մեր խորհրդաժողովը Պողոսի նախագահությամբ պետք է կարգի բերեր այդ ամբողջ նյութը: Այդ հիմքի վրա հասունացավ վեց վիլայեթներից... «Մեծ Հայաստան» ստեղծելու մասին գաղափարը: Այդ գաղա-

¹ П. Н. Миллюков, Воспоминания, М., 1990, т. I, с. 120.

² Նույն տեղում, էջ 120:

փարն էլ քարոզվում էր Եվրոպայի առաջադեմ շրջաններում»¹ : Այս առաջարկների մշակման ու ցանկությունների իրագործման համար անշուշտ ելակետային էր ռուսաց դիվանագիտության կողմից եվրոպական տերությունների քննարկմանը ներկայացրած նախագիծը: Սակայն, ինչպես Միլյուկովի, այնպես էլ ռուսաց հասարակական-քաղաքական, պատմագիտական մտքի ներկայացուցիչների տեսադաշտից դուրս են մնացել այն առարկայական գործոնները, որոնք նպատակամղեցին ռուսաց դիվանագիտությանը ցուցաբերել նախածեռնություն, հետևողականություն և վերաբացել Յայկական Յարցը Արևմտյան Յայաստանում բարենորոգումներ անցկացնելու առաջարկությամբ: Սա լուրջ պատմագիտական և քաղաքական թերություն է, քանզի առանց այդ հարցերի պարզաբանման անհնարին է համակողմանիորեն լուսաբանել Ռուսաստանի հետապնդած նպատակները հայկական հարցում, առավել ևս բացահայտել եվրոպական դիվանագիտության հակազդող գործողությունները Ռուսաստանի մշակած նախագիծը ձախողելու ուղղությամբ:

Նախ, ինքնակալության հեռատես ներկայացուցիչները վերջապես կարողացան համոզել Նիկոլայ II -ին դադարեցնել բացահայտ հակահայկական քաղաքականությունը, քանզի դրա անիրատեսությունն ու սնանկությունն ակնհայտ էր: Ուստի և ի վերջո ռուսաց արքունիքը վերադարձավ ելակետային դրության՝ հայ ժողովրդին և առաքելական եկեղեցուն վերադարձրեց այն ամենը ինչ բռնագրաված էր ու զավթված: Այս ամենը ու հատկապես հայկական դպրոցների վերացումը, ապա հայության կացության փոքր ինչ բարելավման միտումը և նոր դիրքորոշումը ոչ այլ ինչ էր, եթե ոչ սեփական նախորդ քաղաքականության անիրատեսության ընդունում, հասարակության պահանջների ճնշման ներքո յուրատեսակ անձնատվություն, կատարված կոպիտ սխալների ուշացած գիտակցում, այն ուղղելու մի համեստ փորձ: Դա թեև կատարվեց նոր փոխարքա Վորոնցով-Դաշկովի Կովկաս ժամանելուց անմիջապես հետո, բայց պարզ է մի ճշմարտություն ևս՝ եթե չլիներ կայսրության մայրաքաղաքի բարձրաստիճան ներկայացուցիչների կամքը, ապա հազիվ թե հիմնահարցին նպաստեր նոր կառավարչապետի, նրա կնոջ զուտ «հայասիրությունը», մանավանդ որ դրանից հետո էլ հայ-թաթարական բախումները շարունակվեցին, իսկ ամենը արյան հոսքը չդադարեց: Այս առնչությամբ կարևորվում էր ռուս պատմաբան Գուրկո-Կրյաժինի իրատես կարծիքը, որի համաձայն Ռուսաստանը կտրուկ դադարեցնում է իր նախկին հակահայկական քաղաքականությունը և Անդրկովկասի փոխարքա կոմս Վորոնցով-Դաշկովի շուրթերով հայ-

¹ П.Н. Миллюков, Воспоминания, М., 1990, т.1, с.121.

տարարում, թե «Հայոց Հարցը մենք ստեղծեցինք ինքներս... որևէ անջատողականություն հայերի շրջանում գոյություն չունի»¹։

Հայ-ռուս բազմափուլի առնչությունների պատմությունը աներկբայորեն վկայել է, որ Ռուսաստանը իր ավանդական արևելյան քաղաքականության կենսագործման ամենավճռորոշ պահերին միշտ էլ հմտորեն օգտագործել է հայ ժողովրդի հիմնականում անմնացորդ ռուսամետությունը, իսկ հետապնդած հիմնախնդիրը լուծելուց հետո առանձին դեպքերում շտապել է սառնասրտորեն մոռացության մատնել հայության իրենից սպասվող ակնկալիքները։

Հայ-ռուսաց բազմաբնույթ և բազմապիսի քաղաքական առնչությունները միաժամանակ վկայեցին, որ հայ ժողովրդի անսքող ռուսամետությունը հիմնականում դրական նշանակությամբ, անվիճելիորեն կարևոր գործոն էր Ռուսաստանի արևելյան քաղաքականության իրագործման ուղղությամբ։ Այսուհանդերձ, Ռուսաստանի՝ հայ ժողովրդի առարկայորեն քաղաքական հովանավորող լինելու հանգամանքը համազգային շահերի տեսանկյունից հիմնականում համապատասխանում էր պատմական իրականությանը։ Այս է թերևս ապացուցում նաև առաջին աշխարհամարտի նախօրյակին վերաբացված Հայոց հարցի պատմությունը։

Երկրորդ, մեծ տերությունների հակամարտությունները վերստին սրվեցին քաղաքական այն փուլում, երբ համայն մարդկությունը ոչ միայն կանգնած էր առաջին աշխարհամարտի նախաշեմին, այլև հանձին Բալկանյան «փոքր», այսինքն տեղական (լոկալ) նշանակության պատերազմների (1912-1913 թթ.), արդեն ճաշակում էր նրա դառը պտուղները։ Ուստի օրինաչափ է, որ Ռուսաստանը հերթական հետաքրքրություն ցուցաբերելով արևմտահայության նկատմամբ և, ելնելով իր քաղաքական շահերից, նախապատրաստվում էր վերաբացել Հայկական Հարցը։ Ռուսաստանի ներքաղաքական և արտաքին քաղաքական գործառնության մեջ կատարվող փոքրիշատե դրական միտումները հայության հանդեպ պայմանավորվում էր այն պատմափաստով, որ Եվրոպական երկրների ուշադրությունը նորից գամվեց Մերձավոր Արևելքի, Թուրքիայի և համապատասխանաբար Արևմտյան Հայաստանի վրա, որը անխուսափելիորեն հանգեցնելու էր այդ տարածքում ուժերի հարաբերակցության էական փոփոխման։

Երրորդ, երբ 1912 թ. սկսվեց բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական պատերազմը թուրքական բռնապետության դեմ, հայ հասարակական շրջանները օգտվելով դրանից, առաջ քաշեցին Բեռլինի վեհաժողովում ընդունված 61-րդ հոդվածի կենսագործման պահանջը։ Այդ կապակցությամբ 1912թ. աշնանը հայա-

¹ В. Гурко-Кряжин, История революции в Турции, М., 1925, с.77.

բնակ մեծ քաղաքներում ժողովներ գումարվեցին, որտեղ որոշումներ ընդունվեցին դիմել մեծ տերություններին: Թիֆլիսում ստեղծվում է Հայաստանի Ազգային Բյուրո: Էջմիածնի կաթողիկոսի անունով արտասահմանյան հայկական գաղթօջախներից բազմաթիվ դիմումներ են ստացվում հայկական հարցի վերաբացման խնդրանքով: Այն ժամանակ էլ կաթողիկոսը Կովկասի փոխարքայի միջոցով դիմում է հղում ռուսաց կայսրին, խնդրելով նրա օգնությունը հայ դատը պաշտպանելու համար: Միաժամանակ նա լիազորում է եգիպտահայ մեծահարուստ Պողոս Նուբարին բանակցություններ սկսել Արևմտյան Եվրոպայում, որի մասին նշել էր Միլյուկովը իր «Հիշողություններում»:

Հայկական Հարցի պատմության համար առանցքային նշանակություն ունեցող էջերից մեկին՝ 1912-1914 թթ. Արևմտյան Հայաստանում բարենորոգումների շուրջ ծավալված դիվանագիտական հերթական պայքարին, որը կարծես դարձել էր ավանդույթ մեծ տերությունների համար, մեծ տեղ է հատկացված ռուս ակամավոր դիվանագետ, Կ.Պոլսում ռուսաց դեսպանատան գլխավոր թարգման Անդրե Մանդելշտամի աշխատություններում: Նրա վկայությունները, տեսակետը և գնահատականը դուրս են գալիս զուտ պատմագիտական շրջանակներից և ստանում քաղաքական ու դիվանագիտական հրատապ նշանակություն: Բավական է ասել, որ նա ոչ միայն այդ դեպքերի ժամանակակիցն է, ականատեսն ու մասնակիցը, այլև բարենորոգումների նախագծի մշակման գլխավոր հեղինակներից մեկը և հետևողական պաշտպանը: Հետևաբար նա իր անուրանալի ներդրումն է ունեցել Հայկական հարցի վերաբացման, Արևմտյան Հայաստանի բարենորոգումներին վերաբերվող 1914թ. հունվարյան համաձայնագրի ստորագրմանը: Այս պատմափուլում Ռուսաստանի դիրքորոշումը ի տարբերություն 1895-1896 թթ. ավելի որոշակի էր ու հստակ, հետևողական և համարձակ, վճռական և գործուն, ուստի, օրինաչափ է, որ ռուսական դիվանագիտությունը այդ ամենի շնորհիվ այս անգամ ի վերջո ձեռք բերեց Անգլիայի ու Ֆրանսիայի համաձայնությունը, իսկ Գերմանիային առանձին զիջումներ կատարելու միջոցով հաղթահարեց նրա դիմադրությունը և առարկումները: Կասկած չի կարող հարուցել, որ եթե չսկսվեր առաջին աշխարհամարտը Ռուսաստանը անխուսափելիորեն կպարտադրեր Թուրքիային կատարելու իր հանդեպ պաշտոնական պարտավորությունն ու դրանով իսկ Արևմտյան Հայաստանի համար մշակված բարենորոգումների ծրագիրը կդառնար իրականություն: Այս տեսակետը գերիշխող էր ռուսական թե պաշտոնական, թե պետական- քաղաքական, դիվանագի-

տական, և թե պատմագիտական շրջաններում¹: Անդրե Մանդելշտամը տալիս է 1908-1909 թթ. երիտթուրքական հեղաշրջման դասական գնահատականը: «Ինչ որ այդ ժողովուրդը եղած փոփոխութեան մեջ շահեցաւ,- գրում է նա,- փոխանակ մեկի բազմաթիւ Ապտիւլ Յամիտներ ունենալը եղաւ: Երեկուան յեղափոխականները բախտախնդիրներ դարձան»² : Մանդելշտամի վկայությամբ մեծ տերությունները Արևմտյան Յայաստանի համար բարենորոգումների նախագիծը մշակելու ընթացքում և 1912-1914 թթ. դիվանագիտական քննարկումների ժամանակ փորձեցին օգտագործել Կրետե կղզու համար մշակված ծրագիրը: Անգլիան, ֆրանսիան, Ռուսաստանը, Իտալիան, Կրետեի հիմնահարցում փոխզիջման շնորհիվ հասան լուրջ հաջողության և համաձայնության, հարկադրեցին Արդուլ -Յամիդին կատարելու մեծ տերությունների բոլոր պահանջները և առաջարկները: Ռուսաց դեսպանատան գլխավոր թարգմանը նշում է Կրետեի հիմնախնդրում արյունոտ սուլթանին պարտադրած զիջումները: Նախ, Արդուլ-Յամիդը 1896 թ. օգոստոսի 27-ին ընդունեց կանոնագիր, որից հետո չորս տերությունները Կրետեի ինքնավարությունը վերցրին իրենց հովանավորության ներքո, ապա 1898 թ. հարկադրեցին իր զորքերը դուրս բերել կղզուց, իսկ 1899 թ. մասնակցեցին Կրետեի սահմանադրության մշակմանը: Իսկապես Կրետեի համար նախատեսված ծրագիրը իր բովանդակությամբ և կառուցվածքով ու ընդհանուր ոգով, որոշ տարբերությամբ հանդերձ, նման էր 1914թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրին: Ռուսաց դիվանագիտությունն ամենայն հավանականությամբ հաշվի էր առել նաև Կրետեի օրինակը Յայկական հարցը վերաբացելու և դիվանագիտական նախաձեռնություն ցուցաբերելու ընթացքում: Ինչպես Կրետեի, այնպես էլ Արևմտյան Յայաստանի կառավարումը մշակված նախագծերով հանձնվում էր մեծ տերությունների համաձայնությամբ ու սուլթանի կողմից հաստատված գեներալ նահանգապետին: Սակայն հայկական հարցը նորից լուծում չէր ստանում, և, Մանդելշտամի դիպուկ բառերով ասած, մնում էր «մեռած տառ»: Մանդելշտամը հայկական կոտորածը Ադանայում 1909 թ. կապում է, ու թերևս, վերագրում միայն աբդուլհամիդյան հին վարչակարգին, քանզի այդ օրերին իշխանությունից զրկված սուլթանի կողմնակիցները կատարեցին հեղաշրջում և մոտ երկու շաբաթով վերցրին իշխանությունը վերստին դառնալով երկրի տերը: Իսկ «հեղափոխական» երիտթուրքերը, գրում է նա, որոնց պարագլուխները երևակայությանը զոռ տալով ի-

¹ "Будущее устройство Армении (По официальным данным. Третья оранжевая книга) Реформы в Армении", Петроград, 1915.

² Ա. Մանդելշտամ, Օսմանյան կայսրության ճակատագիրը և հայկական հարցը, Կ.Պոլիս, 1919, մաս առաջին, էջ 8:

րենց համեմատում էին Յակոբինների հետ, վախկոտություն ցուցաբերելով, դիմեցին փախուստի ու Նոր Մեքքայից՝ Կ.Պոլսից ճողոպրեցին հարազատ Մեդինա՝ Սալոնիկ: Այս դատողությունը ճիշտ է միայն մասնակիորեն, որովհետև ինչպես գրում են Մանդելշտամի «Օսմանյան կայսրության ճակատագիրը և Հայկական հարցը» գրքի հայերեն թարգմանիչները «Այսօր հաստատուած է, որ Ադանայի ջարդը կազմակերպուած մարտի 31-ի յետաշրջան փորձէն առաջ, իր գործադրութեամբ զուգահիսպած է յետաշրջութեան փորձի օրերին»¹: Պատմական ճշմարտությունն այն է, որ Ադանայի կոտորածների մեջ երիտթուրքերի մեղսակցությունը չափազանց մեծ է և անվիճելի: Այդ հերթական ողբերգությունը մեկ անգամ ևս միանշանակ վկայեց մի աներկբա պատմափաստ՝ հայ ժողովրդի նկատմամբ թուրքական բոլոր իշխանությունների դիրքորոշման և քաղաքականության ելակետը եղել է ու շարունակում է մնալ մարտնչող և անհանդուրժող ազայնամոլությունը:

Մանդելշտամը մանրամասնորեն քննարկում է Արևմտյան Հայաստանի վերաբերյալ 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրի բովանդակությունը և մատնանշում, որ թուրքիան այն ստորագրեց հարկադրաբար, դիվանագիտական իր բոլոր հնարքները սպառելուց հետո: Համաձայնագիրը ստորագրեցին թուրքիայի կողմից մեծ վեզիր Սահի-խալիլ փաշան, իսկ Ռուսաստանի կողմից՝ ժամանակավոր հավատարմատար Գուլկիչը: Համաձայնագրով Արևմտյան Հայաստանի կառավարումը հանձնարարվում է օտարերկրացի երկու ընդհանուր տեսուչներին, բնակչությանը տրվում էին որոշակի արտոնություններ տեղական ինքնավարության, լեզվի, դատարանի և այլ բնագավառներում: Թուրքիան Ռուսաստանի առաջ պարտավորվում էր դիմել տերություններին նոտայով, հայկական վիլայեթներում բարենորոգումների մասին²: Բայց թուրքիան համոզված էր, որ այս համաձայնագիրը ևս չի իրագործվելու, քանզի արդեն զգացվում էր առաջին աշխարհամարտի մոտալուտ շունչը, որին անխուսափելիորեն մասնակցելու էր Օսմանյան կայսրությունը: Ահա ինչու ծերուկ բռնակալ սուլթանը, որ «Վոսփորի վրա,- գրում է ռուս դիվանագետը,- Պէլերպէյի իր գեղեցիկ պալատէն այս նկարը դիտելով իրաւունք պիտի ունենար գոչելու՝ մեծ է Ալլահը, ապահովաբար պետք չկար կառավարութիւն փոխելու»³:

¹ Ա. Մանդելշտամ, Օսմանյան կայսրության ճակատագիրը և Հայկական հարցը, էջ 50:

² А. Мандельштам, Младотурецкая держава, М., 1915, с. 34, 35.

³ Ա. Մանդելշտամ, Օսմանյան կայսրության ճակատագիրը և հայկական հարցը, էջ 94. Младотурецкая держава, с.35.

Պատմադիվանագիտական և քաղաքական առումով հետաքրքիր են և ուշագրավ Մանդելշտամի դիտարկումները Գերմանիայի դիրքորոշման քաղաքական ողջ վարքագծի վերաբերյալ հայկական բարենորոգումների հիմնախնդրում: Նրա ընդունելի տեսակետով, Գերմանիան Հայկական հարցում գրավելով երկակի դիրք, պարզապես վարում էր երկինաստ խաղ, քանզի նա մի կողմից ձգտում էր որքան հնարավոր է կանխել Թուրքիայի համար չափազանց վտանգավոր ու անցանկալի Արևմտյան Հայաստանի ինքնավարության իրագործման ծրագիրը, իսկ մյուս կողմից, ելնելով իր ռազմավարական խնդիրներից, ձեռք բերել հայ բնակչության համակրանքը: Գերմանական դիվանագիտության հաշվարկներով նման քաղաքականությամբ հնարավորություն կընձեռվեր էլ ավելի ամրացնել կապերը Թուրքիայի հետ, ուժեղացնել իր ազդեցությունը երկրում, նրան գամել իր նարտակառքին, որովհետև թուրքական կառավարող շրջանները շնորհապարտ կլինեին կայզերին հայկական բարենորոգումների վերաբերյալ ռուսական ծրագիրը զգալիորեն սեղմելու և սահմանափակելու, իսկ արևմտահայերը գոհ կմնան Գերմանիայից, այդ նախագծին հավանություն տալու և դրա իրագործմանը կանաչ ճանապարհ բացելու համար: Ինչ արդյունք տվեց այս խորամանկ և հեռու գնացող դիվանագիտական խաղը: Ըստ Մանդելշտամի իրավացի տեսակետի, գերմանական կառավարության մտահղացումը իր կողմը գրավել ոչ միայն թուրքական դահիճներին, այլև նրանց կողմից ծվատվող հայերին, կրեց կատարյալ անհաջողություն: Ռուսական նախագծի ձախողման փորձերը, ընդգծում է Մանդելշտամը, «արևմտահայերի շրջանում առաջացրեց բուռն գայրույթ Գերմանիայի դեմ... Տեսնելով իր սիրաշահման անհաջողությունը, Գերմանիան, կատարում է կարևոր եզրակացություն նա, բանակցությունների վերջում հայերի նկատմամբ գրավեց խիստ թշնամական դիրքորոշում»²: Ինչ նշանակություն ուներ Ռուսաստանի համար 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրը, քաղաքական ինչ պտուղներ էր ակնկալում ստանալ ռուսաց դիվանագիտությունը Թուրքիայի կողմից պաշտոնապես ստանձնված պայմանագրից: «Ռուսաստանի համար հունվարի 26-ի ակտի իսկական նշանակությունն այն է, որ նա բովանդակում է Թուրքիայի կողմից արևմտահայերի նկատմամբ ռուսական հովանավորության պաշտոնական ճանաչումը (ընդգծումը Մանդելշտամի), այսինքն Բեռլինի դաշնագրության 61-րդ հոդվածից մեզ վերստին բերեց Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածին»¹: Մանդելշտամի գնահատականը իրական է, թե պատ-

² А.Мандельштам, Младотурецкая держава, с.50.

¹ А.Мандельштам, Младотурецкая держава, с.50.

մաքաղաքական, թե միջազգային իրավունքի տեսակետից, սակայն առաջին աշխարհամարտը ոչ միայն անհնարին դարձրեց արևմտահայության համար նախատեսված բարենորոգումները, այլև հնարավորություն տվեց երիտթուրքերի պարագլուխներին իրագործել Յայոց Ցեղասպանությունը: Հետևապես երկու ռուս նշանավոր դիվանագետների, համաեվրոպական ճանաչում գտած քաղաքական գործիչների՝ Պ. Միլյուկովի և Ա. Մանդելշտամի հայեցակետերը հայկական բարենորոգումների վերաբերյալ լիովին համընկնում են, ակնհայտ է գնահատականների ժառանգականությունը և հաջորդականությունը: Այլ կերպ լինել չէր կարող, քանզի առկա էր ևս մի կարևորագույն ընդհանրություն՝ նրանց քաղաքական ու դիվանագիտական գործունեությունը միանշանակ հայանպաստ էր, ինչ՝ լիովին բխող Ռուսաստանի ազգային-պետական շահերից: Հատկանշական է, որ ռուս հայտնի հետազոտող Ն.Մ. Լագովի պատմահայեցակետը լիովին համահնչում է Պ.Միլյուկովի, Ա. Մանդելշտամի որդեգրած տեսակետներին, ընդ որում ոչ միայն սոսկ արևմտահայերի բարենորոգումների, այլև հայկական հարցում և ընդհանրապես հայ-ռուսական բազմադարյան քաղաքական առնչությունների գնահատման հիմնախնդրում: Տեսակետների ընդհանրությունը լիովին ակնհայտ է օսմանյան բռնատիրական կայսրության կառավարող շրջանների բացահայտ հակահայկական քաղաքականության ու արևմտահայերի զանգվածային կոտորածների դատապարտման և բացահայտման գործում: Լագովը քննախոսելով 1912-1914 թթ. հայկական հարցը, իրատեսորեն հատուկ ընդգծում է, որ Ռուսաստանը այս պատմափուլում Արևմտյան Հայաստանի բարենորոգումների հիմնախնդրում գրավեց առավել հաստատուն դիրքորոշում, ուստի ցուցաբերելով դիվանագիտական նախաձեռնություն, տերություններին ներկայացրեց սեփական նախագծի տարբերակը, որի հիմքում ընկած էր Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի Կ.Պոլսում դեսպանների (դեռևս 1895 թ. համատեղ մշակած) ծրագիրը: Նա ևս ուշադրությունը սևեռում է ռուսական նախագծի շուրջ ծավալված պայքարին, որը քննարկվեց Ավստրո-Հունգարիայի դեսպանատանը 1913 թ. հուլիսի 3-ից 24-ը: Ինչպես սպասվում էր՝ ռուսական նախագիծը իր նախնական բովանդակությամբ չընդունվեց Եռյակ Միության դեսպանատան ներկայացուցիչների կողմից և որպես այլընտրանք առաջարկվեց թուրքական նախագիծը: Լագովի տեսակետով այդ նախագիծը անընդունելի էր Ռուսաստանի համար իր անկատարելության ու կիսատ-պռատության հետևանքով¹, այլ կերպ ասած, թուրքական ծրագիրն ըստ էության իրական ոչինչ չէր երաշխավորում արևմտահայե-

¹Лагов Н.М., Армения, Очерки прошлого, природы, культуры, Пгр., 1915, с. 22.

րին: Դժբախտաբար, շարունակում է ռուս հեղինակը, նախագծի քննարկման ժամանակ հնարավոր դարձավ համաձայնվել առանձին հարցերի՝ դպրոցական, ագրարային, լեզուների հավասարության շուրջ, մինչդեռ բարենորոգումների համար գլխավոր հիմնաքար հանդիսացող այնպիսի կետերի վերաբերյալ ինչպիսին են հայկական վեց վիլայեթներից մի նահանգ ստեղծելու, տերությունների համաձայնությամբ ընդհանուր նահանգապետ նշանակելու, նահանգային ժողով կազմավորելու և այլն, Եռյակ Միության ներկայացուցիչները գրավեցին բացահայտ թշնամական դիրքորոշում: Ռուսաստանի դեսպան Գիրսի ու Գերմանիայի դեսպան Վանհենհայմի միջև բանակցությունների արդյունքը եղավ վեց կետերից բաղկացած 1913 թ. սեպտեմբերյան նախագիծը¹: Լագովին նույնպես հետաքրքրում է 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրի քաղաքական էությունը, այսինքն բարենորոգումների նշանակությունը ինչպես արևմտահայերի, այնպես էլ Ռուսաստանի համար: Չարցադրումը միանգամայն տեղին էր պատմագիտական առումով, իսկ պատասխանը ընդհանուր առմամբ ընդունելի, բայց և այնպես տեղ - տեղ վիճահարույց: Նախ, նրա իրավացի կարծիքով համաձայնագիրը, իհարկե, չէր տալիս հայերին խոստացված ինքնավարության այն լայն իրավունքը, որը նախատեսում էր ռուսական նախագիծը: Երկրորդ, Լագովի հայեցակետով կասկած չի հարուցում, որ հունվարի 26-ի համաձայնագիրը ունի խոշոր նշանակություն հայ ժողովրդի հետագա պատմական ճակատագրի համար²: Ավելին, նրա համոզմամբ համաձայնագիրը նշանավորեց նոր, առավել երջանիկ դարաշրջանի սկիզբ հայ ժողովրդի պատմության մեջ³: Եվ դրա մեջ է տեսնում ռուս պատմաբանը համաձայնագրի ընդհանուր նշանակությունը: Նկատելի է, որ Լագովը գերազնահատում է համաձայնագրի բովանդակությունը, որովհետև իր բոլոր դրական նշանակությամբ հանդերձ, այն չէր կարող արևմտահայության սոցիալ-տնտեսական կացության և քաղաքական կարգավիճակի մեջ մտցնել վճռական փոփոխություն: Երրորդ, 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրը ըստ Լագովի ունի մեծ նշանակություն Ռուսաստանի միջազգային դրության ու հեղինակության համար, քանզի այն ստորագրվել է միայն թուրքիայի մեծ վեզիրի և ռուսական ներկայացուցչի կողմից, բովանդակում է թուրքիայի պարտավորությունը Ռուսաստանի առջև տերություններին դիմել նոտայով հստակորեն սահմանված բովանդակությամբ: Այսպիսով,- ամփոփում է Լագովը,- պաշտոնա-

¹ Лагов Н.М., Армения, Очерки прошлого, природы, культуры, Пгр., 1915, с. 22.

² Նույն տեղում, էջ 24:

³ Նույն տեղում, էջ 30:

պես ընդգծված է Ռուսաստանի ղեկավար դերը հայկական հարցում և կարծես հաստատվեց Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը¹ : Ավելին, այս հանգամանքը չէր կարող դրականորեն չանդրադառնալ Ռուսաստանի միջազգային հեղինակության բարձրացման վրա և ընդհանրապես Մերձավոր Արևելքի քրիստոնյա բնակչության շրջանում² :

Ռուս գրեթե բոլոր հետազոտողները ունեն ընդհանուր հայեցակետ Գերմանիայի քաղաքական դիրքորոշման վերաբերյալ արևմտահայության հիմնախնդրում՝ գերմանական դիվանագետները հանդիսանում էին թուրքերի հավատարիմ խորհրդականները³ : Իսկապես, ռուսական դիվանագիտությանը դեսպան Գիրսի գլխավորությամբ բանակցությունների ընթացքում հարկ եղավ հաղթահարել լուրջ դժվարություններ և խոչընդոտներ: Գիրսին անհրաժեշտ էր մի կողմից հաշվի առնել արևմտահայերի բնական ցանկությունները, որոնք ձգտում էին ստանալ հնարավորին չափ լայն ու ընդգրկուն բարեփոխումներ, իսկ մյուս կողմից հաղթահարել թուրքերի համառ դիմադրությունը: Ռուս-թուրքական համաձայնագրի վավերացումից հետո հայկական վիլայեթների ընդհանուր տեսուչներ նշանակվեցին հոլանդացի Վեստենենկը և նորվեգացի Յոհն, որոնք 1914 թ. մայիսի 10-ին Թուրքիայի հետ կնքեցին համապատասխան պայմանագրեր տաս տարվա ժամկետով⁴: Յետևաբար ռուսական դիվանագիտության անմիջական նախաձեռնությամբ ու հետևողական պայքարի շնորհիվ քաղաքական ասպարեզ ելած արևմտահայության բարենորոգումների նախագիծը արդեն գտնվում էր իրագործման նախօրյակին, երբ Թուրքիան մտավ առաջին աշխարհամարտի մեջ՝ ռազմական գործողություններ ծավալելով գերազանցապես Ռուսաստանի դեմ Կովկասյան ռազմաճակատում: Այս առումով քաղաքական հրատապություն է ներկայացնում այն հարցը, թե իրավունք ունե՞ր արդյոք օսմանյան կառավարությունը հրաժարվել բարենորոգումների վերաբերյալ ստանձնած պարտավորություններից ու ստորագրված համաձայնագրերից, զրկել ընդհանուր վերատեսուչներին պաշտոնապես տրված իրավունքից: Լագովը այս հարցին տալիս էր սպառիչ պատասխան, նրա տեսակետը հստակ է ու միանշանակ՝ պատերազմը չէր կարող ձերբազատել Թուրքիային, ստանձնած միջազգային համաձայնագրերից և պարտավորություններից, ուստի և տերությունների կողմից պաշտոնապես նշանակված ընդհանուր վերատե-

¹ Лагов Н.М., Армения, Очерки прошлого, природы, культуры, Пг., 1915, с.30.

² Նույն տեղում, էջ 30:

³ Նույն տեղում, էջ 30:

⁴ Նույն տեղում, էջ 32:

սուչները այդ առանձնահատուկ բարդ ռազմաքաղաքական պարագայում ևս պետք է իրավունք ունենային օգտագործելու իրենց լիազորությունները: Այսպիսով Թուրքիան հերթական անգամ խախտեց ստորագրած համաձայնագիրը՝ բացահայտ ու անպատիժ քամահրանք միջազգային իրավունքի նկատմամբ:

Խորհրդային ժամանակաշրջանի ռուսաց պատմա-դիվանագիտական գրականության մեջ 1912-1914 թթ. արևմտահայերի բարենորոգումների շուրջ ծավալված դիվանագիտական սուր պայքարը չի ստացել իր սպառիչ քննախոսությունը, քանզի հիմնահարցի վերաբերյալ առկա են առանձին տեղեկություններ, հպանցիկ մտքեր ու դատողություններ, որոնք հեռու են անգամ բավարար լինելուց, ուստի առ այսօր դուրս է մնացել ուսումնասիրության տեսադաշտից: Թերևս բացառություն են կազմում Լ. Իստյազինի ծավալուն արժեքավոր հոդվածը¹ և Ռուսաստանի արևելյան քաղաքականության հիմնահարցերի պատմությանը նվիրված ֆունդամենտալ մենագրությունը²: Հոդվածը ներկայացնում է պատմագիտական հետաքրքրություն այն տեսանկյունից, որ բարենորոգումների հիմնահարցը Արևմտյան Հայաստանում քննարկվում է եվրոպական դիվանագիտության որոգայթի և հատկապես ռուս-գերմանական հակամարտությունների լույսի ներքո: Նա քննարկվող հարցը սպառիչ դարձնելու համար հակիրճ կատարում է պատմաշեղահետախուզում Սան-Ստեֆանոյում ու Բեռլինի վեհաժողովում ծագած հայկական հարցի շուրջ և մեծ տերությունների դիրքորոշման վերաբերյալ, որպեսզի կանոնի ու կապ ստեղծի 1912-1914 թթ. հայկական բարենորոգումների հետ և ընդգծի նրանց կենսագործած քաղաքականության ընդհանուր գիծը Արևմտյան Հայաստանում: Ավելին, Իստյազինի իրատես կարծիքով ռուս-գերմանական հակամարտությունների գլխավոր հանգուցակետը Փոքր Ասիայում և Մերձավոր Արևելքում դարձավ Արևմտյան Հայաստանի հիմնահարցը, հայկական բարենորոգումների նախագծի շուրջ ծավալված դիվանագիտական սուր, անզիջուն, հետևողական ու երկարատև պայքարը, որը հատկապես ընդունեց անսքող և բացահայտ բնույթ առաջին աշխարհամարտին նախորդած տարիներին՝ 1912-1914 թթ. ընթացքում:

Անշուշտ, իրավացի է հեղինակը, երբ այդ հակամարտությունն ու մրցակցությունը, անսքող պայքարը համարում է միանգամայն օրինակալի, քանզի, եթե Ռուսաստանի ծրագրերի մեջ էր Արևմտյան

¹ Л.Истягин, Экспансия германского империализма в Турции и русско-германские противоречия по армянскому вопросу (1912-1914 гг.), в кн. Из истории агрессивной внешней политики германского империализма, М., 1959.

² Книшнина Н.С., Георгиев В.А., Панченкова М.Т., Шеремет В.И., Восточный вопрос во внешней политике России (конец XVIII-начало XX вв.), М., 1978.

Հայաստանի նվաճումը կամ որպես նվազագույն քաղաքական խնդիր իր գերիշխանության հաստատումը, ապա Գերմանիայի մտահղացումն էր դուրս մղել Ռուսաստանին կամ թուլացնել նրա ազդեցությունը, որպեսզի հաստատի իր գերիշխանությունը Թուրքիայում¹: Այդ էր պահանջում Գերմանիայի տնտեսական ու քաղաքական շահը, մասնավորապես «Բաղդադյան երկաթուղին» ու անխուսափելի պատերազմը Ռուսաստանի դեմ: Այդ նպատակով Արևմտյան Հայաստանը հիմնարար ձևով հետազոտելու համար ժամանեցին գերմանական գլխավոր շտաբի երկու սպա՝ Լանգեն և Վեստարպը²: Անվիճելի է, որ մեծ տերություններից Արևմտյան Հայաստանում իր ազդեցությունը հաստատելու և ամրապնդելու բոլորից շատ հնարավորություն ուներ Ռուսաստանը, քանզի հայ բնակչությունը բացառապես քաղաքական ակնկալիքներ էր տածում կայսրության նկատմամբ, որը ոչ միայն դյուրացնում էր, այլև առավելություն ստեղծում ռուսաց դիվանագիտության համար: Այս աներկբա պատմահայեցակետը կիսում է նաև խորհրդային ժամանակաշրջանի ռուս պատմաբանը: Եվ այդ ամենը նա փորձում է հիմնավորել ու ապացուցել պաշտոնական վավերագրերով, Կ.Պոլսում ռուսաց դեսպան Գիրսի և Ռուսաստանի արտգործնախարար Սազոնովի նամակագրությանը, զեկուցումներով, հրահանգներով, ապա և հայ հասարակական քաղաքական գործիչների հանդիպումներով ռուսաց բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

Նա նկատի ունի դեռևս 1911 թ. նոյեմբերին դաշնակցության ներկայացուցիչներ Ջավրիյանցի և Ջավրիևի հանդիպումը այն ժամանակվա Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպան Չարիկովի հետ³, արևմտահայության պատրիարք Արշարունու գրույցները նոր դեսպան Գիրսի⁴ և հատկապես վերջինս հանդիպումը թուրքական պառլամենտի պատգամավոր հայտնի գրող ու հրապարակախոս Գրիգոր Չոհրապի հետ⁵: Չոհրապի իրատես համոզմամբ «միակը ինչ դեռևս կարող է փրկել հայ ժողովրդին, դա ... հայկական վիլայեթների ռուսական ռազմակալումն է, ընդ որում ոչ թե ժամանակավոր, այլ մշտական, ինչպես Բոսնիայի ռազմակալումը Ավստրիայի կողմից...»⁶:

¹ Л. Истягин, Экспансия германского империализма в Турцию и русско-германские противоречия по армянскому вопросу (1912-1914 гг.), с. 5.

² Նույն տեղում, էջ 16:

³ Նույն տեղում, էջ 14:

⁴ Նույն տեղում, էջ 20-21:

⁵ Նույն տեղում, էջ 21:

⁶ Նույն տեղում, էջ 21:

Քննարկելով ու գնահատելով բարենորոգումների նախագծերը Արևմտյան Հայաստանում Իստյազինը բնականաբար նախապատվությունը տալիս է ռուսական ծրագրերին, քանզի դրանք բոլորից շատ էին արտահայտում արևմտահայության ակնկալիքները և շահերը: Դա պայմանավորված է ոչ միայն Ռուսաստանի թեև զգույշ, բայց և հետևողական քաղաքականությամբ, այլև ոչ պակաս կարևոր գործոնով՝ ռուսական նախագծերում առավելագույնս հաշվի էին առնվում հայկական կողմի առաջարկները, որոնք ներկայացվում էին հայոց կաթողիկոս Գևորգ V, նա էլ իր հերթին Կովկասի փոխարքա հայամետ Վորոնցով -Դաշկովին, վերջինս անմիջապես՝ կայսրին, արքունիքին, արտաքին գործոց գերատեսչությանը: «Ապրիլի վերջին (1913 թ.-Մ.Ս.) ռուսաց դեսպանատուն,- գրում է ռուս պատմաբանը,- ներկայացվեց բարենորոգումների հայկական երկու նախագիծ՝ «դաշնակցություն» կուսակցության և պատրիարքի, ընդ որում վերջինը նկատի է առնում Նուբարի (եգիպտահայ մեծահարուստ Պողոս Նուբարի մասին է -Մ.Ս.) նախագիծը»¹: Ի՞նչ էին ակնկալում հայերը Ռուսաստանից, ինչպիսին էին նրանց ներկայացուցիչների առաջարկները և պահանջները, մշակած նախագծերի հիմնական բովանդակությունը: Այս հիմնահարցը ներկայացնում է պատմագիտական ու քաղաքական մեծ նշանակություն և հրատապություն, ուստի և այն չէր կարող վրիպել ռուսաց պատմագրության տեսադաշտից: Իհարկե, բացառություն չկազմեց նաև Իստյազինը, նրա կարծիքով այդ նախագծերի հիմնական պահանջներն էին՝ հայկական վեց վիլայեթներից (Երզրում, Սվաս,Բիթլիս, Դիարբեքիր, Վան, Խարբերդ) միասնական, ամբողջական նահանգի ստեղծում, գերազանցապես մահմեդական բնակչություն ունեցող Տրապիզոնի վիլայեթը դուրս էր մնալու հայկական նահանգից, հիշատակված հայկական վեց վիլայեթների սահմանագիծը ընդգրկում էր մինչև 1877-1878 թթ. ռուսթուրքական պատերազմը գոյություն ունեցող սահմանը²:

Հայկական նահանգը զխավորելու էր օտարազգի ընդհանուր նահանգապետը, որին այդ բարձր պաշտոնում առաջարկում էին եվրոպական տերությունները, բայց հաստատվում էր սուլթանի կողմից: Նահանգապետը կամ կոմիսարը օժտվում են գործադիր լայն իշխանությամբ, նախատեսվում էր ստեղծել ընդհանուր նահանգային ժողով, որտեղ ընտրվելու էին մահմեդականներից ու քրիստոնյաներից հավասար թվով պատգամավորներ, ոստիկանությունը և դատարանը ստեղծվելու էին նույն պարիտետային (համահավասար) սկզբունք-

¹ Л. Истягин, Экспансия германского империализма в Турции и русско-германские протворочия по армянскому вопросу (1912-1914 гг.), с.31.

² Նույն տեղում, էջ 31:

ների հիման վրա, հայոց լեզուն թուրքականին հավասար ճանաչվելու էր պետական, հայերից բռնագրավված հողերը վերադարձվելու էին նրանց վարչական կարգով: Արգելվում էր մահմեդական-փախըստականներին բնակվել Հայաստանում, բարենորոգումների անցկացման գլխավոր երաշխավորներ էին դառնում մեծ տերությունները, իսկ բարենորոգումների անցկացման գործընթացը անմիջականորեն վերահսկելու էր այդ տերություններից որևէ մեկը¹: Ջրույցի ժամանակ, նկատում է ռուս պատմաբանը՝«հայ ներկայացուցիչները բացատրում էին Գիրսին, որ հայերը որպես վերահսկող տերություն կցանկանային տեսնել Ռուսաստանին»²: Ահա այս և նման առաջարկները, ցանկությունները, հատկապես նախագծերը հիմք ընդունելով ու քննարկելով Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպան Գիրսը և դեսպանության գլխավոր թարգման Անդրե Մանդելշտամը միաժամանակ մտցնում էին ուղղումներ այն հողվածների մեջ, որոնցում նրանց պատկերացմամբ, հատկապես շոշափվում էին Թուրքիայի ինքնիշխանությունը: «Այսպես, Գիրսը պնդեց, - գրում է ռուս պատմաբանը, - որպեսզի նահանգի նահանգապետը նշանակվի սուլթանի կողմից տերությունների համաձայնությամբ և ոչ թե տերությունները, բացի այդ, պարտադիր չէր, որպեսզի նահանգապետը լիներ օտարերկրացի, այլև թուրքահպատակ քրիստոնյա»³: Մանդելշտամը և Գիրսը, շարունակում է ռուս պատմաբանը, չէին ենթադրում, որ Թուրքիան ուժեղ կղիմադրի հայկական պահանջներին, քանզի նրա շատ կետեր մտցվել էին դեռևս 1895 թ. ընդունված բարենորոգումների նախագծի մեջ, բացի օտարագրի նահանգապետ նշանակելու իրավունքից, ռուս դիվանագետները, ըստ Իստյազինի, չէին նախատեսել նաև հայկական վեց վիլայեթներց մեկ միասնական նահանգի ստեղծման նկատմամբ օսմանյան կառավարության բացասական, թերևս թշնամական դիրքորոշումը⁴: Ռուս պատմաբանի իրատես կարծիքով Թուրքիան անընդունելի համարելով ու մերժելով ռուսական նախագիծը, ելակետ ուներ ոչ միայն Ավստրո-Հունգարիայի և հատկապես Գերմանիայի քաղաքական անթաքույց հակառուսական դիրքորոշումը, զգում նրանց զորեղ աջակցությունը, այլև բալկանյան երկրորդ պատերազմի արդյունքները, որոնք, ի տարբերություն առաջինի, համեմատաբար բարենպաստ էին օսմանյան կայսրության համար: Եթե Թուրքիան բալկանյան առաջին պատերազմում անվիճելի պար-

¹ Л. Истягин, Экспансия германского империализма в Турции и русско-германские противоречия по армянскому вопросу (1912-1914 гг.), с. 31-32:

² Նույն տեղում, էջ 32:

³ Նույն տեղում, էջ 32:

⁴ Նույն տեղում, էջ 32:

տություն կրեց, բալկանյան տերությունների ռազմա-քաղաքական խմբակցությունից, ապա երկրորդ պատերազմում, օգտվելով նրանց միջև եղած տարածայնություններից, դաշինքի կազմալուծումից ու միմյանց դեմ պատերազմելուց, Թուրքիան միանալով հակաբուլղարական խմբակցությանը, ծանր պարտության մատնեց Բուլղարիային, զգալիորեն բարելավեց իր քաղաքական կացությունը, մասնավորապես վերագրավեց Ադրիանապոլիսը: Բալկանյան պատերազմները և հատկապես առաջին աշխարհամարտի նախօրյակին ստեղծված միջազգային-քաղաքական իրադրությունը մեծապես ներգործում էին հայկական բարենորոգումների ծրագրերի մշակման ու ընդունման գործընթացի վրա: Եվ միանգամայն տրամաբանական է ռուսաց դիվանագիտության տեսանկյունից, որ «Ցարական Ռուսաստանը այդ ժամանակ (բալկանյան առաջին պատերազմի ժամանակ-Մ.Ս.) ինքն էր մտավախում բարդություններից Արևմտյան Հայաստանում և փորձում էր ետ պահել հայերին ամեն տեսակ անզգույշ գործողություններից: Բայց հայկական հարցը,- եզրակացնում է ռուս պատմաբանը,- սրվեց ռուսաց կառավարության կամքից անկախ»¹: Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա նրա մեծ վեզիր Սայիդ Խալիմը Ադրիանապոլսի ճգնաժամի ժամանակ առաջարկեց Գիրսին Ադրիանապոլսի գրավման ճանաչման դիմաց բավարարել Ռուսաստանի բոլոր պահանջները երկաթուղային ճանապարհների և Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու հիմնահարցերում: «Այժմ հաջողություն ձեռք բերելուց հետո,- այս կապակցությամբ գրում է Իստյազինը,- նրա դիմադրությունը այս հարցի շուրջ պետք է մեծանար անխուսափելիորեն»²: Մինչդեռ ռուսական դիվանագիտությունը ձգտում էր ամեն գնով վերադարձնել Ադրիանապոլիսը Բուլղարիային, քանզի միայն այդ ճանապարհով էր հնարավոր կանխել արդեն նկատվող Բուլղարիայի անցումը Ավստրո-Հունգարիայի ու Գերմանիայի կողմը, որը մի փոքր անց դարձավ պատմական իրականություն Բուլղարիան խմբակցեց Եռյակ Միությանը: Ռուսաց պատմադիվանագիտական գրականության մեջ միաժամանակ ընդգծվում էր, որ բալկանյան միության լիակատար փլուզումը, իսկ այնուհետև բուլղարական բանակի ջախջախվելը ոչ այլ ինչ էր, եթե ոչ ռուսական դիվանագիտության խոչորագույն պարտությունը: Այս հայեցակետը ընդունում է նաև Իստյազինը, նշելով, «թե պարտությունը Բալկաններում թուլացրեց Ռուսաստանի դիրքերը նաև Փոքր

¹ Л. Истягин, Экспансия германского империализма в Турции и русско-германские противоречия по армянскому вопросу (1912-1914 гг.), с. 18.

² Նույն տեղում, էջ 46:

Ասիայում»¹: Հետևապես, Ռուսաստանի միջազգային հեղինակության բարձրացման ու քաղաքական դիրքերի ամրապնդման համար «մնում էր Արևմտյան Հայաստանը»²: Այլ կերպ ասած՝ Ռուսաստանը պետք է առաջնահերթ միջազգային-քաղաքական հիմնախնդիր համարեր բարենորոգումների իրականացումը Արևմտյան Հայաստանում: Ուստի միանգամայն հասկանալի է, թե ինչու ռուսական դիվանագիտությունը հանձին արտագործնախարար Սազոնովի և Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպան Գիրսի, մի կողմից աշխատում էր հայկական հարցը վերաբացել Բալկանյան պատերազմից հետո, իսկ մյուս կողմից հայկական բարենորոգումների հիմնախնդրում ցուցաբերել նախաձեռնություն և ակտիվություն: Ռուսաստանին անհրաժեշտ էր շտապել, հակառակ դեպքում դիվանագիտական նախաձեռնությունը կարող էր անցնել եվրոպական մեծ տերություններին, որը ոչ միայն հնարավոր էր, այլև իրատես, եթե նկատի ունենանք Պոզոս Նուբար փաշայի Փարիզում գտնվելու կարևոր փաստը և ցանկացած պահին Լոնդոնի խորհրդածոդովին դիմելու հանգամանքը, որտեղ քննարկվում էր հաշտության պայմանագիր կնքելու հարցը Բալկանյան առաջին պատերազմին մասնակցած պետությունների միջև: Իստյազինի հողվածում մեծ տեղ է հատկացված Գերմանիայի դիվանագիտական խաղերին հայկական բարենորոգումների նախագծի շուրջ, որը քննախոսվում է հայկական հարցում ռուս-գերմանական մրցակցության լույսի ներքո: Նրա գնահատականը հիմնականում անաչառ է, քանզի ամբողջովին բացահայտված է Գերմանիայի նպատակները Արևմտյան Հայաստանում: Թեև Գերմանիան Կ. Պոլսում հանձին իր դեսպան Վանգենհայմի պաշտպանում էր Թուրքիային, այնուհանդերձ կայզերական դիվանագիտությունը ցանկանում էր սքողել իր թուրքամետ քաղաքականությունը և ոչ միայն արևմտահայերին, այլև անգամ ողջ հայ ժողովրդին, նրա քաղաքական ներկայացուցիչներին, բարձրաստիճան հոգևորականությանը՝ կաթողիկոսից մինչև պատրիարքը, եպիսկոպոսից մինչև աստծո շարքային սպասավորները համոզել, ստեղծել տպավորություն, համոզմունք, թե մտահոգված է նրանց ճակատագրով, գործի կղնի ամեն ինչ՝ իր հեղինակությունը, ուժը և ազդեցությունը Թուրքիայի վրա՝ հայերին նոր կոտորածներից զերծ պահելու համար: Գերմանիային Թուրքիայում լիովին գերիշխելու համար անհրաժեշտ էր նաև կամ սիրաշահել արևմտահայերին, կամ էլ նպաստել թուրքական իշխանություններին կոտորելու արևմտահայերին, ամայացնել հայկական վիլայեթները: Գերմանա-

¹ Л. Истягин, Экспансия германского империализма в Турции и русско-германские противоречия по армянскому вопросу (1912-1914 гг.), с. 46.

² Նույն տեղում, էջ 46:

կան դիվանագիտությունը քաղաքական այս փուլում նախընտրեց առաջին տարբերակը: Ընդհանրապես մեծ տերությունների միջև ծավալված դիվանագիտական սուր ու անզիջում պայքարը հայկական բարենորոգումների նախագծի շուրջ մեկ անգամ ևս աներկբայորեն ցույց տվեց, որ խոր հակամարտություններ զոյություն ունեին ոչ միայն երկու հակամարտող ռազմաքաղաքական խմբակցությունների՝ Եռյակ Միության ու Եռյակ Համաձայնության, այլև բուն խմբակցության՝ Անտանտի, առաջին հերթին Ռուսաստանի ու Անգլիայի միջև: Այս պատմաքաղաքական կարևորագույն փաստը անհրաժեշտ է միշտ պահել գիտական ուշադրության կիզակետում, քանզի այլապես անհնարին է համակողմանիորեն քննախոսել հայկական հարցը իր ամբողջության մեջ և նրա բաղադրամաս հանդիսացող բարենորոգումների հիմնախնդիրը Արևմտյան Հայաստանում: Ավելին, Գերմանիայի դիվանագիտական վճռական հակամարտությունը Ռուսաստանին պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ նրա կառավարող շրջանները քաջ գիտեին ինչպես ռուս-անգլիական հարաբերությունների, այնպես էլ Անգլիայի դիրքորոշման մասին, որին բնավ էլ ցանկալի ու ընդունելի չէր իր հիմնական դաշնակցի ամրապնդումը Արևմտյան Հայաստանում, ազդեցության ընդլայնումը և խորացումը արևմտահայության վրա: Այսպիսի ոչ բարենպաստ քաղաքական պայմաններում Սազոնովը, Գիրսը, Մանդելշտամը տարբեր մակարդակներով հարկադրված էին սահմանափակել իրենց նախագծի պահանջները, որոնք փաստորեն ուղղվում էին արևմտահայության դեմ: Անգլիայի ու Գերմանիայի դիրքորոշումը հայկական բարենորոգումների ռուսական նախագծի նկատմամբ պայմանավորված չէր սոսկ հայկական հարցով, նման մոտեցումը կլիներ միակողմանի և չէր բացահայտի համակողմանիորեն հիմնախնդիրը, քանզի անգլո-գերմանական վարքագիծը հետապնդում էր ավելի խոր քաղաքական նպատակներ, ուստի և ուներ անհամեմատ լայն իմաստ ու բովանդակություն: Անգլիան ձևականորեն ընդունելով Ռուսաստանի նախագիծը իրականում գործնական ոչ մի քայլ չկատարեց այն պաշտպանելու, առավել ևս կենսագործելու համար: Ավելին, նրա ներկայացուցիչները միանշանակ հասկացրին, որ հավանության կարծանացնեն միայն այն նախագիծը, որը դուրս չի գալու 1895 թ. նախագծի շրջանակներից և կրնդունեն բոլոր տերությունները, այսինքն՝ Գերմանիան: Այդպիսի քաղաքական դիրքորոշմամբ անգլիական դիվանագիտությունը փորձում է մի կրակոցով սպանել առնվազն երկու նապաստակ: Նախ, սոսկ ձևականորեն պաշտպանելով ռուսական նախագիծը Անգլիան ցանկանում էր վկայել իր դաշնակ-

¹ Л. Истягин, Экспансия германского империализма в Турции и русско-германские противоречия по армянскому вопросу (1912-1914 гг.), с. 42.

ցայիճ «պարտականությունները» և «հավատարմությունը» Անտան-տի շրջանակներում, կանխել խմբակցության կազմալուծումը, և հնարավոր մերժեցումը Գերմանիայի հետ: Անգլիան և նրա դաշնակից Ֆրանսիան չկարողանալով խուսափել Մանդեյլտամի կողմից կազմված նախագծի ուսումնասիրությունից, միաժամանակ հրաժարվեցին դրա քննարկումից: Երկրորդ, լիովին տեղյակ լինելով ռուս-գերմանական մրցակցության մասին Մերձավոր Արևելքում, անգլիական դիվանագիտությունը ձգտում էր ռուսական նախագիծը ձախողել Գերմանիայի անմիջական նախաձեռնությամբ և դրանով իսկ սողանք բողմել նրա հետ հանդես գալու Ռուսաստանի դեմ, կանխել ռուս-գերմանական հնարավոր մերժեցումը, ուժերի հարաբերակցության հավանական փոփոխությունը առաջին աշխարհամարտի նախօրյակին: Անգլիական դիվանագիտությունը, հավատարիմ մնալով իր ավանդույթներին, այս անգամ էլ ղեկավարվեց «կրակից ուրիշի ձեռքերով շագանակներ հանելու» քաղաքականությամբ՝ Անգլիային հարկ չկար պայքարելու Ռուսաստանի դեմ, որը նա սիրով զիջում էր Գերմանիային: Ահա ինչու գերմանական դիվանագիտությանը այդպես էլ չհաջողվեց հայկական հարցի հիմքի վրա համագործակցել Անգլիայի հետ: Անգլիան, հարկադրելով Ռուսաստանին հայկական բարենորոգումների հիմնախնդիրը լուծել Գերմանիայի հետ, մեծ ցանկություն չէր ցուցաբերում քննարկելու այն գերմանացիների հետ: Դիվանագիտական պայքարի նման գործընթացը պայմանավորված էր առարկայական գործոնով՝ հատկապես հաստատված ընդհանուր ռազմաքաղաքական իրադրությամբ, երբ անգլո-գերմանական հակամարտությունները անհամեմատ, զգալիորեն խորն էին ու սուր, քան ռուս-գերմանական հակասությունները: Իր հերթին գերմանական դիվանագիտությունը հանդես գալով ռուսական պաշտոնական ծրագրի դեմ և քաջ գիտենալով Անգլիայի հետապնդած նպատակները, փորձում էին նրա հետ համատեղ ձախողել նախագիծը կամ զգալիորեն սահմանափակել նրա առաջարկները: «Գրեյի (Անգլիայի արտգործնախարար-Մ.Մ.) հետ զրույցից, գրում է Իստյագինը, - Լիխնովսկին (Անգլիայում Գերմանիայի դեսպանը-Մ.Մ.) պարզեց, որ Անգլիան հանդես է գալու հայկական հարցի քննարկման դեմ Լոնդոնի խորհրդաժողովում: Այդ պատճառով Գերմանիան շատ արագ հրաժարվեց իր մտադրությունից: Բայց այն օգտագործեց Գրեյը: Նա զգուշացրեց ցարական կառավարությանը, որ Գերմանիան նախապատրաստվում է հարուցել հայկական հարցը և խորհուրդ էր տալիս Ռուսաստանին, որպեսզի ինքը կատարի այն անմիջապես, «չսպասելով Կոստանդնուպոլսի մեր դեսպանների

գրույցների արդյունքներին»¹: Եվս մի վկայություն Անգլիայի երկդիմի քաղաքականության վերաբերյալ՝ մի կողմից ցույց տալ իր «հավատարմությունը» Ռուսաստանին, իսկ մյուս կողմից խորացնել ռուս-գերմանական մրցակցությունն ու հակամարտությունը: Ի վերջո, «համագործակցելով» Ռուսաստանի հետ հայկական բարենորոգումների նախագծի շուրջ, Գերմանիան ցանկանում էր չկորցնել իր վստահությունը հայության մեջ, իսկ մյուս կողմից սեպ խրել ռուս-անգլիական քաղաքական հարաբերությունների ոլորտում ընդհանրապես և հայկական հարցում հատկապես: Ռուսական նախագծի արմատական վերածնունդն լավագույն միջոցը Գերմանիան տեսնում էր Ռուսաստանի հետ «համագործակցության» մեջ: Իստյազինը հենվելով պաշտոնական վավերագրերի վրա իրատեսորեն եզրակացնում է, որ գերմանական դիվանագիտության գործառնությունները և հատկապես մշակած նախագիծը և համագործակցությունը օսմանյան կառավարության հետ հայության շրջանում ընդունում էին առանց որևէ խանդավառության, թեև ջանքեր չէին խնայվում Գերմանիան ներկայացնելու որպես արևմտահայերի հովանավորող և բարեկամ թուրքիայում: Եթե առաջ գերմանական մանուլը կառավարության հրահանգով խուսափում էր շոշափել հայկական հիմնահարցը, ապա 1913 թ. հունիսին գրեթե բոլոր թերթերը սկսեցին գրել հայկական բարենորոգումները կյանքում իրագործելու անհրաժեշտության մասին: Սակայն Գերմանիայի կառավարող շրջանները հասկանում էին, որ հայկական հարցի արմատական լուծումը առանց թուրքիայի կազմալուծման՝ բացառված էր², որը իհարկե չէր մտնում վերջիններիս քաղաքական ուղեծրի մեջ, ուստի նրանց բոլոր առաջարկները և «հայասեր» կեցվածքը սոսկ սին էր, մեռած տառ: Դետևապես «Գերմանիան,- կատարում է ճիշտ եզրակացություն ռուս պատմաբանը,- հմտորեն օգտվեց հայկական հարցի շուրջ աղմուկից և Զայաստանի «ռուսական ռազմականման» երևակայական ծրագրերից, որպեսզի ամրապնդի իր գերիշխող ազդեցությունը թուրքիայում և երիտթուրքական կառավարությանը սադրի Ռուսաստանի դեմ»³:

Քաղաքական-դիվանագիտական այսպիսի մթնոլորտում և ռազմական երկու հակամարտ խմբակցության առաջատար տերությունների դիրքորոշման նման պայմաններում ռուսական նախագծի ծախողումը իր նախնական տեսքով անխուսափելի էր, որը պարզ երևաց Կ.Պոլսում վեց տերությունների դեսպանների (Ռուսաստան,

¹ Л. Истягин, Экспансия германского империализма в Турции и русско-германские противоречия по армянскому вопросу (1912-1914 гг.), с. 39.

² Նույն տեղում, էջ 39:

³ Նույն տեղում, էջ 53:

Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Ավստրո-Յունգարիա) առաջին հանդիպման ժամանակ, երբ Գերմանիան մերժեց ռուսական նախագիծը և առաջարկեց որպես հիմք ընդունել թուրքական նախագիծը:

Ռուսական դիվանագիտությունը իրատեսորեն գնահատելով ստեղծված իրավիճակը հարկադրված էր խուսաճանալ, ցուցաբերել ճկունություն, նահանջել, կատարել լուրջ զիջումներ: Մեծ տերությունները Կ.Պոլսի իրենց դեսպանների ներկայացուցիչների ջանքերով մերժում էին ռուսական առաջարկները և դրանով իսկ ձախողում ու փակուղի մտցնում բանակցությունների գործընթացը հայկական բարենորոգումների շուրջ, իսկ Ռուսաստանը, Իստյազինի պատկերավոր արտահայտությամբ, «չհամաձայնվեց» «գիլյոտինել» իր նախագիծը»¹: Սակայն Ռուսաստանը այնուամենայնիվ հարկադրված եղավ «գիլյոտինել» իր նախագիծը, այդ է վկայում Պետերբուրգում Գերմանիայի դեսպան Պուրտալեսին Սազոնովի կողմից հանձնված «ծայրահեղ դեպքի» համար նախատեսված հայկական բարենորոգումների նախագիծը, իսկ Կ.Պոլսում սկսեցին դեսպանների մակարդակով բանակցություններ Գիրսի ու Վանգենհայմի, ապա և երկու երկրների գլխավոր թարգմանների միջև: «Ռուսաստանին,- իրավացիորեն գրում էր ռուս պատմաբանը,- ուրիշ ոչինչ չէր մնում, բացի Գերմանիային անմիջականորեն դիմելուց»²:

Ի վերջո Գիրսը Վանգենհայմի հետ սեպտեմբերի 15-ին ունեցած մասնավոր գրույցից հետո հանեց ռուսական նախագծի գլխավոր պահանջները սահմանների և սեկտորների կազմի վերաբերյալ: Իստյազինը մեծ ուշադրություն է դարձնում ռուս-գերմանական վեց կետերից կազմված համաձայնագրին: Երկու կառավարությունները պայմանավորվեցին պաշտպանել այդ համաձայնագիրը Թուրքիայի առաջ: Յայկական վիլայեթները այս նոր համաձայնագրով բաժանվում էին թուրք-գերմանական ծրագրին համապատասխան երկու սեկտորի՝ հյուսիսային՝ Երզրումի, Տրապիզոնի և Սվասի և հարավային՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքի կազմով: Սազոնովի այցի ժամանակ 1913 թ. հոկտեմբերի 22-ին Բեռլինում նրա և ռայսսականցի Բեթման-Յոլվեգի միջև մանրամասնորեն քննարկվեց հայկական հարցը: Գերմանական կառավարությունը խոստացավ իր աջակցությունը Ռուսաստանի և Թուրքիայի բանակցություններում: Ինչ տվեց ռուս-գերմանական համաձայնագիրը կողմերին, ինչ շահեցին ու ինչ կորցրեցին նրանք, հարցնում է ռուս պատմաբանը, նրա

¹ Л. Истягин, Экспансия германского империализма в Турции и русско-германские противоречия по армянскому вопросу (1912-1914 гг.), с. 42.

² Նույն տեղում, էջ 47:

պատասխանը ընդհանուր առմամբ ընդունելի է, թեև առանձին դեպքերում վիճահարույց և անընդունելի: Հեղինակը, անշուշտ, սխալմամբ գերազանհատում է Գերմանիայի հաջողությունը, երբ համաձայնագիրը դիտում է որպես գերմանական դիվանագիտության լուրջ հաղթանակ, որը, իհարկե, չափազանցություն է, թեև դժվար չէ նկատել Ռուսաստանի լուրջ նահանջը իր նախագծից գերմանական ճնշման ներքո: Իստյազինի կարծիքով Ռուսաստանի համաձայնագիրը Գերմանիայի հետ, նշանակում էր հարկադրաբար Գերմանիային հանձնել կարևորագույն դիրքերը Փոքր Ասիայում: Այսուհետև Ռուսաստանը արդեն ոչ թե միայնակ, այլ Գերմանիայի հետ միասին էր հանդես գալու արևմտահայերին հովանավորողի դերում: Գերմանիայի ազդեցությունը Թուրքիայում և նույնիսկ հայկական բնակչության շրջանում անխուսափելիորեն պետք է մեծանար Ռուսաստանի հաշվին¹: Իհարկե, իրավացի է հեղինակը, երբ եզրակացնում է, թե ռուս-հայկական նախագծի համեմատ բարենորոգումների նոր ծրագիրը դարձավ հիմնավորապես սահմանափակված ու խիստ կրճատված: Նույնիսկ գերմանական դիվանագիտությունը այլևս չէր համարում, որ նոր պլանով բարենորոգումների ծրագիրը Հայաստանից կստեղծի ռուսական ազդեցության գոտի²: Իհարկե, եթե նկատի ունենանք, որ ռուսական նախնական ծրագրի մեջ գերմանական դիվանագիտությունը տեսավ անմիջական ոտնձգություն և ուղղակի հանցափորձ իր «սեփական գոտու» նկատմամբ, քանզի հայկական միասնական նահանգների մեջ պետք է մտներ «գերմանական Դիարբեքրի վիլայեթը»³, իսկ ռուս-գերմանական համաձայնագրով հայկական վիլայեթներից երկու սեկտորի ստեղծումը հիմնականում զոհացնում էր Գերմանիային, ապա միանգամայն օրինաչափ էր քաղաքական տեսանկյունից, որ տերությունների գլխավոր թարգմանների բանակցությունները ավստրիական դեսպանատանը՝ Ենիքյոյում սկզբից մինչև վերջ ընթացան ռուս-գերմանական դիվանագիտական մենամարտի ձևով:

Հոդվածում քննախոսվում է Ռուսաստանի ձեռք բերումը ռուս-գերմանական համատեղ համաձայնագրից: Իստյազինի իրավացի կարծիքով Ռուսաստանի հաջողությունը և առավելությունը թերևս այն էր, որ նա ստանում էր գերմանական աջակցությունը, թեկուզև Հայաստանում նվազագույն բարենորոգումները ապահովելու համար:

¹ Л. Истягин, Экспансия германского империализма в Турции и русско-германские противоречия по армянскому вопросу (1912-1914 гг.), с. 48.

² Նույն տեղում, էջ 48:

³ Նույն տեղում, էջ 42:

Սակայն, նախքան ողջ ծրագրի իրագործումը սպասվում էին բանակցություններ Թուրքիայի հետ, ընդ որում հաջողությունը զգալիորեն պայմանավորված էր, թե Գերմանիան բարեխղճորեն կկատարի արդյոք իր վրա վերցրած պարտավորությունները: Հետագայում Գերմանիան փաստորեն պարզապես հրաժարվեց Ռուսաստանի հետ հայկական բարենորոգումների շուրջ համագործակցելուց, իսկ ռուսական դիվանագիտությունը հարկադրված եղավ միայնակ պաշտպանել համատեղ համաձայնագիրը: Այդ համագործակցությունը օրեցօր սրվող ռուս-գերմանական հակամարտությունների և ընդհանրապես շիկացած ռազմաքաղաքական պայմաններում դարձնում էր ուղղակի անհնարին: Իստյագինի գնահատմամբ, դրան գլխավորապես խանգարեց գերմանական զինվորական ներկայացուցիչների ժամանումը Թուրքիա, որոնց ղեկավար Լիման Ֆոն Սանդերսը բանակցություններից հետո ստացավ մեծ լիազորություններ, այսինքն Գերմանիան հաստատում էր իր անմիջական իշխանությունը մայրաքաղաքի ու նեղուցների վրա: Առաջին աշխարհամարտի նախօրյակի այս խոշորագույն ռազմա-քաղաքական ու դիվանագիտական իրադարձություններից մեկը ծայրահեղ վտանգավոր աստիճանի հասցնելով ռուս-գերմանական հակասությունները «... լիովին ստվերի ներքո թողեցին նրանց (Ռուսաստանի և Գերմանիայի-Ս.Մ.) «համագործակցությունը» հայկական հարցում»¹:

Իստյագինը կիսում է ռուսական մամուլի գնահատականը, որի ներկայացուցիչները կաղետական «Ռեչ»-ից մինչև ծայրահեղ աջ «Նովոյե վրեմյա» թերթերը, արտահայտվում էին կամ շատ զուսպ, կամ լիովին բացասաբար, Գերմանիայի վարքագիծը Հայկական հարցում որակելով որպես խաբեություն Ռուսաստանի հանդեպ՝ հայերի համակրանքը ստանալու նպատակով²:

Ինչ վերաբերում է գերմանական մամուլին, ապա այն բնականաբար պետք է ջատագովեր ռուս-գերմանական համաձայնագիրը և հենվելով դրա վրա, ընդհակառակը, փորձում էր ապացուցել, թե Գերմանիան ու Ռուսաստանը կարող են «համաքայլ գնալ» Թուրքիայում³: Հայկական բարենորոգումների վերաբերյալ ռուս-գերմանական համաձայնագրի առնչությամբ Իստյագինը հպանցիկորեն անդրադառնում է Ֆրանսիայի Ռուսաստանի դաշնակցի, դիրքորոշման

¹ Л. Истягин, Экспансия германского империализма в Турции и русско-германские противоречия по армянскому вопросу (1912-1914 гг.), с. 49-50.

² Л. Истягин, Экспансия германского империализма в Турции и русско-германские противоречия по армянскому вопросу (1912-1914 гг.), с. 50, "Новое время" 18/31 января 1914 г. (Редакционная статья "Германия и армяне").

³ Л. Истягин, Экспансия германского империализма в Турции и русско-германские противоречия по армянскому вопросу (1912-1914 гг.), с. 50.

վրա: Ֆրանսիական դիվանագիտության շրջանում հայկական հարցի մասին ռուս-գերմանական կապերի լուրջ սկզբում առաջացրեց լուրջ ահազանգ ու անհանգստություն: Մտավախությամբ, որ այդ մերձեցումը կարող է շատ առաջ գնալ, ֆրանսիական դիվանագիտությունը շտապեց հայտարարել, թե պաշտպանում է թուրքիային ներկայացված ռուս-գերմանական պահանջները: Ֆրանսիայի մտահոգությունը արագորեն հանդարտվեց, հենց որ ռուս-գերմանական հարաբերությունները նորից սրվեցին ռազմական ներկայացուցիչների պատճառով¹: Ֆրանսիական դիվանագիտության մտավախությունը, ապա և դրա փարատումը միանգամայն հասկանալի էր, օրինաչափ, բնական ու տրամաբանական, քանզի ռուս-գերմանական համաձայնագիրը կարող էր դառնալ երկու երկրների համար հետագա մերձեցման նախապայման, որը թերևս մահացու վտանգ էր Ֆրանսիային, որովհետև առաջին աշխարհամարտի նախօրյակին արդեն գաղտնիք չէր այլևս նրա ահեղ թշնամու՝ Գերմանիայի հեռու գնացող քաղաքական ու ռազմական նպատակները: Ֆրանսիայի փրկության հիմնական երաշխիքը նրա բնական դաշնակցի՝ Ռուսաստանի հետ սերտ ռազմաքաղաքական համագործակցության մեջ էր, որը քաջ էին գիտակցում ֆրանսիացի հեռամետ պետական գործիչները և դիվանագետները: Ի բարեբախտություն Ֆրանսիայի, այդ մոտեցումը սոսկ կարծեցյալ էր, մանավանդ որ այդ փուլում Գերմանիան հայկական հարցում հաճույքով «ղեկավար դերը» զիջեց Ռուսաստանին, միայն թե շեղի վերջինիս ուշադրությունը թուրքիայում գերմանական անհամեմատ ավելի իրատես նվաճումներից²: Ի վերջո, ռուսաց դիվանագիտությունը հասավ հաջողության, քանզի երկարատև բանակցություններից հետո Ռուսաստանի ու թուրքիայի միջև 1914 թ. հունվարի 26-ին (փետրվարի 8-ին) հայկական հարցի վերաբերյալ կնքվեց համաձայնագիր: Թուրքիան պարտավորվեց Ռուսաստանի առջև տերությունների հանձնարարականով նշանակել երկու օտարերկրացի ընդհանուր նահանգապետի հինգ տարի ժամկետով: Իստյագինը ռուս-գերմանական համաձայնագիրը գնահատելիս ցուցաբերում է երկակի մոտեցում՝ մի կողմից այն դիտարկում է որպես ռուսաց դիվանագիտության լուրջ հաջողություն և խոշոր հաղթանակ, իսկ մյուս կողմից կասկածանք արտահայտելով նշում է, թե թուրքիան կիրագործեր արդյոք ստանձնած պարտավորությունները: Մի խնդիր է ստորագրել

¹ Л. Истягин, Экспансия германского империализма в Турцию и русско-германские противоречия по армянскому вопросу (1912-1914 гг.), с. 50.

² Նույն տեղում, էջ 51:

համաձայնագիրը, իսկ բոլորովին այլ հարց է, թե պատրաստվու՞մ էր արդյոք Թուրքիան կատարել համաձայնագրի կետերը¹ :

Իր այս կարևորագույն և իրատես հայեցակետը հիմնավորելու համար նա օգտագործում է ու հենվում հայ ժողովրդի դահիճներից մեկի՝ երիտթուրքական պարագլուխներից Ջեմալ փաշայի հուշագրության վրա, որտեղ արյունոռուշտ ոճրագործը առանց թաքցնելու ուղղակի խոստովանում էր, թե «հայկական բարենորոգումների հարցում մենք ձգտում էինք ազատվել այն պարտավորություններից, որոնց մեզ փաթաթեցին ռուսները... հավերժ թշնամի Ռուսաստանի կողմից մեզանից կորզած հայկական վիլայեթներում բարենորոգումների մասին պայմանագիրը մեզ համար չուներ էական նշանակություն... Մենք որոշեցինք մոտենալ բարենորոգումների մասին հարցին սկսելով նրանից, որ ցարիզմը պետք է կործանվեր... Այդ վաղուց ցանկալի նպատակին մենք կարող էինք հասնել, միայն պատերազմի մեջ նետվելով մեր կայսրության բոլոր ուժերով»² : Իստյաֆինի հողվածի նման համեմատաբար ծավալուն քննախոսությունը, իհարկե, ինքնապատակ չէ, այն պայմանավորված է կարևորագույն հարցադրումների ու հետաքրքիր պատասխանների հետ, որոնք զգալիորեն նպաստում էին հայկական բարենորոգումների հիմնախնդրի համակողմանի բացահայտմանը: Այսուհանդերձ հողվածում տեղ են գտել սկզբունքային նշանակության պատմագիտական բնույթի առանձին սխալներ, քաղաքական անընդունելի գնահատականներ: Նախ, լիովին դատապարտելի է ու քննադատելի, թե՛ պատմագիտական, և թե քաղաքական առումով հայ ազգային Դաշնակցություն կուսակցությանը ներկայացնել որպես ազգայնամուլական ու այդ տեսանկյունից դիտարկել ու գնահատել նրա ազգային-քաղաքական գործունեությունը: Այսպիսի պիտակավորված հայեցակետը բնորոշ է խորհրդային ժամանակաշրջանի ռուսաց (և ոչ միայն) պատմագրության համար, որը պայմանավորված էր պատմագիտության զարգացման մակարդակով և հատկապես քաղաքական-գաղափարական կաղապարով: Երկրորդ, հողվածում սխալմամբ փաստորեն հավասարության նշան է դրվում համեմայն դեպս էապես չի տարբերակվում գերմանա-ռուսական, հեղինակի բառերով, իմպերիալիզմի կենսագործած քաղաքականությունը և մրցակցությունը հայկական բարենորոգումների հարցում, մինչդեռ առարկայորեն անկախ ռուսական ինքնակալության հետապնդած իրական նպատակներից բարեփոխումների նրա նախագիծը ավելի շատ էր արտահայտում արևմտահայերի շահերը

¹ Л. Истягин, Экспансия германского империализма в Турции и русско-германские противоречия по армянскому вопросу (1912-1914 гг.), с. 51.

² Նույն տեղում, էջ 51: Джемал-паша, Записки Джемал-пашы 1913-1919 гг., Тифлис. с. 233.

կարող էր քիչ թե շատ բարելավել նրանց կացությունը: Սա բացահայտ ճշմարտություն է, թե՛ պատմական, և թե՛ քաղաքական առումով, չէ որ ռուսաց դիվանագիտությունը և հատկապես Մանդելշտամը ռուսական ծրագիրը մշակելիս ելնում էին հայկական նախագծերից, որոնք ուղարկվում էին Ռուսաստանի բարձրագույն գերատեսչություններին և պաշտոնյաներին, մինչդեռ Գերմանիան գործի դնելով քաղաքական ու դիվանագիտական բոլոր հնարքները ոչ միայն պաշտպանում էր թուրքական առաջարկները, այլև ի վերջո իրենց նախագիծը դրեց ինչպես ռուս-գերմանական, այնպես էլ ռուս-թուրքական համաձայնագրերի հիմքում: Միայն այս կարևորագույն պատմաքաղաքական փաստով է կարելի մեկնաբանել մի կողմից արևմտահայերի համակրանքը Ռուսաստանի նկատմամբ, իսկ մյուս կողմից նրանց սիրաշահելու գերմանական դիվանագիտության փորձերի կատարյալ ձախողումը: Ընդ որում, այս հանգամանքը ընդունում է նաև Իստյազինը, նշելով, որ այդ ուղղությամբ «գերմանական քարոզչությունը որևէ հաջողություն չունեցավ»¹, թեև այդ նպատակով 1914 թ. սկզբներին Բեռլինում կազմավորվեց «Գերմանա-Հայկական ընկերությունը», որտեղ ղեկավար դեր էին խաղում հայ ժողովրդի այնպիսի բարեկամներ, ինչպիսիք են Պաուլ Ռոհրբախը, դոկտոր Լեփսիուսը, պրոֆեսոր Շտիրը: Ընկերության գործունեությունը շուտով հայտնի դարձավ ոչ միայն Արևմտյան Հայաստանում, այլև նույնիսկ Անդրկովկասում², բայց վերջին հաշվով ապարդյուն: Երրորդ, ի տարբերություն նախախորհրդային պատմադիվանագիտական գրականության, որը գերազնահատում է ռուսաց դիվանագիտության հաջողությունը հայկական բարեփոխումների հիմնահարցում, նա թերագնահատում է այն, թերևս նույնիսկ հակված է դիտարկելու որպես պարտություն կամ լավագույն դեպքում անհաջողություն: «Ռուս-գերմանական իմպերիալիստական մրցակցության ընդհանուր արդյունքը հայկական հարցում աշխարհամարտի նախօրյակին,- գրում է նա,- վկայում են ցարական Ռուսաստանի պարտության մասին: Չստանալով Անգլիայի ու Ֆրանսիայի աջակցությունը ռուսական դիվանագիտությունը անգոր եղավ հաղթահարել Գերմանիայի դիմադրությունը հայկական բարենորոգումների իր նախագծին և հարկադրված հրաժարվեց դրանից : Մեծ դժվարությամբ և Գերմանիային կատարած զիջումների հաշվին ձեռք բերած համաձայնությունը Թուրքիայի հետ նույնպես մնաց թղթի վրա»³ : Թեև ռուսական դիվանագիտությունը կատարեց լուրջ զիջումներ Գերմանիային, այնուամենայ-

¹ Л. Истягин, Экспансия германского империализма в Турции и русско-германские противоречия по армянскому вопросу (1912-1914 гг.), с. 52.

² Նույն տեղում, էջ 52:

³ Նույն տեղում, էջ 52:

նիվ, նա ճկուն և հետևողական գործողությունների շնորհիվ կարողացավ համաձայնագիր կնքել Գերմանիայի հետ, ապա պարտադրել Թուրքիային ստորագրել համաձայնագիր, որը մի կողմից բարձրացրեց Ռուսաստանի միջազգային հեղինակությունը, իսկ մյուս կողմից էլ ավելի ամրապնդեց իր ազդեցությունը արևմտահայության շրջանում՝ քաղաքական կարևորագույն նշանակություն ունեցող երևույթ առաջին աշխարհամարտի նախօրյակին: Չորրորդ, Իստյազինը անվերապահորեն և խստագույնս դատապարտելով երիտթուրքերի ոճրագործությունը արևմտահայության դեմ՝ Մեծ Եղեռնը, միաժամանակ նշում է, որ առանց գերմանական ռազմամուկների թույլտվության ու աջակցության թուրք դահիճները չէին հանդգնի դիմելու «տեղահանության», այսինքն, քողարկված բնաջնջման, որից հետո կատարում հեռուն գնացող, բայց թերևս իր ամենամոտիկ տեսլականները: «Պատմական պատասխանատվությունը,- ամփոփում է նա,- մի ամբողջ ազգի գազանային բնաջնջման համար նախ և առաջ կրում է գերմանական իմպերիալիզմը... Գերմանական իմպերիալիզմին հայերի կոտորածը պետք էր գաղութային կայսրություն ստեղծելու համար Փոքր Ասիայում»¹: Այսպիսի մեկնաբանությունը հիմնականում վիճահարույց է, մեր կարծիքով այն կարող է լայն միջանցք թողնել թուրքական ոճրագործներին «մեղմացուցիչ» գործոններ փնտրելու համար²:

Եթե Իստյազինը հայկական բարենորոգումների հիմնահարցը դիտարկեց ռուս-գերմանական մրցակցության ու հակամարտության տեսանկյունից, ապա «Արևելյան հարցը Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեջ» աշխատության ռուս հեղինակները քննախոսում են մերձավոր արևելյան քաղաքականության լույսի ներքո, քանզի այն նրանց պատկերացմամբ կազմում է այդ արտաքին քաղաքական համակարգի անքակտելի բաղկացուցիչ մասը: Սա անշուշտ, ուշագրավ ու հետաքրքիր տեսակետ է, թեև հայկական հարցը կարելի է ու պետք է ուսումնասիրել որպես ինքնուրույն հարց, քանզի այն եվրոպական երկրների համար ներկայացնում էր որոշակի հետաքրքրություն և սերտորեն շաղկապված էր Թուրքիայի քաղաքական կարգավիճակի հետ: Աշխատության մեջ նրա հեղինակները՝ Գեորգիևը, Կինյապինան, Պանչենկովան, Շերենետը հիմնախնդրին հատկացրել են առանձին, թեև փոքրիկ ենթակետ «Հայկական հարցը 1912-1913 թթ.» խորագրով: Այդպիսի հետաքրքրությունը պայմանավորված էր, թե՛ պատմագիտական և թե՛ քաղաքական գործոններ

¹ Л. Истягин, Экспансия германского империализма в Турции и русско-германские противоречия по армянскому вопросу (1912-1914 гг.), с. 53.

² Հայոց Ցեղասպանության հիմնահարցը քննախոսվում է հաջորդ գլխում:

րով, քանզի հայկական հարցի վերաբացման դիվանագիտական նախաձեռնությունը, ինչպես արդեն հիշատակվել է, այս անգամ պատկանում էր Ռուսաստանին: Ռուս պատմաբանները լուսաբանում են քաղաքական պատճառները, որոնք, ի վերջո, հարկադրեցին ռուսական դիվանագիտությանը վերակողմնորոշվել հայկական հարցում և վերաբացել հայկական հարցը: Նրանց պատճառաբանությունները և մեկնաբանությունները հիմնավոր են ու ընդունելի: Նրանց հայեցակետով ռուսաց կառավարող շրջանների հետաքրքրությունը Արևմտյան Հայաստանի հանդեպ զգալիորեն մեծացավ ոչ միայն տնտեսական տեսանկյունից, քանզի «ցարիզմը Անատոլիայում իր ազդեցությունն ապահովելու համար ձգտում էր նվաճել հայ ժողովրդի համակրանքը»¹: Մյուս կողմից արևմտահայերը, շարունակում են նրանք, Ռուսաստանի մեջ էին տեսնում իրենց պաշտպանին, թուրքիայի հայ, գերազանցապես քրիստոնյա բնակչությունը, ապրում էր դաժան ճնշման պայմաններում, ֆիզիկական բնաջնջման մշտական վտանգի ներքո²: Այս կարևոր միտքը ուսումնասիրվում է իշխանության նոր գլուխ անցած երիտթուրքերի Ադանայում կազմակերպված հայերի կոտորածով 1909 թ, որի գոհ դարձավ շուրջ 20 հազար մարդ: Դա բացահայտ հակահայկական ուղղվածություն ունեցող քաղաքականության արդյունք էր, սև գործ՝ Մեծ Եղեռնի յուրատեսակ նախերգանք: Նրանց իրատես կարծիքով «երիտթուրքական կառավարության կենսագործած խտրական քաղաքականությունը հայերի հանդեպ հետապնդում էր ազատագրական շարժման փոքրագույն դրսևորումները ճնշելու նպատակ»³: Ռուս պատմաբանների տեսանկյունից հենց այս և նման գործոնները պայմաններ ստեղծեցին, որպեսզի արևմտահայերի և գրեթե ողջ հայության շրջանում սկսվի նոր շարժում վարչական բարենորոգումների համար, որը նրանք հույս ունեին ստանալ թուրքիայից մեծ տերությունների, նախ և առաջ Ռուսաստանի անմիջական օգնությամբ: Սա պատմական ճշմարտություն է, անվիճելի փաստ, որի մասին են վկայում բազմաթիվ պաշտոնական վավերագրեր, մասնավորապես Արևմտյան Հայաստանից ռուս հյուպատոսների զեկուցագրերը և հաղորդագրությունները, որոնց վրա էլ հենվում են Կինյապինան ու նրա գործընկերները, երբ մեկնաբանում են իրենց տեսակետները և հիմնավորում են իրենց զնահատականները: Միաժամանակ նրանք հայոց հարցի վերաբացման գործում կարևորում են տարբեր երկրներում ապրող հայերից ստացվող նամակները, որոնցում հույս է հայտնվում, որ «Ռու-

¹ Н.С. Киняпина, В.А. Георгиев, М.Т. Папченко, В.Н.Шеремет, Восточный вопрос во внешней политике России (конец XVIII - начало XX вв.), М., 1978, с. 368.

² Նույն տեղում, էջ 368:

³ Նույն տեղում, էջ 368:

սաստանը իր վրա կվերցնի հայկական հարցի լուծման նախաձեռնությունը»¹։ Հենվելով ու զարգացնելով ռուսաց պատմագրության հայեցակետը Կինյապինն ու նրա գրչակիցները նույնպես ընդգծում են, որ հայկական հարցի վերաբացման խնդրում ռուսական դիվանագիտությունը ցուցաբերում էր մեծ զգուշավորություն, գտնելով, թե շտապողականությունը չի կարող նպաստել գործին, ուստի և նախապատրաստվում էր հայկական բարենորոգումների հիմնախնդրին անդրադառնալ միայն Բալկանյան պատերազմից հետո, քանզի ստեղծված ռազմա-քաղաքական իրադրությունը իր վրա էր գամել Ռուսաստանի ողջ ուշադրությունը։ Հետևաբար հայկական բարենորոգումների հարցը Արևմտյան Հայաստանում ռուսական դիվանագիտության համար ածանցյալ էր Բալկանյան հիմնախնդիրների համեմատությամբ։ Ռուսական դիվանագիտության այսպիսի մարտավարությունը կարմիր թելի պես անցնում էր Սազոնովի՝ Ռուսաստանի արտասահմանյան ներկայացուցիչներին հղած շրջաբերական նամակում, կազմելով նրա բովանդակության անկյունաքարը։ Հավաստելով, որ Ռուսաստանը պատրաստ է հայ ժողովրդին ցույց տալ հնարավորին չափով աջակցություն, Սազոնովը միաժամանակ զգուշացնում էր, թե Թուրքիայում ապրող հայերի կենցաղի բարելավման և ապահովման գործը առաջ մղելու համար իրեն է վերապահվում ժամանակի և ձևի ընտրության իրավունքը²։ «Այստեղից երևում է, - եզրակացնում են նրանք, - որ այդ պահին հայոց գործերին վճռապես միջամտելը չէր մտնում ցարական կառավարության պլանների մեջ։ Սազոնովը հայոց հարցի վերաբացումը, քանի դեռ բալկանյան ճգնաժամը չէր ավարտվել, համարում էր վաղաժամ»³։ Սակայն քաջ գիտենալով, որ նման անորոշությունը կարող է խիստ դժգոհության պատճառ դառնալ արևմտահայության շրջանում և դրանով ձախողել Ռուսաստանի հետապնդած քաղաքական նպատակները, Սազոնովը կարծես նրանց կասկածները փարատելու համար Բարձր Դռան ուշադրությունը հրավիրեց արևելյան վիլայեթներում ստեղծված անհանգիստ դրության վրա, միաժամանակ զգուշացնելով հայկական կոտորածի կրկնության անթույլատրելիության մասին և դրեց Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու անհրաժեշտության հարցը⁴։ Ռուսաց պատմագրության հաջորդականությունն ու ժառանգականությունը դառնում է ակնհայտ, երբ քննախոսում ենք նրա ներկա-

¹ Н.С. Киняпина, В.А. Георгиев, М.Т. Панченкова, В.И.Шеремет, Восточный вопрос во внешней политике России (конец XVIII - начало XX вв.), М., 1978, с. 369.

² Նույն տեղում, էջ 369:

³ Նույն տեղում, էջ 369:

⁴ Նույն տեղում, էջ 369:

յացուցիչների տեսակետը հայկական բարենորոգումների վերաբերյալ մեծ տերությունների քաղաքական դիրքորոշումը և դիվանագիտական վարքագիծը: Կինյապինան, Գեորգիևը, Պանչենկովան և Շերեմետը իրենց հերթին ոչ միայն ընդգծում են Գերմանիայի թուրքամետությունը և դիվանագիտական նախաձեռնություն ստանձնելու ձգտումը, այլև արծանագրում, որ հայկական բարենորոգումները վերստին ձեռք բերեցին միջազգային բովանդակություն, քանզի միջամտեցին մեծ տերությունները: Համադրելով 1895 թ. հայկական վիլայեթների համար մշակած նախագիծը, Անդրե Մանդելշտամի նախագծին Կինյապինան ու նրա գործընկերները իրավացիորեն նշում են, որ ռուսական տարբերակը որոշ չափով առաջ էր անցել Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի համատեղ ջանքերով մշակած նախագծից: Եթե 90-ական թվականների նախագիծը կազմելու գործընթացում հիմնական պայքարը գնաց Ռուսաստանի ու Անգլիայի, ապա 1913-1914 թթ.¹ Ռուսաստանի և Գերմանիայի միջև: Պատմագիտական որոշակի հետաքրքրություն են ներկայացնում հատկապես բարենորոգումների ռուսաց նախագծի նկատմամբ մեծ տերությունների դիրքորոշմանը վերաբերող նրանց կողմից շրջանառության մեջ դրած ու մինչ այդ գրեթե չօգտագործված կամ համեմատաբար քիչ հայտնի պատմափաստերը, որոնք, անշուշտ, կարևոր են այն առումով, որ հիմնականում անտեսվել են կամ էլ անմատչելի են եղել հայ պատմաբաններին: Նրանք ուշադրությունը սևեռում են Կ.Պոլսում Անգլիայի դեսպան Լոութերի, Ֆրանսիայի՝ Բոպպի, նրանց անմիջական ղեկավարներ արտգործնախարարներ Պիշոնի ու Գրեյի հայկական բարենորոգումների հիմնահարցում ունեցած դիրքորոշման, ռուսական նախագիծը տապալելու և Ռուսաստանի ազդեցությունը արևմտահայության շրջանում թուլացնելու համար: «Անգլիական դիվանագետները գտնում էին,- այս կապակցությամբ գրում են նրանք,- որ Արևմտյան Հայաստանի նկատմամբ իր պահանջների մեջ Պետերբուրգը չափից շատ էր առաջ գնում»¹: Անգլիայի ոչ ռուսամպաստ, առավել ևս ոչ հայամպաստ դիրքորոշումը նրանք հիմնավորում են պետական քարտուղարի օգնական Լ. Մալլեթի Պետերբուրգում Անգլիայի դեսպան Բյուքենենի զեկուցագրի վրա գրված՝ «ռուսները ցանկանում են հայկական նահանգներում ունենալ ռուսաց կառավարչի»² պերճախոս բառերով: Ենթադրելով, թե ռուսական ծրագրում նախատեսվում է հայկական նահանգների ինքնավարություն և խիստ մտավախելով դրանից, նա հայտարարեց, թե «վճռապես կդիմադրի

¹ Н.С. Книпянина, В.А. Георгиев, М.Т. Панченкова, В.И.Шеремет, Восточный вопрос во внешней политике России (конец XVIII - начало XX вв.), М., 1978, с. 369.

² Նույն տեղում, էջ 372:

նման միտումին»¹ : Այս կարևորագույն պատմաքաղաքական փաստը ավելի ամրապնդելու համար նրանք գիտական շրջանառության մեջ են դնում մեկ այլ զորեղ պաշտոնական վավերագիր՝ այս անգամ արդեն հիմք ընդունելով Գրեյի հեռագիրը եվրոպական մայրաքաղաքներում գտնվող անգլիական ներկայացուցիչներին, որտեղ ուղղակի մատնանշվում էր, թե ինքը դեմ է հայերի համար նախատեսվող բարենորոգումների ամեն տեսակի նախագծերին, որոնք բարեպատեհ դեպքում կարող են տանել Թուրքիայի հնարավոր բաժանման² : Այսպիսի «սրտառուչ» մտավախությունը Թուրքիայի հնարավոր բաժանման և հայկական վիլայեթներից ինքնավար վարչական միավոր ստեղծելու մասին միանգամայն անհիմաստ էր և ավելորդ, քանզի նման ծրագիր չէր նախատեսվում ընդհանրապես: Դա պարզապես լավագույն քաղաքական միջոց էր և պատրվակ ռուսական նախագիծը տապալելու համար: Սակայն, ինչպես արդեն նշվեց, բացահայտորեն համոզես գալ ռուսաց նախագծի դեմ անգլիական խորամանկ դիվանագիտությունը համարեց ավելորդ և անհիմաստ, քանզի այդպիսին էր Գերմանիայի դիրքորոշումը: Անգլիան պարզապես հաջողությամբ խաղում էր ռուս-գերմանական հակամարտությունների վրա: Նա մի կողմից ցույց էր տալիս, որ համամիտ է իր դաշնակից Ռուսաստանի մշակած բարենորոգումների նախագծին, իսկ մյուս կողմից արևմտահայության համար նախատեսվող բարենորոգումների ձախողման ողջ պատասխանատվությունը բարդում Գերմանիայի վրա: Այդպիսին էր նաև Ռուսաստանի մյուս դաշնակցի՝ Ֆրանսիայի դիրքորոշումը, նա էլ իր հերթին փորձում էր ստեղծել այն տպավորությունը, թե բարենորոգումների իրագործմանը խոչընդոտում էր գերազանցապես Գերմանիան: «Գրեյը և Պիշոնը լիազորեցին իրենց դեսպաններին (Կ.Պոլսի-Մ.Մ.) հաղորդել ռուսական կառավարությանը, որ Անգլիան և Ֆրանսիան պատրաստ են պաշտպանել բարենորոգումների նախագիծը, որը դուրս չի գալիս 1895 թ. նախագծի շրջանակներից և որը հավանության կարժանանա բոլոր տերությունների կողմից»³ :

Դժվար չէ անգամ անգեն աչքով տեսնել, առավել ևս կռահել, որ Թուրքիային թիկունք կանգնած Գերմանիան երբեք չէր համաձայնվի ընդունել ռուսական նախագիծը իր նախնական տեսքով: Պարզից էլ պարզ էր, որ ռուսական նախագծի քննարկումը, թե՛ դեսպանների և թե՛ գլխավոր թարգմանների մակարդակով, ապա նաև ռուս-գերմա-

¹ Н.С. Книшпина, В.А. Георгиев, М.Т. Панченкова, В.Н.Шеремет, Восточный вопрос во внешней политике России (конец XVIII - начало XX вв.), М., 1978, с. 371.

² Նույն տեղում, էջ 371:

³ Նույն տեղում, էջ 371:

նական համաձայնագրի, ռուս-թուրքական համաձայնագրի ստորագրման գործընթացը տեղի էին ունենում Թուրքիայի համար բարենպաստ պայմաններում, իսկ արևմտահայության շահերի տեսանկյունից վերստին խիստ անբարենպաստ դիվանագիտական մթնոլորտում: Իսկ մնացածը, ինչպես ասում են դիվանագիտական փարիսեցիություն էր, որի մեջ թուրքերն իրենց զգում են այնպես, ինչպես ծուկը ջրում:

Կինյապինայի, Գեորգիևի, Պանչենկովայի, Շերեմետի աշխատությունը իր բոլոր պատմագիտական արժեքներով հանդերձ նույնպես զերծ չէր թերություններից, վրիպումներից, բացթողումներից: Առաջին թերությունը վերաբերում է Գերմանիայի քաղաքական դիրքորոշմանը տված համակողմանի գնահատականին՝ կապված հայկական բարենորոգումների հիմնահարցին: Անշուշտ, անաչառ են ռուս պատմաբանները ինչպես պատմագիտական, այնպես էլ քաղաքական տեսակետից, երբ նշում են, թե «Գերմանիայի մասնակցությունը Արևմտյան Հայաստանի բարենորոգումների գործին իրականում ուներ ոչ միայն հակառուսական, այլև հակահայկական ուղղվածություն: Բեռլինը Հայոց Հարցը օգտագործում էր իր եսասիրական նպատակների համար»¹ : Այս պատմահայեցակետը լիովին ճշմարիտ է, քանզի փարիսեցիություն էր գերմանական դիվանագիտության կողմից իրեն ներկայացնել հայերի հովանավորող² : Սակայն չափազանցություն է և վիճահարույց հեղինակների այն միտքը, թե Գերմանիայում մշակվում էին Ռուսաստանի սահմանակից շրջաններից հայ բնակչությանը դուրս մղելու և վտարելու առավել ևս նրան ֆիզիկապես ոչնչացնելու ծրագրերը: Հայերին ֆիզիկապես ոչնչացնելու գերմանական մտահղացումը չի հավաստվում որևէ արժանահավատ վավերագրով: Մի՞թե արևմտահայերին ոչնչացնելու ծրագրեր մշակելով հնարավոր կլինե՞ր պահպանել իր հեղինակությունը հայության շրջանում ընդհանրապես: Եթե գերմանական կառավարող շրջանները իրենց առջև լրջորեն դնեին այդպիսի հեռու գնացող նպատակներ, ապա հազիվ թե Ռուսաստանի հետ մշակեին բարենորոգումների նոր նախագծի հիմնական կետերը, որոնք ինչպես նշվել է, ընկան ռուս-թուրքական համաձայնագրի հիմքում: Այստեղ ևս ի հայտ է գալիս ռուսական պատմագրության հայեցակարգի ժառանգականությունը Գերմանիայի դիրքորոշման վերաբերյալ հայկական բարեփոխումների հիմնախնդրում: Այդպիսի գնահատականի վրա հավանաբար իր կնիքն էր դնում ռուս-գերմանական սուր մրցակցությունը և հատկա-

¹ Н.С. Книжпина, В.А. Георгиев, М.Т. Панченко, В.И.Шермет, Восточный вопрос во внешней политике России (конец XVIII - начало XX вв.), М., 1978, с. 372.

² Նույն տեղում, էջ 372:

պես երկու աշխարհամարտում Ռուսաստանի ու Գերմանիայի վճռորոշ դերը:

Երկրորդ, ամենամեծ պատմագիտական թերությունը և քաղաքական լուրջ բացթողումը, թերևս այն է, որ ռուս պատմաբանները անգամ հարկ չհամարեցին գեթ մի էջ հատկացնել հայ ժողովրդի ծանր ողբերգությանը՝ Մեծ Եղեռնին: Ընդհանրապես պատմաքաղաքական առումով դժվար բացատրելի է և անհասկանալի, թե ինչու են նրանք անտեսել հայ ժողովրդի պատմության ամենամռայլ էջը, մանավանդ որ գրքում լիովին դատապարտված է Աբդուլ-համիդյան մարդակերների կազմակերպած կոտորածները Սասունում, մատնանշված ռուսական բանակի հաղթանակները կովկասյան ռազմաճակատում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, որի շնորհիվ ռուսները գրավեցին Երզրումը, Բիթլիսը և այլ քաղաքներ:

Երրորդ, ընդհանրապես վերին աստիճանի մակերեսորեն ներկայացնելով երիտթուրքերի ողջ գործունեությունը, հատկապես ազգային քաղաքականության ոլորտում, ռուս պատմաբանները երիտթուրքական կազմակերպությունների մեջ տեսնում են հեղափոխական-ժողովրդավարական ուժեր, որը, իհարկե, մեղմ ասած, կատարյալ գերազնահատում է և բոլորովին չի համապատասխանում իրականությանը: Ինչպես կարելի է հեղափոխական-ժողովրդավարական համարել մի շարժում, եթե հենց իսկ ռուս պատմաբանների փաստարկմամբ, նույն երիտթուրքերը, որոնց արագ հաղթանակին նպաստեցին արաբական, մակեդոնական, հայկական իսկապես ազգային-հեղափոխական-ժողովրդավարական ուժերը, իշխանության գլուխ անցնելուց հետո անմիջապես հաշվեհարդար տեսան նրանց հետ: Անթույլատրելի է հեղափոխական-ժողովրդավարական լայն միտումներ տեսնել այն շարժման մեջ, որի պարագլուխները ոչ միայն չիրաժարվեցին աբդուլհամիդյան արյունոտ ազգային քաղաքականությունից, այլև կատարելագործեցին նրա ոճրագործությունները, ընդլայնեցին շրջանակները հատկապես արևմտահայության նկատմամբ: Եվ օրինաչափ է երիտթուրքական արյունոտուշտ քաղաքականության տեսանկյունից, թե ինչու ստորագրելով 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրը նրա պարագլուխները գործի ղեկավար ամեն ինչ, կարողացան խուսափել ստանձնած պարտավորությունը կատարելուց: Իսկապես, մինչև առաջին աշխարհամարտի սկիզբը Թուրքիան այդպես էլ ձեռնամուխ չէր հայկական բարենորոգումների իրագործմանը, թեև 1914 թ. գարնանը Արևմտյան Հայաստանի նահանգապետներ են նշանակվում հուլանդացի Վեստենենը և նորվեգացի Հոֆը: Վեստենենը ղեկավարելու էր Երզրումի, Տրապիզոնի, Սեբաստիայի վիլայեթները, իսկ Հոֆը՝ Վանի, Բիթլիսի,

Խարբերդի ու Դիարբեքիի վիլայեթները: Հայկական բարենորոգումները սակայն, այդպես էլ չիրականացան ու մնացին որպես թղթի կտոր և մեռած տառ: Ավելին, առջևում էր հայոց նորագույն և ողջ պատմության ամենամռայլ օրը ու ամենաողբերգական էջը՝ Հայոց Մեծ Ցեղասպանությունը:

~

ԳԼՈՒԽ IV

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԹՈՒՐՔԻՋՄԸ ՌՈՒՄԱՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՄՏՔԻ ՊՍԱԿԱԶԵՐԾՄԱՄԲ

*«Հայոց հարցը մեծ է ու
բարդ»:
Մ. Կովալևսկի*

*«Գիտեմ, որ խեղճ հային չեն
տալ
Հայաստան: Մեր ազգ
կազմելու ամենքն են
խափան»:
Ռ. Պատկանյան*

Հայոց Մեծ Ցեղասպանությունը ռուսաց հասարակության լայն շրջանների համար ոչ անսպասելի էր, ոչ էլ անակնկալ, որովհետև վերջիններիս ներկայացուցիչները արդեն լսել ու ականատեսն էին եղել աբդուլհամիդյան արյունոտ վայրագություններին Սասունում, Զեյթունում, ապա Կ.Պոլսում, երիտթուրքերի կազմակերպած կոտորածներին Ադանայում, «Միություն և Առաջադիմություն» կուսակցության պարագլուխների կողմից մշակված Օսմանյան կայսրության տարածքում ապրող հայության վերջնական բնաջնջմանն ու տեղահանությանը, որոնք պաշտոնապես արդեն ամրագրվել էին իթթիականների գաղտնի ժողովներում ընդունված փաստաթղթերում:

Թուրքիայում ապրող հայությանը սպառնացող աղետի, նրա գլխին կախված դանակյան նոր սրի ու հասունացող առավել ահեղ արհավիրքի մասին էին տեղեկացնում Կ.Պոլսի ռուսաց դեսպանատան աշխատակիցները, հատկապես Արևմտյան Հայաստանի քաղաքներում արտոնագրված ռուսաց հյուպատոսները իրենց ահազանգող զեկուցագրերում, տագնապալի ճեպագրերում ու նամակներում: Ընդհանրապես Ռուսաստանի պետական քաղաքական շատ գործիչներ, դիվանագիտական լայն շրջաններ, հասարակական մտքի ներկայացուցիչներ, ի հակադրություն, 1890-ական թթ. կայսրության կարծատես մերձավորարևելյան քաղաքականության,

մշտապես հետաքրքրվում էին Արևմտյան Հայաստանի կարգավիճակով ու արևմտահայության կացությամբ, ինչն, իհարկե ուներ իր հիմնարար պատճառները, որը գերազանցապես պայմանավորված էր առաջին աշխարհամարտի նախօրյակին ստեղծված ռազմաքաղաքական իրադրությամբ: Ռուսաստանի պետական ու զինվորական բարձրաստիճան այրերը իրատեսորեն անխուսափելի էին համարում համաեվրոպական մեծ պատերազմը, որը կարևորում էր ռուսաց դիվանագիտության հետաքրքրությունը արևմտահայության նկատմամբ: Այս առնչությամբ նրանք, բնավ էլ չէին բացառում Ռուսաստանի դեմ պատերազմում թուրքիայի հնարավոր մասնակցությունը: Դեպքերի զարգացման նման պարագայում արևելահայերը որպես ռուսաց կայսրության հպատակներ կարող էին անմիջապես մասնակցել ռազմական գործողություններին, իրենց ներդրումն ունենալ թուրքիային ջախջախելու գործում, իսկ արևմտահայերը հուսալի հենարան դառնալ նրա զորքերի համար: Պատմությունը բազում անգամ ապացուցել է Ռուսաստանի հանդեպ արևմտահայության ունեցած ակնկալիքները, պատմական փաստ է նաև, որ ռուս-թուրքական գրեթե բոլոր պատերազմներում ռազմական գործողությունները գերազանցապես տեղի էին ունենում Արևմտյան Հայաստանում: Ահա ինչու, երբ թուրքիան որպես Գերմանիայի դաշնակից մտավ պատերազմի մեջ, ռուսաց հասարակական-քաղաքական մտքի հեռամետ գործիչներին ակնհայտ դարձավ, թե ինչպիսի նոր փորձություններ են բաժին ընկնելու Օսմանյան կայսրությունում ապրող հայությանը: Այս միտքը կարմիր թելի պես անցնում էր ինչպես պարբերական մամուլում տպագրված բազում հոդվածներում, այնպես էլ պետական-քաղաքական գործիչների պաշտոնական ելույթներում: 1914 թ. հոկտեմբերի 21-ին Մոսկվայի խաղաղության ընկերության ընդհանուր ժողովի ընդունած բանաձևում հստակ էր մտավախությունը թուրքիայում ապրող քրիստոնյաների, հատկապես արևմտահայության ճակատագրի նկատմամբ: «Թուրքիայում,- ասված է այդ բանաձևում,-, ապրում են միլիոնավոր քրիստոնյաներ: Պատերազմի ժամանակ թուրքիայի քրիստոնյա բնակչությանը սպառնալու է մեծ վտանգ: Բայց հույներն ու սլավոններն ունեն իրենց կառավարությունները, որոնք կարող են ձեռնարկել միջոցառումներ իրենց հպատակներին ու ցեղակիցներին պաշտպանելու համար: Միայն հայերը չունեն իրենց կառավարությունը, որոնց մի մասը ապրում է թուրքիայում, իսկ մյուս մասը Ռուսաստանում, ուստի մենք չենք կասկածում, որ ռուսաց կառավարությունը չեզոք տերությունների կառավարությունների ներկայացուցիչների միջոցով կձեռնարկի իրենից կախված բոլոր միջոցները հայկական վիլայեթների բնակչության ճակատագիրը ապահովելու համար, որտեղ խաղաղ ժամանակ ևս պարբերաբար տե-

դի էին ունենում հայերի կոտորածներ քրդերի կողմից¹»: Այս բանաձևն ուղարկվեց Ռուսաստանի արտգործնախարարին և Բեռնի Միջազգային Խաղաղության Բյուրոյին, վերջինիս միաժամանակ հղվեց հեռագիր Թուրքիայում ապրող հայ բնակչության ճակատագրով մտահոգվելու խնդրանքով: Բեռնի Բյուրոն 1914 թ. նոյեմբերին Մոսկվայի խաղաղության ընկերությանը տեղեկացրեց, որ ձեռնարկվել են համապատասխան քայլեր²: Սակայն նշված չէր, թե կոնկրետ ինչ քայլեր են ձեռնարկվել այդ ուղղությամբ, հավանաբար այն պատճառով, որ իրականում ոչ մի իրատես քայլ չէր կատարվել, իսկ եթե նույնիսկ ձեռնարկվե՞ր, ապա հազիվ թե այն ունենար որևէ էական նշանակություն, եթե, իհարկե, մի պահ անտեսենք հիմնահարցի բարոյական կողմը: Մինչդեռ արևմտահայերին այդ սարսափելի աղետից փրկելու համար անհրաժեշտ էին ոչ թե մարդասիրական ու բարոյախոսական բնույթի որոշումներ և հայտարարություններ, որոնք թուրք ոճրագործների համար սոսկ թղթի կտոր լինելով, բնականաբար չէին կարող որևէ նշանակություն ունենալ, այլ զորեղ դիմակայող ուժ հանցագործների ձեռքերը կտրելու և այդպես խաղաղ բնակչությանը նոր աղետից փրկելու համար: Հայոց Մեծ եղեռնը մեկ անգամ ևս ապացուցեց պատմական այն դառը ճշմարտությունը, թե պատերազմի ժամանակ մոռացության են մատնվում մարդասիրությունը, բարոյական սկզբունքները, խիղճը, ողջամտությունը, լուծում են օրենքները, իրավունքը և դրանց փոխարեն գործում են բռնությունը, սպանըղ, բարբարոսությունը, կամայականությունը, եղեռնագործությունը այդ ամենը պետական շահերի պաշտպանության, նրա անվտանգության ապահովման քողի ներքո և պատրվակով: Հիրավի, պատերազմի ընթացքում որպես կանոն լուծում են օրենքները և գործում են միայն հրանոթները: Եվ իզուր էր XVII դ. մեծ մտածող, փիլիսոփա, պատմաբան, դիվանագետ, միջազգային իրավունքի հիմնադիրներից մեկը Յուզո Գրոցիուսը բանավիճում նրանց հետ, ովքեր ելնելով պատերազմի դարավոր փորձից, նշում էին, թե պատերազմի ժամանակ թմոնոթների համազարկերը լռեցնում են օրենքը և իրավունքը: Մինչդեռ Գրոցիուսը արդեն XVII դ. պահանջում էր, որպեսզի պատերազմների ընթացքում էլ գործեն օրենքները, հանրաճանաչ իրավունքները, պահպանվեն խաղաղ բնակչության կյանքի ու գույքի անվտանգությունը: Ռուսական հասարակական-քաղաքական տարբեր ուղղություններին պատկանող և զանազան գաղափարախոսություն դավանող թերթերը ու ամսագրերը ամենայն խստությամբ ու վճռականությամբ դատապարտեցին երիտթուրքերի հայակույլ գոր-

¹ "Армянский Вестник", 1916, №1, с.2.

² Նույն տեղում, էջ 2:

ծողությունները, անկեղծորեն կարեկցեցին արևմտահայերին, համակրանքով, սիրով ու ջերմությամբ արտահայտվեցին բազում արհավիրքներ վերապրած հայ ժողովրդի մասին: Առանձնահատուկ էր այս կապակցությամբ հատկապես Մոսկվայում լույս տեսնող "Армянский Вестник"-ի («Հայկական լրաբեր») դերը և նշանակությունը, որն իր երկու տարվա գոյության ընթացքում (1916-1918) հայ և ռուս հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչների ջանքերով սպառնիչ ձևով լուսաբանեց երիտթուրքերի հետապնդած նպատակները, ցեղասպանության պատճառները, բացահայտեց արդուհամիդյան ու երիտթուրքական հանցագործ քաղաքականության ներքին ընդհանուր կապը: Եվ այդ ամենի միջոցով ռուս ընթերցողների լայն շրջաններին պարզ էր դառնում, թե ինչ ողբերգական մղձավանջային, մահասարսուռ ժամանակներ են ապրել արևմտահայերը, թե ինչպես և ինչ միջոցներով էին ցանկանում թուրքական պետության հայատյաց պարագլուխները «լուծել» հայկական հարցը: Եթե 90-ական թվականներին ռուսական պարբերականներում նկատելի էին նաև Լոբանով-Ռոստովսկու արտաքին քաղաքականությունը արդարացնող դատապարտելի հակահայկական բնույթի անսքող թուրքամետ հողվածներ, ապա երիտթուրքերի ոճրագործությունների պսակագերծման գործում մասնուկի գնահատականները միանշանակ են ու հստակ, որի շնորհիվ սովորական թուրքիզմը դրսևորվում է իր ամբողջության մեջ, առանց դիմակի, իր իսկական պիղծ դեմքով: Դրան նպաստեց առաջին աշխարհամարտում ռուսական բանակում գործող հայկական կամավորական ջոկատների առկայությունը, Արևմտյան Հայաստանի որոշ տարածքների ազատագրումը, իշխանությունների ընդհանուր առմամբ դրական գնահատականը: «Հայկական լրաբերի» անդրամիկ համարում հայ փախստականների դժնդակ վիճակի մասին հիշողություններով հանդես եկավ այդ դեպքերի ժամանակակից ու ականատես Ն. Օգանովսկին: Հեղինակը եղել էր էջմիածնում ու անձամբ տեսել Մեծ եղեռնից մի կերպ փրկված գաղթականների, ոչ պակաս ծանր ու դժնդակ դրությունը: Հոգվածը գրվել է ողբերգական դեպքերի անմիջական ազդեցությամբ, էջմիածնում վերստին լինելուց հետո: Թեև նրա վերջին այցից անցել էր շուրջ հինգ ամիս, այնուամենայնիվ թուրքական արյունոտ յաթաղանից հրաշքով փրկված արևմտահայության կացությունում ըստ էության ոչինչ չէր փոխվել: Այս հոգվածը պատմաքաղաքական հետաքրքրություն է ներկայացնում, ոչ միայն այն առումով, որ նա այս դժողքի ականատեսն է, այլև կարևորվում է օգտագործված նյութերի հավաստիության տեսանկյունից, քանզի գրվել է թուրքական սպայի օրագրում եղած փաստերի հիման վրա: Թուրքական սպանված սպայի հայտնաբերված օրագիրը, հեղինակի իրավացի կարծիքով,

արժեքավոր փաստաթուղթ է, քանզի հայերի դեմ կիրառված դաժանությունները, բնավ էլ չեն կարող չափազանցված լինել: «Այնժամ, երբ մենք կանգնեցինք Շատախում,- նշված է թուրքական սպայի օրագրում,- ես տեսա թե ինչպես էին գնդակահարում հայերին: Երեկոյան մենք սպանեցինք 70 մարդու, առավոտյան մնացածներին (հարյուրից ավելի), զինվորներից մեկը գնաց Շեն գյուղը և բոլոր հայերին տեսավ կոտորված կամ գալարվող մահվան ճիրաններում¹»: «Բիթլիսի ճանապարհին,- շարունակում է Ն. Օգանովսկին,- փաստեր վկայակոչել թուրք սպայի օրագրից,- տեսա փոքրիկ ձեռքերը գետնի վրա հողի մեջ թաղված մի հայ տղայի: Արյունը հոսում էր նրա բերանից ու քթից: Գետի ափին տեսա չորս դիակ, մեկը կանացի կտրված կրծքով և ծվատված արգանդով, մյուսը կտրատված էր մասերի, իսկ մնացածները ծածկված էին տասնյակ վերքերով: Դիակները ընկած էին ջրում, որը ես խմում էի հաճույքով, ինքս ասելով, «ահա ձեզ ինքնավարություն»²: Բնական է, որ հենց նման պերճախոս վկայությունների համար է ասված, թե մեկնաբանություններն ավելորդ են: Թուրք սպայի բնագրային գեներտիկ ատելությունը, հային հոշոտելու գազանային մոլուցքը չի կարող կասկած հարուցել, այն անվիճելի է ու ակնհայտ: Այս ամենը սովորական թուրքիզմի ոճով, որպես դրա դրսևորման վկայաշարք: Այսուհանդերձ հեղինակը չի սահմանափակվում դրանցով ու ընթերցողներին է ներկայացնում Բիթլիսի «գործողությունների» ականատես ազգությամբ սիրիացի, թուրքական բանակի 38-րդ դիվիզիայի բժշկի վկայությունները, որի հետ Ն. Օգանովսկուն հաջողվեց հանդիպել Թուրքիայից նրա փախուստից հետո: Սիրիացի բժիշկը պատմում է, որ «Բիթլիս չիասած, նա անտառում տեսել է մորթված տղամարդկանց կույտ և նրանց կողքին, լիովին մերկ, ոտքից կախված երեք կանանց: Նրանցից մեկի մոտ, ձգվելով դեպի մայրը, սողում է միամյա մի երեխա, իսկ դեռևս կենդանի, դեմքը արյունով լցված մայրը, ձեռքերը պարզում էր երեխային: Բայց նրանք չէին կարող հասնել միմյանց»³: Վերստին անդրադառնալով թուրք սպայի օրագրին, Ն. Օգանովսկին ցանկանում էր ցույց տալ, թե ինչպես էր թուրքական բանակի հրամանատարությունը հաշվեհարդար տեսնում օսմանյան զորքում ծառայող ազգությամբ հայ զինվորների հետ: Թուրք սպան գրում էր, որ իրեն հրամայված է եղել գնդակահարելու համար առանձնացնել ու հավաքել բոլոր հայ զինվորներին: «Նրանց բոլորին խուզարկեցին, խլեցին փողերը և դուրս բերեցին քաղաքից: Իսկ քաղաքում ոստիկանները փշրում էին տան

¹ "Армянский Вестник", 1916, №91, с.7.

² Նույն տեղում, էջ 7:

³ Նույն տեղում, էջ 7:

դոները, դուրս քաշում տղամարդկանց, կանանց, երեխաներին և նույնպես դուրս տանում քաղաքից: Միաժամանակ բոլոր խանութները, որոնք այստեղ ամբողջովին հայերի ձեռքին էին, բաց էին: Խելոք ազգը տեղեկանալով կոտորածի մասին, այնուամենայնիվ բացել էր խանութները՝ հուսալով փրկել կյանքը: Նահանգապետը, ինչպես պետք է՝ խաբեց նրանց, ասելով թե «կառավարությունը միգուցե և ների ձեզ: Եթե դուք լինեք հավատարիմ ու հնազանդ, ես կարող եմ հավատացնել ձեզ, որ համենայն դեպս կեսը կենդանի կմնա: Խաբեց, թմրեցրեց և բոլորին մորթոտեց: Նրա անունն է Աբդուլ Խալիլ Բեյ»¹:

Այս և նման վկայություններով ու փաստարկներով Ն. Օգանովսկին փորձում է ռուս հասարակայնությանը ցույց տալ, որ երիտթուրքերը իրենց նախապես մշակած ծրագրերը իրականացնելու համար դիմում էին ամեն ինչի, գործում նպատակը արդարացնում է միջոցը սկզբունքով: Յեղիմակը քաջ պատկերացնում է, թե ինչ արհավիրքներ պատճառեց առաջին աշխարհամարտը արևմտահայերին, որից անմիջապես շտապեցին օգտվել օսմանյան կայսրության պարագլուխները: Նա լիովին համոզված է, որ պատերազմի հասցրած ցնցումներից ծանրագույնը բաժին ընկավ հայ ազգին, որը նրա իրատես կարծիքով «հայտնվեց երկու կրակի միջև... և զարմանալու ոչինչ չկա, որ այդ աշխատասեր, անքմահաճ ժողովուրդը, որը երջանիկ է, եթե իրեն վիճակված չէ ամեն ռուսացի դողալու իր կյանքի համար, եթե նրան հնարավորություն են տալիս հանգիստ աշխատել և աղոթել, եթե նա ամբողջ օրվա համար ունի մի կտոր լավաշ ու մի պտուկ... կաթ, այսպիսի ժողովուրդը հասավ այնտեղ, որ միաձայն ասում էր. «Չկա ճշմարտություն երկրի վրա», իսկ ուրիշները ավելացնում են. «Մենք չգիտենք կա՞րոյոք այժմ Աստված երկնքում»: Երկրի վրա չկա ճշմարտություն, երկնքում չկա Աստված, այսպիսի հոգեկան վիճակի է հասցվել երբեմնի հոյակերտ ու հզոր տաճարներ կառուցող, երբեմնի մարդկության օրրան հովիտներում մշակույթ ստեղծող այդ ազգը»²:

Անշուշտ, դժվար է ասել թե հոդվածը ավարտվում է լավատեսորեն, սակայն բացարձակ իսկություն է, որ հոդվածագիրը արևմտահայության ջերմ պաշտպանն է, նրա վշտերի, տառապանքների, ողբերգության անկեղծ կարեկիցը: Պարզապես այն գրվել է 1916-ին հայոց պատմության ամենամռայլ ժամանակահատվածում, երբ, իհարկե, դուրսին չէր, եթե ոչ անհնարին, արևմտահայության քաղաքական կացությունում տեսնել լավատեսական միտումներ: Ի դեպ,

¹ "Армянский Вестник", 1916, №1, с.7.

² Նույն տեղում, էջ 7:

նույն թվականի մարտին կյանքից հեռացավ հայ ժողովրդի լավ բարեկամներից, հայկական հարցի ջերմ պաշտպաններից, դրա քաջ գիտակներից, թուրքական ոճրագործությունները բազմիցս խստագույնս դատապարտողներից մեկը՝ միջազգային մակարդակի հասարակական գործիչ, գիտնական, սոցիոլոգ, պետականագետ Մաքսիմ Մաքսիմովիչ Կովալևսկին: Վերջինիս մահվանից մեկ ամիս առաջ 1916 թվականի փետրվարին նրա հետ հանդիպել ու Հայաստանի ապագա ճակատագրի, նրա քաղաքական կարգավիճակի, լուծման հնարավոր ուղիների, հեռանկարների, Հայոց Ցեղասպանության հիմնահարցերի վերաբերյալ երկար զրուցել է հայ հասարակական-քաղաքական մտքի նշանավոր ներկայացուցիչ Ա. Ջիվելեզովը, որը «Մ.Ս. Կովալևսկին ու Հայաստանը» խորագրով տպագրվեց «Հայկական լրաբերում»: Զրույցի ընթացքում ռուս հասարակական գործիչը գերազանցապես անդրադարձավ Արևմտյան Հայաստանին, վեց վիլայեթներին ու Հայաստանի ապագային առնչվող հիմնահարցերին: «Վեց վիլայեթները,- ասաց նա,- կմիավորվեն մեկ գեներալ-նահանգապետի իշխանության ներքո... նրան կանվանեն իշխան, թե միայն փոխարքա՝ կախված կլինի այն բանից, թե կստանա՞ արդյոք հյուսիսային Անատոլիան լավագույն դեպքում բուֆեր-պետության կարգավիճակ Ռուսաստանի հովանավորության ներքո, թե՞ նրա (Ռուսաստանի-Մ.Ս.) հետ կապված կլինի իրական ունիայով, որպիսին ասենք գոյություն ունի Ֆինլանդիայի համար»¹: Ֆինլանդիայի հիշատակումը հետաքրքիր է և մտածված, նշելով Ռուսաստանի առանձնահատուկ դիրքորոշումը իր կայսրության մեջ մտած Ֆինլանդիայի նկատմամբ, Կովալևսկին իրատեսորեն գտնում է, որ նույնպիսի քաղաքականություն Ռուսաստանը պետք է կենսագործի նաև Հայաստանի հանդեպ, քանզի Հայաստանը կարող է նույն դերը խաղալ ռուսական արևելյան քաղաքականության մեջ, ունենալ նույն նշանակությունը, ինչ Ֆինլանդիան հյուսիս-արևմուտքում: Եվ Կովալևսկու մտան հայեցակետը արդիական է ու հրատապ, այն հիմնականում իր բոլոր էական և սկզբունքային տարբերությամբ հանդերձ, այնուամենայնիվ, համահնչուն է արդ հաստատված հայ-ռուսական քաղաքական հարաբերություններին: «Հայոց հարցը,- ավարտում է իր միտքը Կովալևսկին,- մեծ է ու բարդ»²: Ռուս գիտնականը չի կասկածում, որ հայկական վիլայեթները անխուսափելիորեն անցնելու են Ռուսաստանին, պատերազմում հաղթանակ ձեռք բերելու օրենքով և իրավունքով: Նա այս կարևորագույն քաղաքական հարցին մոտենում է ինչպես Ռուսաստանի շահերից, այնպես էլ հայ ժողովրդի ակնկալիք-

¹ "Армянский Вестник", 1916, №10, с. 2.

² Նույն տեղում, էջ 2:

ներից: Ելնելով այս ամենից, Կովալեսկին առարկայական է համարում Ռուսաստանի ակտիվ մասնակցությունը դիվանագիտական պայքարին Չայկական հարցի շուրջ, քանզի նրա կենսական շահերը մեծ տերությունների համեմատությամբ ավելի ցցուն էին ու ակնհայտ: Իսկ դա իր հերթին նշանակում է, որ պետք է մեծ լինեն Ռուսաստանի թե՛ իրավունքը, թե՛ պարտականությունը: Հատկապես հետաքրքիր էր ռուս սոցիոլոգի տեսակետը այն մասին, թե ինչպես կարելի է ապահովել փոքրաթիվ ժողովուրդների անվտանգությունը: Հիմնահարցի պատասխանը նա տվեց հայ ժողովրդի պատմական ճակատագրի և հայկական հարցի մեծ ու կնճռոտ, բարդ և հակասական հանգուցակետի լուծման տեսանկյունից: «Պատմության մեջ, ասաց Կովալեսկին,- փոքրաթիվ ժողովուրդների ճակատագիրը կարող է ամուր ապահովված լինել միայն այն ժամանակ, երբ մարդկությունը ժամանակակից միջազգային քաղաքական կարգից անցնի պետությունների դաշնության... Ձեր Հայաստանը, ինչպես և Բելգիան, ինչպես և Սերբիան, ինչպես և Լեհաստանը, միայն այն ժամ կստանա վերջնական սահմանադրություն և կդադարի վախենալ քրդից ու թուրքից... Իսկ ահա քանի դեռ մենք ձեզ հետ գրում ենք սահմանադրություններ, ի՞նչ է կատարվում Հայաստանում»¹: Անշուշտ, նա նկատի ուներ 1915 թ. հայոց Մեծ եղեռնը: «Ոչ,- ավարտում է իր միտքը,- չի կարելի, ոչ մի կերպ չի կարելի փոքրաթիվ ժողովուրդներին առանց դաշնության»²:

Կովալեսկու տեսակետը դաշնության վերաբերյալ ունի քաղաքական կարևոր նշանակություն, քանզի արդիականության և հրատապության առունով այդ գնահատականն իր մեջ բովանդակում է իրական ու բանական հատիկ: Արդ միջպետական հարաբերությունների համակարգում դաշնության ու համագործակցության գաղափարը նյութականացվում է և իրագործվում քաղաքակիրթ երկրների կողմից: Դաշնության սկզբունքը հատկապես կարևորվում է ներկայիս հայ-ռուսաց միջպետական ռազմա-քաղաքական առնչություններում: Այժմ, երբ Հայաստանի Հանրապետությունը դարձել է միջազգային հարաբերությունների լիիրավ անդամ, իսկ Չայկական Հարցը, Մեծ եղեռնը համաշխարհային դիվանագիտության ոլորտում աստիճանաբար ճանաչում է գտնում, դաշնության գաղափարը ստեղծված իրադրության մեջ սկզբունքորեն նոր երանգավորմամբ լիովին համապատասխանում է Ռուսաստանի և Հայաստանի ազգային պետական շահերին: Ինչևհից, փոքրաթիվ ժողովուրդները միջազգային քաղաքական կյանքում, միջազգային հարաբերությունների համակարգում կարող են գոյատևել, խաղալ դրական դեր, նպաստել քա-

¹ "Армянский Вестник", 1916, №10, с. 2.

² Նույն տեղում, էջ 2:

դաքակրթությանը գերազանցապես նրանց միջև հաստատված դաշնության հիմքի վրա, համագործակցության շրջանակներում: Հայ ժողովրդի դեմ կազմակերպված մեծ դավադրության ժամանակ 1915 թ. Կովալսկին ռուսական հայտնի ամսագրերից մեկում¹ հանդես եկավ «Հայկական հարցը» հոդվածով, որտեղ նշվում էր, թե առաջին աշխարհամարտը բարենպաստ պայմաններ ստեղծեց երիտթուրքերի համար հայկական հարցը աբդուլհամիդյան տարբերակով լուծելու համար: Եվ պատերազմը սկսվելուց մի քանի ամիս անց տեղի ունեցան հայերի նոր կոտորածներ, որոնք խիստ դժգոհություն առաջացրին Թուրքիայի դեմ պատերազմող երկրների հասարակության շրջանում, ուստի և նա միանգամայն օրինաչափ է համարում դաշնակիցների 1915 թ. մայիսյան դատապարտող հայտարարությունը երիտթուրքերի պարագլուխներին պատժելու անխուսափելիությամբ: Ուստի և հողվածագիրը հույս է հայտնում, թե Ռուսաստանի և նրա դաշնակիցների հաղթանակի շնորհիվ հնարավորություն կընծեռվի ինքնավարություն շնորհել արևմտահայերին, քանզի Ռուսաստանն անկասկած կարող է միայն շահագրգռված լինել ինքնավար մարզի ստեղծման մեջ»²:

Երիտթուրքերի աներևակայելի չարագործության Հայոց Ցեղասպանության դատապարտման գործում առաջին շարքերում էր ռուս մտավորականությունը: Նրա ճանաչված դրոշակակիրը եղավ ակադեմիկոս քանաստեղծ, հայ ժողովրդի մեծ ու անկեղծ բարեկամ Վ. Բրյուսովը, որի հրապարակային դասախոսությունները և ելույթները հայկական քնարերգության մասին, իհարկե, դուրս էին գալիս զուտ գրականագիտական շրջանակներից և բովանդակում խորապես քաղաքական լայնախոհ իմաստ: Ռուս նշանավոր գրող Մ. Գորկու պատկերավոր արտահայտությամբ, «Ռուսիայի ամենակուլտուրական գրողը» Բրյուսովը, Մեծ Եղեռնից անմիջապես հետո որպես բողոքի ու արևմտահայության բարոյական աջակցության ու նրա հետ համերաշխության նշան, գրեց «Հայ ժողովրդի պատմական ճակատագրի տարեգրությունը» պատմագիտորեն հետաքրքիր ու քաղաքական առումով հրատապ աշխատությունը: Այն ըստ էության ուղղված էր սարսափելի չարագործությունների դեմ, դա մի հնչեղ կոչ էր համայն մարդկությանը, քաղաքակիրթ աշխարհին, օգնության ձեռք պարզելու քաղաքական և ֆիզիկական օրհասական օրեր ապրող արևմտահայերին: «Հայ ժողովուրդը,- գրում է նա,- հնագույներից մեկն է ժամանակակից կուլտուրական ժողովուրդների մեջ: Նա մեր աշխարհն է եկել այնպիսի մի հեռավոր հնությունից, երբ դեռևս ոչ միայն գո-

¹ "Вестник Европы", 1915, № 6.

² Նույն տեղում, էջ 273:

յություն չունեին ժամանակակից եվրոպական ժողովուրդները՝ ֆրանսիացիները, իտալացիները, անգլիացիները, ռուսները, այլև պատմության ասպարեզ հազիվ էին դուս եկել անտիկ աշխարհի հնագույն ժողովուրդները՝ հռոմեացիները և հելլենները»¹: Հեղինակի միտքը ավելի քան պարզ է, որոշակի ու հստակ՝ անհրաժեշտ է կանխել այդ ոճրագործությունները, փրկել մի ժողովրդի, որը ըստ էության մարմնավորում էր ու խորհրդանշում քաղաքակրթությունը: Բրյուսովը քաջատեղյակ էր այն ամենին, ինչ հայության հանդեպ սառնասրտորեն կատարեցին երիտթուրքեր անունով հանցագործները: Մեծանուն բանաստեղծի անաչառ կարծիքով «պետական անհրաժեշտության» ոչ մի փաստարկներ... չեն կարող արդարացնել զանգվածային սպանությունները, ամբողջ մահանգների ամայացումները, քաղաքների և գյուղերի բնակչությանը սովամահության դատապարտելը»²: Սա վերին աստիճանի արդիական նշանակության խորհմաստ դատողություն է, նման իրատես եզրահանգում կարող է տալ պատմական փաստերի խորագիտակ, երիտթուրքերի քաղաքականությունը արևմտահայության նկատմամբ հստակ պատկերացնող, անաչառ, հումանիստ մտածող գործիչը: Բրյուսովի այս տեսակետը ոչ միայն հրատապ է, այլև պատմական, քանզի այն պակագերծելով երիտթուրքերի ոճրագործությունները միաժամանակ ճեղքեց մշուշապատ ու թանձր մթնոլորտը, նախահիմքեր ստեղծեց երիտթուրքերի ժառանգների և հաջորդների, նրանց կեղծ փաստաբանների սին «տեսակետները» հերքելու համար: Բավական է նշել, որ Հայոց Ցեղասպանության դահիճներից մեկը, տխրահոշակ Թալեաթը կատարված ոճրագործությունից անմիջապես հետո Կ.Պոլսի գերմանական թերթերից մեկի թղթակցի հետ զրույցի ժամանակ ասաց. «Հայերը ձգտում են օսմանյան կայսրության կործանմանը: Պատերազմի սկզբին ռուսական (արևելահայ-Մ.Մ.) ու թուրքական (արևմտահայ-Մ.Մ.) հայերի խորհրդակցությունը որոշեց, որ Կովկասի հայերը կպայքարեն Թուրքիայի դեմ, իսկ անատոլիական հայերը կսպասեն ռուսական զորքերի մուտքին Անատոլիա: Խուզարկությունները հայերի մոտ հայտնաբերեցին ռումբեր ու զենք: Անհրաժեշտ էր հեռացնել խռովարարներին սահմանային շրջակայքից: Հետագայում, երբ դարդանելյան օպերացիայի պատճառով ուզում էին կառավարությունը փոխադրել Էքսի-Շեհիր, ...վերջինիս ու Կ.Պոլսի ժիջև ընկած շրջաններից արտաքսեցին հայերին: Առաջին իսկ կոտորածի ժամանակ թուրքական ուղեկցորդ պահակախումբը պաշտպանում էր հայերին քրդերից, որոնց առաջնորդները հետո կախաղան հան-

¹ В. Брюсов, "Летопись исторических судеб армянского народа", Ереван, 1940, с.17.

² Նույն տեղում, էջ 17:

վեցին: Երկրորդ դեպքում մեղավոր են վատ չինովնիկները»¹ : Թալեաթ Բեյը, ամփոփում է թղթակիցը, տխրել է աղետալի իրադարձություններից, սակայն հայրենիքի բարօրությունը արդարացնում է դրանք: Առանձնացնել անպարտներին չէր կարելի՝ նրանք հենց վաղը կարող էին դառնալ հանցավորներ²:

Ահա հենց այս և նման բազում կեղծ փաստարկներին հակադրեց հայ ժողովրդի մեծ բարեկամն իր հնչեղ,զորեղ, պսակազերծող ծայրը: «Բոլորովին էլ անիրական չէ...որ ժամանակակից պատերազմի սկզբին թուրքական շրջաններում մահապատիժներից, սովից, հյուժուժներից, հրդեհներում, տարագրման ճանապարհին, բնակչության համար նախորդված անապատներում... զոհվեց հայ բնակչության ավելի քան 1 մլն մարդ (այլ աղբյուրներ վկայում են 2 000 000 մարդ)»³: Հետևաբար Բրյուսովը փաստորեն ռուսաց հասարակական-քաղաքական մտքի ու մտավորականության առաջին ներկայացուցիչներից է, որը նշեց իրականությանը մոտ տվյալներ երիտթուրքերի կողմից խոշտանգված, նահատակված արևմտահայերի զոհերի մասին: Չէ որ նա իր գիրքը գրել է հայ ժողովրդի քաղաքական պատմության ամենամռայլ, օրհասական պահերին, ուստի և միանգամայն օրինաչափ է ճանաչված հումանիստի ու քաղաքացու մտավախությունը աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկի ճակատագրի նկատմամբ:

Հայ ժողովրդի ողբերգության ականատեսներից էր նաև ռուս նշանավոր արևելագետ-թուրքագետ Վ.Ս. Գորդլևսկին՝ նա որպես զինվորական թարգման հնարավորություն է ստանում մեկնելու Կովկասյան ռազմաճակատ ու լինելու օսմանյան կայսրության հյուսիսարևելյան շրջաններում՝ Արևմտյան Հայաստանում: Առանձնապես պատմագիտական ու քաղաքական մեծ արժեք ունեն նրա «Սուլթան-Համիդ 2-րդը բռնակալ և կալանավոր», «Այնտեղ, ուր հնում ապրում էին հայերը», «Հայերը և պատերազմը», «Էրզրում», «Վան» հոդվածները, որոնք տպագրվեցին «Թուրքիայի սովերապատկերները» ընդհանուր խորագրով: Իր «Հայերը և պատերազմը» հոդվածում նա ևս խստագույնս դատապարտեց երիտթուրքերի չարագործությունները և նրանց գերմանական հովանավորիչների դիրքորոշումը: «Հողը մեկ անգամ չէ ներկվել հայերի արյունով,- գրում է նա,- բայց պատերազմը կոտորածին հաղորդեց հսկայական թափ, կարծես մարդուց ջնջվեցին սանձահարող ծածկույթները և մարդը, արհամարհելով աստվածային ու մարդկային օրենքները, ազատություն

¹ "Армянский Вестник", 1916, №14, с.7.

² Նույն տեղում, էջ 7:

³ В.Брюсов, "Летопись исторических судеб армянского народа", с.17.

տվեց հոգու խորքում պատսպարված գազանին... Կոտորածի ժամանակ թուրքերից հեռու չէին մնում նրանց քաղաքական բարեկամները... համենայն դեպս ապաստարանը տնօրինող գերմանուհին իշխանություններին էր հանձնում հայերին, որոնք որպես քրիստոնյայի նրա մոտ պաշտպանություն էին փնտրում... Բնակչությունը քաղաքից հեռացվում էր անապատային վայրերը, ավելի հաճախ խուլ կիրճերը և այնտեղ կոտորվում կամ դատապարտվում սովամահությամբ... Ինչպես պատմում էին տեղական (Բիթլիսի-Մ.Մ.) բնակիչները՝ փողոցները, տները, որտեղ ապրում էին հայերը, եկեղեցիները և վանքերը լցված էին դիակներով, կանայք սպանված էին բռնաբարությունից հետո, դիակները հաճախ ընկած էին ածխացած, ինչպես «տապակված խոճկորներ»։ Հաճախ որովայնախոռոչը լցված էր ավազով, հյուսերը կտրված էին, կիսափտած, կոշիկի մեջ ու անդրավարտիքում թաքցված էր ոտքը, իսկ շարունակությամբ ընկած էր գանգը, ձեռքերը։ Բիթլիսից այն կողմ, կիրճում փռված էին դիակների սարեր... Այն սպանդանոց էր, ժողովրդի անօրինակ կոտորած, մարդիկ կարծես կորցրել էին խիղճը, բայց անոթափար եղավ Եփրատը և փղձկաց արյունոտ արցունքներով... գետը վարարեց արյունից։

Այդպես զոհվեցին ավելի քան մեկ միլիոն հայեր... Եվ ես հավատում եմ,- կատարում է նա անչափ կարևոր եզրակացություն,- կանցնի այս ծանր մղձավանջային ծամանակը և ամոթ կլինի մարդուն։ Հարյուր հազարավոր անմեղ հայեր Թուրքիայում դարձան գազանությունների զոհեր։ Մեծագույն խիզախությամբ էին Հայաստանի որդիները գնում մահվան, նրանք գիտեին, որ մահվան միջոցով հայ ժողովուրդը կվերակույզվի կյանքի, լավագույն կյանքի։ Եվ կապրի Հայաստանը»¹։ Գորդլևսկուց համենատաքար այսքան երկար մեջբերումը, անշուշտ, ինքնանպատակ չէ և ոչ էլ պատահական, քանզի այն ի խորոց սրտի խոսք է հայ ժողովրդին, իսկական բարեկամի անկեղծ վշտի ու կարեկցանքի արտահայտություն, խոր համոզումը, որ հայ ժողովուրդը կհաղթանակի քաղաքական այդ մղձավանջը, հավերժ կապրի Հայաստանը։ Ռուսական հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչների գնահատականները Հայոց Ցեղասպանության վերաբերյալ իրենց նշանակությամբ ամանց վկայություններ են, որոնք գալիս են մեկ անգամ ևս ապացուցելու միջազգային հանցագործների ոճրագործությունները։

Հայոց Ցեղասպանությունն այնքան լայն արձագանք էր գտել ռուսաց հասարակական-քաղաքական մտքի շրջաններում, որ անմիջական արտացոլում գտավ IV Պետական Դումայում, որտեղ երիտթուրքական ոճրագործությունները դատափետող, վառ արտահայտ-

¹ Гордлевский В.А., Изб. соч., т III, История и культура, М., 1962, с. 130.

ված հայանպաստ ճառով հանդես եկան Դումայի ազդեցիկ պատգամավոր Պ.Ն. Միլյուկովը և հայազգի անդամ Մ. Բաբաջանյանը (Մ. Պապաջանովը): Ավելին, Դումայում Մեծ Եղեռնի արժարժունն արդեն ինքնին վկայում էր, որ Արևմտյան Հայաստանի հիմնահարցը շարունակում էր առանցքային տեղ գրավել Ռուսաստանի ռազմա-քաղաքական ուղեծրում: Ահա ինչու ռուս նշանավոր պետական-քաղաքական գործիչ, կադետական կուսակցության ամենաազդեցիկ ղեկավար ու անառարկելի հեղինակություն, միջազգային լայն ճանաչում ունեցող Միլյուկովը 1916 թ. մարտի 11-ի իր նշանավոր ճառում մատնանշեց պատմական զարգացման գործընթացով բազում անգամ ապացուցված այն ակնհայտ ճշմարտությունը, թե հայերը ռուսների հնագույն հավատարիմ բարեկամներն են, ուստի Հայաստանի ճակատագիրը մեզ համար թանկ է ու սրտամոտ ոչ պակաս չափով, քան պատերազմում տուժած այն ժողովուրդների ճակատագիրը, որոնք մարտնչում էին մեզ հետ միասին¹: Հետևապես ռուսաց զենքի հաղթանակի շնորհիվ պետք է, ըստ հեղինակի, իրականացնել արևմտահայերին խոստացված ինքնավարությունը, որը նրա իրատես կարծիքով անհրաժեշտ է ու անխուսափելի մի քանի առումով: Նախ, հայ ժողովրդի բնօրրան հանդիսացող Արևմտյան Հայաստանի տարածքների մի զգալի մասը պատերազմի իրավունքով արդեն անցել էր Ռուսաստանին ու փաստորեն միակցվել էր կայսրությանը: «Էրզրումի գրավումը հսկայական տպավորություն գործեց ամբողջ մահմեդական աշխարհի վրա... ռուսաց զորքերը այժմ կանգնած են տարածքի այն հատվածում, որտեղ հայկական բնակչությունը հատկապես խիտ էր: Ինչպիսիք պետք է լինի հաջորդ քայլը,- հարցնում է հռետորը և պատասխանում,- այստեղ թերևս կասկած չիմել չի կարող: Ռուսաստանին հավատարիմ լինելու համար տուժած քրիստոնյա բնակչությունը պետք է տեղավորվի իր տեղերում և Ռուսաստանը, երբ վիլայեթները զգալի չափով գտնվում են նրա ձեռքին. պետք է իրագործի դեռևս թուրքական վարչաձևի ժամանակ խոստացած ինքնավարությունը»²: Եթե նկատի ունենանք, որ Միլյուկովի ելույթը տեղի է ունեցել 1916 թ., ապա դժվար չէ կռահել, թե ինչ նկատի ուներ Դումայի նշանավոր ներկայացուցիչը «Ռուսաստանին հավատարիմ լինելու համար տուժած քրիստոնյա բնակչությունը» միտքը նշելիս: Կասկածից վեր է, որ նկատի է առնվում թուրքական ոճրագործությունը 1915 թ. Հայոց Ցեղասպանությունը: Հատկանշական է, և քաղաքական առումով կարևոր, որ Միլյուկովի ելույթը ուղեկցվում է ժափահարություններով ու «Կեցցե» ("Боже") բացականչություններով փաստորեն

¹ "Армянский Вестник", 1916, № 8, с. 7.

² Նույն տեղում, էջ 7:

կաղետական կուսակցության ճանաչված ղեկավարի մտքերին, գաղափարներին, առաջարկներին համակարծիք էին դումայի անդամները, որոնք ներկայացնում էին Ռուսաստանի հասարակական-քաղաքական լայն շրջանների տարբեր շերտերին: Դումայի տարանդամ կազմի ու խմբակցությունների այդպիսի վերաբերմունքը և վարքագիծը մեկ անգամ ևս վկայեց պատմաքաղաքական այն ճշմարտությունը, որ առարկայորեն հայանապաստ դիրքորոշումը լիովին համապատասխանում էր Ռուսաստանի ազգային պետական շահերին: Եվ միանգամայն օրինաչափ է, որ Միլյուկովի ելույթը լայն արձագանք գտավ ոչ միայն Դումայում ու ռուսաց հասարակության շրջանում, այլև արևելահայության մեջ, ապա նաև դաշնակից երկրներում, հատկապես Անգլիայում: Հայ հասարակությունը ելնելով ու գոտեպնդվելով Միլյուկովի ելույթի ոգուց, առաջարկում էր, թերևս պահանջում, դաշնակիցներից գոնե ինչ-որ չափով վարձահատույց լինել, որևէ կերպ փոխհատուցել հայ ժողովրդին կրած աննախադեպ արհավիրքների՝ Մեծ Եղեռնի համար, ստանձնել որոշակի պարտավորություններ արևմտահայության նկատմամբ, քանզի երիտթուրքերը իրենց ոճիրները արդարացնելիս օգտագործում էին նաև հայերի՝ Անգլիային, Ֆրանսիային ու հատկապես Ռուսաստանին հավատարիմ մնալու, օգնելու, նրանց համակրելու պատրվակը: Հայ ժողովուրդը, հիրավի առաջին աշխարհամարտում նրանց դաշնակիցն էր և բարոյական, քաղաքական, ռազմական, պատմական, դիվանագիտական տեսանկյունից լիովին իրավունք ուներ այդպիսի պահանջներ դնել մեծ տերությունների առջև: Ընդհանրապես Միլյուկովը թե որպես կաղետական կուսակցության ղեկավար, թե որպես Պետական Դումայի անդամ ու վերջապես ժամանակավոր կառավարության առաջին արտգործնախարար միշտ էլ իր քաղաքական ու դիվանագիտական գործունեության մեջ հիմնականում ունեցել է հայանապաստ դիրքորոշում՝ հեռամետության և շրջահայացության վկայություն, ապացույց, որ քաղաքականության ասպարեզում նա ելակետ է ունեցել Ռուսաստանի ազգային-պետական շահը:

Հետագայում արդեն վտարանդիության մեջ գրած «Հիշողություններում» Միլյուկով տաղանդաշատ պատմաբանը, որը արդ ռուսաց պատմագիտական համակարգում վերջապես զբաղեցրել է իր արժանի պատվավոր տեղը, վերստին անդրադառնալով Հայոց հիմնահարցին, հավատարիմ մնաց իր դավանած քաղաքական հավատամքին, քաջ գիտակցելով, որ ոչ հայանապաստ արտաքին քաղաքական ուղեգիծը ի սկզբանե չէր կարող լինել իրատես, առավել ևս՝ բխել Ռուսաստանի ազգային-պետական շահերից: Պատմական անվիճելի ճշմարտություն՝ Ռուսաստանի հեռատես պետական նշանավոր քաղաքական գործիչները, որոնց համար գերակայող էին երկրի

ազգային շահերը, որոնք ելակետային էին համարում պատմական իրատեսությունը և քաղաքական սթափ ու անաչառ մոտեցումները, որպես կանոն ունեցել են հայանպաստ դիրքորոշում, որը թե օրինաչափություն է և թե անիրաժեշտություն: Ընդհանրապես Միլյուկովի Ռուսաստանի քաղաքական շահերից բխող հայանպաստ քաղաքականությունը, նրա անձնական ծանոթությունը Նուբար Փաշայի, Ալեքսանդր Խատիսյանի, Միքայել Պապաջանյանի հետ մի կողմից հնարավորություն ընձեռեց Հայկական հիմնահարցում քաղաքականապես իրատեսորեն կողմնորոշվելու համար, իսկ մյուս կողմից նպաստեց, որպեսզի Միլյուկովի լայնածավալ քաղաքական գործունեությունը գտնվի հայ հասարակական-քաղաքական մտքի ուշադրության կիզակետում: Այդ է վկայում թեկուզև հայտնի հայ գրող հրապարակախոս Արշակ Չոպանյանի ռուսական «Ռեչ» թերթում տպագրված «Բաց նամակ Պ.Ն. Միլյուկովին» բանավեճային հոդվածը, որտեղ քննախոսվում են ռուս նշանավոր քաղաքական գործչի մոտեցումները արևմտահայության ճակատագրի, հայկական վիլայեթների, Կիլիկիայի, հայկական ինքնավարության, քաղաքական հովանավորության հիմնախնդիրների նկատմամբ: Միլյուկով պատմաբանը սպառնիչ ձևով է ներկայացնում ռազմա-քաղաքական այն գործոնները, որոնց պատճառով Արևմտյան Հայաստանի բարենորոգումների նախագիծը ի դերև ելավ: Նրա տեսակետը և գնահատականը վերոհիշյալ հիմնահարցերի մասին պատմագիտորեն անաչառ են, իսկ միջազգային քաղաքական տեսանկյունից իրատես ու առարկայական: «Թվում էր, թե Թուրքիայի հետ սկսված պատերազմը հեշտացրեց դրա իրագործումը (արևմտահայության բարենորոգումների նախագիծը-Մ.Ս.), բայց Թուրքիան կանխեց այն 1915 թ. սարսափելի ջարդերով: Վեց վիլայեթների հայ բնակչության զգալի մասը ոչնչացվեց քրդերի կողմից, մյուսներին՝ ծերերին, կանանց և երեխաներին թուրքերը որոշեցին արտաքսել Միջագետք: Այնտեղ հասան միայն խղճուկ մնացուկներ, մեծ մասը զոհվեց ճանապարհին սովից և ուժասպառությունից, հիվանդություններից, հարավային կիզիչ շոգից ու խոնավությունից: Ամբողջ միլիոնանոց բնակչությունից փրկվեց միայն մի քանի հարյուր հազարը Արևելյան Հայաստանի սահմաններում»¹: Պ.Ն. Միլյուկովի գաղափարակից, IV Պետական Դումայի հայազգի պատգամավոր Մ.Պապաջանյանի հայտնի ելույթի իմաստը Դումայի 1916 թ. մարտի 11-ի նիստում լիովին համընկավ իր ճանաչված ու հեղինակավոր կուսակցի ճառի բովանդակությանը: Սակայն Պապաջանյան հայորդի պատգամավորին թերևս բոլորից շատ էր հուզում ու մտահոգում արևմտահայության դժնդակ ողբերգական

¹ Миллюков П.Н., Воспоминания, М., 1990, т I, с.121.

ճակատագիրը: Ելույթի սկզբում հռետորը հիշեցրեց, որ Ռուսաստանի հանդեպ բարեկամաբար տրամադրված երկրների պառլամենտները մի քանի անգամ անդրադարձել էին հիմնախնդրին: Ռուսաստանի Պետական Դուման, նշեց նա, երկար ժամանակ նիստեր չէր գումարել, ուստի և բնականաբար ի վիճակի չէր քննարկել Արևմտյան Հայաստանում կատարված իրադարձությունները, ոչ էլ հասարակության ուշադրությունը բեռել հայոց ողբերգության վրա: Մինչդեռ Հայոց Մեծ Եղեռնը, պատգամավորի իրատես կարծիքով, բոլորից շատ էր վնասում նաև Ռուսաստանին, որովհետև հայության մոտ կեսը ապրում էր ռուսական հպատակության ներքո, և բնականաբար չէր կարող անտարբեր վերաբերվել այն ամենին, ինչ կատարվում էր իր եղբայրների նկատմամբ հարևան երկրում: Իսկապես, մեծ թուրանական ծրագրերը, որոնց գոհ դարձան նաև արևմտահայերը, ուղղված էին նաև Ռուսաստանի դեմ, թեկուզ նրանից հսկայական տարածքներ զավթելու մտահղացման առումով: «Այն ինչ կատարվեց Հայաստանում (Արևմտյան Հայաստանում-Մ.Մ.) աննկարագրելի է, ասաց Պապաջանյանը, - ու անհասանելի նույնիսկ երևակայությանը: Չնայած աղետների առկայությանը Բելգիայում, Սերբիայում, Լեհաստանում, այնուամենայնիվ մարդկային ողբերգության հոմանիշ դարձավ Արևմտյան Հայաստանը: Այս պատերազմում աշխարհի և ոչ մի ազգ չկրեց այնքան զոհեր, որքան հայերը»¹: Նրա խոր համոզմամբ հայ ժողովուրդը, որը դարերի ընթացքում ենթարկվել է անվերջ հալածանքների ու աղետների, այնքան չէր տուժել և արհավիրքներ վերապրել, որքան 1915-1916 թթ.: Թուրքական արկածախնդիրների հրեշավոր շվախության զոհեր դարձան հարյուր հազարավոր խաղաղ բնակիչներ, գլխավորապես կանայք ու երեխաներ²: Անշուշտ հայազգի պատգամավորը այն ժամանակ առարկայորեն չէր կարող ստույգ իմանալ զոհերի թիվը, որը առնվազն կազմեց 1,5 մլն.: Միաժամանակ նա լիովին ժխտում է այն հերյուրանքները, թե իբր այդ սարսափելի աղետների մեջ մեղավոր են հենց իրենք՝ հայերը, որոնք հրահրվելով ռուսական և անգլիական դիվանագիտության կողմից, դիմում էին ապստամբության: Այս կեղծ ու անհիմն վկայակոչումները կաղետական կուսակցության գործիչը հերքում է մի քանի հիմնարար փաստերով: Նախ, թուրքական իշխանությունները մինչև հայ հատկապես գյուղական բնակչության ֆիզիկական ոչնչացումը զինաթափում էին նրանց ու դրանով իսկ կանխում դիմադրության համար որևէ հնարավորություն: Երկրորդ, այնժամ, երբ գյուղերում զգացին, որ այդ զինաթափումը սկիզբ է աղետների և կոտորածների համար,

¹ "Армянский Вестник", 1916. № 8, с. 7.

² Նույն տեղում, էջ 7:

դրանից հետո միայն հրաժարվեցին զենքը հանձնելուց և դիմեցին ինքնապաշտպանության: Սովորաբար այդպիսի դեպքերի համար ասում են թե մեկնաբանություններն ավելորդ են: Չժխտելով այս իրատես ու թևավոր արտահայտությունը՝ վերստին ասենք, որ յուրաքանչյուր ժողովրդի, ազգի, անհատի սրբազան պարտքն է ու իրավունքը պաշտպանվելու մարդակեր գազանների ոտնձգությունից և միանգամայն օրինաչափ է ու բանական, որ մարդկային հանրությունը ճնշված ժողովուրդների այդպիսի քայլերն ու գործողությունները՝ ստանա այն ապստամբություն, ինքնապաշտպանություն, ազատամարտ, թե մեկ այլ անուն, ոչ միայն լիովին արդարացնում է բոլոր տեսանկյուններից, այլ և դիտում որպես սխրանք, հերոսություն: Ահա ինչու այս ամենի մասին նվիրված են բազում ժանրակշիռ պատմագիտական անաչառ ուսումնասիրություններ, ծոնված են մեծարժեք գեղարվեստական երկեր և դրանով իսկ ոսկե տառերով հավերժացված մարդկային հիշողության մեջ:

Հայ Դատի, նրա նկատմամբ մեծ տերությունների դիրքորոշման, Հայոց Ցեղասպանության պատմության հետազոտողների, երիտթուրքերի ոճրագործությունները դատապարտելու մեջ իր կարևորությամբ ու նշանակությամբ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում ռուս նշանավոր դիվանագետ, իրավագետ, պատմաբան Անդրե Մանդելշտամի աշխատությունները: Նրա գրչին են պատկանում Մոսկվայում 1915 թ. ռուսերեն լույս տեսած՝ ապա անմիջապես հայերեն թարգմանված և էջմիածնում 1916 թ. հրատարակված "Младотурецкая держава" գիրքը, 1917 թ. ֆրանսերեն գրված «Օսմանյան կայսրության ճակատագիրը» ծավալուն աշխատությունը: Անդրե Մանդելշտամը եղել է Կ.Պոլսում ռուսաց դեսպանատան գլխավոր թարգման և շուրջ 16 տարի կատարելով դիվանագիտական աշխատանք, հանգամանքների բերումով զբաղվել է Հայկական հարցով, իսկ առաջին աշխարհամարտի տարիներին ակտիվորեն պաշտպանել է արևմտահայերի շահերը, իրավունքները, դատապարտել երիտթուրքերի գազանությունները և ոճրագործությունները, գործնական մասնակցություն ունեցել հոգուտ հայ գաղթականների և որպես միջազգային կազմակերպությունների հեղինակավոր անդամ բազմիցս հանդես է եկել հայանպաստ դիրքերից՝ ստեղծելով համապատասխան կարծիք Հայկական հարցի շուրջ: Անդրե Մանդելշտամը դատապարտում է Հայոց Ցեղասպանությունը, պաշտպանում արևմտահայերին, որովհետև երիտթուրքերը խախտեցին միջազգային իրավունքը, գավթեցին նրանց գույքը, տիրացան հարստության: Նրա կարծիքով երիտթուրքերին հաջողվեց բնաջնջել մոտ մեկ միլիոն մարդ, մահ և ավերածություններ սփռել Արևմտյան Հայաստանում: Այս առնչությամբ Նանդելշտամը պսակագերծում է Կ.Պոլսում Գերմանիայի

դեսպան Վանգենհայմի կեղծիքը, որը "Grosse Politik"-ի էջերում դատապարտում էր Ռուսաստանին քրիստոնյա ժողովուրդներին, հատկապես հայերին օսմանյան կայսրության դեմ հրահրելու համար, որոնք հարկադրում էին թուրքական իշխանություններին, դիմելու պատժիչ միջոցների, ընդհուպ մինչև կոտորածները և ֆիզիկական բնաջնջումը: Դեսպանի միտքը ավելի քան հասկանալի է, բայց ոչ պակաս պարզունակ և, իհարկե միակողմանի: Օսմանյան կայսրությունում պարբերաբար կազմակերպված ու ամենայն դաժանությամբ ի կատար ածված հայկական կոտորածները պատճառաբանել սոսկ Ռուսաստանի սադրանքներով, կնշանակի Չայոց Ցեղասպանության իսկական շարժառիթները ներկայացնել գլխիվայր, շրջված ձևով, ճիշտ այնպես, ինչպես ցանկալի էր երիտթուրքական պարագլուխներին: «Դրան հակառակ,- նշում է ռուս դիվանագետը,- յայտնի է, թե հայկական իսկական կոտորածներ տեղի ունեցան 1915-ին, ռուս դեսպանութեան մեկնումից յետո: Եւ բարոն Վանգենհայմը, անշուշտ այն ժամանակ կարողացաւ համոզւել, թե այս խնդրում «Միութեան եւ Յառաջադիմութեան Կոմիտէի» ասպետներ թալէթները, Էնվերները, Նազիմները, Բեհադդին-Շաքիրները բնաւ կարիք չունէին որևէ գրգռումի, ինչ-որ օտար դրդումի»¹: Միանգամայն իրատես դատողություն և հրատապ եզրակացություն:

Խորհրդային ժամանակաշրջանի ռուսաց պատմագրության մեջ նույնպես արտացոլվել է Չայոց Ցեղասպանության հիմնահարցը, որի ներկայացուցիչները ընդհանուր առմամբ դատապարտեցին երիտթուրքերի ոճրագործությունները արևմտահայության նկատմամբ:

Չայոց նորագույն պատմության առանձին դրվագների գնահատականների մեջ մակընթացություն և տեղատվություն ապրած Վ. Գուրկո-Կրյաժինը անվերապահորեն դատապարտեց այդ հանցագործությունը: Թեև հեղինակը, մեղմ ասած, աններելիորեն չի նշում ցեղասպանություն բառը, այնուհանդերձ մատնաշում է մեր ազգի դահիճների՝ Թալէթի, Էնվերի, Ջենալի ղեկավարած երիտթուրքերի հանցագործությունների ողբերգական հետևանքները արևմտահայության համար, հայ ժողովրդի ծանրագույն քաղաքական կացությունը: Փաստորեն նա խորհրդային ժամանակաշրջանի ռուսաց պատմագրության մեջ առաջիններից դատապարտեց հայ ժողովրդի դեմ կազմակերպված դավադրությունը, սակայն չկարողացավ լիովին բացահայտել ցեղասպանության քաղաքական, սոցիալական, ազգային, կրոնական գործոնները և շարժառիթները, գտնել դրանց սպառիչ պատասխանները: «Միանգամայն անտարակույս է,- գրում է նա,- որ կատարելով դաժանության առումով չլսված այս անմարդ-

¹ «Վեմ», Երկամսեայ հանդես մշակոյթի եւ պատմութեան, 1935, №2, էջ 93:

կային գործողությունը, երիտթուրքերը ղեկավարվում էին լիովին մշակված որոշակի ծրագրով. նրանք (երիտթուրքերը-Մ.Մ.) ձգտում էին դուրս քաշել թուրք ժողովրդի կուրծքը խրված սեպը և գտնում, որ համաշխարհային պատերազմը դրա համար բացել էր այնպիսի բացառիկ հնարավորություններ, որպիսիք հազիվ թե ապագայում ստեղծեին երկրորդ անգամ: Ռազմական գոտիներից Միջագետք վերաբնակեցնելու պատրվակով կատարվող հայերի բնաջնջումը իրագործվում էր Թուրքիայի ամբողջ տարածքում (բացառությամբ Կ.Պոլսի, Բաղդադի, ու Երուսաղեմի): Ամբողջ գործողությունների ղեկավարությունը գալիս է Կոստանդնուպոլսից»¹: Այստեղ հեղինակը թույլ է տալիս պատմաքաղաքական մի մեծ ու սկզբունքային նշանակություն ունեցող կոպիտ սխալ և պարզապես փաստերը ներկայացնում է խեղճված և շրջված ձևով, չտեսնելով, որ սեպը խրված էր ոչ թե թուրքերի, այլև արևմտահայության կուրծքը և որ ուղղակի այն պատրվակ էր Թուրքիայի պարագլուխների համար ի կատար ածելու նախապես մշակված այդ աննախադեպ մարդատյաց հանցագործությունը: Չնայած դրան, պատմագիտական և պատմաքաղաքական առումով չափազանց կարևոր է հեղինակի կողմից թուրքական ոճրագործությունը դատապարտելու փաստը և, հատկապես արևմտահայության զոհերի թիվը պարզելու տեսանկյունից նրա նշած տվյալները, որոնք վերստին բացահայտում են անցյալի ու ներկայի պատմության թուրք կեղծարարների պիղծ դեմքը: Գուրկո-Կոյաժինի վկայությամբ մինչև համաշխարհային պատերազմը արևմտահայության ընդհանուր թիվը մոտավորապես հասնում էր 2 մլն., իսկ ավելի ստույգ՝ հենվելով Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի տվյալների վրա՝ 1.845.000, որը նույնպես ընդհանուր է և հարաբերական, քանզի ճշգրիտ տեղեկություններ հաղորդել գրեթե անհնարին էր թուրքական կառավարող շրջանների բանսարկությունների և մեքենայությունների պատճառով: Ուստի և արևմտահայության մասին նշված թիվը նվազագույնն է, քանզի թուրքական իշխանություններին, բնավ էլ ձեռնտու չէր ներկայացնելու իրական պատկերը. «Այդ թվից,- ամփոփում է ռուս պատմաբանը,- հաշվեհարդարից փրկվեց միայն մեկ երրորդը՝ իսլամը ընդունելու, Ռուսաստան (200 000 մարդ) և Պարսկաստան փախչելու միջոցով... Թուրքական իսկ տվյալներով մոտ 300 000 մարդ գազանաբար սպանվեց: Միջագետք քված 900 000 մարդուց առնվազն 300 000 -ը մահացավ ճանապարհին՝ սովից, վարակից, հիվանդություններից ու ընդհանուր ուժասպառությունից: Ինչ վերաբերվում է Միջագետք հասած կես միլիոնին, ապա նրանք, իհարկե, այնտեղ չգտան ո՛չ սնունդ, ո՛չ օթևան.. ու ըստ էության նույն-

¹ В. Гурко-Кристин. История революции в Турции. М., 1925, с.79

պես դատապարտվեցին սովի և մահաջնջման... Իզուր չէ, որ նախարարներից մեկը (թուրք-Մ.Մ.) պարծենում էր, թե երիտթուրքերը երեք շաբաթում կարողացան կատարել այն, ինչ Աբդուլ Յամիդը չկարողացավ իրագործել 30 տարվա ընթացքում: Այս փաստերը և տվյալները ըստ Գուրկո-Կրյաժինի՝ ինքնանպատակ չեն, քանզի «երիտթուրքերը որպեսզի Եվրոպայի առջև որևէ կերպ արդարացնեն իրենց այս չլսված ոճրագործությունը, գործի դրեցին պաշտոնական նոր վարկած՝ ամբողջ կայսրությունը ընդգրկած «հայոց դավադրության» մասին... Երիտթուրքական կառավարությունը հասնում էր այն աստիճանի անպատկառության, որ ժխտում էր ամխտիիր ոչնչացման փաստը և մատնանշում, թե միայն «... մի որոշ թվով հայեր» են տեղահանվել ռազմական գործողությունների գոտուց»¹:

Երիտթուրքերի ոճրագործությունները այնքան էր ակնհայտ, որ անգամ խորհրդային թուրքամետ պատմաբան Ա.Ֆ.Միլլերը իր առանձին աշխատություններում նույնպես մասնակիորեն դատապարտել է Թուրքիայի ցեղասպան քաղաքականությունը արևմտահայության նկատմամբ, հատկապես 1915 թ. Մեծ Եղեռնը, սակայն մեկնաբանությունը որպես կանոն կամ բացակայում է, կամ էլ կատարվում է մակերեսորեն: Բավական է ասել, որ հեղինակը գերազանցապես այն կապում է առաջին աշխարհամարտի հետ, մինչդեռ երիտթուրքերի կուսակցական փաստաթղթերը անհերքելիորեն ապացուցում են, որ իրենց հրեշավոր նպատակներին նրանք նախապատրաստվում էին նախօրոք, այն դարձնելով իրենց ծրագրային պահանջներից մեկը, որը սակայն լիովին՝ միտումնավոր թե ոչ, անտեսված է նրա կողմից: «Թուրքիայում բնակվող հայ ժողովուրդը այդ տարիներին վերապրեց ողբերգական դեպքեր: Սուլթանական երիտթուրքական իշխանությունները, օգտվելով պատերազմից,- գրում է Միլլերը,- որոշեցին ավարտել այն ոճրագործությունները, որոնք սկսել էր «արյունոտ սուլթան» Աբդուլ-Յամիդը: 1915 թ. մայիսին ռուսաց զորքերի կողմից Վանը գրավելուց անմիջապես հետո, օսմանյան կայսրությունը հրապարակեց օրենք այսպես կոչված տեղահանումների մասին: Պաշտոնապես օրենքը նախատեսում էր բնակչությանը տեղահանել մերձակատային գոտուց, իբր «թշնամու հետ համագործակցության, դավաճանության ու հակառակորդին զինված՝ աջակցության» հայտնաբերման պատճառով: Իրականում տեղահանումները վերածվեցին անմարդկային ջարդերի: Ավելի քան մեկ ու կես միլիոն հայեր բռնությամբ վտարվեցին իրենց գյուղերից ու քաղաքներից ու նույնպես ուղարկվեցին Սիրիայի և Սիջագետքի համակենտրոնացման ճամբարներ... նրանք ովքեր ի վերջո հասնում էին համակենտրոնաց-

¹ В. Гурко-Кряжин, История революции в Турции, М., 1925, с.79-80.

ման ճամբարներ, այնտեղ զոհվում էին մալարիայից, տիֆից և սովից: Տեղահանումները չսահմանափակվեցին մերձակատային զոտիով: Նրանք տարածվեցին ամբողջ Անատոլիայի ու նույնիսկ Ստամբուլի վրա: Չոհվեցին մոտ մեկ միլիոն հայեր»¹ :

Հայ ժողովրդի դեմ մտահղացված ու իրագործված մեծագույն դավադրության բացահայտմանն են նվիրված խորհրդային ժամանակաշրջանի ակադեմիկոս պատմաբան ակադեմիկոս Ե.Տարլեի «Թուրքիան և հայերը» դասախոսությունները, որոնք ի դեպ կազմեցին նրա 20-ական թթ. երկրորդ կեսին հրատարակված «Եվրոպան իմպերիալիզմի դարաշրջանում 1871-1919 թթ.» ծանրակշիռ մենագրության առանձին բաժինը: Փաստական հարուստ նյութերի և պատմագիտական խոր վերլուծության հենքի վրա Տարլեն ցույց տվեց, որ առաջին աշխարհամարտի ժամանակ թուրքական կառավարությունը «...հսկայական մասշտաբով ձեռնարկեց հայ ժողովրդին բնաջնջելու գործը»²: Այս առնչությամբ նկարագրելով թուրքական ոճրագործների մարդակերությունը, նա նշում էր, որ հայերին «... կոտորում էին, հասցնելով անապատային առավել հարմար վայրը (ավազ, քարհատներ, ձորակներ): Թուրքերը հատկապես դաժան էին 1915 թ.»³ :

Հատկանշական է, որ ռուս պատմաբանները, դատապարտելով երիտթուրքերի արյունալի քաղաքականությունը արևմտահայության հանդեպ, միաժամանակ, որպես կանոն, չեն մոռանում մեղսակից դարձնել գերմանական կառավարող շրջաններին: Անշուշտ, Գերմանիայի ձեռքերը արևմտահայության բնաջնջման հարցում, մեղմ ասած, մաքուր չեն, սակայն գիտական անաչառությունը պահանջում է ասել, որ անիրատես է ու հակապատմական հավասարության նշան դնել երիտթուրքերի և գերմանական կառավարող շրջանների միջև, հավասարակշռել երկու պետությունների քաղաքական վարքագիծը հայ ժողովրդի նկատմամբ: «Գերմանական իմպերիալիստների հետ երիտթուրքերը տեղահանումների պատրվակով,- նշված է «Արտասահմանյան Արևելքի նոր պատմություն» աշխատությունում,- նախապատրաստեցին և սառնասրտորեն իրագործեցին հայ ժողովրդի մասսայական բնաջնջման ծրագիրը Թուրքիայում: Տխրահռչակ տեղահանումը ոչ այլ ինչ էր, եթե ոչ հայերի մասսայական սպանդ»⁴ : Գերմանիայի կառավարող շրջանների մեղսակցությունը Հայոց Ցե-

¹ А.Ф. Миллер, Краткая история Турции, с. 155, он же, Очерки новейшей истории Турции, М., 1948, с. 63.

² Е. Тарле, Европа в эпоху империализма, М., 1928, с. 387.

³ Е. В. Тарле, соч., т. 5, М., 1958, с. 38.

⁴ "Новая история стран зарубежного Востока", М., 1962, т. 2.

ղասպանության մեջ անվիճելի է համարում նաև խորհրդային ժամանակաշրջանի ռուս պատմաբան Սիլինը: «Կայգերական միլիտարիստները և քաղաքագետները,- գրում է նա,- խրախուսում էին երիտթուրքական ազգայնամուլների ամենաարյունոտ հրեշագործությունները: Միայն գերմանական հովանավորողների պաշտպանության շնորհիվ երիտթուրքական «եռապետությունը» (հեղինակը հավանաբար նկատի ունի հայ ժողովրդի դահիճներ Թալեաթին, Էմվերին, Ջենալին-Մ.Մ.) հանդգնեց կատարել հրեշավոր հանցագործություն՝ 1915 թ. ոչնչացնել ավելի քան միլիոն հայ խաղաղ բնակչությունը»¹: Ահա ինչու էրզրումից, Սվասից, Բաբերդից Յալեպ ու Մոսուլ տանող ուղին վերածվեց մահվան ճանապարհի արևմտահայության ստվար զանգվածի համար:

Ա. Միլլերի կարծիքով գերմանական ռազմամուլները անծամբ մասնակցել են հայերի ֆիզիկական ոչնչացմանը: Նա վկայում է, որ Անատոլիայի քաղաքներից մեկում, երբ մի խումբ հայեր, այդ թվում կանայք ու երեխաներ բարիկաղավորվեցին, թուրքերը չհամարձակվեցին գործի դնել զենքը: Այդ ժամանակ այնտեղ գտնվող գերմանական սպաները անծամբ կրակ բացեցին հայերի վրա²: Ավելին, խորհրդային պատմաբանների կարծիքով, որը հիմնականում համապատասխանում է պատմական ճշմարտությանը, գերմանական առանձին գաղափարախոսներ անվերապահորեն և անսքող պաշտպանում էին արևմտահայության դեմ մտահոլացված երիտթուրքական ոճրագործությունները: Այսպես, «Առաջին համաշխարհային պատերազմը» աշխատության հեղինակները գրում են, որ Մյունխենի պրոֆեսոր Կարլ Ռոտը գտնում էր, թե հայկական հարցը վերածվեց ռուսականի, քանզի Ռուսաստանը ձգտում էր իր հետ կապել հայ ժողովրդին ու նրան հակադրել Թուրքիային, որն էլ որոշեց Գերմանիայի դիրքը: Ռոտը գրում է, թե պատերազմի սկզբից ռուսաց բանակի կազմում գործում էին Թուրքիայում հեղափոխական հրդեհ տարածող հայոց հրոսակները»: Նրանց օգնությամբ եռյակ համաձայնության տերությունները (Ռուսաստանը, Անգլիան, Ֆրանսիան-Մ.Ս) երկրում (Թուրքիայում-Մ.Ս.) հրահրում էին անկարգություններ, այնպես, որ թուրքական կառավարության «եռանդուն միջոցառումները» (Ռոտն այդպես է անվանում 1915 թ. հայերի մասսայական կոտորածները) նրա «օրինական իրավունքն է»³: Պատմական արդարությունը պահանջում է ասել, որ կայգերական պաշտոնական Գերմանիային

¹ А.С. Силин, Экспансия германского империализма на Ближнем Востоке накануне первой мировой войны, М., 1962, с. 322.

² А.Ф. Миллер, Краткая история Турции, с. 155.

³ "Первая мировая война", М., 1968, с. 104.

զուգահեռ գոյություն ուներ Յոհաննես Լեփսիուսի, Արմին Վեգների, Յոզեֆ Մարկվարտի, Կարլ Լիբկնեխտի, Ռոզա Լյուքսեմբուրգի, Էդուարդ Բերնշտայնի Գերմանիան, որոնք ոչ միայն սատար կանգնեցին արևմտահայերին, ոչ միայն դատապարտեցին թուրքական ոճրագործությունները, այլև մեղադրեցին պաշտոնական շրջաններին այդ հանցագործությունների նկատմամբ անտարբերության և ըստ էության մեղսակցության համար: Անշուշտ, նախորդ շրջանում թուրքերի կազմակերպած ջարդերը, թեև նույնպես զանգվածային էին ու մասսայական, այնուհանդերձ դրանցից ոչ մեկը իր ծավալով և հատկապես գազանությամբ չէր կարող համեմատվել այն ամենի հետ, ինչ կատարվեց 1915 թ.: Հայ բնակչության մեծ մասը, գերազանցապես տղամարդիկ, կոտորվեցին, ընդ որում շատ անգամ փանփուշտներ խնայելու նպատակով նրանց պարզապես այրում էին: Հարյուր հազարավոր հայեր մնացին Տավրոսի կիրճերում և լեռնանցքներում: Համաշխարհային հասարակայնության ուշադրությունը, պետական քաղաքական գործիչների, պատմաբանների, միջազգային իրավունքի ճանաչված մասնագետների օրեցօր մեծացող հետաքրքրությունը, ցեղասպանությունը դատապարտող որոշումները և անաչառ գնահատականները նույնպես լրացուցիչ խթանող գործոններ էին խորհրդային ժամանակաշրջանի հեղինակների համար ավելի մեծ հետաքրքրություն ցուցաբերել և ուշադրություն սևեռել հայոց պատմության ամենասև օրվա վրա: «Իզվեստիա» թերթը 1985 թ. նոյեմբերի 18-ին «Զծնունդ են հետադիմությանը» խորագրով հոդվածում ընդգծում էր, որ «Թուրքիայի այն ժամանակվա կառավարիչների կողմից հայերի դեմ կատարված եղեռնագործությունները ոչնչով չի կարելի արդարացնել»¹: Իր հերթին «խորհրդային Ռուսաստանը» 1987 թ. փետրվարի 18-ին «Եկամուտները ստերից, ինչի մասին է հարողորդում «Թուրքիայի ծայնը»՝ հոդվածում գրում էր. «Մերկախոս ժխտելով հայտնի փաստերը՝ «Թուրքիայի ծայնը» հայտարարում է, թե ոչ մի եղեռն չի եղել, այլ պատերազմ էր, կորուստներ եղել են երկու կողմից, իբր թուրքերի կորուստներն ավելի շատ էին: Այս ամենը այսօրվա թուրքական քարոզչության թեզերն են, Եղեռնի զոհերի մասին հիշատակը, դա միաժամանակ կոչ է զգոնության»²:

Համայն հայությունը երբեք չի մոռանա անմեղ նահատակներին, միշտ հարգանքի տուրք կմատուցի նրանց, ուստի քաղաքական-դիվանագիտական ոչ մի կեղծ ու մութ խաղեր, պետական և ոչ մի սին շահարկումներ երբեք ի վիճակի չեն մոռացության մատնելու Հայոց Ցեղասպանությունը: Այդպիսին է հայ ժողովրդի անհողողող կամքը,

¹ "Известия", 18 ноября, 1985 г.

² "Советская Россия", 18 февраля 1987 г.

որի հետ հարկադրված կլինեն վաղ թե ուշ հաշտվել ու հաշվի մատել
ինչպես արտաքին, այնպես էլ ներքին «թուրքերը»:

ԱՄՓՈՓՈՒՄ

1. Հայկական հարցի պատմության ուսումնասիրությունը վաղուց արդեն դադարել է սոսկ հայոց պատմագրության ու հասարակական-քաղաքական մտքի գիտական մենաշնորհը լինելուց և խնդրո առարկա դարձել օտարազգի հետազոտողների քննախոսության համար: Դա պայմանավորված է ոչ միայն հայոց պատմության նկատմամբ ցուցաբերված որոշակի հետաքրքրությամբ, այլև առավելապես այն կարևորագույն քաղաքական հանգամանքով, որ նոր և նորագույն ժամանակաշրջանի միջազգային հարաբերությունների ու դիվանագիտության պատմության մեջ հայկական հարցը շուրջ չորս տասնամյակ իր վրա էր գամել տերությունների ուշադրությունը: Հայկական հարցը դուրս եկավ միջազգային ասպարեզ ու ներքաշվեց եվրոպական դիվանագիտական խարդավանքների որոգայթում:

2. Նրանց տեսակետների, գնահատականների, մոտեցումների, հայեցակետերի, վարկածների համակողմանի լուսաբանումը պետք է դառնա հայ պատմագիտական ու հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչների՝ հատկապես նոր սերնդի, կարևորագույն հիմնախնդիրներից մեկը, մշտապես գտնվի նրա ուշադրության կիզակետում: Անշուշտ, այս ուղղությամբ կատարվել է պատմագիտական մեծ աշխատանք, հրապարակի վրա առկա է պատմադիվանագիտական ստվար գրականություն, սակայն հիմնահարցի լուսաբանումը հեռու է դեռևս բավարար, էլ չենք ասում սպառիչ լինելուց: Արդ, երբ Հայաստանի Հանրապետության և եվրոպական տերությունների և ողջ հանրության միջև հաստատվել են որակապես նոր առնչություններ՝ Հայաստանի Հանրապետությունը դարձել է միջազգային հարաբերություններում լիիրավ անդամ ու սուբյեկտ, այլևս անհնարին է հայկական հարցում բավարարվել միայն՝ հրապարակի վրա եղած գնահատականներով, որոնք թեև ընդունելի են, բայց միակողմանի, ոչ սպառիչ՝ ստեղծված քաղաքական իրադրության մեջ այն չի բավարարում նոր մտածողությանը և նոր մոտեցումներին: Արդ, անհրաժեշտ է ուշադրության կիզակետում պահել ու

ընդգծել մեծ տերությունների ստանձնած պարտավորությունները արևմտահայության նկատմամբ, լայն քարոզչության միջոցով հիմնահարցը ներկայացնել միջազգային իրավունքի տեսանկյունից, նշել միջազգային պայմանագրերի կատարման անհրաժեշտությունն ու կարևորությունը, պարտադիր լինելը, օգտագործել ժողովրդական դիվանագիտության բոլոր լծակները, հիմքում ունենալով իրավաժառանգության, հաջողականության սկզբունքը, ներկայացնել այդ երկրների հասարակայնությանը եվրոպական տերությունների քաղաքական ու դիվանագիտական վարքագիծը հայկական հարցում:

3. Հայկական հարցի համակողմանի քննախոսումը աներկբայորեն վկայեց, որ ռուսական հասարակական-քաղաքական միտքը առանց վերապահման փաստորեն գտնվեց առաջին շարքերում, որը պայմանավորված էր առարկայական պատմաքաղաքական ու դիվանագիտական իրատես գործոններով: Նախ, նկատի են առնվում հայ-ռուսական դարավոր առնչությունները, որոնք ստեղծում են գիտական հենք նման հետաքրքրության և ուսումնասիրության համար: Երկրորդ, ռուսական հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչները ելնում էին հայ ազատագրական շարժման գործընթացում Ռուսաստանին հատկացրած նշանակալից դերից, նրա ռազմաքաղաքական և դիվանագիտական վճռորոշ դիրքորոշումից, որոնք ունեին հանգուցային նշանակություն հայ ժողովրդի պայքարի վերջնական արդյունքի տեսակետից: Երրորդ, միջազգային դիվանագիտական լաբիրինթոսներում տասնամյակներ դեգերած հայկական հարցի բազում քննարկումներում Ռուսաստանը գրավել է ամենակատիվ կեցվածք, եղել է նրա բարձրացման ամենակատիվ նախաձեռնողներից մեկը, դասվել գլխավոր հեղինակների թվին և թերևս ամենահիմնականը՝ տարբեր պատմափուլերում հանդես եկել ընդհանուր առմամբ իր հայանպաստ դիրքորոշմամբ, տարբեր մակարդակի դիվանագիտական ատյաններում ու խորհրդածողովներում: Չորրորդ, այս առարկայական գործոններին ու իրատես հանգամանքներին նպաստել են նաև ռուս-թուրքական ռազմաքաղաքական բարդ ու ելևէջային, պատմական խոր արմատներ ունեցող հակամարտությունները, ապա և ռուսական ու եվրոպական դիվանագիտության միջև եղած սուր ներհակությունները:

4. Հայկական հարցը և հայկական բարենորոգումների հիմնախնդիրները ռուսական հասարակական-քաղաքական ու պատմագիտական մտքի ներկայացուցիչները գերազանցապես դիտարկում են մերձավոր-արևելյան ամբողջական համակարգի լույսի ներքո, որը շոշափում էր ոչ միայն եվրոպական մեծ տերությունների ծավալապաշտ միտումները այդ տարածքում, այլև օսմանյան կայսրութ-

յան մեջ ներկալված ճնշված ժողովուրդների, ներառյալ և արևմտահայության շահերը:

5. Ռուսական հասարակական-քաղաքական ու պատմագիտական մտքի ներկայացուցիչների համակողմանի ու անաչառ քննախոսումը հայկական հարցի վերաբերյալ վերստին ապացուցում է, որ հայկական բարենորոգումները կիրագործվեին, իսկ արևմտահայությունը կփրկվեր աբդուլ-համիդյան ջարդերից և երիտթուրքական հանցագործությունից, եթե մեծ տերությունները հավատարիմ մնային միջազգային համաձայնագրերին, կատարեին իրենց իսկ կողմից մշակված ու ստորագրված պաշտոնական վավերագրերում ստանձնած պարտավորությունները: Դա պատմադիվանագիտական առումով նշանակում էր ոչ միայն հայ ժողովրդի ակնկալիքները «մեռած տառ» դառնալու անխուսափելիություն, այլև կանաչ ճանապարհ արյունոտ սուլթանի և նրա մարդակուլ վարչակարգը ժառանգած երիտթուրքերի համար անպատիժ անցկացնել ու իրագործել իրենց ոճրագործությունները հայ ժողովրդի դեմ: Այս կարևորագույն պատմաքաղաքական գնահատականը կարմիր թելի պես անցնում էր ռուսական հասարակական- պատմագիտական մտքի ներկայացուցիչների աշխատություններում, հրապարակային ելույթներում, հայեցակետերում ընդհանրապես: Սա էլ հենց կազմում է ռուսական հասարակական-քաղաքական ու պատմագիտական մտքի լուրջ ներդրումը հայկական հարցի լուսաբանման գործում:

6. Միջազգային իրավունքի ու դիվանագիտության պատմության տեսանկյունից և արդիական հնչեղության առումով կարևորվում է այն պատմափաստը, որ ռուսական հասարակական-քաղաքական մտքի հարուստ ժառանգության մեջ արտացոլվել է հայոց պատմության ամենաողբերգական, ամենաարյունոտ էջը՝ Մեծ Ցեղասպանությունը, Մեծ դավադրություն ոչ միայն հայ ժողովրդի, այլև ողջ առաջադեմ մարդկության, քաղաքակիրթ աշխարհի դեմ: Թեև Մեծ Եղեռնի ռուսումնասիրությունը սպառնիչ չէ, այնուամենայնիվ ռուսական հասարակական-քաղաքական և պատմագիտական մտքի տարբեր սերունդների ներկայացուցիչների կողմից ներկայացված փաստերը, պաշտոնական վավերագրերը, թվական տվյալները, տեսակետները, գնահատականները, եզրահանգումները լիովին բացահայտում են թուրք դահիճների ոճրագործությունները, ոչ միայն արևմտահայության, այլև հայ ժողովրդի նկատմամբ: Նրանց թողած հարուստ ժառանգությունից կարելի է կատարել սպառնիչ, իրատես և անաչառ եզրակացություն՝ Թալեաթ-էնվեր-Ջեմալ «եռապետության» և նրանց մանկլավիկների քաղաքական կանիբալիզմը պաշտոնապես բարձրացված էր ազգային-կրոնական-պետական քաղաքականության աստիճանին և ուղղված էր մի ամբողջ ժողովրդի դեմ:

7. 20-րդ դարի վերջին Ռուսաստանը դարձավ առաջին մեծ տերությունը, որը պաշտոնապես դատապարտեց Հայոց Ցեղասպանության կազմակերպիչներին և ապրիլի 24-ը ընդունեց իբրև Եղեռնի զոհերի հիշատակի օր: Եթե Չորրորդ Պետական Դումայում հնչեցին երիտթուրքերին դատապարտող կրակոտ ելույթներ, ապա հինգերորդ Պետական Դուման դատապարտող բանաձևը ընդունեց միաձայն 282 պատգամավոր:

8. Կանցնի ևս մի որոշ ժամանակ և համայն հայությունը կնշի Մեծ Եղեռնի հարյուրամյա սգո տարելիցը: Հայ ժողովուրդը գլուխ կխոնարհի անմեղ նահատակների հիշատակին, 100 մոմ կվառվի նրանց պատվին: Բայց այն կդառնա ոչ միայն սոսկ հարգանքի և հիշողության տուրք, այլև վճռական նախազգուշացում աշխարհին, համայն մարդկությանը, որ հայ ժողովուրդը այլևս չի կառուցելու սգո նոր հուշարձաններ, այլ կերտելու է իր ազգային գորեղ պետությունը պատմական հայրենիքի ամբողջական տարածքում: Իսկ այդ ամենի կարևորագույն երաշխիքը և նախապայմանը անցած պատմության բազմահարուստ ուղու անաչառ իմաստավորումն է, պատմության դասերի ճիշտ ու անկողմնակալ յուրացումը: Միայն իրատեսորեն գնահատելով Հայկական հարցի ծագումը, առարկայորեն լուսաբանելով Հայ Դատի ներկայիս հիմնախնդիրները, Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման անհավասար պայքարի հրատապ քաղաքական նշանակությունը և արդիականությունը հնարավոր կդառնա անվրեպ կանխագծել ապագայի առանցքային հիմնախնդիրները, ակնկալել դարավոր ազգային իղծերի իրագործումը:

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՂԹՈՒՄ Է, ԱՐԴԱՐԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՂԹԱՆԱԿՈՒՄ, ՄԱՐՍԸ՝ ՃՆՇՎՈՒՄ: Սա է դառնալու 3-րդ հազարամյակի՝ 21-րդ դարի անխուսափելի խորհրդանիշը դարերի խորքից եկող ու դարերի խորքը գնացող հայ ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ	3-15
ԳԼՈՒԽ ԱՈՍՋԻՆ	
Հայկական հարցը Սան-Ստեֆանոյում և Բեռլինում ռուսական հասարակական-քաղաքական ու պատմագիտական մտքի գնահատմամբ	16-53
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ	
Հայկական հարցը Աբդուլ-համիդյան «Ջուլումի» ժամանակաշրջանում և ռուսական հասարակական-քաղաքական ու պատմագիտական միտքը	54-117
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ	
1912-1914 թթ. Հայկական բարենորոգումների հիմնահարցը ռուսական հասարակական-քաղաքական ու պատմագիտական մտքի լուսաբանմամբ	118-153
ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ	
Սովորական թուրքիզմը ռուսական հասարակական-քաղաքական ու պատմագիտական մտքի պսակազերծմամբ	154-177
ԱՄՓՈՓՈՒՄ	178-181

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0067286

100077]

A $\frac{\pi}{86343}$